# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

II

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Ընկ. Հովհաննիսյանին,
[illegible] [illegible],
սիրով:

[illegible]

29. I. 47.
Երևան

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

# ОВ. ТУМАНЯН

# СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

ТОМ ВТОРОЙ

## ПОЭМЫ

1887—1916

ИЗДАТЕЛЬСТВО АрмФАН-а
ЕРЕВАН 1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## ՀԱՏՈՐ ՅԵՐԿՐՈՐԴ

# ՊՈԵՄՆԵՐ

## 1887—1916

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ՝

Սահակյան Սիմակ (*պատ. խմբագիր*),
Զորյան Ստեփան, Թումանյան Նվարդ,
Ինճիկյան Արամ

ՏԵՔՍՏԸ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ Թումանյան Նվարդ,
Ինճիկյան Արամ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Գրականության և Լեզվի ինստիտուտը լույս է ընծայում Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ակադեմիական հրատարակությունը: Այս հրատարակությունն առաջինն է, որ տալիս է բանաստեղծի յերկերի ստուգված տեքստը և ստեղծագործական պրոցեսի պատկերը:*

*Յելնելով հիմնական ժանրային առանձնահատկություններից, Թումանյանի ամբողջ ստեղծագործությունը ամփոփվում է հինգ հատորի մեջ: Այսպես.*

I. *Յերգեր ու լեգենդներ—իր յենթաբաժիններով:*

II. *Պոեմներ ու եպիկական հատվածներ:*

III. *Արձակը՝ պատմվածքներ և հեքիաթներ:*

IV. *Հրապարակախոսական հոդվածներ և ուսումնասիրություններ:*

V. *Նամակներ (իր գրած):*

*Յուրաքանչյուր հատոր ունի չորս մաս.*

*Հիմնական տեքստ.*

*Ֆրագմենտներ.*

*Վարիանտներ.*

*Կոմենտարներ, տեքստային տարբերություններ, ծանոթագրություններ, անվանացանկ, բառերի բացատրություններ և այլն:*

*Ակադեմիական հրատարակությունը տալիս է բանաստեղծի յերկերի վերջնականապես ստուգված տեքստերը: Վորպես հիմնական տեքստ ընդունված են հեղինակի որով լույս տեսած վերջին հրատարակությունները, այնուհետև հեղինակի ձեռքով խմբագրված տեքստեր՝ թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր: Առաջին՝ անգամ տպագրվող նյութերի հիմքը, բնականաբար, ձեռագրերն են: Հիմնվելով սկզբնաղբյուրներից տարբեր հրատարակությունների և հեղինակի ձեռքով կատարված ուղղումների վրա՝ տրված է յերկի մշակումը՝ տեքստային տարբերությունները: Հեղինակի ձեռագիր ուղղումները և տեքստային տարբերությունները տրված են ընդգծված, տողի դիմաց նշելով ձեռագիրը կամ հրատարակությունը: Տեքստում պահպանված են հեղինակին հատուկ բազմաձևություններ, ինչպես բառի, ձևի, այնպես էլ կետադրության, որինակ՝ ջահել—ջահիլ, վերա—վրա, ասեց—ասավ, այս—էս և այլն:*

*Կոմենտարները սեղմ ձևով տալիս են յերկի գրելու, տպագրվելու և մշակելու պատմությունը: Կոմենտարներում բերված են և իր՝ հեղինակի ծանոթագրությունները՝ գրելու առիթը, աղբյուրը, բառերի բացատրությունը՝ իր ինիցիալներով կամ աստղանիշով:*

*Սույն հրատարակության ամեն մի հատորում խստորեն պահպանված է ժամանակագրական կարգը:*

Խմբագրական կոլեգիան, յենելով Միութենական ռուսական խոշոր կլասիկների ակադեմիական հրատարակությունների փորձից, ինչպես Պուշկինի, Գոգոլի, տեքստի պատրաստումը և գիտական մշակումը հիմնականում տալիս է նրանց օրինակով:

Ստորև տրվում են բոլոր հատորների համար ընդունված պայմանական նշանները և համառոտագրությունները:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1. Հեղինակի փակագծերը պահպանվում են նույնությամբ՝ կլոր ( ):

2. Ձեռագրում ջնջված բառերն առնվում են քառակուսի [ ] փակագծերի մեջ:

3. Խմբագրության կողմից վերականգնված և յենթադրական բառերն առնված են սուր < > փակագծերի մեջ: Հեղինակի կողմից չգրված բառերն արտահայտվում են՝ սուր փակագծերով ու բազմակետերով <. . . . . . .>, իսկ անընթեռնելի բառերը՝ նույն ձևի փակագծերի մեջ, գրված անընթ. (անընթեռնելի) կրճատ բառը:

4. Տեքստի տողահամարումը տրված է 10, 20, 30 և այլն. ամեն մի տողի մշակման կամ տեքստային տարբերությունները տրված են այբբենական կարգով՝ ա, բ, գ, նախնական վարիանտից մինչև նախավերջինը, իսկ վերջինը, հեղինակի կողմից խմբագրվածը, ըստականապես, տրված է վորպես հիմնական տեքստ:

5. Բոլոր հատորների ձեռագրերը, վոր մինչև հիմա պահպանվում եյին հեղինակի արխիվում, այժմ գտնվում են ՀԽՍՀ Պետ. Գրական թանգարանում:

## ԱՅՍ ՀԱՏՈՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թ — Հովհ. Թումանյան.<br>
Ձ$^{1}$ — Ձեռագիր առաջին.<br>
Ձ$^{2}$ — Ձեռագիր յերկրորդ.<br>
ՄIՀ — «Բանաստեղծություններ», I հատոր, Մոսկվա, 1890 թ.<br>
ՄIIՀ — «Բանաստեղծություններ», II հատոր, Մոսկվա, 1892 թ.<br>
Դ — «Դաշնակներ», Թիֆլիս, 1893.<br>
Դփ — «Դաշնակներ» (փոփոխած), Թիֆլիս, 1896 թ.<br>
ԲԹ — «Բանաստեղծություններ», Թիֆլիս, 1903 թ.<br>
ԲԲ — «Բանաստեղծություններ», Բաքու, 1908 թ.<br>
ԲՊ — «Բանաստեղծություններ», Կ. Պոլիս, 1923 թ.<br>
Գեղ. յերկ. — Գեղարվեստական յերկեր, Յերևան, 1934 թ.<br>
ՀԳ — «Հայ գրողներ», Թիֆլիս, 1911 թ.<br>
Մ — «Մուրճ» ամսագիր.<br>
ՀԹ — «Հորիզոն» օրաթերթ.<br>
ՀՀ — «Հորիզոն» գրականական հանդես.<br>
Ֆր$^{1}$ — Ֆրագմենտ առաջին.<br>
Ֆր$^{2}$ — Ֆրագմենտ յերկրորդ.<br>
Հեղ. ձեռ. ուղղ. — Հեղինակի ձեռագիր ուղղումներ.<br>
Խմբ. — Խմբագրական կոլեգիա:

## ՑԵՐԿԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մր* — *Մարոն*
*ԼՍ* — *Լոռեցի Սաքոն*
*Ա.* — *Անուշ*
*ՊՄ* — *Պոետն ու Մուսան*
*ՍԴ* — *Սասունցի Դավիթը*
*Հր* — *Հազարան բլբուլ*
*Մծ* — *Մծիրի*
*Շկ* — *Շիլլոնի կալանավորը*

*Առաջին հերթին հրատարակվում է* II *հատորը՝ Պոեմները, նկատի ունենալով բանաստեղծի հիմնական ժանրը և մի շարք տեխնիկական հանգամանքներ։*

1939 *թ.* 2 *փետրվար, Երևան։*

# Պոեմներ

ՄԱՐՏ

1887

I

Մեր գյուղն էն է, որ հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Թոր ձորերի քարափին
Ձեռը տըված ճակատին
Միտք է անում տըխրադեմ.
Ի՛նչ է ուզում՝ չըգիտեմ...
Պաս չենք էնտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր.
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վընաս
Գալիս են մեզ անպակաս։
Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, որ յերբեք
Հիշատակով տըխրալի —
Սըրտիս հանգիստ չի տալի։

II

Մեր գյուղից վեր մինչ եսոր
Կա ուռենի մի սըգվոր։
Մեծ անտառից նա զատված,
Մարդու կացնից ազատված՝
Կանգնած է դեռ ու շոգին
Հով է տալիս մըշակին։
Գիժ, լեռնային մի վըտակ
Թոխոջում է նըրա տակ,
Թաղում կանաչ մարգերին։
Են առվակում կես օրին,
Յերբ վոր շոգից նեղանում,
Գընում եյինք լողանում։

Տըկլոր, աշխույժ խըմբակով,
Ագռավակով, աղմուկով
Թռչում էյինք, վազվըզում
Գույն-գույն մանրիկ ավազում։
Կամ հետևում հև ի հև
Թիթեռնիկին վառկեթև,
Ու մինչ հոգնած ժամանակ,
Էն մենավոր ծառի տակ
Նըստում տըխուր մի քարի,
Գերեզմանին Մարոյի…

Մարո՛, անբա՛խտ, վաղամե՛ռ,
Դու մանկության իմ ընկեր,
Վո՞րքան ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՛լ…

III

Ժիր էր Մարոն, զուրեկան,
Նոր էր ինը տարեկան,
Նըրանց տունը յերբ մի օր
Յեկան յերկու ձիավոր։
Ու Մարոյի մայրիկը
Յերբ վոր բերավ, դրավ լիքը
Խոնչեն նըրանց առաջին,
— Շնորհակալ ենք մենք, ասին.
Տաշտներըդ լի հաց լինի,
Դըռներըդ միշտ բաց լինի.
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տվեք մեզ ձեր տանից…
Էն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն ու ասաց.
— Կամքըդ լինի, տեր աստված…
Նըշանեցին Մարոյին,
Տըվին չոբան Կարոյին։

IV

Չոբան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի.
Բոյ-բուսաթին նայելիս

Մարդու դարդանդ էր գալիս.
Բայց գոքանչը անտանման
Սիրում, փարում էր նըրան։
Շատ էր սիրում և Մարոն.
— Լավն է, ասում էր, Կարոն,
Բերում է ինձ ամեն որ
Կանփետ, չամիչ ու խընձոր...

V

Մին էլ Կարոն աղմուկով
Յեկավ զուռնով-թըմբուկով.
Ու Մարոյին գողեցին,
Յերեսին քող ձըգեցին,
Հինա դըրին ձեռքերը...
Յեկավ խաչով տերտերը,
Տարավ ժամում կանգնեցրեց.
— Տե՞ր ես, վորդյակ, հարցըրեց։
— Տեր եմ, ասավ մեր Կարոն,
Լուռ կանգնած էր միշտ Մարոն...
Հայրն էլ յեկավ ու ծեծին
Եսպես որհնեց իր փեսին.
— Ջաղացից միշտ հերթ լինի,
Մեջքըդ ամուր բերդ լինի...
Իսկ յերբ հնչեց «տարան հա՜»-ն,
Նըրան փեսի տուն տարան։
Պըսակեցին Մարոյին,
Տըվին չոբան Կարոյին։

VI

Թե գըրբացի չար ջանքով,
Գիր ու կապով, ըրժժանքով
Մանուկ սիրտը կըտրեցին,
Կամ թե նըրա հանդերձին
Էն անհոգի չար ջադուն
Քըսեց գիժ ճըրագուն...
Էդ չիմացավ վոչ վոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց իր մարդուն.
Փախավ, յեկավ յետ հոր տուն։
Յեկավ լացեց նա վըշտոտ.

*— Ես չեմ գնալ նըրա մոտ.*
*Ես սիրում եմ մայրիկին,*
*Ես չեմ ուզում լինեմ կին...*

VII

*Հայրիկն էնժամ բարկացավ,*
*Ծեծեց նըրան ու ասավ.*
*— Դո՛ւրս իմ տանից, սևերես,*
*Ետ չընայես դեպի մեզ,*
*Վոտ չըդնես էլ տունըս,*
*Մըրոտեցիր անունըս...*
*Լալով, ծածկած իր դեմքը,*
*Թողեց Մարոն հոր շեմքը։*

VIII

*Ու հալածված իր հորից,*
*Փախած չորան Կարոյից,*
*Սոված, պատառած շորերով,*
*Կորչում էր նա օրերով։*
*Կուչ էր գալիս խըղճալի*
*Ոջախի շուրջն ստարի*
*Կամ Թափառում մեն-մենակ*
*Մեր հանդերում շարունակ։*

IX

*Շատ ամիսներ անց կացան...*
*Դիմաց սարից մի չոբան*
*Ձեն էր տալիս մի օր մեզ,*
*Թե՝ իմացե՛ք, վոր էսպես*
*Կարմիր շորով մի խիղան*
*Ընկավ ձորը, մի կածան...*
*Դուրս Թափվեցինք մենք գյուղից,*
*Հեռու կանգնած, յերկյուղից,*
*Տեսանք, ահեղ էն ձորում*
*Վոնց էր լալիս ու գոռում*
*Մարոյի հայրն ալևոր,*
*Մայրը ճըչում սըգավոր։*
*Շատ լաց յեղավ և Կարոն...*
*Մեռա՛վ, գընաց մեր Մարոն։*

X

Սակայն անբախտ նըրա դին
Պապի կողքին չըդըրին։
Գյուղից հեռու մինչ եսօր
Կա ուռենի մի սըգվոր։
Էն մենավոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Առանց ժամ ու պատարագ
Մեջը դըրին Մարոյին,
Էն սև քարն էլ տաշեցին,
Բերին վըրեն քաշեցին։

XI

Շատ եմ տեսել, յերբ սըգվոր
Մայրը մենակ, սևաշոր,
Կորանալով էն քարին
Ձեն եր տալիս Մարոյին...
— Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՜ն,
Ո՞վ անիծեց, Մարո ջա՜ն,
Ո՞ւր փախար դու, Մարո ջա՜ն,
Տուն արի, տո՜ւն, Մարո ջա՜ն,
Խե՞ր ես քընել, Մարո ջա՜ն,
Չես զարթնում էլ, Մարո ջա՜ն...
Կորանալով էն քա՛րին
Ձեն եր տալիս Մարոյին.
Խունկ եր ծըխում, մոմ վառում,
Վոր գիշերվան խավարում
Փայլփըլում եր մեն-մենակ
Հեռվից յերկար ժամանակ։

# ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

1889

I

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ։

Նըրանց վոտքերում՝ գալարված գալի՝
Գալարվում է գիժ Դե-Բեդը մոլի,
Ծըվլագար թըռչում քարերի գըլխով,
Փըրփուր է թըքում անզուսպ յերախով,
Թըքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜շշ, վա՜շ-վի՜շշ...

Մութ անձավներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ՝ հըրապիտ ձայներով
Դևի հառաչքին արձագանք տալի,
Ծաղրում են նըրա գոռոցն ահռելի
Ու կըրկնում գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜շշ, վա՜շ-վի՜շշ...

Գիշերը լուսնի յերկչոտ շողերը
Հենց վոր մըտնում են էն խավար ձորը՝
Ալիքների հետ խաղում դողալով,
Անհայտ ու մըռայլ մի կյանքի գալով՝
Վոգի յե առնում ամեն բան էնտեղ,
Շընչում է, ապրում և մութն և ահեղ։

Էս տախտի վըրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,

Բուի կըռինչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարե դըլխից, լուռ, մարդու նըման,
Նայում է ձորին մի հին խաչարձան։

II

Էն ձորի միջին ահա մի տընակ։
Էնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ։
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.
Սատանի նըման՝ նա էլ էս գիշեր
Գընացել է տուն։ Սարերի չոբա՛ն —
Գյուղիցը հեռու, հազար ու մի բան.
Ով գիտի՝ պարկում շընալի՞ր չըկար,
Ա՞դ էր հարկավոր վոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձըվածե՞ղ ուտել,
Թե՞ նըշանածին շատ էր կարոտել —
Վոչխարը թողել՝ գընացել է տուն։
Այն ինչ՝ համկալը հենց տավարը
Դեպի սարերը քըշեց իր հոտը։
Ու Սաքոն անքուն,
Թաց տըրեխները հանել է, քընել,
Գուլպան բուխարու վըրա կախ արել
Ու թինկը տըվել
Մեն-մենակ թըթվել։

III

Թեկուզ և մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում։
Հապա մի նայիր հըսկա հասակին,
Վըզից է մեկնըվել։ Ասես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած։
Իսկ յեթե անկից վեր կացավ հանկարծ,
Դըլուխը մեխած մահակը ձեռին՝
Ձեն տըվավ, կանչեց զարկում շըներին
Ու բիրտ, վայրենի կանչերեց, ինչպես սար,
Էնժամ կիմանաս, թե ընչի համար
Թե՛ գող, թե՛ գազան, հենց դատարկ վախից,
Հեռու յեն փախչում նըրա փարախից։

Ու իրեն նըման իրեն ընկերներ
Ապրում են սիրով յերեխուց իվեր։

Աստծու գիժերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են ոդեն,
Ծըհուն ու պըկուն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար...

IV

Բայց խուլ ու խավար աղում ես գիշեր
Մենակ է Սաքոն ու չունի ընկեր։
Բուխարու կողքին լուռ թինկը տըված
Մըտածում է նա... ու մին էլ, հանկարծ,
Վորտեղից վորտեղ, են ձորի միջին
Միտն ընկան տատի զըրույցները հին...
Միտն ընկան ու մեր Սաքոն ակամա
Սկսավ մըտածել չարքերի վըրա,
Թե ինչպես ուրախ խըմբով, միասին,
ուռը վառներով, գիշերվան կեսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Յերևում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպես քաջքերն այրերի մըթնից,
Յերբ նայում է մարդ քարափի գըլխից,
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաղում են, կանչում ծանոթ ձայներով,
Ու մարդկանց նըման խընձույք են սարքում,
Զուռնա յեն ածում, թըմբուկ են զարկում...
Ու տատի խոսքերն անցյալի հեռվից
Ուրվականային, ցիրկչա հընչեցին նորից.
— Կանեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Սիրո՛ւն-ջահել հարսն-աղջիկ։

— Ինձ մոտ արի՝ ձվաձեղ անեմ...
— Ինձ մոտ արի՝ բըլիթ տամ...
— Յես քու հոքիրն... յես քու նանն եմ...
— Յես էլ աղիզ բարեկամ...

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի.
Ես աղջիկը, տե՛ս, ինչ լա՜վն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Տարա-նի-նա՜... տարա-նի-նա՜...

Ու խոլ պատկերներ տըգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ յեկան Սաքոյի դիմաց
Յերևույթք յեղան, անցնում են կամաց,
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Զար ժըպիտներով ժանտ ու սևերես...

V

Սըրընթաց պախրա, թե գայլ գիշատիչ
Ճեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյամը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց վոտով,
Գիշերվան հովից տերևն եր դողում,
Յերկչոտ մուկիկը վազեց պուճախում,
Թե վոչխարների թույլ մընչոցն եր այն, —
Սաքոյին թըվաց, թե մի վոտնաձայն
Յեկավ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լըռեց...
Ականջ դըրավ նա...

VI

— Ո՞վ հող թափեց բուխուրակից...
Են ո՞վ նայեց լուսածակից...
Ես ո՞վ կըտրից անցավ թեթև,
Շունչ է քաշում դըռան յետև...
— Ո՞վ ես, եհե՜յ... ի՞նչ ես անում.
Ի՞նչ ես լըռել, ձեն չես հանում...

Պատասխան չըկա. լըռության միջում
Ձորագետն է միայն մըրափած վըշշում։
— Հա՜, իմացա, Գելոն կըլնի.
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Վախեցնում է... հա՜, հա՜, հա՜, հա՜...
— Գելո՜...

Ձեն-ձուն չըկա։
Միայն ահավոր լըռության միջում
Ձորագետն է խուլ, մըրափած վըշշում։
Յեվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին.
Քընած է աշխարհ, քընած է քամին.
Անքուն չարքերը չեն միայն քընած,



«Լոռեցի Սաքոն». 1899 թ. ձեռագրից:

Վըխտում են ուրախ՝ ձորերը բռնած,
Խավարում կազմում դիվական հանդես,
Վազում, վազվըզում քամիների պես,
Մինչև վոր մնակ մի մարդ կըգըտնեն,
Ճիչով-քըրքիջով… փարախը մըտնեն…

Աչքերը հանգչող կըրակին հառած՝
Ծանըր է շընչում հովիվը ահ առած,
Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու։
«Չե՛, քամին եր են… են գելի շըվաք…
Են սատկեր եյին աչքերի տեղակ,
Վոր լիսածակից ներս եյին ընկել…»։
Ուզում է վերև մըտնել տա մեկ էլ՝
Ու սիրտ չի անում։
Ականջ է դընում…
Գալիս են կըրկին թեթև, կամացուկ,
Դըռան յետևից փըսփըսում ծածուկ.
— Եստեղ է նա,
— Հա՛, հա՛, հա՛, հա՛.
— Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս.
Նայիր եսպե՛ս,
Մըտիկ արա՛,
— Հա՛, հա՛, հա՛, հա՛…
Սաքոն շարժվեց փըշաքաղված,
Դեպի շեմքը նայեց, դողաց…
Ճըրը՛խկ… հանկարծ դուռը բացվեց,
Թուրք կանանցով տունը լըցվեց,
Տունը լըցվեց թուրք կանանցով,
Ճիչ-զըռոցով, հըրհըռոցով։

VII

Ահռելի ձոր է։ Մի կըտոր լուսին
Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում։
Են մութ, ահավոր գիշերվա կեսին
Վազում է Սաքոն Լոռու ձորերում։
Ջարքերը ընկած նըրա յետևից,
Հերարձակ խըմբով, ճիչ-աղաղակով
Հասնում են մեջքին, բըռնում են թևից,

Զարկում են, զարկվում ահի մըտրակով...
Քաջքերն էլ այրից դուռնա-զըռնոցով
Ծըփում են, կանչում ծանոթ ձայներով.

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք,
Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՝
Սիրո՛ւն, ջահել հարսն-աղջիկ։

— Ինձ մոտ արի՝ ձըվածեղ անեմ...
— Ինձ մոտ արի՝ ըլլիթ տամ...
— Յես քու հոքիրն... յես քու նանն եմ...
— Յես էլ ախիդ բարեկամ...

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի.
Են աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի.
Տարա-նի-նա՜... տարա՜-նի-նա՜...

Այն ինչ Դևերգից ալքեր են թըռչում,
Ալիքներն յելնում, ալիքներն ուռչում,
Խավարի միջին ծըփում են կայտառ՝
— Բռնեցե՛ք, փախավ Սաքոն խելագար...

# ՄԵՐԺԱԾ ՈՐԵՆՔ

1890

I

Բարձրադիր լանջում բարձր սարերի
Աղոթք է անում լուռ կանգնած մենակ
Հին հիշատակը հին-հին դարերի —
Քրիստոնեյից միանձանց մի վանք:
Նրա սրածայր գմբեթը քարյա
Բարձրանում է վեր — դեպի յերկինքը,
Խաչակնքելով աշխարքի վերա
Որհնում է՛ մշակի արդար քրտինքը:
Այնտեղ խստակյաց միաբանություն
Ճգնում է միտքը աղոթքի տված,
Անհաղորդ յերկրի վայելքին ունայն,
Մինչև վոր յուր մահ կըկանչե աստված:
Չեն լսում յերբեք սուրբ հայրերի մոտ
Մարդոց խնջույքի ուրախ յերգերը,
Յեվ վոչ կանացի հայացքը խանդոտ
Հուզում է մեղքով խաղաղ սրտերը:

II

Յերեք որ առաջ վաղ առավոտյան
Համբընթաց մի սայլ մոտեցավ վանքին.—
Հեռու կողմերից ուխտավորք յեկան
Յերկրպագելու սրբոց մասունքին:
Յեվ դղրդալով բարեպաշտ մարդկանց
Առջև բացվեցան դռներն աստծո տան,
Յեվ մի ահավոր յերկյուղով լցված,
Խաչակնքելով նրանք ներս մտան:
Սուրբ կամարները, սևացած արդեն,
Մի անգամ դարձյալ ծածկվեցան ծխով.
Ծխի մեջ վառվող մոմերի առջև
Ծունկ չոքած աղոթք արին յերկյուղով:
Զոհը զենեցին և բաժանեցին,

Ապա սրբազան նվերներ տարան
Այն աղոթարար միաբաններին.—
Մեղքի թողություն, օրհնություն առան:
Բայց կատարվեցավ այլ մեծախորհուրդ.
Ուխտ և վողջակեզ կյանքի հաշտության,
Փրկեց ակներև մահից մի հոգի,
Վոր պիտի անմեղ կորչեր հավիտյան:
Վոչ արյուն թափվեց, վոչ հուր բարձրացավ,
Վոչ տեսանելի կանգնեցավ սեղան,
Հոգիները միայն անձայն խոսեցան —
Վերածնվեցավ մատաղ արեգան.
Յեվ մաշված կրծքում կրքերը մարած
Ավելի սաստիկ յեռացին նորից,
Իսկ այն ընտանիքն, ուխտը կատարած,
Դուրս գնաց արդեն վանքի դռներից:

III

Մարդոց մեղքով լի շեներից հեռու,
Սուրբ անապատը գիշերվա մթնում,
Ինչպես մի հսկա, ահեղի ուրու,
Ահա կանգնած և ահավոր, լռում:
Նրա խցերից մեկում միայնակ
Մի յերիտասարդ, դժգույն, դալկահար,
Ջիթի ճրագի աղոտ լույսի տակ,
Անկողնում անքուն տանջվում եր յերկար:
Հազիվ հեռացան հախուռն մտքերը,
Վոր քունն աչքերին մոտ չեյին թողնում,
Հազիվ ծանրացան արտևանունքները —
Քնեց արեգան յուր կոշտ անկողնում,
Յեվ հանկարծ կանգնեց նրա գլխի մոտ
Լուսեղեն մարմնով մի կույս յերկնածին,
Կարեկցությամբ լի, բայց սաստիկ կրքոտ,
Աշխույժ հայացքով նայեց քնածին:
Նայում եր սա ժամ և կամաց-կամաց
Հասուն, լի կուրծքը ուռչում — իջնում եր,
Կարծես՝ յերեսին մեղմածուփ ալյաց
Ճերմակ փրփուրը խաղալիս լիներ:
Ապա շնորհալի և խիստ հեզանազ
Շարժվածքով ճկուն մեջքը խոնհարեց,
Յեվ տաք համբույրով վարդերանգ շրթանց

Բնածի տխուր ճակատը այրեց։
Զարթնեց արեգան և զգաց հոգում
Մի ցավ, վոր սաստիկ տանջում եր իրան.
Այն ինչ այցելու վոգին յերկնքում
Փայլատակում եր մի աստղի նման։
Դուրս նայեց տեսավ նորեկ արևը
Յերկնքի ծայրը հրդեհ եր ձգել,
Նայեց աշխարքին, նայեց վերևը,
Յեվ ուզեց իսկույն բոլորը գրկել…

IV

Փոխվեցավ այսպես վանականն անմեղ,—
Յուր խուցը դարձավ առավել նեղլիկ,
Յեվ մեղմ աղոթքի անդորրության տեղ
Հայտնվեց հոգում անծանոթ մրրիկ։
Ո՛վ զարմանք, արդեն սիրալի սրտով
Մի գիշերվա մեջ կարոտել եր նա,
Յեվ ափսոսում եր, թե ինչու շուտով
Գնացին վանքի հյուրերն յերեկվա։
Կարոտել եր նա. և նրա աչքին,
Բարության ճերմակ շապիկը հագին
Միշտ յերևում եր այն գերդաստանի
Վայելչահասակ դուստրը գեղանի։—
Յերևում եր նա գլխակոր չոքած
Լուռ աղոթելիս սեղանի առաջ,
Կամ այստեղ նստած, կամ այնտեղ կանգնած՝
Թախծալի, քնքույշ դեմքով սիրատանջ։
Ամենայն անգամ նորա տեղերին
Մոտիկ գնալիս, կամ թե կանգնելիս
Ծնկներն ու սիրտը դողդողում եյին,
Յեվ մարմնին ախորժ թմբիր եր գալիս։
Յերկար ժամերով քարացած — անշարժ
Մի տեղ մնում եր նստած գլխաքարշ —
Ապրում եր մտքում յերազած որով,
Յեվ ցնորմունքից ուշաբերվելով
Հաճախ անհանգիստ նա չարչարվում եր,
Լալիս եր ծածուկ, վանքից կորչում եր,
Յեվ կատաղում եր, վոր մի մարդ չըկար՝
Յուր ցավն ասեր, կամ գեթ հասկանար…

V

Արդեն հրեղեն գունդն արեգակի
Ուժասպառ, հոգնած դեպի մայր թեքվեց.
Փուլ յեկավ դարձյալ սիրտն արեգայի —
Գիշեր է հասնում. Նա արտասում յերգեց.—
«Արևը թառավ.
Թռցրեց, տարավ
Փայլուն շողերը.
Խավար գիշերը
Ծանրացավ ահա
Դաշտերի վերա:
Գերին արևի
Գլուխը դեպի
Արևմուտ ծռած
Մնաց սպառած:
Սպասում է նա,
Թե յերբ կերևա
Ցերեկնակամարից
Արևը նորից:
— Ա՛խ, շուտով բացվիր,
Արև կենսաձիր.
Գուրգուրիր կրկին
Արևածաղկին:

Հեռացար և դու,
Անհայտ սիրատու.
Բայց հայացքով
Լցրիր կրակով
Սիրտս վշտահար,
Յեվ քեզ հետ տարար
Ուշքս ու միտքս...
Մթնեց յերկինքս.
Յես էլ ծաղկի պես
Սպասում եմ քեզ.—
Ահա շվարած
Գլուխս ծռած,
Յես էլ եմ նայում,
Քո ճամբեն պահում.
Ծագի՛ր դու նաև,
Իմ հոգու արև»:

VI

*Գիշերվա մթնում նեղ լուսամուտից*
*Յերևում է լուսին աղոտ լամպարի.*
*Յուր անձուկ խցում նստած է հանդիստ*
*Ժիր վերակացուն հին սրբավայրի:*
*Կծղել են յերկայն մազ ու միրուքը*
*Այն խստակրոն ծեր վանականի,*
*Հանգել են աչքերն, և հեզ ծերուկը*
*Չունի յերեսին մի գիծ կենդանի:*
*Արդեն չորացած յերկայն մատներով*
*Յուր սև համրիչի հատերն է քաշում,*
*Յեվ խաղաղությամբ, դրախտի հուսով*
*Կյանքի մնացած ժամերը հաշվում:*
*Մահի հարվածից նա չի սարսափում,*
*Յեվ բան չի խլում մահը նրանից,—*
*Յերկրի հետ նրան վոչինչ չի կապում,*
*Վողջ սպասում է նա գերեզմանից:*

VII

*Փոքրիկ դռնակը զգույշ բացվեցավ.*
*Մի մեռելատիպ, բայց յերիտասարդ,*
*Աչքերը վառված սևաշոր մոավ.*
*Յեվ հարցրեց նրան ծերուկը հանդարտ.–*

Տեր վանահայրը

*Ի՞նչ ունես, վորդյակ:*

Յերիտասարդ աբեղան

*Հայրիկ, ների՛ր ինձ,*
*Այսպես տարաժամ վոր քեզ մոտ յեկա.*
*Սիրտս ուզում է դուրս թռչել տեղից…*
*Այլ ես համբերել չըկարողացա…*

Վանահայրը

*Համբերություն տա թող բարձրյալը քեզ.*
*Բայց ինչու՞ համար հուզված ես այդպես:*

Աբեղան

*Ինձ տա՛ր, հայր սուրբ, գաղտնիքը կենաց*
*Արդյոք որենք է աստծուց սահմանված…*

Վանահայրը (*ընդհատելով*)

*Այո, երբ աստված աշխարքին, վորդյակ,*
*Ապրելու համար տվել է օրենք,*
*Յեվ մենք սրբությամբ, ինչպես օրինակ,*
*Այն օրենքները պիտի կատարենք։*

Արեղան

*Կատարենք, հայր սուրբ… ապա, յերբ վոր կա,*
*Խնդրում եմ տիրոջ այն սուրբ օրենքով,*
*Վորով ապրում են մարդիկը նորա,*
*Նաև մարդկային իմ իրավունքով…*

Վանահայրը (*ընդհատելով*)

*Ել ինչ իրավունք… դու պաշտոնյա ես,*
*Մի սպասավոր աստըծո տանը,*
*Պիտի տաճարի սեղանին նայես,*
*Աղոթես, ճգնես, այս է քո բանը.*
*Յեվ դրա համար չես մնալ անմաս—*
*Բոլորի վարձը այնտեղ կստանաս։*

Արեղան

*Յես ծառայում եմ, և իմ պաշտոնում,*
*Տեսնում ես, տեր, պակասավոր չեմ.*
*Յերկնքի վարձը չեմ արհամարհում,*
*Բայց մի՞թե յերկրում յես պիտի կորչեմ…*

Վանահայրը

*Մի մազ չի կորչի գլխիդ մազերից.*
*Մի՛ սնուցանիր սրտումդ կասկած։*

Արեղան

*Սակայն չէ՞ վոր մեզ այս լեռ քարերի*
*Ծընության համար չըստեղծեց աստված։*
*Իմ օրերն այստեղ տխուր են անցնում.*
*Վառվում է սրտումս հուրը կենսական,*
*Ինչպես յեք նրան դուք զորով հանգցնում*
*Մահաշունչ գրկում խուլ առանձնության.*
*Կարոտ է հոգիս, թռչում է հրաթև*
*Այս մենաստանի բարձըր պարսպից,*
*Չեմ կարող մնալ յես այսուհետև,*
*Յեվ յերբեք, մինչդեռ զրկված եմ կյանքից…*

Վանահայրը

*Այստեղ է կյանքը, այս սուրբ հարկի տակ.*
*Աղոթի՛ր, ծնկի՛ր, կըզգոնես, վորդյակ:*

Աբեղան

*Ոչ, չեմ գտնում, հայր, աղոթքների մեջ*
*Յեվ վոչ հոգեբույժ մեղեդիների,*
*Դարձյալ մնում է նա սաստիկ մի տենչ,*
*Մի տենչ անկատար, անհասանելի.*
*Սարսափում եմ յես.—մոտ է վտանգը—*
*Իմ մահն ինձանից մոտիկ է, մոտիկ.*
*Այստեղ չեմ գտնում մխիթարանքը,*
*Վորով շնչում են, ապրում են մարդիկ:*

Վանահայրը

*Ուրեմն չըկա, ինչ վոր ուզում ես,*
*Յեվ այդ ցնորք է, կամ փորձությունով*
*Նզովյալ չարը խարբալում է քեզ*
*Հոգի կործանող յուր պատրանքներով:*

Աբեղան

*Յեթե նա չըկա, վոչինչ չեմ հարգում,*
*Ատում եմ և ինձ, իմ անձս միայնակ,*
*Վոչինչ չեմ գտնում այլևս աշխարքում—*
*Լոկ խաբեյություն և անմիտ տանջանք.—*
*Թող այնուհետև քանդվի նա խալառ,*
*Նրա յերեսին էլ կյանք չըծաղկի,*
*Թող մեռնեն մարդիկ, թող ուտեն իրար...*
*Յես էլ չեմ խղճում այստեղ վոչ վոքի:*
*Սակայն չէ, նա կա. անըմբռն ալեոր,*
*Կուրծքդ յերևի դեռ չէ յեռացել,*
*Մենակ է աճել հասակդ բոլոր*
*Յեվ առանց կյանքի հանդել, ծերացել.*
*Բայց յերբ սոսկալի առանձնության մեջ*
*Ինձ պաշարում է սարսափը մահու.*
*Յեվ ունայնության մտքերն հոգեմաշ*
*Ինձ յերևում են ախուր, ահարկու,*
*Շուրջս չեմ գտնում փրկության նշան:*
*Իսկ մահը, կարծես, չոքում է կրծքիս,*
*Միմիայն խորափոս, խավար գերեզման,*

*Միմիայն դժոխքն ե յերևում աչքիս,*
*Նա այն ժամանակ վրա յե հասնում*
*Ինչպես լուսավոր շողն արևուսի,*
*Փարատում հոգուս մառայլությունը,*
*Վանում մահաշունչ մտքերն մեկուսի,*
*Կյանքի ջերմությամբ լցվում ե սիրտս...*
*Յեվ յես զգում եմ, վոր այն քաղցր ու նուրբ*
*Զգացմունքով ե կենդանի մարդս.*
*Բայց ափսոս, վոր դու չըգիտես, հայր սուրբ։*

Վանահայրը

*Այն սուրբ հոգին ե, կամ մի սուրբ հրեշտակ,*
*Վոր այցելում ե, ով արժանավորդ,*
*Յեվ կյանքի մասին աստվածաբնակ*
*Այս սուրբ տաճարում քեզ տալիս հաղորդ։*

Աբեղան

*Ո՜, չե, չե, հայր սուրբ, նա չե իջանում,*
*Ինչպես սուրբ հոգին, աստծո խորանից,*
*Յեվ վոչ հրեշտակի պաշտոն ե տանում,*
*Բայց յես շատ հեռու, հեռու յեմ նրանից։*
*Ա՜խ, նա պակաս ե, նա չըկա այստեղ,*
*Մերժած ե անգամ նրա անունը,*
*Յեվ ահա դատարկ, դատարկ ե ահեղ*
*Որենքի պաշտպան աստուծո տունը։*

Վանահայրը

*Այդ խաղաղության թշնամին ե չար,*
*Վոր միշտ հեռու յե ահիցը վանքի։*

Աբեղան

*Նա չար չե, հայր, այլ միակ հաշտարար.*
*Մարդու ե կյանքի։*

Վանահայրը

*Ապա սո՞ւրբ ե նա։*

Աբեղան

*Սո՛ւրբ, ինչպես աստված ե յուր որենքը.*
*Յեվ սիրելի յե, վորքան ե կյանքը...*

Յես մեղք չեմ անում, հավատա, հայրիկ...
Դուք ինչու համար ինձ այստեղ բերիք.
Յես ինչ եմ արել, չե՞ յես էլ եմ մարդ,
Նրանցից մեկը, վոր այնքան ազատ
Ապրում են իրանց ցանկություններով,
Վոր աղոթում են ուրախ սրտերով...
Ինչու համար է իմ աղոթքն այստեղ,
Վե՞ր մեղավորին կըտանե յեդեմ...
Ինչու համար եմ չարչարվում անմեղ,
Յեվ յեթե այսպես յես այստեղ մեռնեմ,
Ձեզ կամ աստըծուն ինչ շահ իմ մահից...
Ուզո՛ւմ եմ ապրել. հա՛յր, կյանք տվեք ինձ...

Վանահայրը

Կյանք տալը նրա ձեռքին է, վորդի,
Մարդս ինչ կաներ, վոր շատ էլ ուզեր,
Բայց տես, տեսնենք իղձը քո սրտի —
Ի՞նչ ես կամենում։

Արեգան

Մի աղջկա սեր...

Վանահայրը

Պատանձվի՛ր, ո՛վ լիրբ, աչքիցս հեռացի՛ր,
Մի՛ ապականիր և մեր աղոթքը,
Շուտո՛վ, հեռացի՛ր, կամ գետինն անցի՛ր,
Չըպղծե տաճարի սեմը քո ոտքը։
Քո սրտին արդեն տիրել է չարը,
Հեռացի՛ր, աստծո բարկությունը տար,
Վոր չըկործանե և այս տաճարը
Քեզ հասանելի պատուհասն արդար։
Կամ ապաշխարիր պահքով, աղոթքով,
Հեռու հալածիր դիվական կիրքը,
Եվ այդպիսի բան չանցնի քո մտքով...
Շո՛ւտ, առանձնացի՛ր, կարդա սուրբ գիրքը։

Արեգան

Չե՛, էլ չեմ կարող. հերիք եր ինչ վոր
Առանձնության մեջ տանջվեցի լացած,

Եվ չի բռնանալ այս տենչատոչոր,
Սուրբ սիրո վրա քո սիրտը մեռած։
Արդ, յես համարձակ խոստովանում եմ
Քո և աշխարքի առջև իմ սերը,
Ցավ բոլոր հոգով արհամարհում եմ
Անցած դարերի խավար ծեսերը։
Դու էլ ես ապրել նախնյաց օրենքով, —
Ապրել ես միայնակ, մարդոց անօգուտ,
Այլև անկանոն, ցավալի կյանքով,
Մեղքեր ես միմիայն վաստակել հոգուդ։
Դու էլ, հնազանդ քո նախնյաց կարգին,
Ուխտեցիր տանել կյանքը վանական,
Բայց հաղթեց խավար բռնության կամքին
Միշտ ամենազոր օրենքը բնության...
Ձե՛, չեմ ճանաչում, յես չեմ դավանում
Այնպիսի աստված, օրենք անիրավ,
Վոր անարգում է սերն ամուսնական.
Որհնի՛ր, ծերունի, և մնաս բարյավ։
Սիրավառ սրտի համարձակ լեզվով
Ծերունու դիմաց խոսաց աբեղան,
Վոր, բարկությունից սաստիկ դողալով,
Աստծո անունով նզովեց նրան։
Ցավ մեծ դարպասը լուռ մենաստանի
Ծանըր ճռնչաց ու լայն բացվեցավ,
Վանքից մի հոգի հեռու ավանի
Ճանապարհն ընկավ. օրը լուսացավ...

# ՀԱՐԱՋԱՆՔ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

1890

## Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

*Լեռնե՛ր, ներշընչված դարձյալ ձեզանով,*
*Թընդում է հոգիս աշխուժով լըցված,*
*Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածված,*
*Ձեզ մոտ են թըռչում հախուռն յերամով։*

*Ձե՛զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,*
*Կյանքի տըխրության ամպերի տակից*
*Յես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ*
*Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր։*

*Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրտմություն,*
*Վեհափառ դայակ մանուկ օրերիս,*
*Այնժամ էլ չեյիր ինձ հանգիստ տալիս՝*
*Սըրտիս ականջին խոսելով թաքուն...*

*Ո՛վ, վոր կանչում ես գիշեր ու ցերեկ*
*Հազար ցավերով, հազար ձևերով, —*
*Վոգևորության հըզոր թևերով*
*Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեգ։*

*Գալիս եմ, բայց վոչ ուրախ յերգերով*
*Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,*
*Այլ դառն հեծության հառաչանքներով*
*Եվ անդընդախոր ձորերըդ լըցնեմ։*

*Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սև, լայնաբերան,*
*Սըրտիս եք խորունկ վերքերի նըման.*
*Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,*
*Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ յերգել։*

*Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք*
*Ձեր անդունդներով յեկեք չափվեցե՛ք,*
*Դուք ե՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր*
*Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...*

*Մի քանի տարի սրանից առաջ,*
*Յերբ վոր հայրենիք եկի յես գնում,*
*Այն մթին ձորում, ուր վոր քաղցրալաչ*
*Մեղեդու ձայնով Դեբեդն ե վազում,*

*Ժայռերի գլխին, ուր բազկատարած*
*Աղոթք են անում Հաղբատ-Սանահին,*
*Գիշերը հասա, ու յես դադարած*
*«Ղոնաղ» մնացի ծեր այգեպանին։*

*Նա տրտնջալով ծերության ընդդեմ*
*Քրթքթում եր յուր ծառերի տակին.*
*«Բարի որ, պապի», ու խոժոռադեմ*
*Ծերը յետ նայեց ձեռքը ճակատին։*

*Մի կասկածավոր ու խիստ հայացքով*
*Զննելուց հետո հոնքերը կիտեց,*
*Սաստիկ սառնությամբ պատասխան տալով*
*Դեպի յուր դափեն ինձ առաջնորդեց։*

*Նրա յետևից անխոս գընացի,*
*Փընթփնթացնում եր նա իմ առաջին —*
*«Մեր բանը պրծավ, յերբ ես ձորերի*
*Մըտերը սրանք ել յեկան սովրեցին։*

*Սա յեր մնացել, սա ել անպատճառ*
*Մեր գլխին մի նոր կրակ ե բերում,—*
*Նոր դրած բեգյար, կամ խղուր մի շառ,*
*Թե չե ինչ ունի ես խուլ ձորերում։*

*Յեկած կը լինի, վոր խաբար տանի,*
*Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա,*
*Ով յուր դռանը անասուն ունի,*
*Կամ վորի կնգա աչքերում յուղ կա։*

*Կամ հին գերեզման քանդող կը լինի,*
*Կամ թե կը համրի ծմակի ծառերը,*

Կամ նրա համար, թե որը քանի՞
Ձու յեն ածում մեր գյուղի հավերը...

Ո՞վ գիտի, հիմա ով վեր է կենում
Գլխին ես տեսակ գդակ է դնում...»:
Լսեց ծերունին ծանըր անքալով
Ու առաջ գնաց թին գիմհար տալով:

Իսկ յերբ վոր հասանք աղքատիկ գավիթ՝
Ինձ հրավիրեց, և յուր ունեցած
Շորի կտորը փռեց իմ տակին,
Ինքը առաջիս մնաց լուռ կանգնած:

Ճերմակ գլուխը այս բարձրացրեց,
Հոնքերի տակից ազդու նայելով,
Վորոտող ձայնով այսպես հարցըրեց
Զզվանք ու զայրույթն հազիվ պահելով:

— Աղա, հարցնելը ամոթ չըլինի,
Հրամանքդ ինչ մարդ ես, կամ վորտեղից ուր...
Յեվ չըսպասելով մի պատասխանի՝
Ինքը շարունակ խոսեց կցկտուր.

— Ով էլ վոր լինիս՝ բարով ես յեկել,
Անփորձանք լինի քո ճանապարհը,
Աստված կյանք տա ձեզ, վոր հարցնեք դուք էլ,
Թե ինչ ցավ ունի խեղճ ռանչպարը:

Աղքատ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
Անց ենք կացնում մեր սև-սև որերը.
Թե վորքան ենք դուրկ, վորքան ենք մենք խեղճ
Եդ հաստատ գիտե ինքը — միայն տերը:

Բայց դու էլ խելոք մի մարդ ես գիտուն,
Քո բարի աչքով տեսնում ես էլի,
Տկլոր ու սոված եսպես տարին բուն
Քարի-հողի հետ կռիվ ենք տալի:

Թե վոր ձեռներս էլ մի բան է ընկնում
Չենք կարողանում բերան հասցընենք...

Նաքան տանջվելով քրտինք ենք անում,
Էլ են սևերեսն, էլ են սովածն ենք...

— Ի՞նչից է, պապի, այսքան ճոխ յերկրում,
Ինչպես ասում ես, դժվար եք ապրում,
Վարձատրություն չեք ստանում հողից,
Թե նեղություն է գալիս մի տեղից։

«Մեր նեղությունը... քեզ ինչպես հայտնեմ,
Թող հաստատ լինի մեր թագավորը.
Յես ընչի տեր եմ, խոսեմ նրա դեմ,
Բայց ասված կարի մեր քաշած սրը...

Ի՞նչ անես, ախպեր, ումից խռովես,
Պետք է համբերել, թե լավ թե սալ...
Բայց դու չասացիր հրամանքդ ով ես,
Ուզում եմ քեզ հետ լիասիրտ խոսալ»։

— Յես քաղաքումը կարդում եմ, պապի։
— Հա՛, տիրացու յես, բա ինչու չասիր...
Կանչեց ծերունին ու իրեն դափի
Դունից հեռացավ. «մի քիչ սպասիր»։

ՀԱՏՎԱԾ II

Մըթնեց։ Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դըրեց կըրակին,
Նորից բարևեց իր յերկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին։

Ու նըստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստությամբ վառվող կրակի շուրջը,
Մեր աջև ձորն էր թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը։

Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Ծվում, ծըկլթում խավարի միջում,
«Վորբն» է յերգերը կանչում ցավալուր,
Բուն է իր դաժան վայը կըռնչում։

Ու վողջ միասին մի խորունկ թախիծ,
Մի մութ զարզանդ են գիշերին տալի...
Ահա տարածվեց հեռու ծըմակից
Յեվ ձիգ վռնոցը սովատանջ գելի։

* * *

Ծանըր տընքալով թեք ընկավ ծերը,
Յերկար կոթավոր չիբուխը լըցրեց.
Գիշերվա նըման կխտած նոթերը
Խուլ վորոտալով այսպես հարցըրեց.

— Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,
Իմանամ, յես էլ ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, թանգ ու եժանից,
Կամ նոր դուրս յեկած գաղեթից, բանից...

Յերեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, վոր այսպես լինի,
Խորհուրդ են արել, վոր այսուհետև
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի։

Ո՞վ է իմացել այսպես հրաշք բան։
Էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան,
Վոր կռիվ չանի, ուրշին չըտիրի,
Մարդ չըկոտորի, յերկիր չավերի...

— Է՜հ, աստված սիրես, թող դրանց, պապի,
Յես շատ եմ ըլսել քաղքից, գաղեթից.
Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր որ ու կյանքից, ձեր ցավ ու դարդից։

— Ի՞նչ ես կորցրել — ընչի ման գալի, —
Խոսեց ծերունին դառը խնդալով,
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի,
Ամեն մեռնողի յերանի տալով։

Մեր ապրուստն ի՞նչ է. — մի կտոր չոր հաց,
Են էլ հըրեն հա՛ — յերկընքից կախված.
Մի մարդ վոր նըրա յերեսը պահի՝
Նըրա ապրուստը ի՞նչ պետք է լինի...

Յես քեզ որինակ։ Ես խոր ձորերում
Ես ե չորս քսան տարիս լըրացավ,
Վոչ մի խնդություն տեսա իմ որում,
Վոչ ել մի անգամ աչքըս լիացավ։

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
Պըտուտ եմ գալի ես ձորի միջին,
Կըռիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում — չեմ հասնում վերջին։

Վաղներից ենքան ոգուտ չի գալի,
Ինչ նրանց համար յես փող եմ տալի.
Գըլուխը քարը, գոնե փող լինեը,
Ել ինչու ենքան մարդ գանգատ կանեը։

Ջախ եմ հավաքում, կըրակ եմ վառում,
Սրա համար ել փող եմ վըճարում։
Ես դամին ինչ ե — մի յերկու լատան,
Հինգ ու վեց անգամ տարան դատաստան։

Ասում են՝ գեջ ես կարել դու մերին։
Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,
Մինչև չըտեսնես մեծին, պխսերին.
Հիմի տես նրանք ինչքան են ուզում։

Գողն ել մի կըռնից, գելն ել մյուս կըռնից,
Աչքըդ թեքեցիր — բանիդ տերը չես.
Քաշում են տանից, քաշում են դըռնից,
Ու չես իմանում՝ վոր կողմը թըռչես։

Թե տանուտերին գանգատ եմ գնում,
Բան չեմ վաստակում բացի դուշմանից.
Գողերի հետքը իր տունն եմ տանում.
Համեցե՛ք դիվան ուզիր սըրանից։

Նստեցնում ե քեզ մի յերկու բաժակ
Տաք ջուր խմեցնում կամ մի թաս ողի.
— Դու գնա, պա՛պի, միամիտ քընիր,
Յես աչքի լուսը կըհանեմ գողի...»։

Դարձել ե աշխարքն, ախպեր, տա ու փախ,
Սերը դարձել սուր ու ջուրը — արին,
Վոչ ամոթ ունի ուժեղը, վոչ վախ,
Վայը յեկել ե տարել ըրկարին։

Յերեկ իրիկուն եդ կողքիդ սընից
Կախ եյին արած յերեք հըրացան.
Տղեք են՝ փախած տանից, դիվանից,
Յեկան ու ծեքին ել յետ հեռացան։

Ո՞վ ե մեղավոր... Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով ե մեղավոր։
Հենց են եմ տեսնում — մութն, անգետ մարդիկ,
Ել մենք ենք մեջտեղ տանջվում ամեն որ...

Մեր բանն ել, ախպեր, եսպես ե յեկած.
Մենք լեզու չունենք — ուժեղը տարված։
Մեր հին ադաթից ընկել ենք, զըրկվել,
Նորն ել չըգիտենք թե ինչ ե յեկել։

Եստեղ մեզ մոտիկ թավադներ ունենք,
Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
Փորներն վողողած, փոխկները թողած,
Կըռները կանթած՝ կըտերը կանգնած։

Մեկլին մեր գյուղում մի թիզ հող ունի,
Թըքես մի ծերից, մյուս ծերը կընկնի.
Վոչ ինքն ե վարում, վոչ տալիս մեկլին,
Բուռն ե հավաքել գյուղացու հողին։

Գնում ե ուրշի ապրանքը տանում,
Թաքուն հավաքում իր հանդն ե անում,
Ազնուկով քըշում իր հանդի միջից,
Տարափ ե անում անմեղ տիրոջից։

Պարում ե ձմեռն հարսանիքներում,
Կամ մեծավորի թեփշի յե լիզում,
Մինչև մի քանի շահի յե ճարում,
Են ել տանում ե լափում Թիփլիզում։

Մի օր սա ջոկավ, թե՝ չոբան Զատին
Վոչխարը թաքուն իմ հանդն է քաշել.
Զատին էլ կուլ չի գընաց թավադին.
— Թող գա մի տեսնենք — եդ ո՞վ է տեսել:

Աղաչանք արի, պաղատանք արի,
— Ա՛յ աղա, ասի, յետ քա՛շվի, հեռի,
Բեր ձեռը վեր կալ, անեծք չար բանին...
Բայց ի՞նչ հասկացնես բըռի չոբանին:

— Ձե՛ վոր չե՛, ասավ, են լեռ. սարի տես
Գընաց դիք կանգնեց գեղի մեյդանում.
Ես դատաստանը, ես թավադն, ես յես,
Թող գա մի տեսնենք ինձ ինչ է անում:

Յեկան իրարու, խոսք խոսքի հասավ,
Զատին մի քանի կոշտ խոսքեր ասավ.
Դե մարդիկ յերբ վոր կռիվ են անում,
Մեջտեղ փըլավ չեն իրար բաժանում:

Մեր տանուտերն էլ, աստված է օրհնել,
Նոպես մի բան էր պակաս նըրան էլ.
Մեկի պոչը միշտ մեկելի տակին,
Յեկավ տաքացած, ճիպոտը ձեռքին:

Յեկավ ես Զատնիս հաչիցը կապեց,
Ինչքան վոր գիտես՝ քո տած թակեց,
Թե՝ պետք է կորցնեմ քեզ էնքան հեռու,
Վոր էլ չըտեսնես արևը Լոռու:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի վոտը խընդիրքով,
Ինչքան վոր ասինք, ավել խընդրեցինք —
Բանը վերջացնի գեղական կարգով:

Ախպե՛ր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք եք կավացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տըվիր, համ ըշտրափել տա,
Արի վերջացրու, բոլ եղավ, հերիք:

Սա վատը գրեց վերի Թարեքին.
— Եսքան ու եսքան բերեք, վոր ներենք…
— Ես է ունեցածն աստըծու տակին,
Էլ չըկա, ա՛խպեր, վո՞րտեղից բերենք։

Ինչ արինք, չարինք, չեկավ հավատի.
Գընաց ավելի բարձըր գանգատվեց,
Թե՝ ինքըս Թավադ, Թավադի վորդի,
Ու չորան Զատին ինձ ուշունց տըվեց…

Վերեից մի մարդ յեկավ քննություն,
Միրուքը հաչա, աստղը ճակատին,
Յեկավ, վեր յեկավ, մտավ քյոխվի տուն,
— Վո՞րտեղ է, ասավ, են չորան Զատին…

Զատին էլ յեկավ անձոռնի ու մեծ,
Են փետի նըման մեջտեղը տընկվեց.
Վոչ որենք գիտի, վոչ կարգն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն։

Քննությունն արին, ըռանեցին գյադին,
Թե՝ ինչպես ուշունց կըտաս Թավադին.
Բայց արին տեսան գըրած զակոնում,
Թե չորան Զատին Սիբիր է գընում։

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք Թավադի վոտը խընդիրքով,
Ինչ ուզեց, տըվինք, հետն էլ խընդրեցինք՝
Բանը վերջացնի գեղական կարգով։

Ա՛խպեր, ասեցինք, ինչ արիք իրար,
Խոսք եք կռվացրել, արին հո չարի՞ք.
Համ ծեծել տըվիր, համ ուզածըդ առ,
Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք։

— Հո՛ գիտեք, ասավ, յես էլ խըղճի տեր,
Ձեմ ուզում ընկնեմ արինն եդ տըղի,
Դըրա խիղանը մենակ ես գիշեր
Պետք է վոր գըցի տեղը ես աղի…»։

Մարդը խիղճ ունի՝ նույնս է ասում,
Սըրանից ավել էլ ի՞նչ ենք ուզում.
Բայց տըղամարդը, վոր նամուս ունի,
Լավ է իմանում ինչ պատասխանի...

Յերեկ իրիկուն էդ կողքից սընից
Կախ եյին արած յերեք հըրացան։
Քանի՜-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի՜-քանի մարդ դառավ մարդասպան...

Ո՞վ է մեղավոր։ Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով ենքանն եմ տեսնում—
Ապրիլ չի լինիլ նույնս ամեն որ։

Մինը իր կամքին՝ ինչ ասես՝ անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Յես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Են վո՞ր աստվածն է կարգ դրել նույնս...

Յերկուսն էլ հայ են, ունեն մի հավատ,
Էլ ընչի՞ մուժիկ, կամ էլ ի՞նչ թավադ.
Նըրա արինը կարմի՞ր է մերից,
Թե՞ ավել հունար դուրս կըգա ձեռից։

Թե չէ՝ թավադ ես՝ ինչ ուզես անես,
Յես չըկարենամ քեզ մի խոսք ասե՞լ...
Ե՜հ, մի՛ խոսեցնի, աստված կըսիրես,
Թե չէ մի ղաչաղ կըդառնամ յես էլ...

Լըռեց ծերունին։ Իրար դեմ ու դեմ
Թիկնած եյինք թեժ կըրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը։

# Ա. Ն Ո Ւ Շ

1901

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

### (ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐԸ)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թըռչելով
Փերիները սարի գլխին
Հավաքվեցին գիշերով։

— Յեկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի
Չըքնաղագեղ փերիներ,
Յեկե՛ք, ջահել սիրահարի
Սերը վողբանք վաղամեռ։

Ոխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունջ,
Ոխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սերին...

Ափսո՜ս, Անո՜ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու յարին.
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս եդ ծով աչքերին...»։

Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցված սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սյուքով
Հառաչեցին են գիշեր։

«Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ, քուրի՜կ,
Վո՜ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո՜ւշ, Սարո՜, վուշ-վո՜ւշ, իգի՜թ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...»։

— Յնկե՜ք, քույրե՜ր, սեգ սարերի
Զըքնաղագեղ վոգիներ...»։
Ու փերիներն էսպես տխուր
Յերգում էին վողջ գիշեր։

Կանչում էին հըրաշալի
Հընչյուններով դյութական,
Ու հենց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան։

Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն։

## ԱՌԱՋԻՆ ՅԵՐԳ

### I

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Են չըքնաղ յերկրի կարոտը անքուն,
Ու, թևերն ահա փըռած տխրաբար,
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն։
Ուր վոր հայրենի ոջախի առաջ
Վաղո՜ւց կարոտով ըսպասում են ինձ,
Ու ձըմրան յերկար գիշերը նըստած՝
Խոսում են Լոռու հին-հին քաջերից։
Դեպ են սարերը, վոր վեր, վիթխարի՛,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա՛ շուրջպարի բըռնած յերկընքում,
Հըրճվում են, ասես, են մեծ հարսանքում
Պերճ Արարածի նազելի դըստեր,
Վոր Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լոռի։



«Անուշ» 1901 թ. ձեռագրից:

II

Ե՜յ հին ծանոթներ, ե՜յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա ու միտըս ընկան,
Առաջըս յեկան յերջանիկ որեր,
Սիրելի դեմքեր, վոր հիմի չըկան։
Անցե՜լ են, վոնց վոր ծաղկունքը պես-պես,
Վոր անցած գարնան կային ձեր լանջում.
Անցե՜լ՝ ձեր գըլխի հերվան ձյունի պես,
Բայց յեկել եմ յես՝ նըրանց եմ կանչում։
Վողջո՜ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Վորբացած հոգիս վողջունում ե ձեզ,
Թըռչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում ե հանդես։
Դուրս յեկեք կըրկին շիրմից, խավարից,
Դուրս յեկեք տեսնեմ, շոշափեմ, լըսեմ.
Կյանքով շընչեցե՜ք, ապրեցե՜ք նորից,
Լըցրե՜ք պատանի հաճույքը վըսեմ...

III

Յեվ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թավուտ ծըմակի լըռին խորքերից,
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից։
Թընդում ե գըվարթ աղմուկը ռինի,
Բարձրանում ե ծուխն իմ ծանոթ ուրթից,
Ու բոլորն, ահա, նորից կենդանի,
Յելնում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թա՜րմ, ցողապատ լեռների լանջում...
Մո՜ւս... ակա՜նջ արա, — հովի՜վն ե կանչում...

IV

— Աղջի՛, անաստված, նըստե՛ր վըրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանդըստանում,
Խաղեր կապելով,
Զոլեր չափելով,
Վոչխարըս անտեր,
Ընկել եմ հանդեր։

Ամա՜ն, էրեցիր սիրտըս քու սիրով,
Վոտըս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զոռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ։

Քու հերն ու մերը թե վոր ինձ չըտան,
Արին կըթափեմ յես գետի նըման.
Սարերը կընկնեմ — կորչեմ անդյուման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջիկ, քեզ համար։

V

Յերգում է Սարոն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստի վըրանում։
— Էն ո՞վ էր, նանի՛, վոր կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում... ականջ արա, ա՜ն...
— Հերի՛ք է, Անո՛ւշ, ներս արի դադեն,
Բանի՛ դուրս թռչես, նայես դես ու դեն,
Տեսնողն էլ կասի — ի՛նչ աղջիկ է սա...
Հազար մարդի մոտ կերթա-կըխոսա։
— Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին
Ի՛նչքան ավլուկ է տալիս կանանչին...
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,
Էն սարի լանջին «ջան գյուլում» ասեմ։
— Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունես ջահել չոբանների մոտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, ա՛ղջի, ամոթ է, ամո՛թ։
— Ա՜խ, սիրտըս, նանի՛, չըգիտեմ ընչի,
Մին լաց է լինում սևակնած, տըխո՛ւր,
Մին թև է առնում — ուզում է թռչի,
Չըգիտեմ՝ թե ո՛ւր, չըգիտեմ՝ թե ուր...
Նա՛նի ջան, նա՛նի, յես ի՞նչպես անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալեդ...

Նանիջան, նանի, կուժը թող անեմ,
Աղբյուրը գընամ աղջիկների հետ...

VI

Կըժերն ուսած՝ թըռվըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Յերգը ղընգում սարն ի վեր։

— Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի փըրփըրում.
Են ձեռ յարն է նըստած լալի
Հոնգուր-հոնգուր են սարում։

Ա՛յ պաղ ջըրեր, պուլպուլ ջըրեր,
Վոր գալիս եք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չոլեր,
Յարս էլ խըմե՞ց եդ ջըրից։

Յարար խըմե՞ց, յարար հովցա՞վ
Վառված սիրտը են յարի,
Յարար հովցա՞վ, յարար անցա՞վ
Անքուն ցավը ջիգյարի...

— Աղջի՛, քու յարն յեկավ, անցավ,
Վառված, տարված քու սիրով,
Երված ջիգյարն՝ յեկավ, անցավ,
Չըհովացավ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Ա՜խ, իմ ազիզ յարն է լալի
Հոնգուր-հոնգուր են սարում։

VII

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ
Ձեն տըվավ թաքուն մի խավար կասկած.
— Են յե՞րբ եր՝ Անուշն իր կուժը առավ,
Աղբյուրը գընաց ու յետ չըդառավ...
Ամպերն յեկել են սարերը պատել,

Ջրերը լցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի…
Ու յելավ անցից պառավը հանկարծ.
— Ո՞ւր կորար, Անո՜ւշ, ա՜յ մաղըդ կըտրած…
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անտան զավակին.
— Աղջի՜, սևասի՜րտ, քու տնը կըրակի,
Աղջիկը մենակ ձորը կըմըտնի.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ ես կորցըրել՝ չես կարում գըտնել…
Աղջի՜, հե՜յ Անուշ, ա՜յ աղջի՜, Անո՜ւշ…
Ծընկանը զարկում, հառաչում է «վո՜ւշ»…
Ու ձորի գըլխին մոլորված կանգնած
Նայում է ներքև սիրտը սևացած։
Ամպերն յեկել են սարերը պատել,
Ջրերը լցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի։

VIII

— Թո՛ղ, կանչում են ինձ… մերըս կիմանա…
— Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի քիչ էլ մընա…
— Չէ՛, թո՛ղ, յես գնամ… ա՜խ, ի՛նչ խենթ եմ յես…
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
Հենց յես եմ մենակ լալիս ու տանջվում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում…
Վաղո՜ւց, վաղուց ես դու ինձ մոռացել…
Յես յե՛րբ եմ յեկել եստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՜ւմ, անիրա՜վ,
Ենքան մընացի՝ աչքըս ջուր դառավ.
Ինձ չես լըսում,
Չես ափսոսում,
Ել չես ասում—
Ինչ կըլնեմ յես…
Յես կը վառվեմ,
Հուր կը դառնամ,
Յես կը հալվեմ—
Ջուր կը դառնամ,
Յես… չը գիտեմ

Ինչ կը դառնամ,
Թե վոր մին էլ
Էսպես մընամ…

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
Մընում էր յարին,
Ու չեկավ նա տես։
Խեղճը դողալով
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,
Ուռենի դարձավ…
Ջըրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Վո՞նց է մոռանում…

— Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.
Էն, վոր լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում…
Էն, վոր գիշերով շըհու յեմ փըչում,
Էն ո՞ւմ եմ կանչում…
Էն, վոր մոլորված նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում…
Էն, վոր հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ հիշում…
Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ, անտառվա՜ծ Անո՜ւշ…»
Արբեցա՜ծ, անո՜ւժ
Հառաչեց հովիվն ու սըրտին ընկավ,
Հալվեցա՜վ, հանգա՜վ…

IX

— Անո՜ւշ, ա՛յ աղջի՛, Անո՜ւշ, տուն արի…
Կանչում է մերը, հառաչում, կանչում։
— Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛…

Զորից աղջըկա ձենն է ղողանջում։
Ու մազերն անկարգ ոլոված թիկունքով
Ու ցըրված շիկնած այտերի վըրան,
Դուրս յեկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած յեղնիկի նըման։
Նա կուժը դատարկ յետ բերավ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկա,
Թողել է հեն էլ ջըրի յեզերքին...
Ա՜խ, անհոգություն ջահել աղջըկա...
— Նանի՛, վախեցի, գանգատվում է նա,
Յեվ ուզում է լալ, չի կարողանում.
Նանի՛, ներքևում յես մարդիկ տեսա,
Կարծեցի՝ թուրքեր եյին լողանում...
Անիծում է ծեր մերը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անեծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ յետ բերած հին կուժը ուսին։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԳ

### X

### (ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱՌԱՎՈՏԸ)

Համբարձումն յեկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով.
Փունջ-փունջ աղջիկներ սարերը յելան
Վիճակ հանելու աշխույժ յերգերով.

«Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սև սարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։

Յերգ ու բույր խառնած,
Թև-թևի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպես թիթեռներ։

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,

Լավ օրեր, յա՜յլա,
Յա՜յլա ջան, յա՜յլա։

Ցնկավ Համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
— Ո՞վ է մեզ գըրված։
— Ա՛յ ջան աղա, չորա՜ն աղա, ուժն էս դու։
— Աստված գիտի, աշխարհ գիտի՝ իմն էս դու։

Դե հանիր, աղջի,
Վիճակն ի բարին,
Ցերգերով զովենք
Էն իգլիթ յարին։
— Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի,
Ի՜նչ զարդ ունեմ քանի նա կա աշխարհի։

Համբարձում, յա՜յլա,
Յա՜յլա ջան, յա՜յլա,
Հուր սըրտեր, յա՜յլա,
Յա՜յլա ջան, յա՜յլա։

Թընդում են յերգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ցելնում է մեկին իր յերազն ու սեր,
Մյուսի մուրազը սըրտումն է մընում։

## XI

Գըտուչյա է տալիս վիճակը նորից
Փուշուշքը գըլխին ծաղիկ Ծաղկամեր,
Թընդում «ջան գյուլում» մատաղ սըրտերից,
Հետը գըվգըվում՝ են ծաղկոտ սարեր։

«Ա՛յ թուխ մաղավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգյարին գյուլլա դիպչի
Քեզ սիրի ով վոր, աղջիկ»։

— Վա՜հ, ի՜նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
Սևաբա՜խտ քուրիկ, նազելի Անուշ.

Քու ձեռը կոտրի, ով վոր հանեցիր...
Ու վորբ մընացին մոլորված, ապուշ։

— Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղը խաղա՛, ջան գյուլում ասա։

— Ա՜խ, չէ՛, յես գիտեմ, վոր յես բախտ չունեմ.
Յես յերնե՜ք, յերնե՜ք բախտ չեմ ունեցել...
Յես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.
Մանուկ որից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի որ, յես որորոցում,
Մի պառավ դարվիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նըրան բաժին չի տալի։
— Կորչի՛, ասում է, կորչի՛ մեր դըռնից,
Յերեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛...»
Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,
Թե՝ դըրա օրը լացով անց կենա...
Ա՜խ, էն դարվիշի անեծքին անգութ
Ու էս վիճակին տեղյակ է աստված.
Սիրտըս էլ միշտ փա՜կ, սիրտըս էլ միշտ մո՜ւթ,
Ի՞նչ կա, չըգիտեմ, իմ առջև պահված...

— Մի՛ տըրտմիր, Անո՜ւշ, մի՛ լինիր համառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարվիշ, մի անեծք հիմար,
Ու լալիս ես դու էդպես սըրտաճա՜ք...
Հանգի՛ստ կաց, քուրի՛կ, մի՛ վախիր էդքան,
Կյանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Եվ քո նորահաս մատաղ կուսության
Առաջև դեռ կան յերջանիկ որեր։
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գյուլում ասա՛։

(ԽՈՒՄԲԸ ՅԵՐԳՈՒՄ Ե)

Աղջի՛, բախտավո՛ր,
Երնե՜կ քու սերին,

*Քու սարի սովոր*
*Սև-սև աչքերին։*

*Համբարձում, յա՛յլա,*
*Յա՛յլա ջան, յա՛յլա,*
*Սեր-որեր, յա՛յլա,*
*Յա՛յլա ջան, յա՛յլա։*

*Մեռնեմ գարունքիդ,*
*Ծաղկած գարուն ես,*
*Սարի պես մեջքիդ*
*Կանգնած յար ունես։*

*Համբարձում, յա՛յլա,*
*Յա՛յլա ջան, յա՛յլա,*
*Սար-յարեր, յա՛յլա,*
*Յա՛յլա ջան, յա՛յլա։*

(ԱՆՈՒՇԸ ՄԵՆԱԿ)

*Ա՜խ, իմ բախտը կանչում է ինձ՝*
*Չեմ հասկանում դեպի ուր...*
*Դողում է պաղ նրա ձենից*
*Իմ սիրտը սև ու տխուր։*

*Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,*
*Թաքուն մի ցավ ունիք լուռ,*
*Աչիկներըդ լիքն է արցունք,*
*Սիրտներըդ սև ու տխուր։*

*Ա՜խ, ծաղիկներն են աշխարհքում*
*Տանջվում են միշտ եսպես զուր,*
*Տրորվում են ու թառամում*
*Սիրտները սև ու տխուր։*

(ԽՈՒՄԲԸ ՀԵՌՎԻՑ)

*Համբարձում, յա՛յլա,*
*Յա՛յլա ջան, յա՛յլա,*
*Վառ ցավեր, յա՛յլա,*
*Յա՛յլա ջան, յա՛յլա։*

## ՅԵՐՐՈՐԴ ՋԵՐԳ

### XII

Ձըմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անդուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն էյին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից հետո լեն հըրապարակ
Բաց արին մեջտեղն արձակ գըլխատան,
Ջուռնաչին փըչեց կոխի յեղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան։
Հարա՜յ են տալի — «քաշի՜ հա, քաշի՜...»։
Ու դուրս քաշեցին դասով յերկուսին.
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Անդրանիկ յեղբայր, դառնաբած Մոսին։
Վողջ գյուղը կանգնեց պարըսպի նման,
Ջոկվեց, բաժանվեց յերկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի։
  Գոռում են, գոչում յերկու բանակից.
— Սըրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք, տըղե՛րք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարս ու աղջըկերք։
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փեշերը հավաք խըրում են գոտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
  Ադաթ կա սակայն են մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց ադաթին՝
Ամբոխի առջև իգիթն իր որում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։
Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խողապարկուկի,
Ընկնում են գետին, յելնում միասին,
Դըժվար է իբրև հաղթել մեկ մեկի։
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սըրտատըրոփ նայում աղջիկներ,
Ցել դուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր։
Անուշը կանգնա՜ծ... Սարոն նըկատեց,

Թո՛ւնդ տվավ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացավ ընկեր, ադաթ ու աշխարք։
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ տվավ Սարոն, ծընկից կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրեն։
Ամբոխը թափվեց հարա-հըրոցով,
Վեր թըռցրեց ջահել փահլևաններին,
Յեվ՝ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին։
Ցընծության ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք։

XIII

Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում,
— Թող գա՛, գոռում է, վար ընկնենք նորից՝
Թե չէ նամարդը, արևս եմ յերդվում,
Ել չի պըրծնելու յերբեք իմ ձեռից։
Վե՛ր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մեյդան բաց արե՛ք, թող մին էլ մեջ գա...»։
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

— Զե՛լավ, եդ չե՛լավ,
Վեր չի գըցել դեռ,
Մոսին թոլ ելավ —
Խողապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
Շատ էլ լավ կանի.
Մեջքը թա՛փ տըվեք,
Թող մին էլ ընկնի...
Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
Մեջքը թա՛փ տըվեք...»։

XIV

Յեվ աղմըկալի հարսանքի տանից
Դուրս յեկավ Մոսին սաստիկ վիրավոր.

Արյուն է կաթում սևակնած սրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
— Ամո՜թ քեզ, Մոսի՛, թո՜ւք ու նախատինք,
Ամո՜թ քեզ նըման գոված իգիթին,
Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,
Դեռ քու թիկունքը չեր տեսել գետին:
Ի՜նչպես վեր ընկար դո՜ւ — սարի նըման,
Յերբ վոր նայում եր վողջ գյուղը կանգնած...
Դո՜ւ... կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
Նըրանից հետո յերևաս կանա՞նց...
Յեկա՞ծ եր ես բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բոլանդակ գեղին...
Դե մեռի՛ր, ելի՛, գետի՛նը մըտիր,
Տանը վե՛ր ընկիր՝ ի՛լիկ պըտըտի՛ր...»:

XV

— Վա՜յ, վա՜յ, Մոսի ջա՛ն, ինձ մի՛ ըսպանիր,
Սըրանից հետո չե՛մ սիրել նըրան...
Վախենում եմ յես... դամեդ տեղը դիր...
Սիրտըս դողում է տերևի նըման...
Խընդրում եր լալով յեղբոր առաջին
Անզոր ու դալուկ իր քույրը չոքած,
Մոսին՝ փայլըլտուն խանչալը ձեռին՝
Ուզում եր մորթել նըրան՝ աչքը բաց:
— Դե իմ անունով յերդվիր, անըզգա՛մ,
Վոր ել Սարոյին դու չես սիրելու,
Թե չե՝ տեսնում ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտդ եմ խըրելու:
— Քու վոտի հողն եմ, Մոսի ջա՛ն, Մոսի,
Դու քու յեսիրին յերդվում ես տալիս...
Յես ել Սարոյին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չոքած ի՛նչպես եմ լալիս...
— Դու խաբում ես ինձ, սուտլի՛կ, խաբեբա՛.
Չե՞ս սիրում ասիր. են ի՞նչ է հապա,
Են ի՞նչ է հապա, վոր տեղն ենք մըտնում՝
Հեկեկում ես դու գիշերվա մըթնում.
Են ի՞նչ է հապա, վոր դու յերազում
«Սարո ջա՛ն, Սարո՜... Սարո» յես ասում...
— Մոսի ջա՛ն, Մոսի, գըլխովըդ շուռ գամ.

Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող ես անգամ.
Եվ չեմ սիրել քեզ, յերբ դու չես ուզում,
Եվ չեմ կանչել քեզ նըրան յերազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դամեք տար հեռու...
Քու քույրը չե՞մ քեզ... իմ Մոսին չե՞ս դու...

XVI

Ու են հարսանքից թըշնամի դարձան
Ախպեր ընկերքը ես գեղքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, յեկան,
Կըրկին հաշտության չեղավ մի հընար։
Անկոտրում Մոսին եվ վո՜ր Մոսին էր,
Վոր՝ աչքը դեռ բաց, ես լուս աշխարքում,
Իրեն հարազատ քըրոջը տեսներ
Նամարդ ընկերի — Սարոյի գըրկում։
Գուցե գիշերս եվ՝ իր հերսից անքուն
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարոյի անունն ու սերը թաքուն
Խանչալի ծերով սրտից հանի։
Ո՛վ գիտի, գուցե հենց ես գիշեր եվ
Իգիթ վոսոխներն, անհաշտ ու համառ,
Մեկմեկու հոտից վոչխար են քըշել,
Մեկմեկից վըրեժ առնելու համար։
Կարող է նույնպես պատահել հանկարծ,
Վոր մեկի գեղը — արդյունքը հընձի,
Գիշերվա ժամին, հըրով բըռընկած,
Յերկնահաս բոցով աստղերը խանձի։

ՉՈՐՐՈՐԴ ՅԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Բարոտ թիկունքից Չաթինդաղ լեռան
Նոր է արևը պըռունգը հանում։
Գյուղում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծերերին կանայք հավաքված,
Տըղերքը գեղի քարափին են վազում
Հըրացանների կիսերից բռնած։

## XVIII

Յեկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովված տըղերանց միջին,
Մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ
Եսպես նա պատմեց դոռ տալով չիբուխին։
— Ես գիշեր, կեսը կըլներ գիշերվա,
Դեռ չեյի կըպցրել աչքըս տեղի մեջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կեսը կըլներ գիշերվա,
Շունը վերկացավ էս կըռան վըրա.
Հեյ-հե՜յ, կանչեցի, ձեն տըվող չեղավ.
Շունը գողացեց, շունը վեր կալավ...
Հե՜յ գիդի, ասի ինքըս իմ միջում,
Ի՞նչ է մընացել առաջվան տըղից.
Քընում եյի վաղ մենակ արխաջում,
Մի ձեն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն եյի ասում, քընել չեյի դեռ.
Կը լըներ դառը գիշերվան կեսը,
Յերկու մարդկային ու կերպարանքներ
Տան առջև փախած՝ ցած իջան գետը...»:
Ես վոր լըսեցի, դես ու դեն ցըրված
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի ափին, ճամբիցը ծըռված,
Յերկու մարդու թարմ վոտնատեղ գըտան:

## XIX

Ամբողջ մի ամիս խումբը գինավառ
Սարեր ու ձորեր վոտնատակ արվեց
Զորան Սարոյին գըտնելու համար,
Վոր սարիցն իջավ, Անուշին փախցրեց:
Մի ամսից հետո տըղերքն յեկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
— Հալալ է տըղին, ա՛յ կիլիթուլթյուն,
Ահա թե ինչպես կըփախցնեն աղջիկ:
Մենակ Անուշի ախպերը — Մոսին
Մընաց հանդերում. յերդում կերավ նա,
Ուր վոր էլ լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա:

*Մնաց հանդերում։ Յեվ ահա մի որ,*
*Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,*
*Շորերը պատառած, տխուր, գըլխակոր*
*Անուշը ձորից յեկավ հորանց տուն։*

## XX

*— Աղջի՛, Վա՛րդիշաղ, թե հոգիդ սիրես,*
*Մի գարիդ գըցի՛ր, տե՛ս ի՞նչ է ասում.*
*Աչքըս խավարի, տեսիլք դառնամ յես,—*
*Տեսիլք եմ տեսել գիշերս յերազում։*
*Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,*
*Անբախտ Սարոյի վոչխարը կանգնած,*
*Լեղու յեր տվել ու խաղ եր կանչում,*
*Ու խաղ եր կանչում ձե՛ն ձենի տըված...*
*Մի գարիդ գըցի՛ր, թե վորդով խընդաս,*
*Ես յերազն իսկի յես լավ չեմ փորձել.*
*Վողորմած աստված, քու դուռը բանաս,*
*Քու վոտի հողն ենք — դու յես ըստեղծել...*
*Անբան դառները մութ ձորի միջին*
*Խաղ եյին կանչում ու ձենով լալիս,*
*Սարոյի նանն ել նըրանց առաջին*
*Ագլուխ եր տվել ու պար եր գալիս...*
*— Աղջի՛, Մա՛նիշակ, վատ բան ես տեսել,*
*Գարիս ել, ահա, եդպես դուրս յեկավ.*
*Ես չարն, ես բարին... Սարոն է ես ել...*
*Տե՛ս, ահա, Սարոն սև ճամբեն ընկավ...*
*Աստված խընայի ջահել-ջիվանին,*
*Աստված խընայի իր անբախտ նանին...*

## XXI

*Ու ման է գալի սարերը ընկած*
*Սարոն փախցրած յեղջերվի նըման,*
*Որսկան առաջին, գընդակն յետևից,*
*Հանդերը՝ դըժոխք, ընկերը՝ դուշման։*

*Յեվ յերբ յերեկոն հանդարտիկ ու լուռ*
*Սարերից իջնում, խավարն է պատում,*
*Նըրա բայաթին վողբում է տըխուր,*
*Ընկեր սարերին խոսում, գանգատվում։*

«Բարձըր սարեր, ա՜յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՜յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր։

Վորս եմ՝ բութես ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անդյուման,
Ես աշխարքից բեզարած։

Կորչեմ բեզար դատարկուն,
Բար-սարեսար դատարդյուն,
Մեռնեմ պըրծնեմ ես որից,
Բալքի առնեմ դադար-քուն։

Ա՜խ, կը մեռնեմ՝ ամա նա
Վա՜յ թե հանկարծ իմանա,
Ցես ազատվեմ ես ցավից,
Աչքը լալով նա մընա»։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՐԳ

### XXII

Լալիս ե Անուշն յերեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խոսք չեն գըտնում ասեն անարգված,
Տարած-յետ բերած, անբախտ աղջըկան։
Աստված խընայեց՝ կոպլիտ ախպերը
Հեռու հանդերից դեռ տուն չեր դարձել,
Իսկ խոժոռադեմ ալեոր հերը
Ըսկսավ փըրփըրած թըքել, անիծել։
— Դուրս գընա, կորի՛, ա՜յ լիրբ, անըզգա՛մ,
Սև ու սուգ լինի թաղ ու պըսակըդ.
Կորի՛, չերևաս աչքիս մյուս անգամ,
Գետինը մըտնի յերկար հասակըդ։
Տեսա՛ր, վոր նըրան ատում ե Մոսին,
Ձեն ուզում, տեսար, նըրան հերն ու մերդ,
Դու քա՜նի գըլուխ ունիս քո ուսին,
Վոր վեր ես կենում փախչում նըրա հետ։
Խռնըված գյուղացիք կըտուրից իջան

Մեղմելու կոպիտ բարկությունը հոր,
Հայտնըվեց նույնպես գյուղի քահանան,
Մի պատկառելի հըսկա ալեոր։
— Դուրս գընացեք, դուրս, դուչեց տերտերը,
Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,
Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,
Նըրանից հետո բանը կըպարզվի։
Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
Սիրո՞ւմ ես նըրան, քու կամքո՞վ փախար…
Յեթե սիրում ես՝ եղ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ յես ձեզ անպատճառ…
— Ի՞նչ են հառաչում… են ո՞վ եր, մի տե՛ս,
Վոր զուրսը հանկարծ աղմըկեց եալես…
Ո՞վ է բալանել… Մոսի՛ն… ո՞ւմ… ո՞ւր…
— Անո՛ւշ, հե՛յ Անո՛ւշ… ջուր հասցրե՛ք, ջո՛ւր…

## XXIII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Յերկընքի մըթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ սաստիկ սըրնթաց,
Գյուղից սըլացան մի խումբ կըտրիճներ։
Ցավից տաքացած եղ բան չեն հարցնում,
Թըռչում են, սահս ահից հալածված,
Ու նըրանց առջև ահուելի բացվում,
Թըշշում է ձորը արյունով լըցված։
Գյուղը դատարկվեց մի ակընթարթում,
Բարափի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՛ւռ, սըրտատըրոփ ականջ են դընում,
Նայում են ներքև… ձեն չի գալիս դեռ.
Դերեդն է մենակ անդընդում հուզված՝
Խըլաձայն վողբով սողում դեպի ցած։

## XXIV

Ու մարդասպանը դուրս յեկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Յեվ կերպարանքը փոխված է բոլոր։
Առանց նայելու մարդկանց յերեսին,
Առանց խոսելու, սևակնած, դաժան,

Մոտեցավ սրահին, կախ տըվավ սընին
Սև հրացանը — սև ոճի նըման։
Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
Վոչ վոք ծըպըտալ չի համարձակվում,
Մենակ մի հոգի անդուսպ կատաղած՝
Հարա՜յ է կանչում, յերեսը պոկում։
Մեռած չոբանի պառավ նանն է նա՝
Ցավից խելագար բառաչում, լալիս.
Տարաբա՜խտ ծընող, վայում է ահա,
Ձորիցն է տըխուր գոռոցը գալիս։

XXV

Սըգավոր կանայք նըրա յետևից
Հարա՜յ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարվեցին։
Իգիթին վայել սըրտառուչ վողբով
Լաց ու կոծ արին ձեն ձենի տըված,
Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
Մընացին մոտիկ քարերին նըստած։
Վողբացին անշունչ դիակի վըրա,
Անտեր մընացած վոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ յարի մասին.
Յեվ նըրա մասին, վոր ընկերները
Հանդը գընալիս Սարո կըկանչեն,
Վոր սարից փախած սոված շըները
Կըտերը պիտի վոռնան, կըլանչեն։
Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,
Ոճորքում դըրած պիտի մըրոտի,
Յերկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընա ու ժանգը պատի...
Վոր հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գընալ առանց Սարոյի,
Սև շորեր հագած կընըստի տանը,
Անցած որերը միտը կըբերի։
Յեվ ամեն մի խոսք, մի հիշողություն
Կըտրատում եյին սիրտը ծեր նանի,
Յեվ աղաչում էր նա մեռած վորդուն

Մի անգամ խոսի, աչքը բաց անի։
— Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ որ ու արև, կյանք ու ջան վորդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ չես խըլում,
Թըշնամի՛ վորդի, դավաճա՛ն վորդի...
Բայց չեյին բացվում աչքերը փակված,
Շուրթերը սառել, չորացել եյին,
Նըրանց արանքից ատամները բաց
Սիպտակ շարքերով յերևում եյին։
Ու նա կատաղած՝ հանդուգն անեծքով
Ծառս յեղավ դուշման յերկընքի դիմաց,
Յեվ հայհոյում եր, և կուրծքը ծեծում,
Յեվ լալիս եյին ձեն ձենի տըված...
«Կարմիր արևից ընկած, Սարո ջա՛ն,
Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՛ն...
Արևս հանգավ, Սարո ջա՛ն,
Գիշերս ընկավ, Սարո ջա՛ն...»։
Գիշերը ընկավ, թանձրացավ մութը,
Ու նըվաղեցին ձեները տըրտում,
Հոգնեցի՛ն, հանգա՛ն... Ծերուկ Դերենը
Սըգում եր մենակ խավար անդընդում։

Սըգվոր դեռը
Տեր Դերենը,
Միրուքը քըրքըրած,
Ջուրը փըրփըրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում ե,
Հեծեծում ե...

XXVI

Յեվ մի քանի ընկեր-աղերք
Ձորում, գետի յեղերքին,
Փոս փորեցին ու սըրտարեկ՝
Հողին տըվին հովվի դին։
Ծառ ու ծաղիկ՝ սըվսըվալով
Բույր խընկեցին դյուրեկան,
Տեր Դերենն ել ահեղ ձենով
Յերգեց վըսեմ շարական։

Ու տղերքը տխուր ու լուռ
Վերադարձան դեպի տուն,
Ջրում թողած մի սև բլուր,
Մի գերեզման անանուն։

## ՎԵՑԵՐՈՐԴ ՅԵՐԳ

### XXVII

Գարունը յեկավ, հավքերը յեկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ յեկավ, մի մենակ քաղվոր,
Գետի յեզերքին շըրջում է մոլոր,
Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Յերգեր է ասում ու ման է գալիս։

— Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս
Եդպես մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Ես ձորերում ամեն որ։
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կըգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՜խ, նա գընաց, նա գընաց…
Արտասվելով, լալով եդպես
Յետ չես դարձնի էլ գերից,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Ջահել կըրակն աչքերիդ։
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբյուրի,
Դու էլ գընա նոր սեր արա,
Եսպես է կարգն աշխարհի։

— Շնորհակալ եմ, անցվոր ախպեր,
Աստված պահի քու յարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին…
Ուրախ սըրտով դուք ձեր սերը
Վայելեցեք անթառամ,
Ինձ արցունք է տվել սերը,
Յես պիտի լամ, պիտի լամ…

Ու մահն է գալիս,
Յերգում ու լալիս։
Յերգերը անկապ, յերգերը ողբուր,
Արցունքի նման հոսում են խղուր․
Բայց լալիս է նա ու յերգեր ասում,
Ու միշտ են անմիտ տրտունջն է խոսում,
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Սարերը մնացին վորբ ու անչոբան,
Թե ինչպես հանկարծ նա գընաց հեռու,
Ել չի դառնալո՜ւ, ել չի դառնալո՜ւ...

«Յե՜տ դառ, յե՜տ, իգի՜թ,
Յետ դառ, անիրա՜վ,
Կարոտած յարիդ
Աչքը ջուր դառավ։
Վոչխարդ են սարով
Շուռ տուր, տո՜ւն արի,
Փախի՜ր գիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ, են՝ կանանչ սարի լանջին
Ո՞վ է քընած են ողեն,
Վըրեն քաշած սև յափընջին,
Կուռը հանած են ողեն...
Ջա՜ն, իմ յարն է, ջանի՜ն մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՜ւշ, անուշ մըրափել։

Վե՜ր կաց, վե՜ր, իգի՜թ,
Վե՜ր կաց, անիրա՜վ,
Վոչխարըդ բեր կիթ,
Որը ճաշ դառավ...
Արի՜, ջա՜ն, արի՜,
Քու ցավուն մեռնեմ,
Թուխ չոբան, արի՜,
Կարոտըս առնեմ...

Տեսե՜ք, տեսե՜ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք է դուրս գալի,

Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով
Ձի յեն խաղում, չափ տալի...
Աղջի՜, աղջի՜, մըտիկ արեք,
Ես ի՜նչ տեսիլք յես տեսա.
Ո՞վ եր տեսել եսպես հարսնիք—
Վոչ հարս ունեն, վոչ փեսա...

Երգում են հըրե՜ն,
Ամա՜ն, մեր տան դեմ...
Վե՜ր գըրեք, վըրեն
Հյուսերըս քանդեմ...
Յես ել եմ գալի՜ս,
Եդ ո՞ւր եք տանում...
Ինձ ել թաղեցեք
Իր գերեզմանում...

Ա՜խ, չե՜, ամա՜ն, տեսում են՝ դա
Մի դիակ ե լո՜ւռ, հոտած,
Արյունը չոր դեմքի վըրա,
Աչքերն անթա՜րթ, սխպտակած:
Նա սիրուն եր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս եր ցողոտ-շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՜, ջա՜ն իգիթ,
Արի՜, անիրա՜վ,
Կարոտած յարիդ
Աչքը ջուր դառավ:
Ել մի՜ ուշացնի,
Յես շատ եմ կացել,
Ել մի՜ լացացնի,
Յես շատ եմ լացել...

Տե՜ս կըխըռովե՜մ,
Լաց կըլեմ յես ե՜լ...
Չեմ խոսիլ քեզ հե՜տ...
Չեմ սիրիլ քեզ ե՜լ...»:

XXVIII

Անլըռելի վըշվըշում ե
Գըղտոր ջուրը Դեբեդի,

Նըրա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի։
Նըրա շուրջը հեգ սիրուհին
Թընդացնում է վողբ ու լաց,
Ձեն է տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված։
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջըկա,
Բայց իր սիրած տըղան յերբեք
Չըկա՜, չըկա՜ ու չըկա...
Վըշվըշում է գետը — վո՜ւշ, վո՜ւշ,
Ու հորձանք է տալիս հորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՜ւշ,
Արի՛, տանեմ յարիդ մոտ...»։

— Անո՜ւշ, ա՜յ աղջի՛, Անո՜ւշ, տո՜ւն արի...
Կանչում է մերը վերևից, կանչո՜ւմ.
Լո՜ւռ են ձորերը, լո՜ւռ են ահռելի,
Դուշման Դերեդն է մենակ մըռընչում։

Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ, քուրի՜կ,
Վո՜ւշ քու սերին, քու յարին,
Վուշ-վո՜ւշ, Սարո, վուշ-վո՜ւշ, իգի՜թ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...

## XXIX

Համբարձման գիշեր, են դյութիչ գիշեր,
Կա հըրաշալի, յերջանիկ վայրկյան.
Բացվում են վոսկի յերկընքի դըռներ,
Ներքև պապանձում, լըռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհըրդով
Լըցվում բովանդակ նըրա սուրբ գըթով։

Են վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Յերկընքի անհո՜ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՜ւ, լազուր կամարում։

# ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

1894

I

Հընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապույտում...
Առանց հոգսերի ու առանց վըշտի
Խաղում էյինք մենք էն յերազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող.
— Չեմ կարող, չէ՛, չեմ կարող...

Չէյի կարենում բըռնել յես նըրան:
Ճերմակին տալով ծառերի յետև
Ծածկըվում էր նա աչքես անդուման,
Կըրկին հայտնըվում ճապուկ ու թեթև,
Ու թընդում էր միշտ ծիծաղը ծաղրող.
— Չեմ կարող, չէ՛, չեմ կարող...

Մին էլ յես ճարպիկ մի շարժում արի,
Բըռնեցի նըրան: Հանկարծ նա ճըչաց,
Ձեռքումըս դառավ ճերմակ աղավնի,
Ու թևին արավ, ու թըռավ, գընաց.
Գընաց ճախրելով էն յերազ հովտում,
Սուզվեց, չըքացավ պայծառ կապույտում...

II

Վեր թըռա քընից, դուրսը նայեցի.
Արևը ուրախ զարկել էր սարին,
Բընությունն անհոգ, թարմ ու նազելի
Զուգվում էր, ժըպտում մանուկ արևին:
Գիշերն անցել էր. բայց իր յետևից
Մըռայլ էր թողել դեռ ցած՝ հովիտում:
Էդպես տակավին անցած յերազից
Խավար մի բան կար նըստած իմ սըրտում:
Թեկուզ յերազին չեմ էլ հավատում,

Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
Սիրտըդ մի համառ կասկած է մըտնում,
Թե՝ մի մահադույժ սև բոթ է գալու...
Համբիկն յերազում աղավնի դառավ,
Աղավնի դառավ՝ իմ ձեռքից թըռավ...
Լավ յերա՞զ եր այս։ Բայց յերազն ի՞նչ է։
Յերազ, թե իրոք — այդ միթե մի՞ն չէ,
Յերազն ել յերբ վոր կարող է կանչել,
Կարող է հուզել, խընդացնել, տանջել...
Համբիկն ապրում եր — Համբիկը մեռավ...
Յերազը յեկավ — յերազը թըռավ...
Կյանքը յերազ է, յերազն ել մի կյանք,
Յերկուսն ել անցվոր, յերկուսն ել պատրանք.
Յեվ թե հաստատուն մի բան կա անմահ,
Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա,
Վոր թե հարթըմնի և թե յերազում
Ապրում է, տեսնում, ըզգում ու հուզվում... .

Ու... գիր է գալիս ահա իմ տանից,
Թե՝ կինըս հիվանդ — ըսպասում է ինձ...

III

Տո՜ւն, տո՜ւն, դեպի տուն
Թըռչում եմ արթուն,
Վորպես յերազում։
Շուրջըս ամեն բան
Ըշտապ, ինձ նըման,
Անցնում է, վազում։

Շըշմած գըլխիս մեջ
Գալիս են անվերջ
Ու ճընշում իրար
Ջանազան դեպքեր,
Հուշեր ու մըտքեր,
Պայծառ ու խավար...

Տեսնում եմ նըրան՝
Կանգնած է գարնան
Շողերի միջին,
Ու ժըպտում է ինձ

Իր պատուհանից՝
Ծաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
Ծաղկով զարդարած,
Դըրած դագաղում.
Տըխրալի մի օր,
Արտասուք, սըգվոր,
Սևեր ու թաղում...

Տո՜ւն, տո՜ւն, դեպի տուն.
Ու մյուս իրիկուն
Մեր տան դեմ յելա։
Մի սև-սև զանգըված՝
Կուտակված, կանգնած
Մեր դըռանն ահա...

Պըտույտ է գալիս
Աշխարքը գըլխիս,
Յերկինքը մըթնում...
Վողջ կանգնած են լուռ,
Ու ներսից տըխուր
Ձայներ են թընդում...

IV

«Համբի՜կ ջա՜ն, յեկա՜վ... դե վե՛ր կա՛ց... վե՛ր կա՛ց...»։
Դուրս հոսեց դեմըս տըրտում ու հոգնած
Նըրա մոր վողբը... խունկի ծըխի տակ
Աչքովըս ընկավ դագաղը ճերմակ,
Ու շուրջըս մըթնեց։ Տեղըս կորցըրի...
Մարդից, արևից, աշխարքից հեռու,
Մի անտակ ձորում, սև ու խոր ջըրում
Տարվում եյի յես, խեղդվում, չարչարվում.
Բարձր եյին ափերն, վողորկ ու դըժար,
Մի թուփ չըկար գեթ բռնելու համար,
Չըկար կենդանի ձա՛յն, ըստվե՛ր, նըշա՛ն,
Վոր կարենայի կանչել ոգնության...

V

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, զըվարթ քըրքիջով
Մի ծիծաղ անցավ փողոցի միջով։
Յես ուշքի յեկա, աչքըս բաց արի,

Տեսա աշխարհը ու լույսն արևի,
Տեսա՝ նըստոտած մարդիկ շըշընջում,
Անտարբեր թեքված՝ իրար ականջում
Խոսում են ուրիշ բաների վըրա,
Ու վամանք ժըպտանում, ժըպտում աշխարհ...
Իսկ կողքիս նըստած ալեոր մի մարդ
Խրատում էր ինձ միալար, հանդարտ.
— Մի լար, սիրելիս, յերեխա չես դու,
Ինչքան էլ վոր լաս — իզուր ես լալու.
Քու ձենը յերբեք էլ չի լըսիլ նա,
Վոչ կըհասկանա, վոչ էլ յետ կըգա։
Նույնս կամեցավ աստված, յերեկ,
Վոր նըրա որը շուտով խավարի...
Մենք հողեղեններս՝ անճար ու չընչին,
Ի՞նչ ենք աստուծո կամքի առաջին...
Բաց է ես ճամբեն ամենքիս համար.
Ծեր, յերիտասարդ, մեղավոր, արդար,—
Ամե՛նք, ամենքը, եստեղ ինչ վոր կան,
Նոր թե եգուց ամենքը կերթան.
Ով վոր կըմընա,
Թող նա պարծենա։

VI

Ցես լըսում էյի... Ու հանկարծ յես էլ
Ուզեցի հաշտվել հըզոր մահի հետ.
Անճար, ակամա սկսա մըտածել,
Թե մահը լավ է, միայն մենք՝ ագետ,
Մենք խեղճ. կարճամիտ, ու չենք հասկանում՝
Ինչպես է գալիս և ուր է տանում,
Թե՝ և՛ կյանք. և՛ մահ — անցավոր, ունայն
Մի մեծ հավերժի ձևերն են միայն,
Ինչպես վոր ասա «յերեկն» ու «եսօր»։
Եսօրն ինչ է վոր, — մի յերեկ է նոր,
Եսօրն էլ կանցնի, յերեկ կըդառնա,
Ցել սակայն կըրկին միևնույն է նա։
Ցել նույնս անվերջ եսօր ու յերեկ
Փոփոխվում են միայն, միշտ մընում է մեկ—
Մեկ մեծ ժամանակ։ Նույնս էլ հոգին
Փոփոխում է միայն կեղեն արտաքին—

Մարմինն՝ խարխլան որին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ:
Կամ ես սիրում,— հաստատուն մի գետ,
Որ հազար ալիք ու ծըփանք ունի.
Գալիս են ալիք, անցնում են անհետ,
Անցնում են դեպի անդունդն ովկիանի,
Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
Ապրում է դարձյալ անվերջ, անընդհատ...
Նույնպես փոխվելով հոսում է, գընում,
Գընում անհունի անձայն սահմանում,
Դեպի գերագույն վիճակն յերջանիկ,
Այն յերջանկություն, սիրո հայրենիք,
Ուր չըկան մարդիկ և վոչ ըզգացում,
Ուր վողջին մի մեծ կյանք է միացնում...
Յեվ ի՞նչ է սիրո իմաստը վերին,
Ի՞նչ յերջանկության խորհուրդը խորին,—
Հավե՛րժ, միանա՛լ,
Իրեն մոռանալ...

Յեվ անշուշտ մի օր, հանդերձյալ կյանքում,
Յերկրում թե այլուր, վերև՝ յերկինքում,
Են անհայտ ճամբով, վորով նա գնաց,
Յես էլ կըթըռչեմ՝ աշխարքը թողած,
Ու կըգտամ նըրան, կապրեմ նըրա հետ
Մի ուրիշ անվե՜րջ կյանքով յերկնավետ...

VII

Բայց յես միշտ թաքուն մի հույս ունեյի,
Թե կարող եր նա լինել... կենդանի...
Մի տեղ մի անգամ եղպես է յեղել.
Տարել են մեկին, ուղել են թաղել,
Շիրմի փոսի մեջ զարթնել է հանկարծ,
Կարող եր և մեղ լինել պատահած...

VIII

— Վո՛չ, վո՛չ, նա գընաց, էլ յետ չի գալու,
Յեվ եղպես դու միշտ միգք ես մընալու.
Թեկուզ և հագնես յերկաթի տրեխ,
Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ,
Ել չես հանդիպել նըրան վոչ մի տեղ,

Վ՛ոչ մի աշխարքում, վոչ մի ժամանակ...
Են պաղ դիակն ել, վոր տեսնում ես դեռ,
Են ել հողի տակ կըծածկվի հիմա,
Կըգան, կըգնան տարիքն անտարբեր,
Ու նա կըփըթի, նա հող կըդառնա.
Անունն ել ապրող աշխարքի համար
Դատարկ մի հնչյուն, անխորհուրդ մի բառ...
Են ել կըկորչի, ինչպես վոր չըկա.
Անունն ու հետքը են հին աղջըկա,
Վոր ձեզնից առաջ հազար տարիներ
Նույնպես սիրահար ու ժըպիտ ուներ։
Յեվ ի՞նչ ե մարդը, և ի՞նչ իրեն կյանք.—
Յեղծական ձևեր, ձայներ, շարժումներ.
Հավերժականը չունի կերպարանք,
Նա լուռ ե, անշարժ, հաստատ, աներեր...
Անողոք մի ձեն ասպես ինձ կանչում,
Տանջում եր հոգիս, խորտակում, ճընշում։
Ճիգ եյի անում նըրան լըսեցնել,
Սիրտըս ել հետը պոկել, հեռացնել
Ու գըտնել մի ձեն, մի հընչյուն, մի բառ,
Վոր կյանքի, հույսի նըշույլ ունենար...
Ուզեցի «աստված» մին աղաղակել,
Բայց չե՞ վոր նա յեր են մահն ուղարկել։

## IX

Մի անհուն ցավի մըրմուռի նըման
Ծավալվում եյին զանգերը թաղման,
Ու ժամի ծըխոտ կամարների տակ
Կանգնած եր արդեն տըխուր պատարագ.
Տըխուր պատարագ, տըխուր մեղեդիք,
Տըխուր աղոթքներ ու տըխուր մարդիկ,
Մեջտեղը ճերմակ դագաղը նըրա
Դըրած սևաքող սեղանի վըրա,
Ու նա դագաղում, ասես թե քընած,
Հարսնական ճերմակ շորով պճնըված,
Անփույթ, անզգամ կյանքին ու մահվան,
Իր դագաղն առած վարդերի նըման...
Եստեղ՝ բռնըված մի նոր տագնապով
Ուզեցի գըտնել մըտքի մի թափով,

Թե ինչ էր արդյոք, էն ինչ էր լինում,
Ի՞նչ էր պատահել, նա ու՞ր էր գընում...
Յեվ իսկույն, սուս, դիպա մի քարի։
Մըտքերըս հատան։ Առանց մըտքերի
Կանգնած էի յես խորտակված ու պաղ։
Լուռ էր։ Հազար յերգերը մենակ
Ծավալվում էին վըսեմ ու խաղաղ։
Յես լսում էի, լըսո՜ւմ շարունակ։

«Այս անցավոր յերկրի վըրա
Լըցան որերն պանդըխտության,
Յերկնասըլաց գընում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացա՜ծ մահկանացուն՝
Միանալու իր աստըծուն։

Այնտե՜ղ, վերին Յերուսաղեմ,
Ոթևանում հըրեշտակաց,
Ուր վոր Յենովք ու Յեղիաս,
Ադամնակերպ կան ծերացած,
Այն աշխարհո՜ւմ անտըխրական
Արդարքն ապրում են հավիտյան։

Յոթնաստեղյան լույս խորանում,
Ուր ցավ չըկա, վոչ հեծություն,
Ընտրյալ հոգիքն ուրախանում,
Խայտում են միշտ անվերջ, անհո՜ւն
Բերկրանքներով հարազըվարճ,
Աստծո զըվարթ աչքի առաջ։

Այնտեղ նըրանք, միշտ բախտավոր,
Նայում են հոր լույս յերեսին,
Նըրա առջև պաղատավոր.
Նըրանց համար, վոր թողեցին.
Ու իջնում են, մըխիթարում
Մեզ տըրտմալի այս աշխարհում...»։

Թովված, կախարդված, տարված են յերգին,
Վերացավ, թըռավ իմ վըշտոտ հոգին
Դեպի յերջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անհայտ ու հեռու, անծանո՜թ, առա՜ր...

Յեվ են աշխարհը հըրաշալի՛ յեր.
Վոչ սուգ կար ենտեղ, վոչ վայելք, վոչ սեր,
Վոչ կարելի՛ յեր կորցընել մի բան
Յեվ վոչ ունենալ քաղց ագահություն.
Ինչպես գերեզման ե ունայնություն՝
Լուռ եր ու դատարկ, անփառք ու անհուն.
Ինչպես հայացքը մեռելի աչքի՝
Մի միտք ուներ միշտ առանց հուզմունքի,
Հոգեղեն մարդուն անհայտ խորհըրդով
Հավիտյան սառած, խաղաղ, անվըրդով...
Ու անշարժ կանգնած, դալուկ ու լըռիկ,
Ըստվերնե՛ր եյին, անմարմին մարդի՛կ,
Տըժգույն, անարև, աղոտ լույսի մեջ
Աղոթում եյին անձայն ու անվերջ,
Աղոթքն ել սակայն վոչինչ չեր խընդրում.
Վոչ ազատություն, վոչ մահ, վոչ խընդում...

X

Հանկարծ լըռությունն ինձ ուշքի բերավ,
Աչքիս առջևից հըրաշքը թըռավ։
Պատարագն արդեն վերջացրել եյին։
Դագաղը շարժվեց, թընդաց ահագին
Սասանիչ յերգը մահվան սարսափի,
Են լացն ու կոծը, որհներգը մահի,
Վորով մեռելին հըրաժեշտ են տալիս
Դեպի գերեզման ճամբու դընելիս,
Յերբ ծառս ե լինում վիշտը մայրական
Դեպ գահն արարչի — դըրկողը մահվան,
Արձակում ցասկոտ իր ճիչը յետին
Ու թույլ, հուսահատ ընկնում ե գետին։

XI

Դուրս յեկանք դուրը։ Նայեցի վերև։
Վերևն, ինչպես միշտ, փայլում եր արև.
Բոլորն աշխարքում կարգին ու հանդարտ,
Ու ինչպես յերեկ՝ ենպես ամեն մարդ...
Բայց յերկինքն ենքա՛ն պայծառ եր այնոր,
Յեվ պայծառությունն ենքա՛ն եր տըրտում,
Տըրտմությունն ենքան խոր, հանդիսավոր,
Վոր թըվում եր ինձ, թե ջինջ կապույտում՝

Վերջին հրաժեշտ տալով աշխարքին՝
Ճախրում էր նրա հեռացող հոգին…
Ու մտքովս անցավ հանկարծ ակամա,
Թե արդյոք նրա աչքերը անման
Նայում են ներքև, տեսնում են ինձ էլ,
Թե վոնց եմ ցավից տակին կորացել…
Յեվ կամ վո՞րն է նա. են շո՞ղն է պայծառ,
Վոր զըվարթ խաղով, աշխույժ ու կայտառ
Կորչում է, մտնում թուխպ ամպի յետև,
Ազատ, յերկնաչու են ամպն է թեթև,
Թե՞ են աղավնին, վոր հիմա թըռավ,
Անփույթ ճախրելով՝ ջինջ օդում կորավ…

XII

Հանդո՞ւգըն մտքեր, ու՞ր եք սըլանում,
Ի՞նչ եք վորոնում են մութ սահմանում։
Ահա մեր կյանքի սահմանը վերջին,
Ես սև ու տխուր թումբերը չընչին…
Լռու գերեզմաններ. քանի՜ սըգավոր
Ձեր յեզերքներին կանգնել են մի որ,
Ես դատարկ կյանքին, անհաստատ բախտին
Անեծքներ տալով բեկվել, հեռացել,
Յերբ վոր սիրածի դագաղը մըթին
Վիհ են իջեցրել ու դեմքը ծածկել…
Յեվ վո՞րքան ըղձեր, սըրտեր ու զգացմունք
Թաղված են, մարած ձեր լուռ փոսերում.
Ահա է՛ մի նոր բարձրացրած սև թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
Վոր ապրում էր դեռ յերկու որ առաջ…
Յեվ անշուշտ մի որ սըրա շիրիմն էլ
Կըծածկի նույնպես մամուռը կանաչ,
Կանի հավասար քարին ու հողին,
Ինչպես դըրացու անկողինը հին։
Նըրանից հետո դե՛ յեկ՝ իմացի՛ր,
Թե ով է թաղված քո վոտի տակին,
Ի՞նչ ցեղից էր նա, ի՞նչ ձիրքեր ուներ.
Անահ հերո՞ս էր, գեղանի մի կի՞ն,
Անհոգ մի ջահե՞լ, անկըշտում ագա՞հ,
Աղքա՞տ, թե հարո՞ւստ.— ձե՛ն, նըշան չկա…

XIII

Յեվ... իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից,
Կյանքից, արևից, ու լույս աշխարհքից...
Կորացա, վերջին համբույրս տըվի,
Ու էն համբույրով պապաղում դըրի
Խընդում, սեր, ըղձեր, ամե՛ն, ամե՛ն բան...
Ինձ յետ քաշեցին, մի կողմը տարան։
Իսկույն հետևից խուլ գըրգըռոցը,
Բահով ու հողով լըցրին էն փոսը,
Դագաղն էլ, ինքն էլ ծածկվեցին հանկարծ,
Ասես թե բընավ աշխարհ չէր յեկած,
Յեվ այսուհետև յերբե՛ք, հավիտյան
Էլ չէր տեսնելու արևը նըրան...
Հուղարկիներն այնժամ մոտ յեկան մի-մի.
— Ե՛հ, աստված նըրա հոգուն վողորմի.
Մի որ էլ մենք ենք էսպես գընալու,
Ո՛վ է աշխարքիս վըրա մընալու.
Կյանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
Անցավոր են վողջ — բախտ, վայելք ու փառք...
Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով,
Ու դարձյալ հանգիստ զրույց անելով
Գընացին իրենց տըները անհոգ։
Շուրջըս նայեցի, չէր լալիս վոչ վոք.
Յերկինքն էլ էնպես պայծառ ու հանդարտ.
Յեվ ինչպես յերեկ, էնպես ամեն մարդ...

XIV

Յեկավ գիշերը։ Իմ հոգնած հոգուն
Իջավ տանջալի մի խաղաղություն։
Վայր ընկա, ինչպես ուժաթափ մի բան,
Վոր զգում է միայն կարոտ հանգըստյան,
Բայց ճըգնում է դեռ, աշխատում ունայն,
Ուզում է հիշել, թե ի՛նչ բան էր այն.
Մի խառըն յերա՜զ էր, մի աշխա՜րհք ուրիշ,
Գինու մի քե՞ֆ էր, ծաղը՞ր, թե՞ պատիժ...

Մըրափը սակայն ծանըր ու դանդաղ
Չոքեց ինձ վըրա՝ սև թևերը կախ,
Միտքըս իր թելը կըտրեց ու թըռավ,
Անհուն, խավարչտին քաոսում կորավ.

Մահ, մեռել, շիրիմ — թեթև հեռացան,
Ու հեռանալով՝ փոխվեցին, դարձան
Ամպեր, ըստվերներ, կետեր յերերուն,
Դողացին, հանգան, ու մըթնեց հեռուն...
Կարճատև մի քուն յեկավ ինձ վըրա,
Յեվ յես մյուս անգամ յերազում տեսա.

XV

Հընչում եր փըրփրուն վըտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապույտում.
Առանց կորուստի ու առանց վըշտի
Կանգնած եյի յես են յերազ հովտում:

Շուրջըս շուշաններ, անվե՜րջ շուշաններ,
Լիքն եր անտառը անուշ բուրմունքով,
Յեվ յեդեմական ներդաշնակ ձայներ
Փառք եյին տալի թովչական յերգով.

«Փա՜ռք անպատում մըխիթարչին,
Փա՜ռք խորհուրդին անմահության.
Նա յե կըրում հույսը վերջին
Ու շողն անշեջ, արարչական.
Փա՜ռք խորհուրդին անմահության:

Նա գընում է բարձր ու անվերջ
Դեպի անհունն ու հավիտյան,
Վիշտը հանգչում է նըրա մեջ,
Ապրում սերը անապական.
Փա՜ռք խորհուրդին անմահության...»:

Ու լըսում եմ յես են խաղաղ օդում
Թընքույշ ու ղըվարթ ձայնը սիրելի,
Անհայտ ու անտես կանչում է նա ինձ,
Կանչում գերազանց մի ուրիշ կյանքի.

«Արի՛ ինձ հետ, իմ թըշվա՜ռ,
Յես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չըկա մահ, անջատում,
Ու սերն անվե՜րջ, անհատնո՜ւմ...

Արի՛, թըռի՜ր, գընա՜նք ինձ հետ,
Անցա՜վ, անհո՜գ, անհո՜ւշ, անհե՜տ...»:

ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

1901

Նըստած եմ մի օր ու միտք եմ անում.
Միտք եմ անում, մի՜տք, ու չեմ կարենում
Մի հընար գըտնեմ՝ ցավերըս հոգամ…
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,
Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև վոր տեսնենք ինչ կըլնի ճարը։
— Վողջո՜ւյն Պառնասի գըլխից սըրբազան…
Յես նայեմ տեսնեմ՝ իմ ծանոթ Մուսան։
— Վե՜ր կաց, բանաստե՜ղծ, կանչում է այսպես,
Վե՜ր կաց, ներշընչվի՜ր, դուրս արի հանդես.
Տանջվում են ահա յեղբա՛յրքըդ թըշվառ,
Հեծում, հալածվում աշխարհից աշխարհ։
Յերկինք են հասել արցունք ու արյուն…
Ահա՝ քեզ համար բերել եմ ավյուն,
Հույս տո՛ւր վըհատին, ըսփոփիր վորբին,
Ուժ տուր պանդըխտին իր յերկար ճամբին։
Նայի՛ր՝ աղջիկը ի՜նչպես ծաղկել է,
Աչքերի մըթնից պայծառ ծագել է
Կյանքի արեը ու սիրտ է հուզում,
Անձնըվեր սիրո յերգեր է ուզում…
Ուրախ ու անհոգ գարունն էլ ահա
Բազմել է կանաչ սարերի վըրա,
Ջրերը լըցվել, վըռավել հովիտում.
Հավքերն յերգում են, ծաղկունքը փըթթում…
Դու էլ ըոթափվի՜ր, յերգի՛ր քեզ նըման;
Վողջունի՜ր շըքեղ գալուստը գարնան։
— Հերիք է, Մուսա՜, յերկինքը վըկա,
Էլ համբերելու սիրտ ու տեղ չըկա.
Էնպես կանեմ քեզ, վոր դու մոռանաս
Արյուն ու գարուն, պոետ ու Պառնաս։
Անիծված լինին են օրն ու տարին,
Վոր գերի դառա յես քո քընարին.

Բեզ հետ մըտերիմ դառնալու օրից
Զըրկված մընացի կյանքում բոլորից...
— Են տաղա՛նդը, են ձի՛րքը հալա,
Վոր տըվել եմ...
— Այ խաբեբա,
Ահա յես էլ եղ եմ՝ լալիս.
Ինչու՞ ես ձիրքն եյիր տալիս։
Չըգիտե՞յիր միթե այնժամ,
Թե ինչ աշխարք պիտի յես գամ։
Թող լինեյի մի կեղեքող,
Հավաքեյի միշտ փող ու փող.
Առաջ թեև «գազան» ու «ցեց»,
Կըդառնայի շուտով յես մեծ,
Վեհ բարերար
Ազգի համար.
Մեռած օրս էլ պըսակ տային.
«Իր վորը ազգից — միակ հային»։
Կամ թե տերտեր լինեյի թող,
Խաչը վըզիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նըստեյի,
Իմ ապրուստը գըրըտեյի,
Ազգն էլ աչքը ունկեր վըրաս.
«Իմ փըրկողը դու յես վոր կաս»։
Ահա եսպես բան լիներ մարդ,
Գըներ ապրեր լի ու հանգարտ։
Կամ ընդունված մի ճոխ հիմար,
Վոր ապրում է լոկ իր համար,
Ուտում-քընում, յելնում-ուտում,
Լի՛, գո՛հ, ինչպես աղբակույտում
Հանգիստ ապրող վորդը պարարտ։
Կըլինեյի հարգի մի մարդ,
Նույնիսկ յեթե գըլուխըս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Բան թե հիմա իմ գըրպանը։
Ահա կյանքում ես է բանը.
Թե չե՝ լինել ի ծնե գերի
Մերկ Մուսայի ու յերգերի,
Վորդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,


ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

«Պոետն ու մուսան» տպագիր թերթիկը (1900 թ.), բանաստեղծի հետագա ուղղումներով:

*Ուժից ընկնել անժամանակ —*
*Թե պոետ եմ… ո՛, վա՜յ, Մուսա՛,*
*Մի անարդար պատիժ է սա։*
*Ցավ ինձ մոտիկ*
*Փորձված մարդիկ*
*Դեռ շատ վաղուց նըկատեցին,*
*Կըռիվ արին, խըրատեցին,*
*Թե աշխարքին մըտիկ արա.*
*Շատն էլ խընդաց խելքիս վըրա…*
*Իսկ յես, ա՜խ, յես,*
*Միշտ խենթ եսպես,*
*Գիշեր-ցերեկ Թերթում գըրքեր,*
*Ծինում էյի դատարկ յերգեր,*
*Միշտ քու քամով էյի թըռչում,*
*Ու միշտ բախտից հեռու փախչում։*
*— Ա՛յ, ապերա՜խտ, ի՞նչ ես ասում.*
*Են վո՞ր բախտն ես դու ափսոսում,*
*Վոր չեմ տըվել քեզ իմ ձեռքով.*
*Աստվածային հըզոր ձիրքով*
*Ես ցած կյանքից հեշտ ու անթև*
*Թըռչել յերկինք, վերև՛, վերև՛,*
*Ցավեր, հոգսեր վողջ մոռանալ,*
*Դըժոխք իջնել, դըրախտ գընալ,*
*Անհու՜ն ըզգալ, Թովիչ յերգել…*
*Վո՞ր բախտից եմ յես քեզ զըրկել։*
*— Ո՛, վո՜ր բախտից… ա՜յ, սեերե՛ս,*
*Ահա շարեմ, հիշիր ու տես։*
*Ինձ մի անգամ ասան տարան*
*Հաշվապահի ուսումնարան.*
*Շատ խոսեցին,*
*Համոզեցին,*
*Թե կավարտես էս դըպրոցում,*
*Ատեստատը հետդ ծոցում,*
*Ուր վոր գընաս,*
*Տեղ կունենաս,*
*Լա՛վ փողով տեղ բուղգալտերի.*
*Խաղեյինդ էլ ասըեցաարի*
*Միշտ կավելցնի քո ռոճիկը,*
*Վերջը վըրան է… աղջիկը։*
*Բայց դու յեկար միտքըս մըտար,*

Ինձ չըթողիք տեղըս դադար.
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կատրակ, թըվանըշան
Ուղեղիս մեջ դարձան վորդեր,
Քիչ եր մընում սիրտըս պայթեր.
Ցես էլ խըռըված, խենթ յերեխա՝
Փող ու աղջիկ թողի, փախա,
Թե չեմ կարող, յես չեմ կարող,
Ցես գըրող եմ, գըրո՛ղ, գըրո՛ղ։
Սակայն եկի բախտըս ծըռատ,
Ձեռըս ընկնեց տարավ հանկարծ
Ու պխերի տըվավ պաշտոն։
Վո՛չ լի որ կար ինձ և վոչ տոն։
Մեծավորըս ենքան սիրեց,
Հին գըրչակոթն ինձ նըվիրեց.
Ընկերներս էլ ինձ դաս տըվին —
Վոնց պըլոկել խընդրատըվին։
Բայց դու եկիր յեկար գըտար,
Խաղաղ գործիս մեջը մըտար.
Ցես էլ՝ հիմարըս՝ բախտյանեթ
Վեձ բաց արի ամենքի հետ,
Թե ինչ բան է խեղճ գյուղացուն
Գերի շինել՝ վողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել,
Այրու աղքինձն աճուրդ անել...
Ես բոլորը քիչ եր կարծես,
Ենքան. արիր, տատանի պես,
Վոր գըրեցի մեծիս պարսավ.
Նա էլ — կորի, կորի, տավ,
Մենք ենք տալի քեզ փող ու վարձ,
Դու, Մուսայի խելքով ընկած,
Վեր ես կենում մեր դեմ խոսում..
Եղպես պխեր մենք չենք ուզում։
Սակայն տատված մեծ. և դուքթով.
Հայանի կանտոր ընկա շուտով։
Լավ եր, ախ, այսուհետև
Կապրեմ աղատ, գործըս թեթև։
Հետըս յեկար, մըտար կանտոր,
Գործերս արիր խառնուփընթոր.
Քու յերեսից հենց նույն տարին

Իմ պաշտոնից ինձ դուրս արին։
Եսպես յեղա յես խայտառակ,
Համ էլ ընկա պարտքերի տակ.
(Հո պոետի պարտքն էլ գիտես.
Եդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ տակ,
Վեհ ու վըճիռ ծանր ու բարակ)։
Վո՞ր մեկն ասեմ, վո՞րը թողնեմ.
Յերբ վոր տեսան շընորք չունեմ,
Այնուհետև քանի անգամ
Ծանոթ, ընկեր, լավ բարեկամ՝
Տերտերության տվին խորհուրդ.
— Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,
Հարստություն, հանգիստ, հեշտ կյանք...
Իսկ յես՝ անփորձ, անխելք, հիմար,
Վողջ մերժեցի լոկ քեզ համար.
Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփշին թողած,
Քընարն առա,
Պոետ դառա,
Յերգ ու տաղով մըտա հանդես.
— Հե՜յ, Մուսայի ընկերն եմ յես,
Զեն տվել յես վոգևորված։
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հըրհըռաց
Ժողովուրդը միաբերան,
Թըքցրել ե խելքն ես խեղճ տըղան։
Հեռու՛ կորի, խենթ պատանի,
Վոր անպիտան գործի, բանի,
Ուշք ու միտքըդ տըվել յերգին՝
Մի չես նայում ես աշխարքին...
Մենք մարդիկ ենք — գործ ենք անում,
Խենթ-մենթ բաներ չենք հասկանում։
Յես գոչեցի.— խավա՛ր ամբոխ,
Պաշտում ես դու լոկ փայլ ու փող,
Չես հասկանում դու պոետին.
Յե՛ս, յերկընքի քընքու՛յշ վորդին,
Յերգում եմ սե՛ր, ճըշմարտությո՜ւն...
Ու գընացի խըմբագրատուն։
— Տեր խըմբագիր, պոետ եմ նոր,

Բերել եմ ձեզ վստահավոր.
Ահա կարդամ ականջ դրեք,
Ձեր հանդիսում տեղավորեք։

«Սևորմիկ աչքեր, սևորմիկ աչքեր,
Հալածում եք ինձ դուք օր ու գիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...
Ինչո՞ւ չեք քնում, ինչո՞ւ չեք փակվում.
Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել՝
Ուզում է քնել, հավիտյան քնել...
Դուք էլ քնեցեք, սևորմիկ աչքեր,
Ցերեկս անցել է, գիշեր է, գիշեր...»։

— Վոչինչ, կոկիկ է։ Խոսելով անկեղծ՝
Դուք վատ չեք գրում, պարո՛ն բանաստեղծ։
Ամեն մի տողում տաս են վանկերը,
Բայց ինձ աղքատ են թվում հանգերը.
Հապա մի տվեք, ուղղեմ յես հիմա,
Տեսեք՝ թե վորքան սահուն դուրս կգա։
Ուղղում եմ յես միշտ մեր պոետներին,
Եսպես եմ պոետ շինել բոլորին։

«Սևորմիկ աչքեր, սևորմիկ աչքեր,
Հալածում եք ինձ դուք ինչպես fաջfեր...»։

Յես իսկույն ինչպես հալածված քաջքից,
Փախա խմբագրից ու իրեն աչքից,
Յերգերըս ուղիղ տարա տպարան.
Դուրս յեկավ եսպես մի նոր յերգարան։
Այնժամ մտրակող մի թունդ պուբլիցիստ,
Հայտնի քննադատ, բազմագետ ու խիստ,
Սատիրիկ վրդովված, անաչառ հոգով
Ծաղրի առավ ինձ իրեն «ակնարկով»։
— Յես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Զզվեցնում է ինձ էդ յերգի Մուսան։
Վո՛չ մտքեր են պետք, վո՛չ ձիրք և վոչ խելք, —
Բառեր ու հանգեր — և ահա քեզ յերգ։
Հենց նոր դուրս յեկած ես խակ տղան էլ
Գրելից ես տեսակ բաներ է հանել։
Ուրիշ բան էյին հին պոետները...
Նրանք էլ մեռան, տարան հետները

Տաղանդ ու յերգեր… ամե՛ն, ամեն բան
Մըտավ նըրանց հետ խավար գերեզման…
Դարձավ անապատ… էլ ո՞վ է մընում…
Էլ ուրիշ պետք մենք չենք ընդունում…
Վորքան ծաղրում ենք, սըրանք չեն լըռում,
Վոչ էլ մեր ուզած բաներն են գըրում։
—Ո՛վ բըրետների, կույրերի յերկիր։
Դու մի՛ հավատար, իմ հեգ վորդեգիր.
Յես էլ հանգուցյալ լավերից նույնպես
Լըսել եմ հաճախ գանգատներ պես-պես։
Ծաղրում են դեռ ծաղրով ու թույնով,
Ապա պըճընվում նըրանց անունով.
Լափում են նըրանց վաստակը արդար,
Ու նորից… նույն հին կըռիվը վատթար…
Յերդվում եմ ահա ճառագող որով,
Վառ Ավրորայի մաքուր շողերով,
Խոսում ես դու են չըքերի մասին,
Վոր միշտ անտեղյակ առաջին լուսին,
Չեն հըրճվում նըրա ծագման հանդեսով,
Միայն կեսօրին, ապուշ յերեսով
Յելնում են մըռայլ, տեսնում քընեած՝
Գըլխների վերև արևը կանգնած.
Ու ծունկ են չոքում,
Որհներգ են յերգում.
Հի՛ն որհներգություն ու հի՛ն հըրեշներ…
Բայց մի՞թե նըրանք ապրում են անմեռ,
Յեվ եդպես անհաշտ եսոր էլ քեզ հետ…
—Ի՞նչ հըրեշ, Մուսա, ի՛նչ կույր ու բըրետ,
Ի՞նչ բաներ ես դու քեզնից հընարում…
Յես են եմ ասում, թե մեր աշխարհում
Պոետները վողջ տըխըրել են, ցավել,
Վոր իրենց յերգի քընար ես տըվել…
Յես էլ… ի՛նչ ասեմ… մեղավոր եմ յես,
Ծույլ ու անշընորհք, անպետք, սևերես…
Մեր խեղճ տանըցիք վո՜րքան նախատում —
Բայց յես՝ միշտ համառ, չեյի հավատում,
Մինչև լսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի։
Մի օր ինձանից արավ հարցուփորձ.
— Ունե՞ս, հարցրեց, մի պաշտոն կամ գործ։

— Բանտարկված եմ ես, հայտնեցի հըպարտ։
— Դըժվար է, ասավ, յերբ անգործ է մարդ։
— Բանտարկված եմ ես, կըրկնեցի մեկ էլ։
— Հասկացա՞նք, ասավ, պարապ ես յեղել...
Յեվ խեղճ ընկերըս յերբ վոր՝ սըրտացավ՝
Սա էլ պետքական մի մարդ է, ասավ,
Ենպես ծիծաղեց մեր աղան փառափառ,
Վոր և հասարակ և մեծ վեհափառ,
Ով վոր իմացավ,
Ծիծաղը պըրծավ։
Բայց վերջն ավելի պարզեց խընդիրը,
Յերբ հոգված գըրեց մեր լըրագիրը։
— Բանտարկվածն, ասավ, թող մի գործ չինի,
Վոր հացի, վարձի դառնա արժանի.
Թե չէ համառի ու մընա պահա՝
Ի՞նչ հաշիվ ունի ազգը նըրա հետ.
Ազգը հո նըրան չի խընդրում գըրի,
Թերթն էլ փող չունի՝ թե վոր վըճարի...
Թող գընա ապրի իրեն գըրիչով...
Եսպես ենք ապրում մեր մաքուր խըղճով։
Ներշընչման համար
Եսպես է հարմար.—
Ով սովից մեռել՝
Նա յե լավ գըրել։
Կարող ենք մենք էլ
Եսպես մըտածել
Ու ծաղրել մի-մի,
Վոր առաջ գիմի...»։

— Ո՜վ ախտ-յերկիր, մըտավոր մարդիկ...
Դե՛, յե՛կ, սիրելի՛ս, տանեմ քեզ յերկինք.
Ենտեղ յերջանիկ վոգիների հետ
Զըվարթ կըխընդաս ու կերգես հավետ.
Կամ կուզես թըռցնեմ, հանեմ Վոլիմպոս,
Վոր նեկտար ըմպես, ճաշակես ամբրոս։
— Իմ ազնի՛վ Մուսա,
Ա՛յ, ըդպես խոսա։
Իրավ, ես կյանքից յես շատ եմ զըզվել։
Ի՞նչ յերանություն՝ յերկընքում սուզվել,
Են չըքնաղներին, վորոնք, անկասկած,

Նըման չեն իսկի մեր հայոց կանանց —
Լինել միշտ ընկեր
Ու սիրտ յերգեր
Հորինե՜լ,
Զոհե՜լ,
Յերկրային չընչին հոգսերը թողած.
Կամ, վոտներն հանգիստ ժայռերից կախած,
Նըստել Պառնասի յերջանիկ գըլխին
Ու բարձրից նայել ես հիմար խալխին:
Բայց յես ունիմ կին, շատ յերեխաներ,
Նըրանց բանն ենտեղ ինչպես կըլլիներ...
— Ո՛, յերբ Պառնասի գագաթ վերանաս,
Զավակներ ու կին պիտի մոռանաս:
— Ո՛վ դու անիրավ, ինչ եմ արել քեզ,
Վոր ինձ իմ տանից եդպես բաժանես:
Չէ, լավ է կըրկին, վոր յերկրում մընամ,
Ծաղրի, նեղության մի կերպ դիմանամ...
— Քո կամքը լինի, ազա՛տ· բանաստեղծ.
Ընտրի՛ր, ուր կուզես՝ յերկինք թե յերկիր,
Բայց միշտ, ամեն տեղ յեղիր դու անկեղծ,
Մաքուր, սըրտալի քո յերգը յերգիր:
Կանգնիր միշտ վերև,
Ու ինչպես արև՝
Նայիր լուսավոր,
Պայծառ ու հըզոր.
Քո կոչումն է դա.
Յեվ, ինձ հավատա՛,
Բոլոր դանձերը, դոհարներն անգին
Չարժեն կարճատև քո ներշընչանքին:
— Ա՛յ, դու սատանա՛, էլ կուզես խաբել,
Մեծ-մեծ խոսքերով աչքերըս կապել.
Ա՛յ, դու կեղծավո՛ր, սիրուն անպիտան.
Յես լավ եմ տեսնում այժըմ ամեն բան:
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել.
Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կընկանը —
Ասա՛, թե մենակ փողը չի բանը...
Բայց ինչ եմ տեսում, հայոց գըրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը.
Յեվ յերկար, յերկար մեր վողջ հանճարով

Մըտածել ենք մենք դըժար օրերով,
Գըրողի պըրա՞կ,
Թե՞ փողի քըսակ...
Յեվ լավ ենք վըճռել...
Դեհ, գընա, Մուսա.
Գըրադարանս շինում եմ կասսա,
Թըքում եմ և քեզ և քո պըրակին,
Յերկըրպագում եմ փողի քըսակին:
«Փողի քըսա՛կը, փողի քըսա՛կը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրեշ տըգեղին,
Սըրբագործում է գարշն ու աղտեղին:
Նըրա ուժն է՝ վոր դարձընում է լոկ
Անտաուններին հարգի ու խելոք,
Կույրին, զառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխառուին շինում բարերար,
Պըճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան-անվախճան փառքի:
Նա յե միշտ շարժում դատողի լեզուն,
Նա՛ յե հասցընում աղոթքն աստըծուն,
Նըրա վըրա յե աշխարքը կանգնած.
Նա մեր հոգին է, մեր յերկըրորդ աստված:
Պոետն էլ բընավ թե խոսել է վատ,
Տուժել է սաստիկ, զըղջացել է շատ,
Յեվ այժըմ, ահա, խելքի յե յեկել,
Սկսել է նըրան որհնություն յերգել»:
Յերգըս վոր լըսեց իմ գըժըմախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան.
— Դե՛հ, մընաս բարյավ,
Անսի՛րտ, անիրա՛վ,
Յես եսքան տարի
Ինչ վոր քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

# ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

1902

I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն,
Իշխում էր անեղ, ու նըրա օրով
Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով։
Սասմա սարերից շա՜տ ու շատ հեռու
Թընդում էր նըրա հըռչակն անարկու,
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր — մի Առյուծ-Մըհեր։

II

Եսպես, ահավոր առյուծի նըման,
Սասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի։ Քառասուն տարում
«Ա՜խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Բայց հիմի, յերբ վոր յեկավ ծերացավ,
Են անահ սիրտը ներս սողաց մի ցավ։
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ յես գերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,
Իմ անտեր ու վորբ աշխարքի վըրա
Վոտի կը կանգնեն հազար քաջ ու դև...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետև
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հըսկան ծերունի։

III

Մի օր էլ՝ են գորշ հոնքերը կիտած
Յերբ միտք էր անում, յերկընքից հանկարծ

Մի հուր-հըրեղեն հայտնըվեց քաջին,
Վոտները ամպոտ կանգնեց առաջին։
— Վողջո՜ւյն մեծազոր Սասմա հըսկային.
Քու ձենը հասավ աստըծու դահին,
Ու շուտով նա քեզ մի զավակ կըտա։
Բայց լավ իմանաս, լեռների արքա,
Վոր որը վոր քեզ ժառանգ է տըվել,
Են որ կըմեռնեք՝ քու կինն ել, դու ել։
— Իր կամքը լինի, — ասավ Մըհերը.—
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց վոր աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք ել նըրանով անմեռ կըմընանք։
Հըրեշտակն եսեղ ցոլացավ նորից,
Ու ես յերջանիկ ավետման որից
Յերբ իննը ամիս, իննը ժամ անցավ,
Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ։
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Ձենով Ոհանին,
Յերկիրն ու վորդին ավանդեց նըրան,
Ու կինն ել, ինքն ել են որը մեռան։

IV

Են դարում Մըսըր անհաղթ ու հըզոր
Մըսրա-Մելիքն եր նըստած թագավոր։
Հենց վոր իմացավ՝ ել Մըհեր չըկա,
Վեր կացավ կըռվով Սասունի վըրա։
Ձենով Ոհանը ահից սարսափած՝
Թըշնամու առաջն յելավ գըլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ վոտները.
— Դո՛ւ յեղիր, ասավ, մեր գըլխի տերը,
Ու քու շըվաքում քանի վոր մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք.
Միայն մեր յերկիր քուրուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես։
— Չե՛, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Վոր եգուց-ելոր, ինչ ել վոր անեմ,
Վոչ մի սասունցի թուր չանի իմ դեմ։
Ու գընաց Ոհան՝ բոլոր-բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրի տակ.



«Սասունցի Դավիթը», 1902 թ. առաջին վարիանտի ձեռագիրը:

Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին։
Յեկան քաշեցին՝ թե գոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց գըցեց դես ու դեն
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ։
— Պետք է ըսպանեմ ես փոքրիկ ծուռին,—
Ասավ Թագավորն իրեն մեծերին։
— Թագավո՛ր, ասին, դու եսքան հըզոր,
Թըրիդ տակին է վողջ Սասունն եսոր.
Ի՞նչ պետք է անի քեզ մի յերեխա,
Թեկուզ իր ուժով հենց կըրակ դառնա։
— Դո՛ւք գիտեք,— ասավ Մըսրա Թագավոր,—
Բայց թե իմ գըլխին փորձանք գա մի որ,
Ես որը վըկա,
Սըրանից կըգա։

V

Ես վոր պատահեց, մեր Դավիթ հըսկան
Մի մանուկ եր դեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
Վոր նըրա համար թե մարդ,— թե մըժեղ։
Բայց վա՜յ խեղճ վորբին աշխարքի վըրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա։
Ձենով Ոհանին ուներ մի չար կին։
Մին-յերկու լըռեց, մի որ էլ կարգին
Իրեն մարդու հետ սկըսավ կըռվել.
— Յես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի վորբին տուն բերել,
Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
Հո՜ղեմ գըլուխը... յես գերի հո չե՞մ՝
Ամենքի քեֆի յետևից թըռչեմ...
Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
Գընա իր համար աշխատանք անի...
Ու հետո սկըսավ վողբալ ու կոծել,
Իր որը ըզգալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ յեղավ աշխարքի միջում,
Վոչ մի տեր ունի, վոչ մարդն է խըղճում...
Գընաց Ոհանը յերեխի վոտի
Մի զույգ վոտնաման բերավ յերկաթի,

Յերկաթի մի կոռ շալակին դըրած,
Ու արավ Սասմա քաղքի գառնարած։

VI

Քըշեց գառները մեր հովիվ հըսկան,
Յելավ Սասունի սարերն աննըման.
—Ե՜յ, ջան սարեր՝
Սասման սարե՜ր…
Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-գըմբգըմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն յեղան.
Դավիթը ընկավ նըրանց յետեվից,
Վորին մի սարից, վորին մի ձորից —
Աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քըշեց վողջ Սասմա քաղաք։
Կաղկա՜նձ ու վոռնո՜ց, աղմո՜ւկ, աղաղա՜կ…
Քաղքըցիք հանկարծ մին էլ են տեսան՝
Գալիս են հըրեն անհամար գազան.
«Վա՜յ, հարա՜յ, փախե՜ք…»։
Մեծեր, յերեխեք
Սըրտաճաք յեղած,
Գործները թողած,
Վո՛րը տուն ընկավ, վո՛րը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ։
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս մարդիկը ինչ վաղ են քընում.
Հե՜յ ուստաներ, հե՜յ գառնատեր,
Յեկե՜ք, շուտով բացեք դըռներ.
Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քըսանն արել…
Շուտով յեկե՜ք, յեկե՜ք տարե՜ք,
Ձեր գառն ու ուլ գոմերն արեք։

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի՝ մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ յելան միասին,
Գընացին Ձենով Օհանին ասին.

— Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած,
Էս խենթը բերիր, արիր գառնարած,
Վոչ գառն է ջոկում, վոչ գելն ու աղվես,
Գաղանով լըցրեց մեր քաղաքն էսպես.
Աստված կըսիրես՝ գիր ուրիշ բանի,
Թե չէ էս խոլխին լեղաճաք կանի։

VII

Յելավ Օհանը, Դավթի մոտ գընաց.
— Հորեղբայր Օհան, հեռու յեկ, կամաց,
Ուլեր կըփախչեն։—Մին էլ էնտեղից
Մի բոզ նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պըծավ հանկարծ։
Դավիթն էր. յելավ, յետեից ընկած
Էն սարը քըշեց, յետ բերավ էս ձոր,
Բերավ, ուլերին խառնեց նորից նոր։
— Օ՜ֆ, ի՜նչ դըժար է, հորեղբայր Օհան.
Աստված օխնել է էն սև-սև ուլեր,
Ամա բոզալուկ էս ուլեր, վոր կան,
Փախչում-են, ցըրվում վողջ սարերն ի վեր.
Էնքան եմ յերեկ վազել, չարչարվե՜լ,
Մինչև հավաքել ու տուն եմ բերե՜լ...
Նայեց Օհանը, վոր Դավթի հագին
Վոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն էլ մաշվել, մինչ բունն է հասել,
Մի օրվա միջում էնքան է վազել։
— Դավի՛թ ջան, ասավ, չեմ թողնի էսպես,
Բոզալուկ ուլեր չարչարում են քեզ.
Եգուց նախիրը կըտանես արոտ։
Ասավ Օհանը ու մյուս առավոտ
Գընաց, նորից նոր մեր Դավթի վոտի
Մի ջուխտ նոր տրեխ բերավ յերկաթի,
Յերկաթի մի կոռ հարյուր լըդրական
Ու շինեց Սասմա քաղքի նախրապան։

VIII

Քըշեց նախիրը մեր նախրորդ հըսկան,
Յելավ Սասունի սարերն աննըման։
— Է՜յ, ջան սարեր,
Սասման սարե՜ր,

Ի՜նչ անուշ է
Ձեր լանջն ի վեր…
Վար կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմփըդըմբոցն ընկավ սար ու ձոր։
Վայրի գազաններ բըներից փախան,
Թարեքար ընկան, պատառկուն յիղան։
Դավիթն էլ. ընկավ նրանց յետեից,
Վորին մի սարից, վորին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ, վագրը բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք։
Վոռնոց, մըռընչյուն, աղմուկ, աղաղակ…
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՜նչ տեսան,
Հենց քաղքի վըրա անհամար գազան…
— Վա՜յ, հարա՜յ, փախե՛ք…
Մեծեր, յերեխեք
Սըրտաճաք յեղած,
Դուռները թողած
Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ։
Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս քաղքըցիք ի՜նչ վաղ են քընում։
Հե՜յ կովատեր, հե՜յ գոմշատեր,
Յելե՛ք, շուտով բացեք դըռներ,
Ով մինն ունեք — տասն եմ բերել,
Ով տասն ունեք — քըսանն արել։
Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,
Ձեր յեզն ու կով գոմերն արեք։
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ յելան միասին,
Գընացին Ձենով Օհանին ասին.
— Ամա՜ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպեր,
Մեր յեզն ու մեր կով՝ թող մընան անտեր,
Միայն սրանից ազատ արա մեզ։
Վոչ արջն է ջոկում, վոչ գոմեշն ու յեզ,
Մի որ էս քաղքին փորձանք կբերի,
Արջերից կանի, կըտտա կավերի։

IX

Դավիթ չըդատավ, մի կըրճիկ դառավ։
Ծառը կըտըրված՝ Օհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝
Գընա, վորս անի սարերի վըրեն։
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,
Հեռացավ Սասմա քաղքի սահմանից
Ու դառավ վորսկան։ Գնաց, մի կորկում
Լոր եր սպանում, ճնճղուկ եր զարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անվորդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, յերկա՜ր, ահագի՜ն
Մեկնըվում, քընում կըրակի կողքին։
Մի որ էլ, յերբ վոր իր վորսից դարձավ,
Պառավը վըրեն սաստիկ բարկացավ.
— Վա՜յ՝ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դո՞ւ պետք է են հոր զավակը լինե՜ս։
Ձեռից ու վառից ընկած մի ծեր կին —
Ցես եմ ու են արտն աստըծու տակին,
Ինչո՞ւ յես գընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում։
Թե վորսկան ես դու — նետ-աղեղըդ ա՛ռ,
Ծըծմակա գըլխից մինչև Սեղանսար
Քու՝ հերը ձեռին մի աշխարհ ուներ,
Վորսով մեջը լի վորսի սար ուներ.
Ցեղնիկ կա ենտեղ, այծյամ ու պախրա.
Կարո՞ղ ես — գընա, ենտեղ վորս արա։
— Ի՞նչ ես, այ պառավ, էլ ինձ անիծում.
Ցես ջահիլ եմ դեռ, յես նոր եմ լըսում։
Ո՞րտեղ է հապա սարը մեր վորսի...
— Գընա՛, հորեղբայրդ՝ Օհանը կասի։

X

Հորեղբոր շեմքում մյուս որը ծեգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին։
— Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես տալ՝
Իմ հերը վորսի սար է ունեցել,
Այծյամ կա ենտեղ, յեղջերու, կըխտար.
Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ վորսատար։
— Վա՜յ, կանչեց Օհան, եդ քու խոսքը չեր,

Եզ ով քեզ տամ, լեզուն պապանձվեր։
Են սարը, վորդի, գընաց մեր ձեռից,
Են սարի վօրսն էլ գընաց են սարից,
Էլ չկան այծյամ, յեղջերու, կըխտար։
Քանի լուսնըկն քու հերը դեռ կար,
(Ե՜յ գիդի օրեր — վո՜րտեղ էք կորել),
Յես շատ եմ ենտեղ վօրսի միս կերել...
Քու հերը մեռավ, տատված խըռովեց,
Մըսրա Թագավոր զորքեր ժողովեց,
Յեկավ, մեր յերկիր քարուքանդ արավ,
Էս սարի վօրսն էլ Թալանեց, տարավ.
Յեղնիկը գընաց, յեղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ ետպես էր գրած։
Անցել է, վորդի, քու բանին գընա,
Մըսրա Թագավոր ձենըդ կիմանա...
— Մըսրա Թագավոր ինձ ինչ կանի վոր...
Յես ինչ եմ հարցնում Մըսրա Թագավոր.
Մըսրա Թագավոր Թող Մըսըր կենա,
Իմ հոր սարերում ինչ գործ ունի նա...
Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ տու,
Կապարճըդ կապի՛ր, գընանք վօրսասար։
Յելավ Ոհանը ճարը կըտըրված,
Գընացին տեսան՝ էլ ինչ վօրսասար.
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին էնտեղ։
Ձենով Ոհանն էր, իր նետն ու աղեղ
Դըրավ գլխի տակ, հանգիստ խըռըմփաց.
Դավիթը մընաց մըտքի ծո՛վն ընկած։
Մին էլ նկատեց, վոր մութը հեռվում
Մի Թեժ, փայլփլուն կըրակ է վառվում։
Են լուսը բըռնած՝
Վեր կացավ, գընաց,
Գընաց ու գընա՜ց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատըռված,
Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՜րզ, քուլա-քուլա՜,

Բարձրանում, իջնում յետ քարի վըրա։
Վար իջավ Դավիթ Նստեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Զենով Օհանին։
— Յե՛լ, հորեղբա՛յր, քանի՞ քընես,
Յե՛լ, էն պայծառ լույսը մի տես։
Լուս է իջել բարձըր սարին,
Բարձըր սարին, մարմար քարին։
Յե՛լ, հորեղբայր անուշ քընից.
Էն ինչ լուս է ըլնում քարից։
Յելավ, խաչ քաշեց Օհանն յերեսին.
— Է՛յ, վորդի, ասավ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութա սարն է զորավոր։
Էն լուսի տեղը կանգնած եր մի որ
Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Զարխափան։
Մըշտական, յերբ վոր կըռիվ եր գընում,
Էնտեղ եր քու հերն իր աղոթքն անում։
Քու հերը մեռավ, ասված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Մեր վանքն էլ յեկավ քանդեց էն սարում,
Բայց դեռ ավերանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը էս էլ յերբ վոր իմացավ,
— Անուշ հորեղբայր, հորեղբա՛յր, ասավ,
Վորբ եմ ու անտեր աշխարքի վըրա,
Հեր չունեմ՝ դու ինձ հերություն արա։
Էլ չեմ իջնի յես Մարութա՛ սարից,
Մինչև չըշինեմ մեր վանքը նորից,
Քեզանից կուզեմ հինգ հարյուր վարպետ,
Հինգ հազար բանվոր մըշակ նըրանց հետ,
Վոր գան՝ էս շարաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինեն։
Գընաց Օհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ։
Վարպետ ու բանվոր յեկան կանգնեցին,
Զըրը՛խկ հա թըրը՛խկ նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձըր Մարութա վանքը Տիրամոր։
Ցըրված միաբանք յետ նորից յեկան,

Նորից թընդացին աղոթք, շարական.
Ու յերբ շեն արավ հոր վանքը նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից։

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հապա՜ չես ասի՝ Դավիթը կրկին
Հոր վանքը շինել, իշխան և դառել,
Դու ոխտը տարվան խարջը չես առել։
Մելիք զայրացավ.
— Գընացե՛ք, ասավ,
Բաղին, Կողբադին,
Սյուդին, Զարխադին,
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ ոխտը տարվան խարաջը բերեք։
Քառասուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառասունն էլ յերկար, վոր ուղտեր բառնան,
Իմ տանն ու դըռան ղարավաշ դառնան։
Ու կողբադին առավ զորքեր.
— Գըլխիս վըրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնավ դեղին վոսկի,
Տեղը ջընջեմ հայոց ազգի։
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Դար բռնեցին ու յերգեցին.
— Մեր Կողբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնավ վոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Դարնան շինենք յեղ ու չորթան։
Ջա՛ն Կողբադին, քաջ Կողբադին,
Սասմա Դավթին զարկեց գետին»։
Ու Կողբադին փըքված, ուռած,
— Շնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց,
Մինչև գալըս դեռ համբերեք,
Են ժամանակ պիտի պարեք...

XIV

Նավես յերգով,
• Զոռով-զորքով
Գոռ Կողբացին մըտավ Սասուն.
Ոհան լըսեց՝ կապվեց լեզուն։
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն յելավ,
Խընդիրք արավ.
— Ինչ վոր կուզես՝ առ, տար, ամա՛ն.
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Դառը դաղած դեղին վոսկին,
Միայն թե դըթա մեր խեղճ ազգին,
Մի կոտորիր, մի տար մահու,
Վերև՝ աստված, ներքևը՝ դու...
Առավ, բերավ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման։
Ու Կողբացին կանգնեց, ջոկեց,
Մարագն արավ, դուռը փակեց,
Քառասուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառասուն էլ յերկար, վոր ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին դարավաշ դառնան։
Դեղ-դեղ կիտեց դեղին վոսկին,
Սև սուգ կալավ հայոց ազգին։

XV

Հե՜յ, ո՞ւր ես, Դավի՛թ, հայոց պահապան,
Քարը պատըռվի — դո՛ւրս արի մեյդան:
Քանդած հոր վանքը վոր չինեց նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,
Ժանգոտած, անկոթ մի չեղրիկ բըռնած,
Գընաց՝ պառավի չաղչամը մըտավ:
Պառավն եր. յելավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.
— Վա՜յ, խելա՛ռ Դավիթ, չաղչամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցավ ուտես, սավ,
Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսավ.
Կորեկըս արիր գետնին հավասար,
Ես եր մընացել ձըմեռվան պաշար,
Են էլ կըտրում ես,

Եվ վո՞նց ապրեմ յես:
Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ռ գընա՛,
Քու հոր աշխարքին տիրություն արա՛,
Քու հոր գանձը կե՛ր,
Թողել ես անտեր,
Մըսրա թագավոր զըրկել է՝ տանի:
— Եվ ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,
Եվ ի՞նչ ես ասում, յես չեմ հասկանում,
Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում:
— Մըսրա թագավոր մեր ի՛նչն է տանում...
Մըսրա թագավոր քու աչքն է հանում,
Դանդալուշ Դավիթ․ զըրկել է հըրեն,
Յեկել են Սասմա քաղաքի վըրեն
Բաղին, Կողբաղին,
Սյուղին, Զարխաղին,
Թալան են տալի բոլընդակ Սասում.
Քառասուն բեռ վոսկի խարաջ են ուզում,
Քառասուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառասուն էլ յերկար, վոր ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին ղարավաշ դառնան:
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.
Ցույց տուր մի տեսնեմ՝ վո՞րտեղ են ուզում:
— Վո՛րտեղ են ուզո՛ւմ... Մահըս տանի քե՛զ.
Դո՛ւ պետք է են հոր զավակը լինե՛ս...
Յեկել ես՝ եստեղ չաղչամ ես լափում...
Վոսկին Կողբաղին ձեր տանն է չափում,
Աղջիկներ վըղեկ մարաղն են լըցրած:
  Չաղչամը թողեց Դավիթ ու գընաց:
Տեսավ՝ Կողբաղին իրենց տան միջին,
Չափում է վոսկին թեղած առաջին,
Սյուղին, Զարխաղին պարկերն են բըռնել,
Ջենով Ոհանն էլ չըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:
— Վե՛ր կաց, Կողբաղին, հեռո՛ւ կանգնիր դու,
Իմ հոր վոսկին է — յես եմ չափելու:
— Կողբաղին ասավ․ — Ե՛յ, Ջենով Ոհան,
Կըտաս — տո՛ւր խարջը ես ոխտը տարվան,
Թե չե՝ կը գընամ, միրուքըս վըկա,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը գա,

Ձեր Սասմա յերկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը ցանի։
— Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շըներ,
Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծըռեր...
Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ չըկաք,
Կուգեք մեր յերկիր դընեք խարջի տա՛կ...
Բարկացավ Դավիթ, չափը շըպըրտեց,
Տըվավ Կոզբադինի գըլուխը ջարդեց,
Չափի փըշրանքը պատն անցավ, գընաց,
Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած։
Ու յելան՝ թափած վոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Զարխադին։

XVI

—Վա՜յ, վա՜յ, հորեղբա՛յր, ի՛նչ անեմ յես քեզ․
Մենք ունենք եստեղ դեղին վոսկու դեզ․
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ սարի գըլխա՛ն...
Հորեղբայրն ասավ․ — Ա՛յ խենթ, խելագար,
Վոսկին պահել եմ Մելիքի համար,
Վոր քաղցըր լինի աչքը մեզ վըրա։
Չըտըվիր, հիմի վոր զորք անի՝ գա,
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի։
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող գա, յե՛ս կերթամ,
Կերթամ, յե՛ս նըրան պատասխան կըտամ։
Ու մութ մարագի դըռանը փակեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց։
— Գընացե՛ք, ասավ, ազատ ապրեցե՛ք,
Սասունցի Դավթին արև խընդրեցեք։

XVII

Եսպես ջարդված, արյունըլվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Զարխադին։
Մըսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան

Ու ծափ տըվին կըտերներին.
— Յեկա՛ն, յեկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կոզբադին գնաց Սասուն,
Կանայք բերավ քառսուն-քառսուն,
Կարմիր կովեր բերավ կըթան՝
Գարնան չինենք յեղ ու չորթան...
Հենց մոտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Բըրքըջացին
Ու կանչեցին.
— Ե՛յ, Կոզբադին մեծաբերան,
Եդ վո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած:
Են դո՞ւ չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնավ վոսկի հանեմ,
Հայոց յերկիր ավեր անեմ:
Գացիր Սասուն քանց գել գազան,
Յետ ես գալի քանց շուն փախան...
Ու Կոզբադին խիստ բարկացավ.
— Սո՛ւս կացեք դուք, լըրբե՛ր, ասավ.
Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չե՞ք տեսել Սասմա ծըռեր:
Սասմա ծըռեր լերան-լերան,
Նըստեր ունեն մի-մի դերան.
Սասմա յերկիր քար ու կաղան,
Դըժար սարեր, ձոր ու ծառան.
Նըրանց խոսեր — ինչպես կեռ թուր,
Զորք ջարդեցին յերեք հարյուր...
Ասավ ու էլ չառավ դադար,
Վըռազ-վըռազ, գըլխապատառ
Վազեց իրեն թագավորին:
Խընդաց թագվորն իր աթոռին:
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կոզբադին,
Արժե՝ կախեմ յես քու ճըտին
Մեր դուզղունի մեծ նըշանը —
Պարգև քու մեծ հաղթությանը:
Ո՞ւր են, հապա առաջըս բեր
Սասմա վոսկին ու աղջիկներ:

Ասավ Մելիք, ու Կոզբադին
Գըլուխ տըվավ մինչև գետին.
— Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,
Զոռավ վախա յես ձիավոր,
Վո՞նց բերեյի Սասմա վոսկին։
Մի խենթ ծընվեց հայոց ազգին,
Վոչ աչ գլուխ, վոչ տեր ու մեծ,
Գըլուխս եսպես տըվավ ջարդեց.
«Չե՛մ տա, ասավ, իմ հոր վոսկին,
Չե՛մ տալ կանայք իմ հայ ազգին,
Սասմա յերկիր ձեզ տեղ չըկա...
Քո թագավոր, ասավ, թո՛ղ գա,
Թող գա՝ ինձ հետ կըռիվ անի,
Թե ղոչաղ ե՝ զոռավ տանի»։
Կատաղեց, փըրփրեց Մըսրա թագավոր.
— Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեղ, անմորուք,
Հազար հազար մարդ բեղը նոր ծըլած,
Հազար հազար մարդ նոր թախտից յելած,
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,
Հազար հազար մարդ սիպտակ ալևոր,
Հազար հազար մարդ, վոր փողեր հընչեն,
Հազար հազար մարդ, վոր թըմբուկ զարկեն...
Կանչեցե՛ք, թող գան, հագնեն գե՛նք, զըրա՛հ,
Կըռիվ տի գընամ յես Դավթի վըրա,
Սասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ։

## XVIII

Եսպես անհամար զորքեր հավաքեց,
Յեկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանըր նըստեց Մըսրա թագավոր։
Ենքան ահագին բազմություն են որ
Բաթմանա ջըրին յեկավ ու չոքեց,
Ով յեկավ, խըմեց — գետը ցամաքեց,
Սասմա քաղքում մընացին ծարավ։
Ձենով Ոհանին զարմանքը տարավ։
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՛նչ տեսավ,—

Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Ասես՝ էն գիշեր ձմեռը յեկել,
Սպիտակ ձյունով պատել էր Սասուն։
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՜յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վա՜յ, փախե՜ք, յեկա՜վ... հա՜յ, հարա՜յ, յեկավ...
— Ի՞նչը, հորեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն յեկավ...
— Ցավն ու կըրա՜կը Դավթի գլխին յեկավ։
Մըսրա թագավոր յելել է, յեկել,
Յեկել, մեր դաշտին բանակ է դրել.
Թիվ կա աստղերին, թիվ չկա զորքին...
Վա՜յ մեր արևին, վա՜յ մեր աշխարքին...
Յե՜կ, վոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Չոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեզ սըրի չըտա...
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, դու դարդ մի՛ անիր,
Գընա՛, քու ոգում դու հանգիստ քընիր.
Հիմի յես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ։
Ու գընաց Դավիթ ծանոթ պառավին.
— Նանի ջա՛ն, ասավ, ժանգոտած ու հին
Յերկաթի կըտոր, անթարոց, չամփուր,
Ինչ-ունես չունես՝ հավաքի՛ր, ինձ տուր,
Մի եշ էլ գըտիր, վոր վըրեն նստեմ,
Կըռիվ տի գընամ Մըսրա զորքի դեմ։
— Վա՜յ, Դավի՛թ, ասավ, մահս տանի քեզ.
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՜ս...
Ո՜ւր է քու հոր հըրեղեն ձին,
Ո՜ւր է քու հոր Թուր-Կեծակին,
Ո՜ւր է քու հոր դոտին վոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Ո՜ւր է քու հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբը սադաֆեն...
Վոր յելել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուզես եշ ու չամփո՛ւր...
— Ի՜նչ ես, նանի, էլ բարկանում,
Ջահել եմ յես, չեմ իմանում.
Յես քեզնից եմ լըսում էսոր.
Ձենք ու զըրահն ո՞ւր են իմ հոր։



«Սասունցի Դավիթը», 1904 թվի հրատարակությունը, ուշ շրջանի ուղղումներով:

— Հորեղբորըդ գընա հարցուր.
Ո՞ւր են, տատ, հանի՛ր, բեր, տուր:
Բան է, թե վոր չըտա սիրով,
Աչքը հանիր՝ խըլիր զոռով:

XIX

Դավիթ գընաց Ոհանի մոտ.
— Ե՛յ հորեղբայր, իմ հերահոտ,
Տո՛ւր ինձ իմ հոր հըրեղեն ձին,
Տո՛ւր ինձ իմ հոր Թուր-Կեծակին,
Տո՛ւր ինձ իմ հոր զառին վոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Տո՛ւր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբ սադաֆեն...
— Քու հոր մահվան տարուց — որից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Վոչ ընդունկից Թուր-Կեծակին,
Զըրահ չապիկ, վոսկի զառին...
Ինձ թող, ամա՛ն, մի՛ ապանիր,
Կուզես — հըրեն, գընա հանի՛ր:

XX

Հագավ Դավիթ զենքն ու զըրահ,
Կապեց զառին, Թուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վըրա,
Ցելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
Հոր ձին հեծավ ասպանդակեց,
Աստված կանչեց, ձենավ յերգեց.

Սասմա՛ն քույրեր, բարով մընաք,
Քուրություն եք արել ինձ,
Սասմա՛ն մերեր, բարո՛վ մընաք,
Մերություն եք արել ինձ:

Ախպեր տըղեք, բարո՛վ մընաք
Մեր աշխարհքին, մեր հանդին,
Խընդրո՛ւմ անեք, թե հանդ գընաք,
Չըմոռանա՛ք ձեր Դավթին:

Բարով մընաք դուռ ու դըրկից,
Մեծով փոքրով [մնաք բարով]:

Յես կըսպանեմ մեր աշխարհքից,
Դուք ապրեցեք բախտավոր։

Ծովասարի պաղ աղբյուրներ,
Բարով մընաք, ա՛խ, մընա՛ք.
Կըռիվ կերթամ, կը ծարավեմ,
Դուք հորդ մընաք, պաղ մընաք։

Ծովասարի անուշ հովեր,
Բարով մընաք, զով մընա՛ք,
Կըռիվ կերթամ, յես կըշոգեմ,
Դուք զով մընաք, հով մընաք։

Ե՛յ հերահամ իմ հարսնալեր,
Բարով մընաս Սասմա տուն,
[. . . . .] ընկնով որհնիր
Քո ծուռ Դավթին, քու վորդուն։

Կանչեց, իր ձին սապանդակեց,
Ձենով Ոհան լալով յերգեց.
— Ափսո՛ս, հապա՛ր ախոս հըրեղեն մեր ձին,
Ա՛խ, հըրեղեն մեր ձին.
Ափսո՛ս, հապա՛ր ախոս մեր վոսկի զոտին,
Ա՛խ, մեր վոսկի զոտին.
Ափսո՛ս, թանկ կապեն, վոր հագին տարավ,
Ա՛խ, վոր հագին տարավ…

Դավիթ բարկացավ,
Ձին քշեց, դարձավ,
Ոհանը վախեց,
Իր յերգը փոխեց.
«Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,
Ա՛խ, Դավիթըս, կորավ»։
Ես վոր իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ, Ոհանի ձեռքը համբուրեց։
Ձենով Ոհանն էլ, ինչպես հայր ու մեծ,
Որհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ գըրավ ճանապարհ։

XXI

Սասունցի Դավիթն ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդահա։
Սա էլ իմացավ համբավը կըռվի,
Մի բարդի ուսին գալիս է ահա։
Գալիս է՝ հեռվից բարձըր գոռալով.
— Ի՛նչ եք վեր ընկել էս դաշտի միջում,
Քանի դըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին վոր չեք ճանաչում...
Բա չե՞ք իմանում, վոր եստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Զըքվեցե՛ք, հիմի ուր վոր է՝ կըգա,
Ցեխել եմ սըրբեմ մեյդանը եսոր։

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ յելե՛ք, կեցե՛ք,
Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,
Զե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի յեք թամբել՝ յելե՛ք, հեծե՛ք.
Հետո չասեք՝ թե մենք քընած —
Դավիթ գող-գող յեկավ, գընաց...

Եսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Մըրրա զորքի մեջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կեծակին։

Զարկեց, փըշրեց մինչև կեսոր.
Կեսոր արինն յելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հազարավոր
Մարդ ու ձիակ վողջ միատեղ։

Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարհք տեսած ու բանագետ.

— Տղե՛րք, ասավ, ճամբա ընկեք,
Գընամ խոսեմ յես Դավթի հետ:

Գընաց՝ կանգնեց Դավթի առաջ,
Ինչպես խոսեց են ծերունին.
— Դալար կենա՛ կուռըդ, ո՛վ քաջ,
Սուրըդ կըտրուկ մինչև քու ձեռին:

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ ես մարդիկ,
Հե՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր վորդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Վորը կինն է թողել նստեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Վորը մի տուն լիք մանուկներ,
Վորը ծընող աղքատ ու ծեր,
Վորը լացով, քողն յերեսին
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով
Հավաքել է, եստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ սակավ ուժով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագավորն է քո թըշնամին,
Կըռիվ ունես — իր հետ արա,
Հե՞ր ես քաշում Թուր-Կեծակին
Ես անճարակ խալխի վըրա:

— Լավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց թագավորն ո՞ւր է հիմի,
Վոր սև կապեմ նըրա որին:

— Մեծ վըրանում քընած է նա,
Ե՛ն, վոր մեջից ծուխը կելնի.

Էն ծուխն էլ հո ծուխ չի վոր կա,
Գոլորշին է իր բերանի։

Ասին. դեպի մեծ վըրանը
Սապանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին.

Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցե՛ք, դա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գերող չունի՝ գերողն եմ յես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել,
Ոխտը օրով պետք է քընի.
Յերեք որն է դեռ անցկացել,
Չորս որ էլ կա, քունը առնի։

— Ի՛նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Ոխտը օրով հանգիստ քընի՛...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս դա մեյդան,
Էնպես դըրան յես քընացնեմ,
Վոր չը զարթնի էլ հավիտյան։

Յելան՝ մարդիկ ճարահատված
Շամփուր դըրին թեժ կըրակին,
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կըրնկին։

— Ո՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիծված լըլլի ձեռից,
Խոր մըռընչաց հըսկան հանդարտ
Ու շուռ յեկավ, քընեց նորից։

Յելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ դըրին թեժ կըրակին,

Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Ծիկնած տըլլին մերկ թիկունքին։

— Ո՛ֆ, ել հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրավ մոծակներից.
Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուզում էր յետ քընել նորից,

Տեսավ Դավթին։ Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըռընչալով,
Փըչեց վըրեն, վոր թըռցընի
Էն աժդըհին մի փըչելով։

Տեսավ, տեղից ժաժ չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին։
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի՛ աչքին։

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գամչի՛ ուժ պակասեց։
Պառկած տեղից վըր նայեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարո՛վ, Դավի՛թ, հոգնած ես դեռ.
Յե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կըռիվ կանենք,
Յեթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վըրանում ըռնակալը
Քառասուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել։

Ում վոր հաղթել չէր կարենում,
Ծաղրելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
Էն կորստյան հորի վըրա։

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խնդաց
Մըսրա դաժան թագավորը:

— Դե, թող հիմի գընա՝ խավար
Հորում փըթի, ներքան մընա:
Ու աշխըրն մի ջաղացքար
Բերավ, դըրավ հորի վըրա:

XXII

Քընեց են գիշեր Ձենով Օհանը:
Գիշերն յերազում յերևաց ծերին՝
Մըսրա յերկընքում արև ճառագած,
Սև ամպ եր պատել Սասմա սարերին:

Սասունցի վախեցած վեր թըռավ տեղից:
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անխորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ եր իջել Սասունի վըրա:

— Հոգե՛մ դըլուխդ, ասավ կընիկը,
Ո՛վ գիտի՝ Դավիթն ո՛ւր ե քեֆ անում...
Դու ել քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար յերազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վերկացավ դարձյալ.
— Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն ե ընկած.
Մըսրա վառ աստղը շողում եր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած:

— Ի՞նչ յեղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կեսին.
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց ել յետ Օհանն յերեսին,
Շուռ յեկավ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ յերկընքի բարձըր կամարում
Վառվում եր Մըսրա աստղը փառահեղ,
Սասմա աստղիկը սուզվեց խավարում:

Զարթնեց վախեցած:— Տունըդ քանդվի, կի՛ն,
Յես վո՛նց լըսեցի քու եդ կարճ խելքին.

Կորավ մեն-մենակ մեր ջահելն անտեր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, զենքերըս մի բե՛ր...

XXIII

Յելավ Օհան, գոմը մըտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Ե՛յ, ճերմակ ձի, մինչ յե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

— Մինչև լուս կըհասցընեմ.
Ու ձին արխավ փորը գետին:
— Մեջքըդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ յես, թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ քերեց փորը գետին:
— Ջա՛ն կարմիր ձի, մինչ յե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին:

— Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին:
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,
Ինչ տըվել եմ քեզ՝ են գարին:

Հերթը յեկավ սևին հասավ.
Գետին քերեց փորը սև ձին:
— Ե՛յ, ջան Սևուկ, մինչ յե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

— Յեթե ամուր մեջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել ոտըդ չուռ տաս,
Կըհասցընեմ, ասավ սև ձին:

XXIV

Սև ձին քաշեց Զինով Օհան,
Ձախը դըրավ ասպանդակին,
Աջն էլ մինչև չուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին:

Տեսավ՝ Դավթի նըժույգն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,

Ներքև Մըսրա զորքը չոքած,
Ինչպես անծեր ծըփուն մի ծով:

Ոխը դըմչի կուչի հագավ,
Վոր չըպատռի իրեն զոնից,
Կանգնեց Ոհան, ամպի նըման
Գոռաց Սասմա սարի ծերից:

— Հե՛յ-հե՛յ Դավի՛թ, վո՛րտեղ ես դու.
Հիշի՛ր խաչը քո աջ բազկի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Լո՛ւսը դուրս յե՛կ արեգակի:

Ձենը գընաց գըմգըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
— Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՛վ Մարութա Աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,
Ձե՛զ եմ կանչել ես նեղ ժամին...
Կանչեց, ատեղից յելավ վազքի,

Ինչպես զարկեց Ջաղացքարին՝
Քարը յելավ հազար կըտոր,
Կըտորները յերկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր:

Յելավ հորից, կանգնեց ահեղ.
Սարսափ կալավ դև Մելիքին:
— Դավիթ ախպեր, յե՛կ դես եստեղ,
Սեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Ել չեմ նըստել յես քու հացին,
Դու ամարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, ընկերդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս յեկ մեյդան, կըռիվ անենք:

— Կըռիվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:

— Բոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի մեջին:

Յելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր դուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից յեկավ կըրկին:

Յերեք հազար լիդր եր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Յեկավ, զարկեց. կորավ փոշում
Ու յերերաց յերկրի գունդը:

— Յերկիր քանդվեց կամ ժաժք յեղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
— Ձե՛, ասացին, արնի ծարավ
Հըսկաներն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ ես մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին:
— Կենդանի յե՛մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Տե՛ս, վո՛րտեղից հիմի կըգամ:
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ յերկրորդ անգամ:

Յերկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից:

Յեկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ վողջ խըլացան:
— Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց զոռող Մըսրա արքան:

— Կենդանի՛ յեմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՛ — հերթն ինձ հասավ,

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Յերրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու ենտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, յեկավ Դավթի վըրա:

Յեկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին յելավ Սասմա դաշտից,
Բըռնեց յերեսն արեգական:

Յերեք գիշեր ու յերեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Յերեք գիշեր ու յերեք օր
Բոթը աըլլին Դավթի մահվան:

Յերբ վոր անցավ յերեք օրը,
Են ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեգ-մըշուշում:

— Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը:
Սարսափ կալավ զոռ Մելիքին,
Մահվան գողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն են խավար,
Վըրեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռընչալով յելավ անդից
Են առյուծի առյուծ վորդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կեծակին:

Առաջ վազեց մայրերն արձակ
Մելքի պառավ մայրը ջադու.

— Դավի՛թ, մայրս ա՛ռ վախից տակ,
Էդ մի տարին ի՛նձ բաշխիր դու:

Յերկրորդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ յեկավ քուրը.
— Դավի՛թ, յեթե կուզես, կանչեց,
Իմ սրտին զա՛րկ յերկրորդ թուրը...

Վերջին տարին ժամը հասավ,
Յելավ Դավիթ յերրորդ անգամ.
— Էս մի տարին ու ասված, ասավ,
Էլ մարդ չըգա, պետք է վեր առամ:

Էս անգամ էլ քեռի Թորոսն
Առաջ յեկավ ձեռն արած դեմ.
— Դավի՛թ, ասավ, լավ իմանաս,
Կըշեռք պիտի դըցեմ, քաշեմ:

Մսրա Մելքի յերկու կեսը
Թե համասար չեկան իրար,
Էլ չըտեսնես իմ յերեսը,
Դավիթ չես էլ դու ինձ համար:

Ասավ, յելավ ու փոթորկեց,
Թըռավ, ցըլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կեծակին:

Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Ոխտը գազ էլ գետնը գընաց:

— Կենդանի՛ յեմ՞, մի՛ն էլ արի՛,
Գոռաց Մելիք հողի տակից:
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...

— Մելի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,

Միջից յեղավ ճիշտ յերկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը՝ դենն:

Էս վոր տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կտրըվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց. — Մի՛ վախենաք,
Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,
Զուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՛նչ եք տվել նրա ու ավել,
Ցեխել թափել տասր դաշտեր.
Չէ՞ վոր մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի որ ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք յեկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ գենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թե ջաղացի քարի տակին, —
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսոր,
Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին:

Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, վոր կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, վոր մեզ արիք դուշման...

# ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

## Բ. ՄԱՍԸ

### I

Ընկավ Մելիքն ամբարտավան ու պատերազմն արյունոտ,
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց Հայոց առավոտ:
Դըտավ կորցրած հանդիստն էլ յետ ամենն իրեն հարկի տակ.
Վեր բարձրացավ կըտուրներից ծուխը բուրդ բուրդ, կապուտակ:
Կըտրիճ տըղերք գինով տաքուկ տան մանգաղ, գերանդին,
Զըր՛նգ, զըր՛նգ, զըլխարթ ձենով գործը թընդաց մեր հանդին:
Դը՛մբ, հա դըր՛մբ, թըմբուկ զարկին, զուռնեն հնչեց զիլ, ուժեղ,
Դեֆ, կեր ու խում, պար ու խընդում, ու հարսանիք ամեն տեղ:
—Ապրի Դավիթ, [մեր պապերն], վոր մեզ տըվավ ուրախ օր,
Իրեն կանանչ կարմիրն էլ թող եսպես կապենք բաղդավոր...
Ու նըշանեց Ձենով Օհան, Դավթին արավ տուն ու տեղ,
Աղջիկ ուզեց արժանավոր, Թաղավորի զարմ ու ցեղ:
Խըլաթ քաղքի Թաղավորի դուստրը խոսեց նըրան կին,
Չըքնաղագեղ ու փահլևան են Չըմշկիկ Սուլթանին:

### II

Բայց թե աղջիկ կուզեր չըքնաղ, անպարտելի փահլևան,
Արի՛, գընանք Կապուտ Բերդի Թաղավորի աղջըկան:
Խանդութ խանո՛ւմ... հուրի ասա, մի անըմա՛ն, մի անա՛ս...
Խանդութ խանո՛ւմ... հալվում էյին սըրտերն ամեն մոմի պես:
Ոխտը տարի քառասուն հըսկա Թաղավորներ աժդահակ
Գուրզերն առած նըստած էյին նըրա բերդի պատի տակ.
Բայց [անտարբեր] գեղեցկուհին իր ամրոցում ահագին,
Ու չէր զարկում կարմիր խնձորն և վոչ մեկի թիկունքին:

### III

Ձենը յելավ, աշխարհք ընկավ, գընաց, հասավ Կապուտ Բերդ,
Թե մեծ կըռվում հաղթեց Դավիթ Մըսրա տիրոջն անհեթեթ:

Նա հաղթական լուրի վըրա քանդվեց սիրտը սիրունի·
— Ա՜խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լիներ յարանի…
Երնեկ տըվավ՝ խելքը թըռավ, ուշքը թըռավ դեպ Սասուն·
Դավիթն է միշտ մըտքի միջին, Դավիթն է միշտ յերազում:

IV

Յերկու աշուղ կանչեց Խանդութ, վոսկի տըվավ լիառատ,
— Գնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք, Ձոջանց տունը բազմահաղթ·
Իմ գովքն արեք Դավթի առաջ, սերըս սիրտը ձըգեցեք,
Ու կըտրեցեք աչքի քունը, սըրտի հանգիստն կըտրեցեք·
Այս ինձնից բարով արեք, ասեք՝ մինչ յերբ մընամ քեզ,
Զինավորված, թևավորված, յերբ պիտի գաս ինձ տանես:

Սազներն առան աշուղները ու [անց կացան] հողից հող,
Սաղ անելով յեկան հասան Սասմա քաղաք, Ձոջանց տուն:
Բարով տըվին չեմքում նըստած են ջոջ Ձենով Օհանին,
Ե՞ս է, ասին, աստվածապահ Ձոջանց տունը [մեծ ու հին]:
— Ես է, ասավ, Ձենով Օհան, ի՞նչ եք ուզում դուք Սասուն:
— Մենք, [ասացին], աշուղներ ենք, Դավթին կուզենք դյուցազուն:
Խանդութ խանում ղըրկել է մեզ՝ իր գովքն անենք Դավթի մոտ,
Պատմենք անտես են սիրունի անքուն սերը ու կարոտ:
Աստված ինքը թող շեն պահի Ձոջանց տունը փառավոր,
Ապրած պահի շեն պահողին և Սասունցի քաջ Դավթին,
Ձոջանց պարծանք քաջ Դավիթը վո՞րն է արդյոք, բարեկա՛մ:
— Քաջ Դավիթը, վոր լսել եք, յես եմ, ասավ, հենց վոր կամ·
Ինչ վոր Դավթին պիտի ասեք, իմ առաջին ասեք դուք:
Եսպես ասավ Ձենով Օհան, աշուղները . . . . .
Նըստոտեցին ծալապատիկ սազներն [առան] ծընկներին
Ու երվելով, օրորվելով են Խանդութի գովքն արին·
— Օրհնյալ աստված, տեր բարերար,
Քու գործքն է շատ, քու գործն արդար·
Դու պահապան կըտրիճ Դավթին,
Կըտրիճ Դավթին, իր մուրազին·
Իրեն մուրազն իրեն սըրտում,
Իրեն սըրտում — Կապույտ Բերդում…
Օրհնյալ աստված, բանդ ու բարիդ·
Ամենը սուտ, դու ճըշմարիտ:
Դու, վոր ստեղծել ես ընկըրանե
Խանդութ խանում Դավթի համար,
Դու արժանի անես իրար:

Վա՜յ քու տունը քանդվի Թանգութ,
Վա՜յ քու դուռը փակվի, անգութ,
Դու քու անհաս աշտարակում,
Աշխարհք ամեն քու կըրակում.
Աշխարհքն երվի թող քու սիրով,
Դու Դավթին ես դըկել բարով.
Բարով Դավթին. [Հոգար բարի]

. . . . . . . . . . .

. . . . . . . . . . .

— Հասակն ասես՝ չինարի, Դավի՛թ, դըրախտի մեջում կանգնած նոճին,
Ծըծերն ասես՝ ջուխտակ, Դավի՛թ, պանդակներ են ծոցի մեջին,
Ա՜խ, ծոցի մեջին.
Աչքերն ասես՝ ծով են, Դավի՛թ, ու կըցոլան աստղ ու արև,
Ա՜խ, աստղ ու արև.
Ունքերն ասես՝ սև են, Դավի՛թ, սև ամպերը ծովի վերև,
Ա՜խ, ծովի վերև.
Թերթերունքը նետեր, Դավի՛թ, աղեղներում ահեղ լարած,
Ճակատն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, են նոր ձյունած դաշտը
սարում,
Ակռեքն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, լալ մարգարտի շարք են
սուրբ.
Ծամերն ասես՝ ճոխծամ, Դավի՛թ, կրունկն են ծեծում հոգին
հազար,
Վիզը ասես՝ ճաճան, Դավի՛թ, շողման կլավն ու շուրթը լար···

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

1902

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին։

Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուշ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից։

Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ։

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար։

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՛ծք նըրա չար գործքին,
Որդիդ լինի, թե հերն ու մեր,
Թե մուրազով սիրած կին։

Ես լավության խոսքն եմ ասում,
Որ ժըպտում է մեր սըրտին.
Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը լավ մարդին։

Ե՛յ, լա՛վ կենաք, ակա՛նջ արեք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,

Միտքըս, տեսեք, ո՞ւր է գնում,
Բաշ վարականի գյուղի դես:

I

Նադիր Շահը զորք հավաքեց,
Զորք հավաքեց անհամար,
Ցեկավ Թըմկա բերդը պատեց,
Ինչպես գիշերն էն խավար:

— Հե՛յ, քաջ Թաթուլ, կանչեց շահը,
Անմա՞հ էիր քեզ կարծում.
Ցե՛կ, բերել եմ յես քու մահը,
Ի՞նչ ես թառել ամրոցում:

— Մի՛ պարծենա, դատարկ Նադիր,
Պատասխանեց էն հսկան.
Գըլխավը չա՜տ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կա անսասան:

Ասավ, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց համբունի,
Թըռավ, հեծավ նըժույգ իր ձին,
Դաշտը իջավ արյունի:

Ու քառսուն օր, քառսուն գիշեր
Կըռիվ տըվին անդադար,
Ընկան քաջեր, անթիվ քաջեր,
Բերդի գըլխին հավասար:

Իրան, Թուրան վողջ յեկել էն,
Թաթուլն անհաղթ, աննըկուն,
Զորք ու բարան խորտակվել էն,
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, հաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է նրան կինը,
Ջահել կինը սևաչյա:

II

Էն տեսակ կին,
Ցես իմ հոգին,
Թե աշուղն էլ ունենար,

Առանց զենքի,
Առանց զորքի
Շահերի դեմ կը գնար։

Սիրտ հընոց,
Կրակ ու բոց—
Ինչպես աչքեր թե ժըպտան,
Մարդու համար
Որձա պես վառ
Գիշերները լույս կը տան։

Վարդի թերթեր—
Ինչպես շուրթեր
Թե հաղթություն քեզ մաղթեն,
Եվ քեզ վոչ շահ,
Վոչ ահ ու մահ,
Վոչ զենք ու զորք կը հաղթեն։

III

Ու կըռվի դաշտում շահի առաջին
Արին մի անգամ զովքը սիրունի․
Նըրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի չըքնաղ հուրին Իրանի։
Ծով են աչքերը Ջավախքի դըստեր
Ու կորչում է մարդ նըրա հայացքում,
Ճակատը ճերմակ են ձյունից էլ դեռ,
Վոր բարձր Արալի գագաթն է ծածկում։
Նա յե շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած էն հըսկան,
Նըրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Վոր դաշտն է իջնում առյուծի նըման։
Թե տիրես, մեծ շահ, դու նըրա սըրտին,
Թաթուլն էլ անզոր կընկնի վոտիդ տակ,
Հանդիստ կը տիրես և Թըմուկ բերդին,
Վոր չես կարենում եսքան ժամանակ։

IV

Ինչպես է ասել հընուց եդ մասին
Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին․
Ի՞նչը կըհաղթի կյանքում հերոսին,

Թե չը լինեին
Կինն ու գինին:

Արևի նման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար,
Ո՞վ կանի նըրան գետնին հավասար,
Թե չը լինեին
Կինն ու գինին:

Պարում է սուս կըռիվ գընալիս
Գետընքից վերև թըռչում ման գալիս·
Ո՞վ ցած կը բերի նըրան թըռչելիս,
Թե չը լինեին
Կինն ու գինին:

Թեկուզ և արար աշխարհ գա վըրան,
Կերթա դեմ ու դեմ, սուր չի տալ իրան,
Ռուստեմ Զալն էլ չի հաղթիլ նըրան,
Թե չը լինեին
Կինն ու գինին:

V

Ու գըրկից շահը իր թալիչ ջերդեին·
Գընա տե՛ս, ասա՛, Թըմկա տիրուհուն,
Յերգի՛ իմ սերը նըրա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:
Խոստացի նըրան իմ վոսկի գահը,
Խոստացի նըրան ամե՛ն, ամեն բան,
Ինչ վոր կարող է խոստանալ շահը,
Յերկրպագել շահը իր սիրած կընկան:

Ուր ահեղ կըռվով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ·
Յեվ ահա մի օր ծեր, թափառական
Մի աշուղ մըտավ Թըմկաբերդ:

VI

Գոռում են, դողում Թըմըկա ձորերը,
Կանգնած է Թաթուլ շահի հանդիման·
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում՝ են Քուռի նըման:

Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում՝ են Քուռի նման.
Յերգում է աշուղն իր շահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Թըմկա տիրուհին.
Յեվ վըրդովվում են իր միտքը թաղուն
Դավաճան գործի ամոթը խորին
Յեվ արքայական փառքն ու մեծություն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նազանի աննըման.
Նայի շահի՛ն, իրեն զորքի՛ն,
Աշխարհքի տերն անսահման...

Մեզ պես տըկար մարդ է նա էլ՝
Սիրուններին միշտ գերի.
Քու ճակատին թագ է վայել,
Լինիս շքե՛ղ թագուհի...

Լըսում է չքնաղ Թըմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորի՛ց ու նորից...
Ու դարձավ նա լո՛ւռ, դալո՛ւկ, մըտախո՛հ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

VII

Դարձավ իր կռվից իշխան Թաթուլը,
Դարձավ հաղթական իրեն զորքի հետ.
Սըրբեց, պատյանը դըրավ կեռ թուրը,
Ցընծության ձայնից դողաց Թըմկաբերդ։

Խընջույք է սարքել Թըմկա տիրուհին,
Ցերեկ է արել խավար գիշերը.
Հեղեղի նըման հոսում է գինին,
Ու քեֆ է անում Զավախքի տերը։

Պըտույտ է գալիս չըքնաղ տիրուհին,
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խընդրում, վոր ուրախ լինին,
Վոր լիքն ու առատ բաժակներ քամեն։

— Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,
Բաժակներըդ լիուլի,

Խմենք — տատված կլորուկ անի
Թուրը իմ քաջ Թաթուլի։

— Է՛յ, տեր տատված կլորուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ հանապազ
Մեր գըլխից անպակաս։

Ու թընդում է Թըմուկ բերդը
Էն աղմուկից խընդության,
Վորոտում են տաղն ու յերգը
Գոռ ձայներով հաղթական։

— Էն մըթին ամպից արծի՞վն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով։
— Էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով։

— Էն Թըմկա ձորում սև ա՞մպն է գոռում,
Էն շա՞նթն է ճայթում էնպես ահարկու։
— Էն Թըմկա ձորում Թաթուլն է կռվում,
Էն թուրն է շաչում էնպես ահարկու։

Ի՛նչ սարի արծիվ կը հասնի քաջին,
Ի՛նչ շահ կը կանգնի նըրա առաջին։

Ու չի դադարում յերգի հետ վարար
Կախեթի գինին խելագար հոսել.
Խըմում են տիկնոջ թանգ կյանքի համար,
Վոր էն ժայռերին ծաղիկ է բուսել։

Խըմում են կռվող քաջերի փառքին,
Վոր կռվի դաշտում կյանք չեն խընայում,
Յեվ ընկածների սուրբ հիշատակին,
Վոր յերկընքիցն են այժմ իրենց նայում...

Պըտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հըպվում սեղաններն ամեն,
Հորդորում, խընդրում, վոր ուրախ լինին,
Վոր լիքն ու առատ բաժակներ քամեն։

— Ո՛ւֆ, տիրուհի, աստված վկա,
Ել չենք կարող մենք խըմել.
Ել ուժ չը կա, ել տեղ չը կա,
Շատ ենք խըմել ու հոգնել…

Ու հանգչում է Թըմուկ բերդը,
Պապանձում է ու մարում,
Հարբած, հոգնած տերն ու զորքը
Մըրափում են խավարում:

VIII

Լուռ ու խավարչտին կամարների տակ,
Հոգնած ու քընած բազմության վըրով
Թըռչում են, թըռչո՛ւմ, սև՛, չարագուշակ
Յերազներն ահեղ, անվերջ խըմբերով:

Յերազ է տեսնում Թաթուլ իշխանը,
Վոր վիշապ ոձը յեկել է ահա,
Յեկել փաթաթվել, իր բերդը պատել,
Գըլուխը դըրել յուր պոչի վըրա:

Ու բարձրացնում է հըրեշն ահռելի,
Իրեն գըլուխը բարձրացնում է վեր,
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,
Մինչև Թաթուլի պալատն ու սըներ:

Պառկած է իբրև Թաթուլ իշխանը
Նազելի կընոջ գըլուխն իր կըրծքին,
Ու երբ ասում է՝ վե՛ր կաց, իմ հըրեշտակ,
Թո՛ղ, վոր սպանեմ յես եդ հըրեշին:

Եսպես է ասում Թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ,
Իրեն սիրելի կընոջ գըլխի տեղ
Ոձի գըլուխն է կըրծքին ծանրացած…

IX

Ե՛յ, հըսկեցե՛ք, ի՞նչ եք քընում,
Քաջ զինվորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսեք, տանջվում մըթնում,
Քուն չի աչքին մոտ գալի:

Չը լինի՞ թե, հաղթահարված,
Ճարը հատած թըշնամին
Դավ է դընում մութն ու մեռած
Կես գիշերվա էս ժամին:

Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գընում ու գալի.
Հե՛յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի:

Վե՛ր կացեք, վե՛ր, հարբեցրել է
Իր հաղթական հյուրերին,
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին:

Դա՛վ... դա՛վ... յելե՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ...
Զենք առեք շո՛ւտ... ձի հեծե՛ք, ձի՛...
Ճըռընչում են, դըղըրդում են
Դարպասները յերկաթի...

X

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրա, Ջավախքի վըրա,
Ավերակ բերդին, սեւ ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին չոքել են ահա:

Հաղթության փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի և՛ զորքերն, և՛ տեր,
Ու հավիտյան էլ մընացին քընած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

Նըստած է շահը. նըրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նայում է շահը անտեր դահույքին,
Մըտքում անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկա վոչ մի բան,
Ու մի՛ հավատալ յերբեք վոչ մեկին.
Վոչ բախտի, փառքի, վոչ մեծ հաղթության,
Վոչ սիրած կնկա տըված բաժակին...

Ու լի դառնությամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարյոն Թըմկա տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չի առել,
Չի յեղել կյանքում յերբեք խաբեբա...

Եսպես տիկինը տըվավ պատասխան.
Անհուն ցասումից մըռընչաց շահը.
— Հե՛յ, դահի՛ճ, գոռաց գազանի նըման.
Դահիճը իսկույն մտավ սրահը:

XI

Դահիճն յեկավ վոտից գըլուխ
Կարմիր հագած ու արյուն,
Ու դուրս տարան իր պալատից
Թըմկա չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ են ժեռ քարից,
Վոր կանգնած է մինչ եսոր,
Են ահավոր քարի ծերից
Գըլորեցին դեպի ձոր:

Գել ու ագռավ յեկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,
Ցին ու ագռավ իջան ամպից,
Սև աչքերը հանեցին:

Անցավ անտես ու աննըման
Են սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Վոր չի ծաղկել ել նորից:

Անցավ վաղուց են մեծ արքան
Իրեն փառքով ու զորքով,
Անցավ Թաթուլն են հաղթական
Ու իր քաջերն են կարգով:

Ու նրանցից մենակ անմեռ
Ես զրույցը հասավ մեզ,
Վոր մեզանից հետո էլ դեռ
Պետք է խոսվի միշտ նոյեն:

XII

Հե՛յ պարոննե՛ր, ականջ արե՛ք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լավ ուշ դըրեք իմ խաղին:

Ամենքս եսպես հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուչ որից,
Հերթով գալիս անց ենք կենում
Ես անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսում լավ ու վատ·
Ա՛խ, յերանի՝ ով մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ:

# ՀԱԶԱՐԱՆ ԲԸԼԲՈՒԼ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

1898—1914

< 1 >

Յերբ դեռ շունչը արարչական ծավալվում եր ոգի մեջ,
Յերբ դեռ նոր եր կույս աշխարհքում կյանքը խաղում
պարզ ու պերճ,
Յերբ տիրում եր ամենուրեք սերն ու համերաշխ անվրդով,
Յեվ դառն ու դեղ դեռ միամիտ խաղում եյին իրար քով,
Սուրբ ու սուտ են ժամանակ, արեվլուսի կողմերում
Բարի Ալամ Թագավորն եր <. . . .> իշխում ու տիրում:
Իշխում եր նա արեվի պես, վոր ամենքին կենսաձիր
Իրեն լույսն ու ջերմությունը շռայլում ե անխտիր,
Կամ թե գարնան անձրեվի պես, վոր թափվում ե հորդառատ,
Զովացնում ե ու լիացնում, չի հարցնում լավ ու վատ:

< 2 >

Բարիլուսի հետ կանգնեց սգավոր պառավը վորդու դիակի վրա, ձեռքերը դեպի յերկինք տարածեց ու կանչեց·

— Ո՛վ լուսեղեն, դռներդ բաց,
Հող ու ջրի սուտ ստված,
Ո՛վ, վոր եսքան բարիք ու փառք՝
Աշխարքն անծեր, ծովերն անտակ
[Ըստեղծել ես,] փռել, լցրել,
Ո՛վ բարեգութ, քեզ եմ խնդրել—
Ինչպես վորդիս իր մոր գըրկին
Գընաց՝ կարոտ, աչքն աշխարհքին,
Նըրանք ել թող իրենց կյանքից
Կարոտ գընան լիքն աշխարհքից·
Յեդեմ այգին կըտրի թող փուշ,
Իրենք գազան չար ու ապուշ:

Եսպես կանչեց, ու, ո՛վ սարսափ, փոխվեց գըրախտն են անուշ,
Ծառը կըտրեց կոպիտ մացառ, վորթը—բաղեղ, վարդը—փուշ·
Պահնորդ մարդիկ դարձան գազան զուրկ նշանից մարդկային,

Կորցրին և՛ սիրտ, և՛ քնքշություն, վոր ի ծընե ունեյին:
Գույժը տարան Թագավորին, այսպես, այսպես պատմեցին,
Սարսափ կալավ Թագավորին, փետտեց մազերն իր գահին:
< . . . . . . . . . . . . . . . . . . >
Ծեր, բազմափորձ մարդիկ կանչեց [Ադամ արքան] իր ատյան,
— Ո՞վ է, ասավ, ձեզնից տեսել կամ իմացել նման բան.
Ինչ պատիժ է, վոր գալիս է ինձ ու յերկրիս բովանդակ,
Ինչ ճար ու դեղ, ինչ հնար կա < . . . . > այս ցավին
< . . . . . . . . . . . . . . . . . . >
Ու ծերերը խոնարհեցին գըլուխները ալեզարդ.
— Թող շատ ապրի Ադամ արքան փառքի գահին իր հաստատ.
Հազար տեսակ ցավի տուն է — ես աշխարհքը անցավոր,
Ու թվում է մարդու համար ամեն մի ցավ անտավոր:
Բայց դու յեղիր համբերատար, միտքդ պահիր միշտ յերկար,
Ցավը պետք է մարդը քաշի, վոչ թե անշունչ սար ու քար:
Ես աշխարքում վոչ առաջին, վոչ վերջինն ես դու մենակ,
Պատահել են նաև դեպքեր կյանքում ամեն ժամանակ —
Մենք չենք տեսել, բայց լսել ենք, վոր մեզանից շատ առաջ
Գորտ ու գազան մարդ են դառել, մարդը դառել գայլ կամ արջ.
[Բայց մի դեպքով, մի հընարքով վերջն յեղել է միշտ բարի,
Միշտ բարին է վերջը հաղթում — այսպես է կարգն աշխարհի].
Բայց թե հե՞ր է ես պատիժը այժըմ գալի քեզ վըրա,
Անգետ ու մութ մարդիկ ենք մենք — էդ գրողը կիմանա:
Մենք ե՛ն գիտենք, վոր նա, ով վոր ցավ է տվել ու աղետ,
Ստեղծել է ամեն ցավի ճարն ու ճամբեն իրեն հետ:
Չըկա մի ցավ արևի տակ, չըկա մի < . . . . . >,
Վոր չունենա գիտությունը նրան մի դեղ կամ դարման.
Գիտությունը լույս է, արքա, աշխարհ իջած յերկնքից,
Ճարեր ունի քաղած-քամած ամեն հանքից ու տունկից.
Յետ է բերում նա մեռելին հոգևարքից իր վերջին,
Մի հոգին է միայն պակսում — հավատարի արարչին:
(Ինչ է սակայն նրա համար մարդը իրեն ցավերով.
Քընընում է, չափում-կըշռում յերկիրն իր խոր ծովերով,
Փորփըրում է հողի շերտերն — հասնում ընդերքն ամենի,
Յերբ դեռ անկազմ կար յերկիրը խավար ծոցում անհունի…
Նայում է վեր — համրում, դիտում աստղերն, արև ու լուսին,
Ով կա արդյոք նրանց վըրա, ինչ կա նըրանց յերեսին,
Գտնում է [միշտ] նոր յերկիրներ տարածության մեջ անսահման,
Ջոկում այնտեղ արարածներ — շունչ կենդանի մեզ նըման,
Յեվ աշխարհքներ, վոր ապրել են վաղուց իրենց վողջ կյանքով,

Յեվ աշխարհքներ, վոր տակավին այրվում են հուր յերկունքով,
Յեվ հաշվում է — ամեն մինը քանի միլլոն տարի կա,
Կամ դեռ քանի-քանի միլլոն տարի ունի մինչև մահ.
Ո՛վ իմանա ինչ հրաշքներ կան իր առջև տակավին,
Սակայն, թողնենք հրաշքները—գանք, տեր արքա, քո ցավին:)
Մի բան չըկա վեր յերկընքում, յերկրի վրա ու տակին,
Վողջ գընընել, վողջ մաղել է — խաղալիք են իր ձեռքին:
Կանչիր թող գան քո տերության մեծերն ուսյալ ու գիտուն
Յեվ քո մարդկանց և քո ազգուն նրանք կանեն ոգնություն:
Նույնս ասին, պատվեր տվավ թագավորը [Հուրանի,]
Կանչեց յերկրի ամեն կողմից գիտուններին անվանի:
— Ինձ պատմեցեք, ո՛վ հմուտներ, ինչ տեսիլք է արդյոք սա,
Վոր ծերության անկար որով իմ աչքերով յես տեսա:
[Այգի արի, բար հացըրի, վարդ պահեցի աննման,
Արթուն, հըմուտ, հավատարիմ մարդիկ դըրի պահապան.
Վարդերս ամեն փուշ կըտրեցին, փոխվեց այգին իմ յեդեմ.]
Մարդիկս ընկան մարդու կերպից, դարձան գազան չար-դժխեմ,
Բերեք արեք ինչ ճար վոր կա յերկրի վրա ու տակին,
Բարով, բույրով լցրեք նորից յեդեմական իմ այգին,
Ազատեցեք, վոր չըկորչեն իմ մարդիկը հավիտյան,
Տվեք նախկին տեսքը ազնիվ, քնքույշ հոգին բանական:

Նույնս ասավ, գլուխ տվին գիտունները արքային.
— Թող չատ ապրի Արամ արքան վողջ ու հաստատ իր գահին,
Ես աշխարքում ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,
Են պատճառն էլ ուրիշ պատճառ: Նույնս անվերջ, անդադար
Մինչև պատճառն սկզբնական՝ ծածկած խորհուրդն էս կյանքի,
Մինչև սկիզբն սկիզբների՝ ակն ու աղբյուրն ամենքի:
Ընչի համար նույնս է էս, չահ լինի քեզ թե վընաս,
Պետք է քննես, առաջ բերող նըրա պատճառն իմանաս:
Յերբ իմացար, թե էս ընչից էս ինչ բանն է դուրս գալի,
Կարող ես դու առաջ բերես և հետևանք ցանկալի:
Յեվ արդ, քանզի ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,
Իսկ էն, ինչ վոր պատճառ ունի, ունի նաև իրեն ճար,
Մի՛ արտմիր դու, մեծ թագավոր, մեզ տուր միայն ժամանակ,
Վոր քընընենք ու էս ցավի պատճառն ու ճարն իմանանք:

Ու գընացին քառսուն ցերեկ, քառսուն գիշեր արթնեցին,
Ցերեկն անդուլ, հանգիստ չառան, վոչ գիշերը քնեցին.
Քըքրեցին, քընընեցին ամեն գըրվածք ու գըրյանք,

Յերբոր անցավ քառասուն օրը յեկան դարձյալ ապարանք·
— Թող շատ ապրի Ալամ արքան վողջ ու հաստատ իր գահին,
Գլուխ տվին, եսպես ասին գլխավորները արքային:
— Քըրքըրեցինք, քընընեցինք մենք խորհուրդը էս կյանքի,
Սահմանեցինք էյությունը, տեղն ու ցեղը ամենքի·
Առանք մարդուն, վոր կյանքերի ողն ու կապողն է վերջին,
Իջանք ներքև կարգով շարքով, մարդուց անցանք մենք արջին,
Արջից հավքին, հավքից սողունն ու սողունից ձըկան,
Եսպես հերթով հասանք մինչև էակները նախնական,
[Մանրեները միարջիջ, վոր . . . . . . . .
Կազմըված են հյուլեներից անտեսնելի մեր աչքին,]
Վորոնք ունեն իրար ներհակ զորություններ լավ ու վատ,
Ու միանում ու լուծվում են մաքառելով անընդհատ.
Եսպեսով էլ հորինում են յերևույթներ կյանքի մեջ,
Ույժը կամ ծյուրում, ախտ կամ յերանք, կյանք ու
ծնունդ և կամ վերջ···
Ու բովանդակ էս աշխարհքում ամեն մինը իր կյանքով
Ծնվում, մեռնում, փոփոխվում է մի ընդհանուր օրենքով:
Ես ինչ հյուլեն ներհակավոր են հյուլեյին միացավ,
Ու փուշն ահա թերթեր տվեց, անուշ բուրմունք ունեցավ,
Կամ [յենթադրենք] թե կատարվեց այլ միացում հակառակ
Ու վարդն ահա փոխվեց, դառավ անհոտ մի փուշ հասարակ:
Արյան մեջ էլ էս ինչ հյուլեն պակսեց կամ չէ՝ շատացավ,
Ու մարդն ահա այլ կերպարանք—այլ բնություն ստացավ···
— Եդ ամենը հրաշալի, կանչեց արքան անհամբեր·
Բայց ասացեք, ո՛վ խորհմաստ, ո՛վ բազմագետ գլխավորներ,
Ինչպես անենք, վոր իմ այգին դառնա դրախտ առաջվան,
Իմ մարդիկը դադանացած կրկին լավերն են [վաղվան]:
Եսպես կանչեց, գլուխ տվին գլխավորները արքային·
— Թող շատ ապրի Ալամ արքան բարձր ու հաստատ իր գահին.
Ճարեր արինք, դեղեր բերինք, աշխատեցինք մենք անքուն,
Հնար չեղավ, դեղ-ճար չեղավ վոչ քո մարդկանց, վոչ այգուն·
Ինչ գտեցինք բերինք արինք—փուշը մնաց էլ յետ փուշ,
Ու դաղանը դարձյալ դաղան, դաժան, կոպիտ ու ապուշ···

< 3 >

Միտք էր անում տարակուսած դժբախտ արքան Հուրանի,
Հանկարծ կանգնեց իր առաջին մի անծանոթ ծերունի:
Մի ծերունի պայծառ ու վեհ, ինչպես տեսիլք սրբազան,
Ալիքներին ծածկեպատ, ձեռին կաղնի գավազան.

*Միրուքն յերկար, մինչև գոտին, սիպտակ, ինչպես նորեկ ձյուն,*
*Քայլքը թեթև, դեմքը զվարթ, ու հայացքը իմաստուն:*
*—Վողջո՛ւյն, ասավ, բարի Ալամ, վողջույն վշտոտ թագավոր,*
< . . . . . . . . . . . . . . . . . . >
*Ես աշխարքում թե մի ճար կա, մի հընար կա քո ցավին,*
*Են Հազարան աղնիվ հավքն է, վոր դու չունես տակավին,*
*Վոր յերգում է հազար ձենով, հազար ձևով կանչելով,*
*Հետն էլ բուրյան մշտադալար վարդ է թափում փնջերով.*
*Յեթե յերգի [նա մի անգամ], կամ* < . . . . > *նա մի որ,*
*Փուշ ու տատասկ վարդի կըխոխվեն, վարդ կըծաղկեն նորից նոր.*
*Ու պահապան քո ծառաներ, վոր դառել են այժմ արջ,*
*Յետ կը դառնան ընքույշ մարդիկ, աղնիվ ու լավ, քան առաջ...*
*—Ո՛վ յերկնառաք բարի դու ծեր, գոչեց արքան* < . . . . >
*Պարգև կըտամ ինչ վոր ուզի ավետաբեր քո լեզուն.*
*Բայց վո՞ր յերկրում, վո՞ր անտառում, վո՞ր սարում է նա յերգում...*
*—Միշտ յերջանիկ կախարդական անկյուն, անմեռ աշխարհքում...*
*Ասավ ծերը, քամի դարձավ ու չըքացավ իր աչքից,*
*Ապշեց արքան, քշվեց արքան աչքով տեսած հրաշքից:*

< 4 >

*Յերեք կըտրիճ վորդի ուներ Ալամ արքան ալևոր,*
*Կանչեց իրեն յերեք վորդուն ու արքունիքն իր բոլոր:*
*—Տեսա՛ք, ասավ սիրուն վորդիք, ինչ պատուհաս մեզ հասավ.*
*Մեր աշխարհքի միակ զարդը, միակ փառքը փըչացավ:*
*Յես՝ ծերունի, սըրի տեղակ ցուպ եմ արդեն ձեռս առել,*
*Այժմ էլ վըշտից ծունկս կըտրել, աչքիս լույսն է խավարել.*
*Ժիր մարդիկ եք, զենքներդ առեք, ձիանք հեծեք ամեհի*
*[Գնացեք...] գըտեք, բերեք ճարն ու դեղը մեր ցավի:*

*Առաջ յեկավ ավագ վորդին.—Ո՛վ մեծափառ մեր ծընող,*
*Յես ձի կելնեմ, զենքըս կառնեմ, կերթամ, կանցնեմ հողից հող.*
*Չեմ վախենալ, յետ չեմ դառնալ, ով վոր կուզի դեմըս գա,*
*Թող գըլխանի վիշապ լինի, դև ու հըրեշ—թե հըսկա.*
*Ահա այսպես [սուրըս....] կըտոր կտոր յես կանեմ,*
*Յերկնում լինի վայր կըբերեմ, ծովի խորքում—կըհանեմ:*

Սուրը պալատականների մեջ պտտեցնում է: Պալատական կանայք սարսափահար ճչալով խմբովին.

*—Ո՛, սարսափելի յե, ով կկանգնի սրա դեմ:*

Պալատականները [նախարարը] ծաղրածուն.

*Թե ո՞վ է նա—չգիտեմ,*
*Բայց կկանգնի սրա դեմ,*
*Թե սա կանգնի նրա դեմ...*

*Ապա խոսեց միջնակ արքեն նույնպես զառամ—մեծ բերան,*
*—Հայրիկ, ասավ, յես կը բերեմ Խաս Բուլբուլը Հազարան—*
*Կուզես հիմի նշան արա, դու փորձիր որ ու ժամ,*
*Ու թող լինեմ մորըս փորքին, յեթե հանկարծ ուշանամ.—*

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

(Վերջում լըսվում է մեղմ նվագածություն և յերգի ձայնը. ծաղկեպսակը գըլխին, քնարը ձեռքին, փոքիկներով—աղջիկներով շըրջապատված գալիս է Արեգը).

*Ծաղկապըսակ բըլուրներից,*
*Արշալույսի ժամերին,*
*Նա ժըպտալով՝ կանչում է ինձ*
*Դեպի աշխարհըն իր Վերին:*

*Սար ու խաղաղ անտառներից,*
*Լըռության մեջ են խորին,*
*Շըշընջալով կանչում է ինձ*
*Դեպի աշխարհըն իր Վերին.*

*Կարկաչահոս մեր ջըրերից,*
*Յերբ թախծում եմ ափերին,*
*Կարկաչելով կանչում է ինձ*
*Դեպի աշխարհըն իր Վերին:*

---

*Ո՞վ է կանչում, զավակս.*
*—Անանեը, հայր.*

Յեվ պալատականներն իրար աչքով արին ու ծիծաղեցին քթների տակ...

. . . . . . .

. . . . . . .

*[Ո՞վ է նա.]*
*—Ի՞նչ է նա.*



«Հազարան բլբուլ» պոեմի «Ցերեկի փիշոը»
հատվածի սևագիրը:

— Ճշմարիտ.
— Ճշմարի՞տ.
— Յեվ արդար.
— Յեվ արդա՞ր.
— Յեվ գեղեցիկ.
— Ամեն բա՞ն.
— Ամեն բան…
. . . . . . .
. . . . . . .

Ո՛վ, վոր գալիս ես նըստած ամպերին
Ո՛վ, վոր փայլում ես մաքրությամբ վերին…
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .

< 5 >

## ՅԵՐԳՉԻ ՎԻՇՏԸ

### I

Յերբ իրիկունն հացի նստան տանտերն ու հյուրն իր ոտար,
Յերգիչն եսպես խոսք բաց արավ, հարցմունք արավ [սիրաբար.]
—Պատմիր, լսենք, ով բարեկամ, շատ աշխարք ես ման յեկել,
Ինչ ես տեսել, ինչ ես լսել, պատմիր լսենք թող մենք էլ:
— Շատ աշխարք եմ յես ման յեկել, խոսեց Արեգն ու ասաց,
Ու շատ զարմանք բան եմ տեսել, վոչ տեսնված, վոչ լսված,
Բայց ինչ նոր աչքով տեսա յես քեզանից ես քաղքում,
Եդպես զարմանք բան չեմ տեսել դեռ բազմափորձ իմ կյանքում:
Նոր չվար կանգնած եյի մինարեյի պատի տակ,
Են ծովացած ամբոխի մեջ, պանդուխտ, անոք ու մենակ,
Յերևացիր դու գեղեցիկ, դեմքդ զվարթ ու պայծառ:
Վողևորված, ուրախ ուրախ վեր—մինարեն բարձրացար,
Ձենըդ ջահել, գիլ ու հնչյուն, լի ավյունով դերրնական,
Շատ շատերի ուշքը տարավ, [<. . .>եյին ] ու ընկան.
Հափշտակված հմայլանքին կախարդական քու յերգի
Ճախրում եյին գլխիդ շուրջը թռչունները յերկընքի,
Բայց իջնելիս լալ սկըսար, մազերդ փետտել, քեզ կոծել.
Եդ տարորեն քու արարքից յես ապշած եմ մնացել:
— Հայ կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց յերգիչն Արեգին,
Եդպես անզգույշ ձեռք մի տար դու անբուժելի իմ վերքին:

II

«...Ջերմ ու պայծառ գարնան մի օր, հանդիսավոր մի տոն օր,
Մինարեթի տակ ծավալված ժողովուրդը բյուրավոր
Սպասում եր իմ աղոթքին: Վոգևորված յես յեկա,
Ենպես ուրախ, ինչպես հավք, վեր, մինարեն բարձրացա:
Լե՜ն աշխարհքը վոտիս տակին, խոր յերկինքը իմ վըրեն,
Հոգիս լի եր յերազներով—յերգը հոսեց ինքն իրեն:
Չըքնաղ հավքեր՝ թըռած անհայտ աշխարհներից դեպի ցած՝
Ճախրում եյին գլխիս վերև իմ յերգերին զմայլած:
Ինչպես յեղավ՝ են հավքերից մինը ջոկվեց ու թըռավ,
Զարկեց ու ինձ հափըշտակեց, թևին առավ ու տարավ...
Աչքս մին էլ բաց եմ անում անմահական մի դրախտում.
Բաց եմ անում—չեմ կըշտանում, փակում—ու չեմ հավատում:
Հիացած եմ տեսածներից, ու մընում եմ անհամբեր,
Մտածում եմ թե տակավին ինչեր պիտի տեսնեմ դեռ...
Ու գընում եմ, գընո՜ւմ առաջ, ասես թըռչում օդի մեջ,
Թըռչում թեթև, հեշտ ու անթև, անհուն, ուրախ ու անվերջ:
Ահա ծաղկած բազմաբուրյան մշտադալար թփերից
Մի նազանի հուրի փերի ձեռ է անում դեպի ինձ,
Սիրտը տըված են յեդեմի յերջանկության ըղձալի,
Վարսը թողած ազատ հովին՝ յերգ է ասում ու գալի·

(ԱՌԱՋԻՆ ՓԵՐԻՆ)

«Յես ու աստղի ցոլքը պայծառ
Խաղում եյինք ջըրափին,
Յես ու աստղի ցոլքը պայծառ
Քընած եյինք մինչ արփին...»

Հանկարծ ընկան վըճի՜տ, ցոլուն իր աչքերը ինձ վըրա,
Տեղըս կանգնած քար կըտրեցի, շունչըս հատավ ու ասա:
—Ո՞վ ես, կանչեց, դու հողածին, ո՜վ համարձակ դու հոգի,
Ես կողմերով անց չի կացել դեռ թըռչունը յերկընքի,
Ի՜նչպես մըտար ես դըրախտը դու մահացու մի թույլ մարդ,
Քո հայացքով չըփոթում ես մեր սըրտերը անարատ:
Դե յե՛կ, յեթե մի մարդ ես դու մեր յեդեմին արժանի,
Յե՛կ, քո լանջին, ես ծառի տակ պիտի նընջեմ յես հիմի·
Բայց վա՜յ՝ յեթե հաղթվես արկար հրապույրքից ու կրքից,
Պիտի գըրկվես անդառնալի ես յերկնային վայելքից...
Ասավ, թեթև թռկնեց լանջիս, փակեց աչքերն աստղավառ,

Ու բոսլինքը աստղածային խաղում էյին վեր ու վար:
Արբած իր կույս թարմությունից ու իր գեղից գերբնական
Գըլուխս իջավ, անգիտակից համբուրեցի յես նըրան...
«Ափսո՛ս...» կանչեց. ըսթափվեցի. չըքացել էր նա անհետ.
«Ափսո՛ս, Թշվա՛ռ...» ղողանջում էր ու մարում էր սըրտիս հետ:
Են ժամանակ գետի ափից մի ուրիշը յերևաց,
Ենքան թեթև, ենքան քընքույշ, վոր անմարմին ինձ թըվաց:
Գալիս էր նա ծիծաղելով, զըվարթ, աշխույժ ու ազատ,
Ու հընչում էր են ծըմակում անուշ ծիծաղն իր արծաթ:

(ՅԵՐԿՐՈՐԴ ՓԵՐԻՆ)

«Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Ի՛նչ խենթ է նա...
Ա՛խ, ի՛նչ խենթ է են փերին.
Լող է տալիս վեր ու վար,
Ջըրի տակի ամպերին
Կուզի հասնի անդադար:
Ծիծաղում են պարիկները
Վողջ նըստոտած փըրփուրին,
Ծիծաղում են ծաղիկները
Փունջ փունջ կիտված ափերին...»

Վերև նայեց, ճառագեցին դեմըս աչքերն իր սև սև,
Սիրտըս դողաց, խոնարհեցի իմ աչքերը յես ներքև:
—Ո՞վ ես, ասավ, դու բախտավոր, ի՞նչ հըրաշքով ներս մըտար,
Եստեղ բընավ վոտ չի դըրել դեռ մահացու մի ոտար:
Ով էլ լինես, յերբ յեկել ես մեր աշխարհը յերջանիկ,
Արի զըբոսնա ես դալարում նստես հանգչենք մենք հիմիկ,
Բայց տե՛ս, յեթե ինձ համբուրես՝ կը կորցընես էնքան բան,
Վոր մոլորելու բան չեն աչքերդ ու վոչ կյանքըդ բաղձական:
Ասավ ու հեշտ ընկողմանեց իմ հողեղեն ծընկներին
Համակ լույս-կյանք, համակ հըրճվանք ու բուրավետ են փերին:
Նայում եյի, նայում՝ հարբում, մըթնում աչքերս ու մըթնում,
Թըվում էր թե նա սահելով շուրթերիս էր մոտենում...
Մին էլ, կարծես յերազի մեջ, տաք համբույրը ըզգացի,
Ու զըրնգաց շուրջըս հանկարծ հընչուն ձենը կանացի.
—Ափսո՛ս, Թշվա՛ռ, մի համբույրով դու կորցըրիր էնքան բա՜ն...
«Ափսո՛ս, Թշվա՛ռ...» զըրնգում էր էն անտառը դյութական:
Կանգնած եյի ապշած, մենակ, նախատելով ինքս ինձ,
Մին էլ հանկարծ ըսթափվում եմ ուրիշ քընքույշ մի ձենից:

(ՅԵՐՐՈՐԴ ՓԵՐԻՆ)

«Իմ քույրերը,
Շուշանները,
Շըրթունքներով ձյունաթույր,
Զով, բուրավետ
Զեփյուռի հետ
Ուղարկել են ինձ համբույր...»

Մի այլ աղջիկ, բուսած մենակ սաղարթագեղ ծառի տակ,
Վորպես մինը են յեդեմի շուշաններից բացխտակ:
Բոլոր ուժըս հավաքելով լեզվիս կապը խզեցի,
Աղաչելով, աղերսելով հետը նորեն խոսեցի·
—Գըժա՛, չըքնա՛ղ, ասա տեսնեմ, ո՞ւր՝ եմ ընկել արդյոք յես,
Յեվ ո՞վ եք դուք, վոր տանջում եք անորինակ ինձ էսպես:
Յես հողեղեն — չեմ դիմանում ձեր հըմայքին դյութական,
Գութ արեք, գո՛ւթ, ո՛վ անմահներ, մի՛ տաք ինձ նոր
փորձություն:

—Եկել ես դու, ուր հողեղեն վոտ չի կոխել դեռ, ասավ,
Ուր անհայտ են յերկրավորի չընչին կիրքը, վիշտն ու ցավ,
Ուր հողածինն այցելում է լոկ կարճատև ցընորքում...
Բայց դու նըստիր, ազնիվ հոգի, վոր յես հանգչեմ քո գըրկում,
Սակայն յեթե ինձ համբուրես, նըրա՛ն հետո կը զըղջաս,
Ել չես գըտնիլ ինչ կորցրնես՝ ամբողջ կյանքդ թեկուզ տաս...
Ու ես յերրորդն ենքան սիրուն, կախարդիչ եր ասավել,
Վոր են յերկու փորձից հետո մոռցա խոստումս յես պահել...
—Այժըմ գընա, հեղ հողեղեն, ու տառապիր կարոտից...
Կանչեց վըշտով, կըշտամբելով ու հեռացավ իմ մոտից:
Յես շըվարած միտք եմ անում են վայրերում դյութական,
Թե կարճատև մի հաճույքի ի՛նչպես տըվի ենքան բան...
Միտք եմ անում ու գընում եմ, վորոնում եմ ամեն տեղ,
Ո՞ւր գնացին, ո՞ւր չըքացան վոգիները են չըքեղ...
Ել վոչ մի տեղ չեմ հանդիպում յես նըրանցից վոչ մեկին,
Անհուն ցավից ու կարոտից տառապում է իմ հոգին:
Շուրջըս արդեն մըշուշապատ, գաղտնի ու լուռ ահավոր,
Հուսահատված ձեն եմ տալիս հառաչելով սըրտախոր,
Մին էլ հանկարծ ահեղ թընդաց—«չո՛ւ ես, ենտեղից սըրտան տա՛ր...»
Ու մըթնեցին իմ աչքերը, կորավ՝ շուրջըս ինչ վոր կար,
Մին էլ տեսա կըրկին կանգնած մինարեյի բարձունքին,
Դարձյալ կեղտոտ ես քաղաքում, շուրջըս ամբոխն ահագին:
...Հուսի կարոտով ամեն տարի միշտ նույն որը են որեն

Ուրախ ուրախ, ինչպես հար, դիմում եմ յես մինարեն,
Ցերեկում եմ լի պայծառ հուսով ու կարոտով գերազանց,
Ու յերգերըս, ու մտքերըս նվիրում եմ վողջ նըրանց,
Բայց, ա՜խ, չըկա, և չի դալիս հըրաշք հավքը են ծանոթ,
Վոր ինձ կըրկին տանի տանի են դըրախտը, նըրանց մոտ...

< 6 >

(Ճամբաբաժանում. կանգնած է ծերը գլուխն ամպերում).

—Բարո՛վ, պապի, վոր կանգնած ես անհունորեն այդպես վեր,
[Ու ծերունին խուլ վորոտաց տատանելով վողջ այեր.]

(Ծերը ամպերից)

—Յես նա յեմ, վորին ամենքն են նայում, ինքը վոչվոքի,
Յես նա յեմ, վորին ամենքն են հարցնում, ինքը վոչվոքի.
Սկիզբն ու վերջն եմ յես.
Ցեղերքն ու մեջն եմ յես,
Անհունն եմ յես,
Անքունն եմ յես—
Անհուն, անյես—ամենն եմ յես...
Բարով յեկար, ազնիվ կորիճ:
—Ո՜վ անպատում, անհաս դու մեծ: Խարխափելով ու անդետ
Մենք հասելով անց ենք կենում այս աշխարքից, վորպես դետ,
Վոր անտեղյակ հեռուներին լոկ ափերն է խմանում,
Իսկ դու անհաս քո բարձունքից վողջ տեսնում ես ու քննում:
Ասի՛ր, պապի, ցած խոնարհիր բարձր գլուխդ ամպերից,
Բաց իմաստուն քո լեզուն, մի պատասխան տաս ինձ.
Վո՞րն է ճամբան, վոր տանում է են աշխարհը [յերջանիկ,]
Ուր Հայաստան ազնիվ հավքն յերգ է ասում կենդանի:
Ու բուրավետ վարդեր թափում [իր] յերգի հետ.
—Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց ալեոր իմաստուն
Ու յերկընքի վորոտները դըղըրդացին անսահման.]

(Ծերը ամպերից)

—Հա՛, հա՛, հա՛, հա՛, խիղճ տղա. այն ճամբեն ես դու փընտրում,
Նեղ, քարքարոտ են շավիղը, վոր թաքչում է ամպերում.
«Անդարձ» է այն ճամբի անունն, ով վոր ընկավ են ճամբան,
Կորած է նա հավիտյան, յետ դալ չըկա էլ նըրան.

Ճամբեն մին է, ցավը հազար,—հազար տեսակ տառապանք
Բռնած են այն դժար ճամբեն ու մաշում են ամեն կյանք:
Սարեր կան են ճամբեն կապած, թռչունը չի անց կենում,
Խոր անդունդներ, վոր նայելիս, մարդու աչք է սևանում.
Ջուր անապատ, վոր անցնելու ամբողջ կյանքդ չի հերիք,
Ամեն քայլում դև ու հրեշ, ամեն կողմից փոթորիկ···

—Ի՛նչ են դևեր ու հրեշներ, յերկյուղ չունեմ յես, պապի,
Յեվ իմ ճամբեն վոչ փոթորիկ, վոչ տառապանք կըկապի.
Սով, նեղություն չեմ հաշվում, չեմ էլ հոգում եդ մասին,
Ում է պակսել մի կըտոր հաց էս աշխարքի յերեսին:
Յեվ ինձ այնպե՛ս հեշտ է թըվում «անդարձ» ճամբեն էն քարոտ,
Յեվ այն աշխարքն այնպես հեշտին ու էն հավքը այնքան մո՛տ···
—Ո՛վ հավիտյան անձնապատառ ու մոլորված դուք մարդիկ·
Հեշտ է թըվում փախչողներին ու սիրածը միշտ մոտիկ···
Հեշտ է—սակայն ցընորքի մեջ, ու սըրտին է մոտ թըվում,
Բայց չի կարող վոտքը հասնել, ուր վոր սիրտն է թափառում:
Մեղք ես, կտրիճ, ինչո՞ւ յես քո մահի յետև ման գալի·
Դարձիր, գընա քո աշխարհքը, քու հոր տունը շեն ու լի,
Ի՞նչդ է պակաս, վոր գըլուխդ փորձանքի յես դու տալի:
Ապրի խելոք շատերի պես, վոր ապրում են գոհ, առատ,
Ու չեն հոգում, թե կորցրել է մարդն իր պատկերն անարատ···
Կամ թե կուզես, ահա դարձյալ յերկու ճամփա լայնարձակ·
Տանում է մինն այն դըղյակը, ուր վոր լուսից մինչև լույս
Քեֆ է անում սիրուն Թամարն հյուրերի հետ իր ջահել,
Մյուսը տանում է . . . . ուր վոր վանքն, անդին քարեր,
. . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . .

Արեգ·
Վո՛չ, պապի, և այն < . . . . . . . . . . . . >

Ծերը·—

Անձնուրաց հոգի, վոր քաջ ու անվախ
Ընտրում ես ընկնում այս «անդարձ» ճամբան,
Վոր հօժար սըրտով քո կյանքը մատաղ
Ուխտել ես դարան մարդի փըրկության,

Ծերիս որհնանքն էլ թող լինի քեզ հետ,
Հարեհաս լինի նեղության որում,
Բարով դու հասնես վայրն յերանավետ,

Ուր վոր Հազարան բլբուլն է տխրում:
Լեռներ, անդունդներ հարթվեն առաջիդ,
Դևեր, հըրեշներ դառնան անվընաս,
. . . . . մեջք լինի քաջիդ.
Կասկած ու յերկյուղ յերբեք չիմանաս:

Որհնում է ծերունին, խրատում ու ճանապարհի դնում դեպի կախարդական աշխարքը:

< 7 >

## ԱՐԵԳԸ ՍԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գընա՛ց, գընաց Արեգն արի, գընաց, ընկավ մի աշխարհ,
Յերկինքը սև, գետինքը սև, սև բովանդակ ու խավար:
Առաջ գընաց. դեմն ահագին մի սև ամրոց կանգնեց լուռ.
Էն ամրոցից մի ձեն յեկավ, մի ձեն տըխուր ու տըխուր:
Վերև նայեց, տեսավ չարմաղ մի աղջիկ է լուսեղեն,
Հեռը լալիս հուսակըտուր, հեռը կանչում է իրեն:

ԱՂՋԻԿԸ

Ափսո՛ս, կտրի՛ճ, ա՛խ ո՞ւր յեկար
Էս աշխարհքը սև ու մութ.
Վո՞ր անորեն մարդն էր արդյոք,
Տըվեց էսպես քեզ խորհուրդ:
Փախի՛ր, շուտով, անահ տըղա,
Թե չե՝ էդտեղ վոր մընաս;
Սև, մարդակեր Դևը կը գա
Այժմ կանի քեզ մաս մաս:

ԱՐԵԳԸ

Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,
Ի՞նչ ես էստեղ դու շինում,
Յեվ ինչո՞ւ յես էդպես աղի
Արցունք թափում, լաց լինում:
Ի՞նչ է արել էսքան սիրուն,
Էսքան քնքույշ մի էակ,
Վոր փակել են մութն ու անդուռն
Էս ամրոցում մեն-մենակ:

ԱՂՋԻԿԸ

Իմ հանցանքը էս է, ավա՜ղ,
Վոր սիրուն եմ յես էսքան.

Սըրա համար Սև Դևն յեկավ
Մեր աշխարհքը անման,
Յեկավ բըռնի հափըշտակեց
Հայրենական իմ վայրից,
Բերավ ես սև բանտում փակեց,
Ջըրկեց պայծառ օրերից։
Նըրա թըշվառ գերին եմ յես.
Եստեղ, անդուռն իմ բանտում
Լուռ ու մենակ փակված նստես
Մաշվում եմ յես անխընդում։
Բայց, ա՜խ, նըրա ժամն է ահա,
Հիմի կը գա նա նորից...
Փախի՛ր, փախի՛ր, անահ տըղա,
Ես սև ու մութ աշխարհից։

ԱՐԵԳԸ

Յես չեմ վախում, քույրիկ անգին,
Յես չը գիտեմ ահ ու մահ,
Յես կը մընամ բանախըդ տակին,
Ինչ սև հըրեշ կուզի գա։
Ու կը մեռնեմ եստեղ յես էլ,
Վոր էլ չապրեմ ես օրից,
Կամ կը փըրկեմ ինձ հետ քեզ էլ
Ես սև ու մութ աշխարհից։
Միայն դու ասա, թե վոր ճամփով,
Վոր կողմից է նա գալու,
Ու վո՞րտեղ եմ իմ նետերով
Նըրա կյանքին վերջ տալու։

ԱՂՋԻԿԸ

Ահա են սև սարի տակից
Նա կերևա ահավոր.
Նըրա ձենից, բերնի հուրքից
Սասանում են սար ու ձոր։
Յոթը ագահ գըլուխ ունի,
Միջի գըլխին ալխա զարկես,
Ու չես կըրկնի զարկըդ նորից,
Ինքն էլ խընդրի թեկուզ քեզ։
Լսի՛ր, ահա գալիս է նա

Անպարտելի ու խավար…
Գընա՛, կըտրի՛ճ, իսկ յես նստած
Աղոթում եմ քեզ համար…

Սև աշխարհքը էլ ավելի մութը կոխեց ահնակիր·
Դևի ձենից զարհուրելի դողաց յերկինք ու յերկիր:
Յեկավ Սև Դևն, ինչպես սև ամպ, հուր ու կըրակ շաղ տալով,
Յեկավ անհուն կատաղությամբ, ինչպես մըրըկած մի սև ծով:
Դեռ շատ հեռվից նա նըշմարեց իր թըշնամուն լուսավոր,
Ու հեռավոր մութի միջից խուլ վորոտաց ամպագոռ:

ՍԵՎ ԴԵՎԸ

Ո՞վ ես խիզախ դու հողածին,
Ի՞նչպես մըտար իմ հողը դու,
Վո՞նց չի հասել քո ականջին
Գոռն անունն իմ ահարկու:
Մի՞թե աչքով դու չը տեսա՞ր
Գյուղ ու քաղաք վողջ ամայի·
Մարդ եմ կերել հազար հազար,
Քեզնից էլ քաջ ու վիթխարի:
Իսկ դու ո՞վ ես, չընչին մարդուկ,
Վոր կռիվ ես գալիս իմ դեմ·
Արա տեսնեմ, վոր իմանամ՝
Ինչ հիմարի պիտի ուտեմ:
Ցույց տուր տեսնեմ՝ ի՞նչ ունիս դու,
Տե՛ս, յես ունեմ յոթը գըլուխ… .

Գոռաց հըրեշն են ահարկու,
Արձակելով կըրակ ու ծուխ:

ԱՐԵԳԸ

Գալիս եմ յես, ով անճոռնի,
Վոր մեն մենակ կըռվեմ քեզ հետ,
Կըրծքումս ունիմ մի սիրտ արի,
Ջեռքիս ունիմ յոթը սուր նետ…
Ասավ, ճայթեց զիլ աղեղը, վոռնաց վիշապն ահագին,
Թավալվելով տեղն ու տեղը, անիծելով Արեգին:
—Մին էլ զարկի՛ր… մին էլ… մին էլ…
Մըռընչում եր հոգեվարք:

— Յես իմ մորից մին եմ ծընվել,
Մի խոսք ունեմ ու մի պարկ:
Պատասխանեց Արեգը քաջ, փըչեց վըշտալի իր հոգին.
Ու արևի լույսը ցոլաց Սև աշխարհի յեզերքին:

<8>

— Զըրնգաղ անուշով քո սեգ աղջըկա
Կանչում եմ ահեղ ծովերի արքա,
Լըսի՛ր անհատակ ջըրերի խորքից,
Մըշտածուփ, անսասան քո մըթին հարկից.
Տո՛ւր ինձ Բամի ձին, թըռչուն Բամի ձին,
Վոր յես՝ մահացու ոըկար հոգածին՝
Հասնեմ յերջանիկ աշխարհըքն անմըման,
Ուր վարդ է թափում Բըլբուլն Հազարան:
Ա՛ռ, նըշանն ահա քո սեգ աղջըկա,
Լըսիր ինձ ահեղ ծովերի արքա,
Տուր ինձ Բամի ձին՝ հասնեմ փափագիս,
Բըլբուլը բերեմ, հասցընեմ այգիս,
Փուշը վարդ փոխեմ թըռչնական յերգով,
Ու գազանը մարդ—բանական հոգով:

Եսպես կանչեց՝ ու փոթորկին յելավ ծովից կապուտակ,
Մըթնեց յերկինք, մըթնեց յերկիր, խավար անցավ վողջ աշխարհք,
Ու ահավոր թոհ ու բոհից, անդունդներից են մըթին,
Հուր հըրեղեն իր թևերով ցոլաց կրակ Բամի ձին.
Ու մինչ վայրի սլանում էր դեպի հեռուն աշխարհի,
[Հասավ] ըռնեց հըզոր ձեռքով Արեգն արագ ու արի,
Զըգեց իսկույն վոսկի սանձը, վոսկի սանձը զորավոր,
Չըքավեց անդունդ են [հըզորին բաղկով հաստատ ու . . . . ]
Դեպի վերև ձգեց ձին՝ սա արևին ու վառի,
Դեպի ներքև ուզեց [զարկի] գետինք՝ ջախջախի —
Բայց . . . . հաղթահարված ու հընազանդ հեծվորին,
Լեզու առավ, մարդու նման եսպես դարձավ հըզորին.
—Ի՞նչ ես ուզում, քաջ հոգածին, ո՞ւր ես ուզում՝ քեզ տանեմ.
. . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . .

<9>

Շատ գնաց նա, թե քիչ գնաց—վերևն աստված միայն գիտի —
Ի՞նչ մարդկային միտք ու հանճար նորա ճամբեն կըչափի,

Անցավ ծովեր, սև անդունդներ, անապատներ, սարեր,
Յեկավ հասավ դալար մի դաշտ, այնտեղ առավ նա դադար:
Դադար առավ [լեզու յելավ] ու բաց արավ իր լեզուն,
Ու խոսանց Արեգին < . . . > այն խոսուն[ն] իմաստուն·
—Ահա սահմանն անմատչելի կախարդական աշխարքի,
Ուր ապրում է [սեգ] տիրուհին զարմանալի այն հավքի·
Աննըման է նրա անունն—ինքն անտես, աննըման,
Կախարդել է այս աշխարքը նըրա թովչանքն ու հըման·
. . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . .
Անկարող է մահկանացուն այնտեղ մըտնել
[Յեթե միայն չի պարգևած նրան շնորհք վերևից
Յեվ անսասան կամք ու յեռանդ . . . . . . . . .
Ամեն տեսակ ցավ տառապանք մեր ու նորա սահմանում
Կան և նորան . . . . . . . . պահպանում . . . . ]

Այժըմ կերթաս—քո առաջը կըգա մի գետ [ահագին]
[Նորա] ջուրը ալի լեղի թույն է հոսում [մահացու],
[Այդպես կախարդական այս աշխարհքի տիրուհին
Սարսափելի թույն է խառնել նորա վճիտ ջըրերին . . . ]
Ամեն մի մարդ չի կարող խըմել < . . . . > այն ջըրից,
Բայց յեթե դու խմեցիր կանցնես < . . . . . . . . > .

Գետը կանցնես կընկնես մի դաշտ անծայրածիր, ահավոր,
[Կախարդական ձեռքերի տերը] կախարդական [իր խոսքով]
Լցրել է այն անհուն դաշտը անկոխելի տատասկով,
Անկարող է վառը կոխել ոտքերը այն փըշոտ,
Յեվ չի կարող մարդ համբերել [շատ են] ժանտահոտ·
Բայց դու յեթե այդ էլ անցնես—[մի քիչ կերթաս] և ահա
[Այն աշխարքի] վեհ տիրուհու ապարանքը կերևա.

Այնժամ կը գան խեղկատակներ ու կըկտրեն քո ճամբան
Կուզեն հաղթեն, ուշքըդ խլեն, [կուզեն] լինեն քեզ խափան
Այնպես խաղեր կըհորինեն, այնպես < ու . . > ցույց կըտան
Հարյուր տարվան մեռելները դերեզմանում կըխնդան:

Բայց պետք է դու արհամարհես, սիրտըդ [ամուր ակացնես],
Լուրջ ու մռայլ նրանց թողնես—այն ժամանակ դու կանցնես:

Ապա թե քեզ ծաղրը կանեն, կըհայհոյեն, կըթքեն,
Վոչ պատասխան, վոչ հայհոյանք պիտի չանցնի քո մըտքեն,

Սիրտդ հանդիստ, հոգիդ խաղաղ նրանց միջից թե անցնես— .
[—Վողջ կը լսեն—և դու անխորձ ապարանքին կը հասնես].
Թե չէ, յեթե ուշք դարձնես ու ընկնես նրանց հետ,
Քեզ կը հալածեն—ուշքըդ կըտիրեն <. . . . . . . .>
Կը նկատես ապարանքը <. . . . . . . . . .>

Յերբ այսպիսով կը մտնես ապարանքի դռներին,
Խոյն ու առյուծ կանգնած են [միջին] նրա յերկու կողմերին,
Խոյի առաջ միս է դըրած, իսկ առյուծին կանաչ խոտ,
Յեվ սովամահ նրանք կանգնած հսկում են միշտ իրար մոտ.
Դու կըփոխես խոտը խոյին—միսը կըտաս առյուծին,
Ճամբա կըտան—ու կը հասնես <. . . . . . . .>

[. . . . . . . . . . . . . ներս կըմտնես ապարանք...
Ներս կըմտնես— . . . . յերգի դայլայլ, վարդի բույր,
Իրար յետևից կանցնես յոթը . . . . . վարդաբույր,
Այնտեղ [ոսկի] վանդակում յերգում է հավքն այն չքնաղ
Ու յերգի հետ մշտադալար վարդ է թափվում ու թափվում
[Այն] վարդերի [անուշ] բույրով, յերգի ձայնով
Իր լուսեղեն նուրբ մահիճում քնած է վեհ արքուհին—]
[արբեցած]
Այնտեղ՝ հիշիր, զգույշ կացիր—մոտ չըգնաս դու նըրան,
<. . . . .> չի դիմանալ և վոչ մի սիրտ [փորձության]
Ու կը հաղթվես նրա գեղեցկության թովչանքից
Ու կը զրկվես այն բյուրյուրից, [գուցե նաև] քո կյանքից:

# ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՊՈԵՄՆԵՐ

Վ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

# ԱՔԻԼԼԵՍ

Մխվում կորավ Իդա սարը,
Մթնայլեցավ Տրովադան,
Լուռ է ամպի հարթավայրը,
Բռնած բանակն Ատրիդյան:
Խաղաղ են չուրջ: Առկայծում են
Խարույկները բանակի,
Ցերկա՛ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մեկ մեկի:

Ծագեց պայծառ լուսնեղջյուրը
Ծովի վրա Եգեյան,
Բարձր ափերն ու աստղերը
Ծովի խորքում ցոլացան:
Դատարկ դաշտում յերևում է
Մենակ կառքը Պրիամի. —
Տանում է իր Հեկտորի դին
Գոռ բանակից հույների:

Ահա կանգնեց ծովի ափին
Աքիլլեսը ահարկու.
— Ընկավ, ծերո՛ւկ, քո Հեկտորը,
Հանգավ լույսը քո հոգու:
Անդրոմաքեն ու Հեկաբեն
Դարպասներում անդադար
Քեզ են մընում... դարձի՛ր, րոպեն
Կյանք կամ մահ է նրանց համար:

Յեվ տըխրաբեր արշալույսին
Կը բուրի խունկ հաշտարար,
Թաղման յերգով կը հեծեծեն
Ամեն մի տուն ու տաճար:
Հայր, մայր, այրի մաղթանքներով.
Սափոր կածեն թանգ փոշին,
Ու, դըժոխքում, աղոթքներով
Հանգիստ կը տան հերոսին:

Խե՛ղճ ալեւոր, խոնարհեցիր
Գըլուխըդ իմ առաջին,
Յեվ այս ձեռքը համբուրեցիր,
Վոր լաց տըվավ քո աչքին...
Վորդուդ մասին եր քո աղերս.
Ո՛, մի՛ տրտմիր, ալեզարդ,
Մի բաղդ վըճռեց յերկինքը մեզ, —
Ինձ էլ ընկճեց Արամազդ:

Մոտ է ժամը. պատրաստած է
Նետը անգութ որհասի,
Յեվ պարկուհին ընդհատել է
Արդեն ոսկեն իմ կյանքի:
Ճըռընչում է դժոխքի դուռը,
Գուժում է ձայնն ահռելի.
— Վերջացա՛ծ է. հանգավ ջահը
Պելլիդեսի որերի...

Ո՛վ, այս ափից յետ չի գալու
Յեվ քու վորդին անվըհաս.
Շուտո՛վ, շուտով պիտի և դու,
Ո՛վ Պելեոս, վորբանաս:
Կանցնի ռազմի արհավիրքը,
Աքիլլեսիդ կը սպասես,
Կը զարդարես արքունիքը՝
Շուք ու փառքով ընդունես:

Մըտիկ կանես դատարկ ծովին
Ափից տըխուր ու տըրտում,
Թե չե՞ն գալիս արդյոք նավեր,
Առագաստ չի՞ յերևում...
Նավեր կը գան Իլիոնից,

Յես չեմ լինի վոչ մեկում,
Յես չեմ զարթնի մահվան քնից,
Ու կը մընամ այս հողում...

Իզուր վերջին տագնապի մեջ
Դու քո վորդուն կը խնդրես
Ու կարկամող բազուկներով
Նրան կողքիդ կը փընտրես:
Սիրած յերկրից ժամն անջատման
Չի քաղցրացնիլ նա այն որ,
Ու մինչ ափերն մոռացության
Չի տարածվիլ ձայնը հոր:

Իմ հայրենի՛ք, վըճիտ ջըրե՛ր,
Զըքնա՛ղ վայրեր հարազատ,
Յեվ ձիթենիք ու դափնիներ,
Հովիտների շուք ու զարդ,
Ծով ծաղկեցե՛ք, փըթըթեցե՛ք,
Ինչպես առաջ, անընման,
Ինչպես առաջ—միշտ թընդացե՛ք
Միայն ձայներով խընդության:

Բայց Աքիլլես ու Պատրոկլես
Էլ չեք տեսնի դուք ընավ...
Սպերքի ջըրե՛ր, բաղոսկըս ձեզ
Գըլխիցըս մազ խոստացավ,
Բայց գըլուխըս փոթորկալի
Պատերազմում ահագին
Պատրոկլեսին յես զոհեցի,—
Էլ չըտեսնեք իմ տուրքին:

Պատրաստել է նետը արդեն
Ապոլլոնը անողոք,
Ըսպասում է նոր յեկվորին
Քարոնը սև Ստիքսի մոտ:
Յեվ ափերից մոռացության,
Պատրոկլեսը գիշերով
Յեկավ ինձ մոտ թեթե՛, անձա՛յն,
Վորպես յերազ, թըռչելով:

Որպես շունչը մեղմ զեփյուռի
Նա շշընջաց ինձ վըրա,
Նրա ձայնը յես լըսեցի,
Վեր նայեցի ու տեսա՝
Քընքույշ դեմքին հետք արտասրի
Ցավ անջատման խորին ցավ...
Ձեռքըս իրեն տարածեցի...
Դատարկ մըթնում չըքացավ...

Սկյուրոսից Նեոպտոլեմ
Դեպի հեռուն կը լողա,
Մի անծանոթ ափ կը տեսնի
Կանաչ բըլրակն իր վըրա:
Նավավարը այնժամ կասի՝
Դարձած կողմը բըլրակի.
«Ահա շիրիմն Աքիլլեսի,
Այն էլ տեղն է բանակի...

Այնտե՛ղ, պարսպից նա գիշերով
Ցերեկում էր մեզ ահեղ,
Անտանելի հուրն աչքերում,
Սաղավարտով ճաճանչեղ.
Ցավ յեռակի վորոտալով,
Ահ էր ազդում քաղաքին,
՚Ու Տրոյացին դունատ դեմքով
Զենքը ձըգում էր գետին:

Այնտե՛ղ ձեռքը Ատրիդեսին
Տալով դաշը հաստատեց...
Այնտե՛ղ կառքով նա մոլեգին
Քաղքի վրա հարձակվեց...
Այնտե՛ղ հողում իր յետևից
Քարշ տըվավ դին Հեկտորի,
Հառեց աչքերն ըսպառնալից
Վըրան լըքած Տըրոյի...

՚Ու իր նավից Նեոպտոլեմ
Կիջնի ափը սըրբազան,
Վոր միայնակ բըլրի վըրա
Դընի և՛ սուր, և՛ վահան:

Շուրջը արդեն դատարկվել է…
Խաղա՛ղ Սիմույս ու Քսանտ,
Բաղեղ ու փուշ պատատել են
Տրովադային քարուքանդ:

Կանգնես դաշտը պատերազմի,
Ուր Աքիլլեսն է կռված,
Կը տեսնես հորանն յերեների
Շիրմաց շուրջը մոռացված.
Ու քեզանից վերև հանկարծ
Կը լսես ձայն թևերի…
Մենք կը լինենք — թև թևի տված,
Ընկերներըս հին որերի…

Այնժամ հիշիր Աքիլլեսին.
Յերկրից արագ նա անցավ.
Բախտը նըրան անխառունակ
Այստեղ մի դար խոստացավ,
Բայց, մերժելով դատարկ կյանքը.
Փառքի ուղին ընտրեց նա,
Ու ընկերի համար մեռավ,
Հավատարիմ մինչև մահ»:

Լռեց Աքիլլ… Մութն է Իդան,
Իլիոնը դեռ տըխուր,
Քընած բանակը Ատրիդյան,
Պատերազմի դաշտը լուռ:
Ու ծըխալով առկայծում են
Խարույկները բանակի,
Յերկա՛ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մեկ մեկի:

**Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ**

# Մ Ծ Ի Ր Ի

*Ճաշակելով ճաշակեցի զսակաւ մի մեղր,*
*և ահա մեռանեցիմ ես:*

Ա. գիրք թագ.

## I

*Սըրանից առաջ մի քանի տարի,*
*Այնտեղ, ուր Արագվ ու Կուր գետերի*
*Ջըրերն աղմուկով խառնըվում իրար,*
*Գըրկվում են յերկու քույրերի նըման,*
*Կար մի մենաստան: Կարող է այժմ էլ*
*Անցորդը սարի ուսերից տեսնել*
*Քանդըված դըների կանգուն սյուները,*
*Վանքի կամարն ու աշտարակները:*
*Բայց անուշահոտ ծուխը բուրվառի*
*Եվ չի վերանում կամարի տակին*
*Յել վոչ լսվում է աղոթողների*
*Յերգը գիշերվա ուշ ժամանակին:*
*Այժըմ մեն-մենակ պառամյալ մի ծեր,*
*Ավերակ վանքի պահնորդ կիսամեռ,*
*Ընկած մըտքից մարդկանց ու մահի,*
*Սրբում է փոշին շիրմաքարերի,*
*Վորոնք պատմում են անցած դարերի,*
*Անցած փառքերի ու նըրա մասին,*
*Թե ինչպես ճնշված իր թագի տակին,*
*Այս ինչ թագավորն, այս ժամանակին*
*Իր ժողովուրդը հանձնեց ռուսին:*

## II

Մի ռուս գեներալ Կովկաս լեռներից
Մի անգամ դեպի Թիֆլիս էր գալիս:
Իր հետ նա գերի մի մանուկ ուներ·
Սա տկարացավ, չը կարաց տանել
Նեղությունները հեռավոր ճամփի:
Հազիվ թե լիներ հինգ-վեց տարեկան,
Այծեմնիկի պես յերկչոտ, վայրենի
Յեվ թույլ ու ճկուն յեղեգնի նըման:
Սակայն նրա մեջ ցավը տանջալի
Զարգըրեց այնժամ իրեն հայրենի
Աննկուն հոգին: Վիշտը լուռ տանում,
Յեվ իր մանկական տըկար շըթունքից
Մի թույլ հառաչանք նույնիսկ չէր հանում:
Հացը նըշանով մերժում էր նա դեն
Ու խաղաղ, հպարտ մեռնում էր արդեն:
Կարեկցությունից մի ծեր վանական
Նըրան խնամեց, տըվավ ապաստան.
Ու այսպես՝ վանքի հարկի տակ մնաց
Բարեկամական ձեռքով պատըված:
Բայց, զուրկ մանկական զըվարթ հաճույքից,
Փախչում, խորշում էր նա ամեն մեկից·
Թափառում էր լուռ, մենակ, սրտաբեկ,
Թառանչով նայում դեպի արևելք,
Մաշվելով մի լուռ, անմեկին վըշտից—
Իրեն հայրենի յերկրի կարոտից:
Գերության սակայն շուտ ընտելացավ,
Օտարի լեզուն քիչ-քիչ հասկացավ.
Հայր սուրբը կնքեց, տըվավ սուրբ հաղորդ,
Ու դեռ աշխարհքի կյանքին անծանոթ,
Ուզում էր արդեն ծաղիկ հասակում
Աբեղայական ընդունել կոչում,
Յերբվոր մի անգամ աշնան գիշերով
Անհետ չըքացավ: Շուրջը սարերով
Զըգվում էր անծայր անտառը մըթին:
Յերեք որ այնտեղ իզուր փընտրեցին,
Վերջապես դաշտում անըզգա գտան
Ու տան կըրկին բերին մենաստան:

Նա սաստիկ դունատ, թույլ էր ու նիհար.
Կարծես աշխատել, տանջվել էր յերկար,
Կամ հիվանդություն ու սով էր քաշել:
Վոչ մի հարցմունքի չէր պատասխանում,
Որն օրե վրա ընկնում էր, թառամում.
Այսպես մոտեցավ ժամը իր մահվան:
Այնժամ նըրա մոտ յեկավ աբեղան
Յեվ հորդորելով և աղերսելով:
Հիվանդը հպարտ նրան լսելով,
Նըստեց, մընացած ուժը հավաքեց,
Ու այսպես յերկա՛ր խոսել սկսեց.

III

«Գոհ եմ քեզանից, հայր սուրբ, վոր յեկար
Իմ խոստովանքը լսելու համար:
Ինչ էլ վոր լինի, լավ է, վոր ցավս
Սիրտըս դատարկեմ խոսքով մեկի մոտ:
Սակայն յես մարդկանց չարիք չեմ արել,
Իմ արարքները նըրա համար էլ—
Ի՞նչ օգուտ յեթե խոստովանեյի.
Իսկ հոգին մի՞թե պատմել կըլինի...
Յես քիչ եմ ապրել և այն էլ գերի.
Այսպես յերկու կյանք մի ամբողջի,
Յեռուն կյանքի հետ, վոր տեսել եմ, ծե՛ր,
Յես կը փոխեյի թե հընար լիներ:
Յես լոկ մի մըտքի ուժ եմ իմացել.
Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել,
Նա ինչպես մի վորդ ապրել է իմ մեջ,
Կըրծել է հոգիս, մաշել մինչև վերջ:
Իմ ցնորքները թռցրել, տարել է
Այս նեղ խցերից անդորր աղոթքի
Այն վեհ աշխարհը կռվի; ամպուկի,
Ուր վոր ժայռերը թաքչում ամպերում,
Ու մարդիկ այնպե՛ս ազատ են ապրում...
Յես իմ այդ կիրքը գիշերվա մըթնում
Պահել եմ վըշտով, արցունքով սընել.
Յեվ այժմ ահա բարձրաձայն հայտնում,
Խոստովանում եմ առջեն աշխարհքի,
Ու թողություն էլ չեմ խնդրում իսկի:

IV

«Ծերո՛ւկ, շատ անգամ իմացել եմ յես,
Վոր դու իմ կյանքը մահից փրկել ես:
Ինչո՞ւ փրկեցիր: Մենակ ու դաժան,
Փոթորկի պոկած տերևի նման,
Մռայլ պատերի միջում մեծացա,
Հոգով դեռ մանուկ, կյանքով աբեղա:
Չը կարողացա վոչ վոքի ասել
«Հայրիկ» ու «մայրիկ» սրբազան խոսքեր:
Հարկավ, քո միտքը այն էր, ծերունի՛,
Վոր մենաստանում յես խորթանայի
Այնքան քաղցրալի այս անուններին.
Զո՛ւր. հետըս են նրանց ձայները ծընվել:
Յես տեսնում եյի, վոր ուրիշներին
Հայրենիք, ընկեր, ծնող ունեյին,
Մինչդեռ չունեյի յես նրանց նման
Վոչ թե սիրելիք — այլև գերեզման:
Յես էլ այն որից իզուր չողբացի,
Այլ հոգուս միջում այսպես ուխտեցի,
Վոր յերբևիցե, թեկուզ մի վայրկյան,
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական
Սեղմեմ կարոտով մի ուրիշ կըրծքի,
Թեկուզ անծանոթ — միայն հարազատի:
Բայց, ավա՛ղ, հիմա յերազներըս այն
Կորել են իրենց պերճանքով համայն,
Ու՝ ինչպես ոտար յերկրում ապրեցի՝
Մեռնում եմ դարձյալ յես վորբ ու գերի:

V

«Ինձ չի վախեցնում գերեզմանն ահեղ,
Տանջանքն, ասում են, հանգչում է այնտեղ
Սառն, հավերժական լռության միջում:
Կյանքից զրկվելն է ինձ մենակ տանջում:
Ջահե՛լ եմ, ջահե՛լ... ունեցե՞լ ես դու
Ցնորմունքները անհոգ պատանու:
Դու չես ունեցել կամ չես հիշում էլ,
Թե վոնց ես մի որ ատել ու սիրել,
Ինչպես է սիրտըդ բաբախել ուժգին

Կանաչ դաշտերին, վառ արեգակին
Անկյունի բարձըր բուրգից նայելիս,
Ուր թարմ է օդը, և ուր մերթ գալիս
Ու բարձր պատի խորունկ ճեղքվածքում,
Բուքից վախեցած, կուչ յեկած նստում,
Պատըսպարվում է փոքրիկ աղավնին—
Զըքնաղ զավակը անհայտ աշխարհի:
Ուր մընաց՝ արդեն զառամ ես, թույլ ես,
Սիրուն աշխարհը կըշտացրել է քեզ.
Սրտումդ անկատար էլ չունիս ըղձեր...
Էլ ի՞նչ ես ուզում, ապրել ես դու, ծե՛ր,
Աշխարհքում ունիս մոռնալու մի բան.
Չե՞ վոր կապրեյի յես էլ քեզ նըման...

VI

«Կուզե՞ս իմանալ՝ պատանության մեջ
Յես ինչեր տեսա.—դաշտեր տեսա պերճ.
Բլուրներ տեսա, ուր կանաչ ծառեր,
Ինչպես շուրջպարի բռնած յեղբայրներ,
Զորս կողմից դալար պըսակ կապելով
Շըշընջում եյին թարմ խըմբակներով:
Տեսա դեղերը մըռայլ ժայռերի,
Յերբ բաժանում եր վըտակը նրանց,
Նրանց մոքերը հանկանում եյի,—
Վերևից եր այն շնորհքն ինձ տըրված:
Վաղո՛ւց, շատ վաղուց ոգում տարածված
Այն քարե դըրկերն ամեն մի վայրկյան
Փափագում են լուռ իրար հանդիպման,
Բայց օրեր անցնում, տարիք են անցնում,
Ու նրանք յերբե՛ք իրար չեն հասնում...
Բարձըր լեռների շարքեր տեսա յես
Վեհ, հըրաշալի ցընորքների պես,
Յերբ արշալուսի ժամին վաղորդյան
Նրանց գըլխները սեղանի նըման
Ծխում են հանդարտ կապույտ յերկինքում,
Ու ամպը ամպի յետևից ձըգվում,
Թողնելով գաղտնի իր օթևանը,
Ինչպես տարագնաց ըսպիտակ հավքեր
Հեռու կողմերից չըվող յերամը

Ուղղում է իր չուն կողմն արևելքի:
Անոսր մշուշի արանքից, հեռվում,
Գոհարի նըման փայլող ձյուներում,
Տեսա ալեոր Կովկասն անսասան.
Յեվ յես չը գիտեմ թե ընչից եր այն,
Բայց թեթևացավ սիրտս նույն ժամայն.
Ըսկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել,
Թե յերբեմն այնտեղ ապրել եմ յես ել...
Ու հեռըղհեռուն բացվեցավ խավար
Անցյալն իմ մտքում պայծա՛ռ ու պայծա՛ռ...

VII

«Յեվ յես հիշեցի մեր տունն հայրական,
Հիշեցի մեր ձորն ու իր շըրջական
Շըվաքում ցրված գյուղի տըները.
Լսեցի րիկվան ձեն ու ձուները
Դեպի տուն վազող յերամակների,
Հեռու հաչոցը ծանոթ շըների:
Միտս յեկան թուխ-թուխ ծերունիները.
Լուսնյակի լուսով իրիկունները
Իմ հոր սըրահի, շեմքի դեմուղեմ
Նստոտած խոհուն ու խոժոռադեմ.
Ու խանչալների պըղնձապատած
Պատյանների փայլը... ու բոլորն հանկարծ
Խառը շարքերով, յերազի նըման
Աչքիս առաջից յեկան անցկացան:
Հապա իմ հա՞յրը. պատերազմական
Իր զգեստներով, ինչպես կենդանի
Աչքիս յերևաց, ու միտս յեկան
Զրահի չուխը, փայլն հըրացանի,
Նրա հայացքը հպա՛րտ, աննկու՛ն,
Յեվ իմ քույրերը մատա՛ղ, սիրասու՛ն...
Շողերը նրանց ալու աչքերի
Յեվ հնչյունները յերգի, խոսքերի,
Վոր ասել եյին որրանիս վըրա...
Այն ձորի միջով գետակ եր վազում,
Աղմկող եր նա, սակայն վոչ խորին,
Նըրա վոսկեգույն մանրիկ ավազում
Խաղալու եյի գընում կեսորին,

Ուղղում է իր չուն կողմն արևելքի։
Անոսր մշուշի արանքից, հեռվում,
Գոհարի նըման փայլող ձյուներում,
Տեսա ալևոր Կովկասն անսասան.
Յեվ յես չը գիտեմ թե ինչիցն էր այն,
Բայց թեթևացավ սիրտս նույն ժամայն.
Ըսկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել,
Թե յերբեմն այնտեղ ապրել եմ յես էլ...
Ու հետըզհետե բացվեցավ խավար
Անցյալն իմ մտքում պայծա՛ռ ու պայծա՛ռ...

VII

«Յեվ յես հիշեցի մեր տունն հայրական,
Հիշեցի մեր ձորն ու իր շըրջական
Շըվաքում ցըված գյուղի տըները.
Լսեցի ըրիկվան ձեն ու ձուները
Դեպի տուն վազող յերամակների,
Հեռու հաչոցը ծանոթ շըների։
Միտս յեկան թուխ-թուխ ծերունիները.
Լուսնյակի լուսով իրիկունները
Իմ հոր սըրահի, շեմքի դեմուղեմ
Նստոտած խոհուն ու խոժոռադեմ.
Ու խանչալների պըղնձապատած
Պատյանների փայլը... ու բոլորն հանկարծ
Խառը շարքերով, յերազի նըման
Աչքիս առաջից յեկան անցկացան։
Հապա իմ հա՞յրը. պատերազմական
Իր զգեստներով, ինչպես կենդանի
Աչքիս յերևաց, ու միտս յեկան
Զրահի շուխը, փայլն հըրացանի,
Նրա հայացքը հպա՛րտ, աննկո՛ւն,
Յեվ իմ քույրերը մատա՛ղ, սիրասո՛ւն...
Շողերը նրանց աղու աչքերի
Յեվ հնչյունները յերգի, խոսքերի,
Վոր ասել էյին որրանիս վըրա...
Այն ձորի միջով վտակ էր վազում,
Աղմկող էր նա, սակայն վոչ խորին,
Նըրա վոսկեգույն մանրիկ ավազում
Խաղալու էյի գընում կեսորին,

Յեվ նայում եյի աչքերս հառած,
Յերբ ալիքներին, անձրևից առաջ,
Դիպչում եր թևով սև ծիծեռնակը:
Հիշեցի և մեր խաղաղ տնակը,
Ոջախի առջև իրիկունները
Արած այն յերկար պատմությունները,
Թե վոնց են ապրել մարդիկ վաղեմի,
Յերբ դեռ աշխարհքը ճոխ եր ավելի:

## VIII

«Կուզե՞ս իմանալ, թե յես ինչ արի
Այն յերեք որում:—Ազատ ապրեցի,
Յեվ կյանքըս առանց այն յերեք որի
Քո ուժից ընկած ծերությից էլ դեռ
Ավելի տըժգույն, տըխուր կըլիներ:
Մտքումըս վաղո՜ւց, վաղուց դըրել եմ՝
Միանգամ արձակ դաշտերին նայեմ,
Տեսնեմ՝ աշխարհը սիրո՞ւն է արդյոք,
Ինչո՞ւ յենք, տեսնեմ, գալի մենք աշխարհ,
Ազատ ապրելո՞ւ, թե բանտի համար:
Յեվ այն գիշերվա սոսկալի ժամին,
Վորոտմունքն յերբվոր վախեցրել եր ձեզ,
Սեղանի առջև յերբվոր խըմբովին
Ընկել եյիք դուք խըռնըված այնպես,
Յես վանքից փախա: Ո՜, ինչպես յեղբայր
Կուզեյի գըրկել մըրրիկն հողմաղայր·
Աչքերս ամպերի յետևից տանում,
Ձեռքով շանթ եյի բռնել ցանկանում…
Դե՛ ասա, հայրի՛կ,
Ինձ այս պատերում ի՞նչ պիտի տայիք
Իմ փոթորկալի սըրտի և ահեղ
Այն վորոտմունքի մտերմության տեղ…

## IX

«Յերկար վազեցի, թե ուր կամ վորտեղ,
Այդ յես չըգիտեմ: Յեվ վոչ մի աստղ
Իմ դըժվար ճամբան չեր լուսավորում:
Միայն բերկրությամբ շունչ եյի առնում

Իմ վաստակաբեկ ու հոգնած կրծքով
Այն անտառների թարմությունը զով:
Երկար վազեցի. վերջապես հոգնած
Բարձր խոտերում ընկա ու պառկած
Ականջ դրի յես. հետևող չըկար:
Վորոտմունքն ընկավ. լույսը մի յերկար
Տժգույն ու դալուկ շերտով բացվելով
Ձգվեց յերկնքի—յերկրի արանքով,
Եվ նրա վերա յես վորոշեցի
Սուր ժանիքները հեռու լեռների:
Անձայն ու անշարժ յես պառկած եյի,
Երբեմն յերբեմն շախկալը կիրճում
Երեխի նըման լալիս եր, ճչում,
Եվ, հարթ ու փայլուն թեփով փայլելով,
Սողում եր ոձը քարերի միջին.
Չեր ճնշում սակայն յերկյուղն իմ հոգին.
Ես ել գազանի պես խորթ եյի մարդոց,
Եվ սողում եյի, թաքչում ինչպես ոձ:

X

«Ներքև անդընդում, ինձանից շատ ցած,
Ջուրը հեղեղից սաստիկ հորդացած,
Աղմըկում եր խուլ, ինչպես բարկացած
Մարդկային խոսուն ձայներ անհամար:
Թեպետ և անխոսք—սակայն ինձ համար
Պարզորոշ եր միտքն այն խոսակցության,
Անլուռ աղմուկը, վեճն հավերժական,
Հարվածը համառ ժայռերի կույտին:
Մեղմանում եր նա ու դարձյալ ուժգին
Խաղաղ ձորի մեջ հանկարծ վորոտում:
Եվ ահա վերև մառախլոտ ոդում
Հավքերն յերգեցին: Արևածագի
Երկինքը շիկնեց: Մի թեթև քամի
Նամ տերևները շարժեց ու գնաց
Ու ծաղիկները շընչեցին քնած.
Նրանց պես որին գլխավորելու
Ես ել գըլուխս բարձրացրի վերև...
Մըտիկ արի ցած ու չեմ թաքցընում,

Սարսափին ինձ պատեց.—անհատակ ու սև
Անդունդի յեզրին եյի յես պառկած,
Վոռնում եր ներքև ջուրը փրփըրած:
Այնտեղ է տանում ժայռը իջնելով,
Բայց չարը մենակ իջավ նրանով,
Յերբվոր յերկնքի բարձրից գահավեժ,
Կորավ ստորին էն մութ վըհի մեջ:

XI

«Ծաղկում եր չուրջըս յեդեմն արարչի·
Զըվարթ ու դալար դաշտը կանաչի ·
Պահպանում եր դեռ արցունքն յերկնային·
Յեվ խաղողները խաղողի վորթի
Ծառերի միջով գալարվում եյին
Պճնած կանաչով ընքույշ սաղարթի·
Իսկ նրանց վրա ծոփ կախված եյին,
Ինչպես ականջի գինդեր թանկագին,
Լիք վողկույզները, և մերթ նրանց մոտ
Թըռչում եր հավքի յերամը յերկչոտ:
Ու նորից գետնին կըպա յես մին ել
Նորից սկըսա յես ականջ դընել
Այն օտարոտի թովիչ ձայներին·
Նրանք թփից թուփ ծըլվըլում եյին
Ու խոսում եյին կարծես միասին
Յերկնքի-յերկրի գաղտնիքի մասին:
Այնտեղ բնության ձայները բոլոր
Միացած եյին: Այն հանդիսավոր
Փառաբանության յերգի ժամանակ
Մարդու գոռ ձայնը չեր լըսվում մենակ:
Ինչ վոր այն ժամին զգում եյի յես,
Անհետացել են մտքերս այն բոլոր,
Բայց կուզենայի պատմել նրանց քեզ,
Վոր գոնե մտքով ապրեմ նորից նոր:
Այն առավոտը կամարն յերկնքի
Այնքան եր հստակ, վոր հըրեշտակի
Ճախրը սուր աչքը տեսնել կարող եր·
Այնքա՛ն թափանցիկ ու այնքան խոր եր,
Այնքա՛ն եր լեցուն ջինջ կապուտակով,
Վոր յես նրա մեջ հայացքով, հոգով

Սուզվեցի, կորա, մինչև իր շողով
Իմ ցնորքները կեսօրը ցրվեց,
Ու ինձ ծարավը տանջել սկսեց։

XII

«Այնժամ բռնելով ճկուն թփերից,
Դեպի հեղեղատն անդունդի յեզրից,
Մի սալից մի սալ, վորքան ուժըս կար
Սկըսա իջնել։ Յերբեմըն մի քար
Վոտներիս տակից պոկվելով հանկարծ,
Գլորվում է ցած։
Թռչում էր ներքև դղորդ հանելով,
Յետևից ակոս, փոշի անելով
Ու կուլ էր գնում ջրի ալիքին։
Յես կախված էյի—անդունդն իմ տակին։
Բայց ջահելությունն ուժով է լինում,
Մահվան յերկյուղը ինձ չէր վախեցնում։
Հենց իջա տակը այն սեպ-սեպ ժայռի,
Յերեսիս փըչեց լեռնային ջըրի
Զով թարմությունը, և իսկույն ագահ
Նըրա սառնորակ ալիքին ընկա։
Հանկարծ մի շըշուկ, վոտնաձայն թեթև...
Իսկույն թաքչելով թըփերի յետև,
Ամբողջ բռնըված ակամա դողով,
Յերկչոտ հայացքս վեր քաշած վախով
Յես ականջ դընել սկսա ագահ...
Յեվ մոտենալով հընչում էր ահա
Մատաղ վրացուհու ձայնը պատանի,
Այնպե՛ս բնական, այնպե՛ս կենդանի,
Այնպե՛ս քաղցր․ ազատ, վոր կարծես թե նա
Սիրելի մարդկանց անվան հընչյուններ
Միայն կանչելու սովորած լիներ։
Այն մի հասարակ յերգ էր լեռնային,
Խոր սուզվեց սակայն իմ մտքի միջին,
Յեվ իմ ականջին—հենց մութն ընկնում է—
Մի անտես-անհայտ վոգի յերգում է։

XIII

«Սափորն ուղիղ բռնած ուսին
Նեղ շավիղով վրացուհին

Ջուրն էր լցնում: Յերբեմնակի
Քարերի մեջ սայթքում էր նա
Ծիծաղելով իրեն վրա:
Այնպես աղքատ ու պարզ հագած,
Շղարշի ծալքերն յետ ձգած,
Թեթևաքայլ գնում էր նա:
Թեժ արևը, շողն ամառվա
Նրա դեմքն ու կուրծքն այրելով
Պատել էյին ոսկի ստվերով:
Տապ էր շնչում դեմքը բոլոր,
Յեվ աչքերի մութն այնքա՜ն խոր,
Այնքա՜ն սիրո գաղտնիքով լի,
Վոր մտքերս փոթորկալի
Շփոթվեցին: Հիշում եմ խոր,
Կժի ձայնը, ջուրը յերբ վոր
Մեջն էր թափում մեղմաքրքիջ,
Ու սոսափյունն... ուրիշ վոչինչ:
Յերբվոր ուշքի յեկա կրկին,
Ու յետ քաշվեց սրտիս արյունն,
Արդեն շատ էր նա հեռացած,
Ու գնում էր թեթև, կամաց.
Շիտակ իրեն բեռան տակին,
Վորպես դաշտի շքեղ բարդին...
Մի քիչ հեռու, սառը մթում,
Վորպես ընկեր, ժայռի գրկում
Բուսել էյին յերկու տնակ.
Հարթ կտուրի վրայից մեկի
Ծուխըն յելնում էր կապուտակ:
Յես տեսնում եմ այժմ էլ, ասես,
Ինչպես նըրա դուռը բացվեց
Ու կամացուկ փակվեց դարձյալ...
— Դո՛ւ, յես գիտեմ, չես հասկանալ
Իմ տխրությունն, իմ վիշտն անհաս.
Յեվ կը ցավեմ թե հասկանաս.
Թող հիշատակն այն վայրկենի
Ինձ հետ, իմ մեջ մընա—մեռնի:

## XIV

«Հոգնած գիշերվա նեղություններից
Ընկա ստվերում: Շուտով սփոփիչ

Քունը աչքերըս փակեց ակամա
Յեվ յես մյուս անգամ յերազում տեսա
Չըքնաղ պատկերը այն վըրացուհու,
Յեվ մի անսովոր, դյուրեկան թախիծ
Անուշիկ ճմլեց իմ սիրտը նորից:
Ճիգ եյի անում, վոր մի շունչ քաշեմ,
Հանկարծ արթնացա: Արդեն յերկնքում
Փայլում եր լուսինն, ու մենակ մի ամպ
Սողում եր նրա յետևից թաղուն,
Բաց արած իրեն գիրկն ագահությամբ.
Կարծես թե իրեն վորսը լիներ են:
Լուռ եր ու խավար աշխարքը համորեն.
Գագաթները միայն ձյունոտ սարերի,
Ինչպես արծաթյա ծոպեր ահռելի,
Պըսպղում եյին առաջիս—հեռվում,
Հեղեղատը խուլ ճողփում ափերում:
Ծանոթ խրճիթում մերթ պայծառ վառվում
Ու մերթ հանգչում եր աղոտ մի կրակ:
Այնպես ե հանգչում գիշեր ժամանակ
Պայծառ աստղիկը յերկնքում փայլող:
Յես ուզում եյի... բայց չեյի կարող
Յես այնտեղ մտնել: Յես այն ժամանակ
Հոգումս ունեյի լոկ մի նպատակ—
Հասնել հայրենիք. ու համբերեցի
Քաղցի, ծարավի, վորքան կարացի:
Յեվ ահա անձայն ու յերկչոտ ընկա
Յես ուղիղ ճամփա:
Բայց շատ չըքաշեց, անտառի խորքում
Սարերը դարձյալ աչքիցըս ընկան,
Ու ըսկսեցի կորցընել ճամփան:

XV

«Անզուսպ կատաղած յերբեմըն իզուր
Պոկ եյի տալիս յես հուսակտուր
Իրար խըճըճված բաղեղ ու մացառ.
Շուրջըս անտառ եր, անեզըր անտառ,
Հետզհետե խոր, խիտ ու ահռելի.
Յեվ բազմությունով սև սև աչքերի
Գիշերվա մութը հետևում եր ինձ
Ամեն մի թըփի, ճյուղի արանքից:

Գըլուխս սկսավ արդեն պըտըտվել·
Ծառեր բարձրացա, ուզեցի դիտել,
Բայց մինչև անգամ յերկնի յեզերքում
Նույն ժանիքավոր անտառն եր ձգվում:
Այնժամ հուսահատ վայր ընկա կըրկին,
Հեկեկում եյի, լալիս դառնագին
Ու հողի խոնավ կուրծքն եյի կրծում.
Արտասուքներըս վայր եյին հոսում
Նըրա յերեսին տաք ցողի նըման...
Բայց հոժար չեյի մարդոց ոգնության.
Խորթ եյին ընդմիշտ ինձ համար մարդիկ:
Յեվ յեթե հանկարծ կարճատև մի ճիչ
Ինձ դավաճաներ, գիտցի՛ր, ծերունի՛,
Լեզուս արմատից պետք է պոկեյի:

XVI

«Մանուկ ժամանակ, քո մի՞տն է գալիս,
Յես չըգիտեյի յերբեք արտասվել,
Բայց այնտեղ չեյի ամաչում լալիս:
Ո՞վ եր տեսնելու.—մըթին ծմակը,
Մին ել յերկնքում սահող լուսնյակը:
Լուսավորըված նըրա լուսով,
Ծածկըված մամռով ու ավազով,
Խիտ ծըմակով շըրջափակըված
Բացատն եր իմ առջև ընկած:
Հանկարծ այնտեղ անցավ մի ստվեր,
Ու հըրեղեն յերկու կայծեր
Պըսպըղացին... ապա թե այն
Մութ թավուտից ինչվոր գազան
Մի վոստյունով թռավ, պառկեց,
Ավազի հետ խաղալ սկսեց:
Այն անապատի մշտական տերը—
Հուժկու հովազն եր: Հում-հում վոսկորը
Կրծոտում եր նա, ուրախ մըռմըռում,
Յերբեմն արյունոտ հայացքը հառում
Ու փաղաքշաբար պոչը շարժելով
Նայում լըրացած լուսնյակի վըրա,
Ու փայլում եր մազն արծաթի նըման:
Սպասում եյի յես մի ճյուղ բռնած

Կռվի վայրկենին. ու սիրտս հանկարծ
Բորբոքվեց արյան, կռվի ծարավով...
Հա՛, բոլորովին այլ ճանապարհով,
Այլ շավիղով էր ինձ բախտը տանում,
Բայց համոզված եմ, որ մեր աշխարքում
Ցես էլ կըլինեյի քաջերի շարքում:

XVII

«Սպասում էյի: Արդեն գիշերվա՛
Մըթնում թշնամու հոտն առել էր նա,
Ու մռնչյունը յերկա՛ր, սըրտահեծ,
Վորպես հառաչանք հանկարծ տարածվեց...
Ավազը թաթով կատաղած փորեց,
Ծառս յեղավ, հետո փըրփըրոտ արեց,
Ու մի ցատկելով սակավ էր մընում
Իսկույն ինձ մահի բաժին էր անում.
Բայց հանդիպեց իմ հարվածին:
Ծանըր ճյուղը ինչպես կայծին
Ճեղքեց նորա ճակատը լայն...
Նա հառաչեց մարդու նման
Ու շուռ յեկավ: Սակայն նորից,
Թեև նըրա խոր վերքերից
Հոսում էր հորդ արյունն այնքան—
Վառեց կռիվն որհասական:

XVIII

«Ընկավ կըծքիս: բայց շտապով
Նըրա կոկորդն յես կոխեցի,
Յերեք անգամ պըտըտեցի
Միակ զենքըս... նա հառաչեց,
Իրեն բոլոր ուժն հավաքեց,
Ու մենք, ինչպես օձեր, կըպած,
Ընկերներից ամուր գըրկված
Գըլորվեցինք, ու խավարում
Գետնի վրա էյինք կըռվում:
Այն վայրկենին յես էլ էյի
Ինչպես հովազ չար, կատաղի.
Ցես վառվում էյի, ժպժպում իր ոչես.
Ցես ինքս էլ ծնված լինեյի կարծես

Հովազների ու գայլերի միջին,
Թարմ անտառների հովանու տակին:
Մարդկային բարբառն, այնպես եր թվում,
Մոռացել եյի, և հենց իմ կրծքում
Այն սարսափելի կռինչն եր ծնվել,
Կարծես թե լեզուս ծնընդից ի վեր
Ուրիշ ձայների անսովոր լիներ...
Բայց իմ թշնամին սկսավ թուլանալ,
Դես դեն յերերալ ու ծանըր հևալ·
Վերջին անգամ հուպ տվավ ինձ,
Կանգնած աչքերն սպառնալից
Փայլկլտացին, ապա հանգան
Փակված քընով հավերժական:
Բայց հաղթանակող թշնամու առջև
Հըպարտ հանդիպեց նա իր որհասին,
Ինչպես վայել է կռվում հերոսին...

XIX

«Իմ կրծքի վրա տեսնո՞ւմ ես դեռ նոր
Նըրա ճանկերի հետքերը խոր-խոր·
Չեն առողջացել նրանք տակավին,
Դեռ չեն ծածկըվել, բայց հողի տակին
Նորից կըբացվեն ու կը թարմանան,
Ու կառողջացնի մահը հավիտյան...
Մոռացել եյի յես այնժամ նրանց,
Ու իմ մնացած ուժը հավաքած
Գնում եյի միշտ թավուտ անտառում...
Սակայն բաղդիս հետ զուր եյի կռվում—
Նա ծաղրում եր ինձ ու արհամարհում:

XX

«Դուրս յեկա կրկին բերանն անտառի·
Օրը բացվեցավ, տըժգույն աստղերի
Բույլը չըքացավ նըրա շողերում:
Ըսկսավ ծըխալ աուլը հեռվում
Ու մութ անտառը շըրշեց արթնացած:
Ներքև հովիտում հողմի հետ հանկարծ
Մի ժըխոր անցավ... վրա նաեցի·
Բայց նա հողմի հետ լըռեց վերստին:

Իմ չորս կողմերը յես աչքըս ածի·
Կարծես այն տեղերն ինձ ծանոթ եյին:
Սարսափելի յեր այս միտքն ինձ համար,
Յեվ չեյի ուզում հավատալ յերկար,
Թե կրկին բանտս եմ յես վերադարձել,
Թե այնքան որեր զուր եմ մտածել,
Փայփայել գաղտնի միտքը նվիրական,
Տառապել, տանջվել, համբերել այնքան,
Ու բոլորն ինչո՞ւ.—վոր այս հասակում,
Դեռ նոր բաց արած աչքըս աշխարքում,
Թավ անտառներում շունչ ու կյանք առած,
Ազատ աշխարքի, կյանքի սովորած,
Ինձ հետ միասին տանեմ գերեզման
Այրող կարոտը սուրբ հայրենիքիս,
Խիստ նախատինքը խաբված հույսերիս
Յեվ ամոթանքը ձեր կարեկցության...
Սակայն տակավին կասկածներով լի
Կարծում եյի թե՝ յերազում եյի,
Յերբ հանկարծակի խաղաղ ոդի մեջ
Զանգի ղողանջը հեռվից տարածվեց·
Այստեղ ինձ համար բոլորը պարզվեց...
Ո՛, ճանաչեցի իսկույն յես նրան·
Շատ է փախցրել նա իմ մանկական
Կարոտ աչքերից վառ յերազներիս
Թանգ տեսիլքները,—հարազատներիս,
Ազատությունը վայրի դաշտերի,
Յեվ նժույգները թեթև, կատաղի,
Յեվ կռիվները ժայռերի միջին,
Ուր հաղթում եյի մենակ ամենքին...
Անլաց, ուժասպառ լըսում եյի յես:
Սրտիս միջիցն եր դուրս գալի, ասես:
Կարծես թե մեկը անընդհատ զարկով
Զարկում եր կրծքիս ծանըր յերկաթով:
Յեվ յես անորոշ այնժամ հասկացա,
Թե այսուհետև դեպի հայրենիք
Յերբե՛ք ինձ համար ել ճամփա չը կա:

XXI

«Հա՛, արժանի յեմ վիճակիս, հայրի՛կ·
Հըզոր նժույգը ոտար դաշտերում

Իր վառ հեծվորին վայր է գլորում,
Հեռու աշխարքից գեղի հայրենիք
Գտնում է ուղիղ ու կրճատ ուղի...
Ի՞նչ եմ նըրա մոտ։—Ջուր է սիրտս էլ
Այսքան թախիծ, տենչ ու փափագ։
Այս ջերմ է լոկ թույլ ու դատարկ,
Ցնորքի մի խաղ, խելքի խանգարում։
Ինձ վրա բանտը իրեն կընիքը
Թողել է արդեն... Այսպես է լինում
Անլույս խավարում բուսած ծաղիկը.—
Քարերի միջին դալուկ ու մենակ,
Թերթիկները փակ, յերկար ժամանակ
Մընաց արևի շողերին զըվարթ։
Օրեր անցկացան, ու բարի մի մարդ
Կարեկցությունից հանելով նըրան
Փոխեց մի պարտեզ, վարդին հարևան։
Ամենայն կողմից փարթամ ու շըքեղ
Կյանքի քաղցրություն շնչում էր այնտեղ...
Բայց ի՞նչ դուրս յեկավ. Հենց որը բացվեց,
Ու արշալույսի ցոլքը տարածվեց—
Նըրա վառվռուն շողերն այրեցին
Խավարչտին բանտում սովորած ծաղկին...

XXII

«Ինձ էլ այնպես, ինչպես և նըրան
Այրում էր տապը անողորմ որվան։
Իզուր էյի յես ծածկել աշխատում
Հագնած գըլուխս չորացած խոտում.
Փուշ պսակի պես նըրա տերևը
Խճըճվում էր իմ ճակատս վերևը,
Յերկիրն յերեսիս կըրակ էր շնչում,
Ու պըտըղտալով կայծերը օդում
Պարտվում էյին։ Յեռնում էր շողին
Սիպտակ ժայռերից։ Աստծո աշխարքին
Կաշկանդել էր խուլ, գերեզմանական
Ծանըր մըրափը հուսահատության։
Գեթ լոռամարգին ճռվողեր, խոսեր,
Կամ թե ճըպուռի ճըռռոցը լըսեր,
Կամ թե մանկական թոթովն առվակի...
Հենց ոձն էր մենակ, վոր աշնան մարգի

Զարթած խոտը դես-դեն շարժելով,
Դեղնավուն մեջքով փայլակին տալով՝
Փխրուն ավազը ակոսում, տողում,
Զգույշ սողում եր, քնքշալով խաղում,
Յեռակի փոլրում, ող չինում ադին
Ու մին ել, հանկարծ, կարծես թե չանթած
Իրեն նետում եր, թռչում օրընթաց,
Թաքչում հեռավոր թփերի տակին...

XXIII

«Ու վողջ յերկնքում մեղմ եր ու պայծառ:
Մըշուշի միջից հեռվում յերկու սար
Սևին եյին տալիս: Մեկի յետևից
Մեր մենաստանը ժանիքները ցից
Իրեն պարըսպով յերևում եր ինձ:
Կուրն ու Արագվան ներքև, հովտում
Իրենց արծաթյա յերիզով պատում
Թարմ կըղզիների սարրանները,
Ու լըվանալով չըշուն թփերը,
Սուր հոսում եյին ընկած իրարու...
Նրանք ինձանից շատ եյին հեռու:
Ասի վեր կենամ — սակայն առաջիս
Ամեն բան արագ պտույտ եր գալիս.
Ասի թե կանչեմ — լեզուս ցամաքած
Առանց հնչյուն եր, անշարժ, կարկամած...
Մեռնում եյի յես: Տանջում եր մահվան
Զառանցանքը ինձ: Այնպես եր թվում,
Թե խոր գետի թաց հատակում
Պառկած եյի — ու իմ բոլոր
Շուրջը մառայլ խորհըրդավոր:
Յեվ, հագեցնելով ծարավս անհագուրդ,
Ջըրի հոսանքը, սառցի նըման ցուրտ,
Խոխոջ հանելով կուրծքըս եր մտնում...
Յես միայն քնելուց եյի վախենում —
Այնքա՛ն դյուրեկան, այնքան եր քաղցըր...
Իսկ իմ վերևը, ինձանից բարձըր,
Խըռնվում եյին ալիքն ալիքին,
Արևը նրանց բյուրեղի միջից
Լուսնից ել անուշ նշողում՝ եր ինձ...

Ու խայտաճամուկ պարը ձկների
Մերթ մերթ խաղում էր այն լուսի տակին։
Յետ հիշում եմ յես նրանցից մեկին.
Նա, ուրիշներից ջնուշ ավելի,
Փաղաքշում էր ինձ մտերիմ սիրով
Մեջքը ծածկըված վոսկյա թեփերով,
Խայտում էր գլխիս վերև, խըլըրտում,
Ու խոսն էր այնքա՜ն, քնքույշ ու տրտում
Հայացքը նրա կանաչ աչքերի...
Ու յես անկշտում հիացած էի։
Արծաթահնչյուն նրա ձայնիկը
Ինձ զարմանալի բաներ էր պատմում,
Նա մեկ լռում էր, մեկ նորից յերգում։
Նա ասում էր.

«Իմ պատանի՛,
Այստեղ ինձ հետ կաց միասին.
Սառն ու հանդիստ միշտ կըլինի
Ազատ կյանքը ջըրային։

«Իմ քույրերին յես կըկանչեմ,
Մենք, միասին պար բռնած,
Կը խնդացնենք մռայլ դեմքըդ
Ու քո հոգին վաստակած։

«Քնի՛, մահիճդ ահա փափուկ
Ու վերմակըդ թափանցիկ...
Կանցնեն տարի՛ք, կանցնեն դարե՛ր
Յերազներում գեղեցիկ։

«Ո՜, պատանի՛, սիրում եմ քեզ,
Ահա իմ ողջ գաղտնիքը,
Սիրո՜ւմ — ջըրի ալիքի պես;
Սիրո՜ւմ — ինչպես իմ կյանքը...»։

Ու յերկա՜ր, յերկար, յես լսում էի.
Ու կարծես հնչուն ալիքը ջըրի
Խառնում էր իրեն մրմունջը խորին
Են վոսկեթեփուկ ձըկան բառերին։
Այստեղ ինձ կորցրի։ Աչքերըս մթնեց.
Զառանցանքն հատավ ու տեղի տվեց
Տկարությանը վաստակած մարմնիս...

## XXIV

«Այսպես գտան ինձ ու վերցրին...
Մնացածն արդեն հայտնի յե քեզ:
Յես վերջացրի: Այժըմ կուզես
Մի՛ հավատար, այդ չեմ հարցնում,
Մի բան ե՛ միայն ինձ տխրեցնում,
Վոր իմ դիակն այստեղ — հեռու,
Իմ մայր հողում չի փըտելու,
Ու ցավերիս վեպքը տըրտում
Չեն պատմելու խուլ խրճիթում,
Վոր մեկն ուշքով լսի ու լա
Իմ տխրալի անվան վըրա:

## XXV

«Մնաս բարյավ, հա՛յր... քո ձեռքը տուր ինձ.
Տեսնո՞ւմ ես, իմը ինչպես այրվում ե...
Այս բոցն, իմանա՛ս, մանուկ որերից
Իմ կրծքի տակին ծածկված մընում ե.
Բայց հիմա արդեն ել սնունդ չըկա,
Ու իրեն բանտը վողջ լափել ե նա:
Վերադառնում ե Նրա մոտ կըրկին,
Վոր որինավոր կարգով ամենքին
Տալիս ե տանջանք ու հանգստություն...
Բայց ի՞նչ եմ անում. Թեկուզ դրախտում,
Ամպերից վերև — են սուրբ աշխարքում
Իմ հոգին իրեն հանգիստ ունենար...
Ա՜խ, միայն մի քանի վայրկենի համար,
Մռայլ, վիթխարի են ժայռերի մեջ,
Ուր անց եմ կացրել որերս մանկության,
Կըտայի յես վողջ — դրախտ, հավիտյան...

## XXVI

Յերբվոր, ծերունի՛, մեռնելու լինեմ,
Ու գիտեմ — յերկար չըպիտի ապրեմ, —
Պատվեր տուր այնժամ դու ինձ տանելու
Մեր կանաչ այգին, այնտեղ, ուր յերկու
Ճերմակ հակակլի թփեր են ծաղկում...
Խոտն այնքան խիտ ե նրանց արանքում,
Ու անուշաբույր թարմ ոդը այնպե՛ս,

Այնպե՛ս Թավանցիկ, այնպես վոսկեշող
Տերևն արևի տակին խաղացող...
Դու հըրամայի ինձ այնտեղ տանեն:
Պայծառ ցերեկի փայլով վոսկեղեն
Վերջին անգամը կարբենամ գեթ յես:
Կովկասն այնտեղից կերևա նույնպես:
Կարելի յե հով զեփյուռների հետ
Ուղարկի նա ինձ վերջին հըրաժեշտ
Իր բարձունքներից հպարտ, անդըրված...
Ու իմ ականջին, որհասից առաջ
Կըհնչի դարձյալ հարազատ մի ձեն:
Ու կըմտածեմ, թե ընկերըս ե են,
Կամ թե յեղբայրըս վըրաս կորացած
Զգույշ ձեռքերով դեմքիցս կամաց
Մահվան սառնամած քրտինքն ե սրբում
Ու մեր տան մասին կիսաձայն յերգում...
Ու յես այս մըտքով խաղաղ կըհանգչեմ,
Եվ չեմ գանգատվի վոչ-վոքի ընդդեմ...»:

# ՉԱՅԼԴ ՀԱՐՈԼԴԻ ՅԵՐԳԸ

*Մնաս բարյավ կապույտ հեռվում*
*Կորչող յեզերք հայրենի,*
*Բուքն հեծում է, ծովը գոռում,*
*Ճայը ճչում վայրենի:*

*Արևն ահա շտապում է*
*Ծովի խորքում հանգչելու...*
*Բարի գիշեր, իմ հայրենի՛ք,*
*Մնաս բարյավ նաև դու:*

*Կանցնեն ժամեր և նա կրկին*
*Նոր առավոտ կըծնի,*
*Յես կողջունեմ ծով ու յերկինք,*
*Բայց վոչ հողը մայրենի...*

*Ապարանքըս ամայացած,*
*Ոջախս հանգած — անկըրակ,*
*Պատերիս մեջ խոտ է լցված,*
*Շունըս վոռնում դռան տակ:*

*— Մոտիկ արի՛, մանկլավիկս,*
*Ինչու համար ես կոծում,*
*Վախենո՞ւմ ես ալիքներից,*
*Թե ցրտիցն ես դողացնում:*

*Սրբի՛ր աչքիդ արտասուքը,*
*Պինդ է մեր նավն և թեթև,*
*Հազիվ նրան կարողանար*
*Հասնել բազեն սըրաթև:*

«Չեմ վախենում, թող հողմահար
Ալիքները բարձրանան,
Բայց դու, պարո՛ն, մի՛ զարմանար,
Վոր յես լալիս եմ այսքան.—

Հեռացել եմ յես իմ հորից
Յեվ մորիցըս սիրասուն,
Դու յես ընկեր մնացել ինձ,
Յեվ նա, վոր կա յերկնքում։

Հայրս որհնեց գալիս ինձի
Յեվ չըտնքաց միանգամ,
Բայց մայրս խիստ պիտի հեծի,
Մինչև յես յետ կըդառնամ։

— Հերի՛ք, մանուկ, այդ արցունքը
Վայել է քո աչքերին.
Թե պա՛րզ լիներ և իմ սիրտը
Իմ աչքերս էլ կուլային։

Յե՛կ, զինակիրս հավատարիմ,
Ի՞նչ գունատ ես յերևում,
Ֆրանսիացո՞ւց մեր վոխերիմ,
Թե բուքից ես վախենում։

— Ինձ համար չեմ դողում, պարո՛ն,
Այդքան թույլ չե քո ծառան,
Բայց հարազատ կնոջ հոգսը
Դժգունացնում է նորան։

Ամրոցիդ մոտ յես տխրադեմ
Զավակներիս թողեցի,
Արդ, հոր մասին յեթե հարցնեն,
Մայրը նրանց ի՞նչ ասի...

— Բավական է, բարի ծառա,
Դու իրավ ես վշտանում,
Իսկ յես անփույթ եմ ավելի,
Ծիծաղելով եմ գընում։

Յեվ արդյոք ո՞վ կըհավատար
Հառաչանքին կանացի,

*Մեր տեսած լացը մի օտար*
*Սիրուն աչքից կըսրբի···*

*Չեմ ափսոսում վայելքս հին,*
*Վոչ վտանգից կըսարսեմ,*
*Այն է, վոր չեմ թողնում մեկին,*
*Վորի համար արտասվեմ:*

*Յեվ այժմ ահա յես մենակ եմ*
*Լայնատարած այս ծովում,*
*Բայց թե ինչո՞ւ կըհառաչեմ,*
*Յերբ ինձ համար չեն ցավում:—*

*Շունըս յերկար չի վոռնալու,*
*Մի ուրիշը կըխնամի,*
*Յեվ, թե լինեմ յես դառնալու,*
*Պատառ-պատառ ինձ կանի:*

*Դե՛հ, իմ նավակ, մենք սլանանք,*
*Ծովի վերա փրփրադեզ,*
*Ուր վոր կուզես, հոգ չէ, գնանք,*
*Միայն հայրենիք չըտանես:*

*Վողջո՛ւյն, վողջո՛ւյն մութ ալիքներ·*
*Յեվ, յերբ աչքիցս ընկնեյիք,*
*Վողջո՛ւյն խուղե՛ր, անապատնե՛ր···*
*Բարի գիշեր, հայրենի՛ք:*

ԲԱՅՐՈՆ

# Ի Ն Ե Ս Ի Ն

*Ո՛, վո՛չ, մի՛ ժըպտա իմ վշտի վրա,*
*Ա՛խ, կյանքում ժպտալ կարող չեմ ել յես,*
*Բայց յերկինք չանի, վոր լաց լինես դու,*
*Վոր լաց լինես դու, գուցե զուր—ինձ պես:*

*Դու էն ես հարցնում՝ ինչ ցավ է գաղտնի,*
*Վոր խընդությունըս ու կյանքս է մաշել,*
*Բայց ինչո՞ւ, չըքնա՛ղ, ինչո՞ւ իմանաս,*
*Յերբ դու էլ նույնիսկ չես կարող բուժել:*

*Վոչ սերն է պատճառ, վոչ ատելություն,*
*Վոչ սին փառքերի կորուստը, ավա՛ղ,*
*Վոր փախչում եմ յես ձըգած տեղ ու տուն,*
*Զըզված ամեն բան, ինչ վոր թանկ եր վաղ:*

*Ինչ վոր տեսնում եմ, լըսում իմ ճամփին—*
*Ձանձրացնում է ինձ ամե՛ն, ամեն բան,*
*Գեղեցիկն էլ ինձ հաճույք չի տալի,*
*Վոչ էլ աչքերիդ հմայքն առաջվան:*

*Էս էն անհանգիստ վիշտն է ամեհի,*
*Վոր թափառական Ջըհուդն ունի հեդ.*
*Շիրմի խավարին սոսկում է նայի,*
*Իսկ կյանքում հանգիստ չի գտնում յերբեք:*

*Եվ ո՞ւր փախչեմ յես ինքըս ինձանից,*
*Թեկուզ հեռավոր յերկրի մի անկյուն.*
*Ուր վոր էլ գընամ՝ հետևում է ինձ*
*Կյանքի էս ժանտը—մըտքիս դևն անքուն:*

Ուրիշներն այն ինչ, հաճույքից հարբած,
Վայելում են դոհ՝ ինչ ձգել եմ յես...
Ո՛, թող վայելեն, ու յերնե՛կ հանկարծ
Իրենց յերազից չըզարթնեն ինձ պես:

Յես պետք ե անցնեմ դեռ աշխարհ—աշխարհ,
Քանի յես նայեմ—անցյալս անիծեմ,
Յեվ մի սփոփանք ունիմ ինձ համար—
Վատթարն եմ տեսել—ինչ ել գա իմ դեմ:

Բայց են վատթարը... մի՛ հարցնի ել ինձ.
Գո՛ւթ արա, չըքնա՛ղ, ու ժըպտա կրկին,
Յեվ յես մի քաշի դիմակն իմ սըրտից—
Տեսնելու տակի դժոխքն ահագին:

ԲԱՅՐՈՆ

# ՇԻԼՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

## ՍՈՆԵՏ ՇԻԼՈՆԻՆ

*Ո՛վ ազատություն, շունչ հավերժական,*
*Բանտերումն ես դու շքեղ ճաճանչում,*
*Այնտե՛ղ, ուր սիրտը՝ քեզ բնակարան*
*Յեվ քո սերըն է միայն ճանաչում:*

*Յեվ յերբ վորդիքդ զարկած շղթայի,*
*Անլույս բանտերում նահատակվելով,*
*Փառավորում են յերկիրն հայրենի,*
*Ծավալվում ես դու հողմի թևերով:*

*Շիլո՛ն, քո բանտը սրբավայր է միշտ,*
*Յեվ քո տըխրալի հատակը՝ սեղան.*
*Բոնիվարն այնտեղ տանջվեց բազմավիշտ,*
*Թողեց հետքերը քարերի վըրան:*

*Յեվ թող միշտ մընան նըրանք անջընջում,*
*Վոր բռնությունից աստվա՛ծ են կանչում:*

*Գորշ են մազերըս, բայց վոչ տարիքից,*
*Վոչ էլ մի գիշեր*
*Դարձա այսպես ծեր,*
*Վոր պատահում է հանկարծ յերկյուղից:*

*Ձեռք ու վոտներըս էլ այսպես չորացան*
*Վոչ թե բանելուց, այլ գարշ հանգըստից,*
*Խավարչտին բանտին յերբ ավար դարձան,*
*Զրկված արևից, աշխարհքից, ոդից:*

Իմ հայրը այրվեց խարույկի վըրա,
Չուզեց իր պաշտած հավատն ուրանա,
Իրեն վորդիքն ել նույն բանի համար
Ոթևան գըտան բանտումը խավար:

Յոթ հոգի եյինք, մընացել եմ յես:
Մեկը տարիքով, վեցն յերիտասարդ,
Ինչպես սկըսան, վերջացրին նույնպես,
Հալածանքների սաստկությամբ հըպարտ:

Մինը կըրակում, յերկուսը կըռվում
Կընքեցին իրենց հավատն արյունով,
Իրենց հոր նըման մեռան անկոտրում
Թըշնամու մերժած աստծու անունով:
Վերջին յերեքը բանտն եյին ձըգված,
Վորոնցից յես եմ մընացել հիմի,
Հիվանդ բեկորըս մեր անբախտ տոհմի:

II

Այնտե՛ղ՝ հին ու խոր բանտում Շիլլոնի
Յոթը հաստ սյուներ գոթական ձևի,
Յոթը հա՛ստ սյուներ, ծանր ու գորշագույն,
Յերևում են թույլ մի շողով աղժգույն,
Վոր, ասես իրեն ճամբեն մոլորել,
Պատի արանքից պատահմամբ ընկել
Խոնավ հատակին խաղում ե տխուր,
Ինչպես ճահճային աղոտ մոլեհուր:

Ամեն սյունի մեջ այնտեղ մի ող կա,
Յեվ ամեն ողակն ունի մի շըղթա:
Սոսկալի բան ե յերկաթի շըղթան.
Ուտում են նըրա ժանգ-ժանիքները.
Նըրանք մաշելով մարմնիս մեջ մըտան,
Ու չեն ջնջվելու յերբե՛ք հետքերը,
Մինչև չը թողնեմ որվան լույսը վառ,
Ծանը՛ր, ատելի աչքերիս համար,
Վորոնք չը գիտեմ, թե քանի տարի
Չեն տեսել պայծառ յերեսն արևի:
Այդ տարիների չեմ հիշում թիվը.
Թողեցի նըրանց տխուր հաշիվը
Այն որից, ինչվոր յեղբայրս վերջին
Թոշնեց ու մեռավ աչքիս առաջին:

III

Նըրանք սյուներին մեզ շըղթայեցին։
Մենք ջոկ ջոկ էյինք, թեև միասին,
Մենք չէյինք կարող վոչ մի քայլ անել,
Վոչ իրար յերես խավարում տեսնել։
Աղոտ, կապտավուն այն լույսն էլ վոր կար,
Մեզ մեր աչքերում դարձըրեց ոտար։

Այսպես միասին, բայց ջոկ ջոկ կապած,
Աշխարքի ամեն բարիքից զըրկված,
Մի մըխիթարանք միայն ունեյինք,
Վոր իրար ձայներ իմանում էյինք։
Ու սըրտով կըպած, իրարից հեռու
Մենք սկըսեցինք սիրտ տալ իրարու
Նոր նոր հույսերով կամ թե հին վեպով,
Կամ հերոսական անվեհեր յերգով։
Սըրանք էլ սակայն պաղեցան վերջում.
Տըխուր էյին մեր ձայները հընչում,
Տըխո՜ւր ու խըռպոտ, խուլ ու ահռելի՝
Պաղ արձագանքը բանտի քարերի...

IV

Մեր փոքրը, վորին հայրըս սիրում էր,
Վոր մեր հանգուցյալ մոր ճակատն ուներ,
Ու աչքերն ինչպես կապույտը յերկնի,
Նա յեր իմ հոգին տանջում ավելի։
Իրավ, տեսնելիս մարդ չէր դիմանում.
Այնպիսի՜ թըռչնակ այսպիսի՜ բընում...
Գեղեցիկ էր նա, պայծառ ու մաքուր,
Յեվ ուրախ, զըվարթ սըրտով բընատուր։

V

Մյուսն էլ նրա պես հոգով անարատ,
Ծընված էր սակայն հուժկու տըղամարդ։
Ուրախ ու պատրաստ ամեն ժամանակ
Աշխարքի ընդդեմ խիզախել մենակ,
Միայն թե չը հեծեր շըղթայի տակին.
Շըղթայի ձայնից մարում էր հոգին։
Նա լուռ, անմըռունչ ընկնում էր արդեն։

Յես էլ թերևս ընկճված նույնքան,
Ճիգ եյի անում, վոր սըրտապընդվեն
Վերջին հույսերը թանկագին մեր տան:
Իզո՜ւր. նա ընկավ, նա մեռավ... տեսա...
Յես տանջվում եյի թեև, աշխատում,
Շըղթաս կըրծոտում, շըղթաս կըտրատում,
Տագնապի ժամին իրեն չըհասա...
Նա մեռավ... Յեկան, կապանքը վերցրին.
Հենց այնտեղ, բանտում, աչքիս առաջին
Մի փոս փորեցին սառն ու յերեսանց...
Աղաչանք արի, խնդրեցի նրանց,
Վոր շընորհ անեն՝ թաղեն այնտեղում,
Ուր վոր արևի ճաճանչն է խաղում...
Այս խնդիրք, խելագար տխմար մի միտք եր,
Բայց այն ժամանակ գըլուխս եր մըտել,
Թե ազատ ծընված, ազատ սովորած
Իմ յեղբոր հոգին, թեկուզ և մեռած,
Ձեր հանդըստանա գերության բանտում...
Ջուր եյի սակայն այնպես պաղատում.
Նըրանք ինձ վըրա քահ-քահ խընդացին,
Յեվ մեր սիրելի յեղբայրը կըրկին
Այն պաղ, անդալար հողումն է թաղված,
Ու գըլխի վերև անբաժան կախված
Բըռնակալներին վայել հուշարձան՝
Յեղբորըս կըրած ու թողած շըղթան:

VI

Իսկ մեր ծաղիկը, փոքրը մեզանից,
Ամենքից սիրվածն իր ծընված ժամից,
Իր սիրուն դեմքով մեր մոր պատկերը,
Մեր գերդաստանի մանկական սերը,
Նահատակ մեր հոր ցնորքը նվիրական
Յեվ իմ հոգսերի վերջին առարկան,
Վորի համար միայն ինձ պահում եյի,
Վոր նըրան ազատ գեթ մի որ տայի.
Նա, վոր դեռ հոգին պահել եր այնպես
Տակավին զվարթ, գուցե առերես,
Նա էլ խորտակվեց, որեցոր և նա՝
Սկըսավ թոշնել ցողունի վըրա:
Բայց այնքա՜ն խաղաղ եր նա թառամում,

Լո՛ւռ, մեղմիկ հալվում, ուժերը քամվում,
Առանց արցունքի, քնքույշ ու բարի...
Ինձ համար եր միայն հոգում ու ցավում...
Յեվ վոչ մի տրտունջ, մի «ա՛խ» չարավ նա
Իրեն վաղաժամ որհասի վըրա:
Մի փոքրը խոսեց մեր լավ որերից,
Մի քիչ սփոփեց, հույսեր տվավ ինձ,
Բանդի յես անհուն վըշտից քարացել,
Կորուստիս առջև լուռ եյի կացել.
Ահա Թառանչը, վոր գըրկում եր նա,
Արդեն յերկարեց, նըվաղեց ահա...
Ականջ դըրի յես... չեր լսվում խոսռ.
Ձայն տըվի նըրան ահից խելագար...
Կանչեցի... կարծես մի ձայն լըսեցի...
Ուժգին ցընցումով շըղթաս կըտրեցի,
Ընկա նըրա մոտ. նըրան չը գըտա ..
Յես եյի մենակ մըթնումը շարժվում.
Յես եյի ապրում, յես եյի շընչում
Անիծված ոդը մեր խոնավ բանտի:
Սա գետնի վըրա, նա գետնի տակին,
Յերկու յեղբայրս եվ վախճանված եյին:
Ընկած չոր ձեռքը բըռնեցի, ավա՛ղ,
Նըրա պես նույնիսկ իմ ձեռքն եվ եր սառ:
Ուժ չը կար շարժվեմ կամ մի ճիգ անեմ,
Բայց զգում եյի, վոր դեռ ապրում եմ...
Կատաղի մի վիշտ, յերբ գիտենք՝ վոր նա,
Ում սիրում եյինք, այլեվս չը կա...
Չը գիտեմ ինչպես,
Չեյի մեռնում յես.
Յերկրում ինձ համար
Եվ վոչինչ չը կար...

VII

Իսկ հետո այնտեղ ինձ ինչ պատահեց,
Այդ յես չը գիտեմ ու չեմ իմացել.
Նախ ոդը հատավ, լույսը պակասեց,
Ապա թե մութը չըքացավ հանկարծ:
Զգացում ու միտք՝ եվ վոչինչ չըկար:
Չեյի հասկանում, ինչ եյի զգում,
Քարերի միջին կանգնած մի լեռ քար,

Մի լերկ ապառաժ՝ գագաթը մխում...
Ամեն բան դատարկ, մըռայլ ու գորշ էր։
Վոչ ցերեկ էր այն և վոչ էլ գիշեր,
Յեվ վոչ իմ բանտի նըսեմ լույսը կար,
Այնքան ատելի աչքերիս համար։
Մի տարածություն՝ դատարկությամբ լի,
Յեվ հաստատություն՝ առանց մի տեղի...
Չը կային աստղեր, ժամանակ, աշխարհ,
Վոչ փոփոխություն, վոչ բարի, վոչ չար.
Խորի՜ն լըռություն... և կանգնած ոդում
Վոչ մահվան նշույլ, վոչ կյանք էր նկատվում.
Այն անդորրության մի ծով էր կանգուն,
Անշարժ ու համըր, խավար ու անհուն...

VIII

Բայց ահա մի շող ցոլաց իմ գըլխում.
Այն մի գեղեցիկ թըռչունի ձայն էր.
Մերթ լըռում էր նա, մերթ նորից յերգում.
Այնպես քընքույշ յերգ լըսած չեյի դեռ։
Մինչ լըսում էյի կախարդված հոգով,
Լըցվեցին աչքերըս ուրախ արցունքով
Յեվ յես մի առ ժամ չեյի նըկատում
Թըշվառությունըս այն խավար բանտում։
Բայց շուտով միտքըս սովոր ընթացքով
Յերբ վերադարձավ, իրական աչքով
Շուրջըս, վերևըս յես տեսա կըրկին
Պատերն, ածորքը, նըկուղը մըթին,
Առաջվա նըման ուր վոր հազիվ հազ
Արևի շողքը ընկնում էր նըվազ։
Բայց և այն ճեղքում, վոր ընկնում էր նա,
Ավելի հանգիստ քան ծառի վըրա,
Նըստած էր թըռչնակն ուրախ ու անվույթ,
Մի սիրո՜ւն թըռչնակ, թևերը կապույտ։
Հազար զանազան բաների վըրա
Գեղգեղում էր նա,
Ու ինձ էր ասում կարծես բոլորը։
Դեռ վոչ մի անգամ մինչև այն որը
Նըրա նըմանը տեսած չեյի յես,
Վոչ էլ կը տեսնեմ։ Նա էլ էր ասես
Ինձ նըման մենակ, ընկերից զըրկված,

Սակայն ինձ նըման հույսը չէր հատած:
Նըրա համար էր նա յեկել մենակ,
Վոր մըխիթարի ինձ վերջ ժամանակ.
Ու ծըլվըլալով մութ բանտիս ծայրից՝
Լըցնում էր կյանքով իմ սիրտը նորից:
Բայց ո՞վ էր ինքը, իմ հյուրը յերգիչ.
Արդյոք յերկինքի պատառ բնակի՞չ,
Թե՞ իր վանդակից հենց նոր ազատվել,
Յեկել էր իմիս վերևը նըստել...
Չը գիտեմ, բայց յես՝ քաշած գերության—
Չեյի ցանկալ քեզ, սիրունիկ թըռչո՛ւն:
Սակայն թեև թըռչնի կերպ առած
Մի այցելու յեր դըրախտից թըռած...
Այս միտքը այնժամ, թող ների ինձ տեր,
Պատճառեց անչափ խինդ ու արցունքներ:
Մըտածում եյի, թե նա իմ կարոտ
Յեղբոր հոգին էր, յեկել էր ինձ մոտ...
Բայց հանկարծ թըռավ և յես իմացա,
Վոր մի հոգեղեն արարած էր նա.
Մի՞թե կարող էր յեղբայրս թըռչել,
Ինձ կըրկին մենակ թողնել այն բանտում,
Ինչպես պատանում փաթաթած մեռել,
Ինչպես մի սև ամպ պայծառ կապույտում:

IX

Փոխվեց վիճակըս այն ժամանակից,
Պահապաններս դարձան կարեկից:
Չը գիտեմ ինչու մեղմացան նըրանք,
Վոր սովոր եյին տեսնել չարչարանք,—
Բայց այսպես յեղավ: Վոչ վոք իմ կըտրած
Շըղթան չը կապեց ու մընաց միշտ բաց:
Յեվ շըրջում եյի իմ բանտում ազատ
Վողջ յերկարությամբ, մի պատից մի պատ:
Բայց յերբ թըվում էր, անըզգույշ քայլով
Կոխեցի նըրանց հանգիստը տըխուր,
Դողդողում եյի սաստիկ հևալով
Ու սիրտըս ցավից ճըմլում էր ամուր:

X

Յես վոտնատեղեր փորեցի պատում.
Սակայն փախչելու չեյի աշխատում,

Ցես թողել էյի արդեն բոլորին,
Վորոնք աշխարքում ինձ սիրում էյին,
Ցեվ այնուհետև աշխարքն ինձ համար
Մի բանտ էր նույնպես, բայց մեծ ու անծայր:
Եվ վոչվոք չը կար այնտեղ ինձ մոտիկ.
Հայր, մայր, կամ յեղբայր, ընկեր կամ վորդիք...
Ցես ուզում էյի միայն բարձրանալ
Վանդակով փակած լուսամուտներին,
Այնտեղից հանդիստ, մի անգամ դարձյալ
Նայել հըրճվանքով բարձըր սարերին:

XI

Ցես տեսա նրանց. դարձյալ նույնն էյին
Ու չէյին փոխվել նըրանք ինձ նըման.
Կըրկյին դարևոր ձյունը գըլխներին,
Ներքև մեծ լիճը, կապտաջուր Ռոնան...
Ջրերը զըվարթ աղմըկում էյին
Մացառուտներում, ժայռերի միջին,
Արևում փայլում ճերմակ քաղաքը
Ու լըճում հանդարտ սահում նավակը,
Թեթև՛, ձյունափայլ առագաստը բաց:
Ապա այնտեղ ցած
Մի փոքրիկ կըղզի մենավոր, կանաչ
Ժըպտում էր, տես, իմ աչքի առաջ:
Բանտիս հատակից մի քիչ մեծ կը դար
Ու բուսել էյին վըրան յերեք ծառ:
Լեռնային հովը շընչում էր այնտեղ,
Ափերին վըճիտ ջըրերը ծըփում,
Զըմրուխտ դալարի միջում գունագեղ,
Բընքույշ, վառվռուն ծաղիկներ ծաղկում:
Բանտի պատի տակ ձըկան մի վըտառ
Լողում էր անչափ ուրախ ու կայտառ,
Թագավորում էր արծիվն վերևում,
Ու թափին ավելի ուժգին էր թըվում,
Ցերբվոր նա հանկարծ ուղղում էր դեպ ինձ:
Աչքերս արցունքով լըցվեցին նորից
Ու այնպե՛ս թախիծ տիրեց իմ սըրտին,
Ասես ցավեցի, վոր լուսամուտին
Ցեկա մոտեցա իմ շըղթան թողած:

Տապալվում իջա դարձյալ դեպի ցած
Ու մըռայլ բանտիս խավարը ահա
Ծանըր ճնշելով հոքեց ինձ վըրա:

XII

Ամիսներ, տարիք թե օրեր անցան,
Յես վոչ հաշվել եմ և վոչ իմացել.
Մութն եր իմ բանտը, տըխուր միշտական
Ու յերբեք պայծառ հույս չեմ ունեցել:
Յեկան վերջապես ինձ ազատելու.
Չեյի հասկանում, ո՛ւր եմ գընալու,
Վոչ էլ հարցրի, ե՞ր են ազատում.
Մին եր ինձ համար, ազատ թե բանտում.
Ու այն ժամանակ իմ բանտի միջին
Յերբ վոր ձըգեցին կապանքըս վերջին,
Այնպես եր թըվում, թե նըրանք յեկել,
Ուզում եյին ինձ բաժանել, զըրկել
Իմ յերկըրորդ տանից: Յես մինչև անգամ
Այնտեղ սարդերին դարձա բարեկամ.
Ու միշտ ուշադիր հետեւում եյի,
Յերբ վոր լըրջորեն նրանք ճանճերի
Իրենց արհեստով եյին ըզբաղվում.
Կամ դիտում եյի, յերբ մուկն եր խաղում
Լուսնի լուսի տակ: Ինչո՞ւ նըրանց պես
Ինձ էլ մեր տանը չըզգայի և յես...
Մենք՝ բընակիչներ ամենքըս մի տան,
Ու յես նրանց մեջ մի պետ անսահման,
Կյանքի ու մահվան վըճիռն իմ ձեռքում.
Բայց այնպե՛ս խաղաղ եյինք բընակվում...
Նույն իսկ շըղթայիս դարձա յես ընկեր...
Այսպես մընալով օրեր, տարիներ,
Սովորում ե մարդ իրեն վիճակին,
Ու... յես ցավեցի իմ բանտի շեմքին:

# ՀԱՅԱՎԱԹԻ ՅԵՐԳԸ

(ՀԱՏՎԱԾ)

## Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

*Յեթե հարցնեք—վո՞րտեղից են*
*Էս լեգենդներն ու զրույցներն*
*Անտառների անուշ բույրով,*
*Հովիտների շաղ ու մուժով,*
*Վիգվամների վոլոր ծուխով,*
*Մեծ գետերի սահանքներով,*
*Նրանց անվերջ վորոտումով*
*Ու վայրենի արձագանքով,*
*Ինչպես ամպրոպ սարերի մեջ,—*
*Յես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ:*

*Անտառներից, հովիտներից,*
*Նո՛րդլանդիայի մեծ լճերից,*
*Ոջիբվայի խոր աշխարհից,*
*Դակոտների վայրի յերկրից,*
*Ճահիճներից, ճախիններից,*
*Ուր շուհ-շուհ-գան՝ արագիլը*
*Կեր է փնտռում ճըլկուտներում,*
*Կրկնում եմ յես էս զրույցներն*
*Անուշ յերգիչ ու յերաժիշտ*
*Նավադահի պարզ յերգերով:*

*Յեթե հարցնեք—ո՞ւր է գտել*
*Էս յերգերը Նավադահան,*
*Էսքան վայրի ու քըմահաճ.*
*Յես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ:*
*—Թռչունների բների մեջ,*

Ձորչունների խոռոչներում,
Բլրոնների արոտներում,
Արծիվների բնավայրում.

Ճահիճներում, ճախիններում,
Մելամաղձիկ թախանելով,
Յերգում եյին նրա համար
Մանդը՝ բադը, սադը՝ վավան,
Յեվ չուհ-չուհ-դան՝ արադիլը,
Յեվ կըռացարը՝ չիթովեյկը,
Վայրի հավը՝ մուշկողադան:

Յեթե դարձյալ հարցմունք անեք,—
Ո՞վ է հայս Նավլաղահան,
Պատմի դու մեզ նրա մասին.
Ձեր հարցմունքին ես խոսքերով
Կըտամ խեկույն յես պատասխան:
— Թավլաղենթի պերճ հովիտում,
Ծոխ մարդերի լըռության մեջ,
Արծաթափայլ ջըրերի մոտ
Ապրում եր վաղ Նավլաղահան:

Հընդեկ գյուղի չուրջը բոլոր
Փըռվում եյին հանդեր, արտեր,
Ու կանգնած եր հին ծըմակը,
Հին ծըմակը սոճիների,
Ամրան՝ կանաչ, սոսավելով,
Ձմրան՝ փայլուն ճերմակ ձյունով,
Լիքը յերգով, հառաչանքով:

Հովիտն ի վար հոսում եյին
Են ջըրերը արծաթափայլ,
Գարնանը՝ խիտ յեղեգնուտով,
Ամրանն՝ յերկար բարդու շարքով
Աշնանը՝ դորշ մեգի տակին,
Ձըմրան՝ սպիտակ ափերի մեջ:
Ու ապրում եր յերգիչն ենտեղ,
Թավլաղենթի պերճ հովիտում,
Ծոխ մարդերի լռության մեջ:

Ենթեղ յերգեց նա ես յերգը,
Անուշ յերգը Հայաստանի,
Թե ինչպես նա ծնվեց, ապրեց,
Ու ինչպես եր ճգնում, տանջվում,
Բարոզում եր ու համոզում,
Վոր յերջանիկ դարձնի մարդկին,
Վոր բարձրացնի ժողովրդին։

Ով սիրում է բնությունը
Ու մարգերում լույսն արևի,
Սիրում ստվերն անտառների,
Սիրում հովը տերևներում,
Ցող անձրևը, և փոթորիկ,
Ցող սահանքը մեծ գետերի,
Ցող կայծակը սարերի մեջ,
Թավուտներում սոճիների,
Նա կը լսի ես զրույցը,
Զքնաղ յերգը Հայաստանի։

Ով սիրում է ժողովրդի
Լեգենդներն ու բալլադները,
Վորոնք, ինչպես հեռու ձայներ,
Կանչում են, վոր ականջ դնենք,
Ու խոսում են պա՛րզ, մանկաբար,
Վոր հազիվ է մարդ վորոշում—
Ցե՞րգ է արդյոք թե պատմություն,
Ականջ կանի նա հաճույքով
Ես հնդկական հին զրույցին,
Խաղաղ յերգին Հայաստանի։

Նա, ում սիրտը թարմ է ու պարզ,
Հավատում է աստծուն, բնության,
Հավատում է, վոր հավիտյան
Մարդկային է սիրտը մարդու.
Վոր՝ վայրենի լանջի տակ էլ
Մի անմեկին կյանքի համար
Կան բաղձանքներ ու ձգտումներ.
Վոր՝ խավարում խարխափելիս,
Թույլ ձեռքերը անօգնական,
Հանդիպելով աստծո աջին՝

Կյանք են առնում ու զորանում,—
Նա կը կարդա ես գըրույցը,
Ես պարզ յերգը Հայավաթի։

Ով յերբեմն՝ իր շըրջակա
Լուռ հանդերում թափառելիս՝
Մի մոռացված շիրմի առջև
Կանգ է առնում, միտք է անում
Նրա կիսեղծ գըրի վըրա,
Վոր գրված է պարզ, անարվեստ,
Սակայն վորի ամեն խոսքը
Լիքն է կյանքի, հանդերձյալի
Անվերջ հույսով ու թախիծով,—
Նա կը կանգնի ու կը կարդա
Խոր հնության արձանագիր
Ես հին յերգը Հայավաթի։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՉԻԲՈՒԽԸ

### I

Ու մեծ դաշտի լերանց վըրա,
Կարմիր ժայռի բարձունքներին,
Նա, հզորը, կյանքի տերը՝
Գիտչի-Մանիտոն իջնելով,
Կանգնեց շիտակ և ազգերին
Ու ցեղերին կանչեց ի մի։

Նրա վոտքի տեղից բըղխեց,
Հոսեց մի գետ անդունդն ի վար,
Առավոտյան շողերի մեջ
Շողշողալով ու ծոր տալով
Են Իշկուդա — աստղի նման։
Ու խոնարհեց Վոգին յերկիր,
Աջով մարգում նրա համար
Գծեց վոլոր մի ճանապարհ,
— Գնա՛, ասավ, ես ընթացքով։

Ապա պոկեց իրեն ձեռքով
Քարահանքից մի կտոր քար,
Շինեց կարմիր չիբուխի գլուխ
Ու զարդարեց նկարներով։
Գետի ափից յեղեգն առավ

Իր մութ կանաչ անտառներով
Ու կոթ շինեց չիբխի համար.
Լըցրեց ուռու չոր կեղևով,
Կարմիր ուռու չոր կեղևով:
Շընչեց մոտիկ մեծ անտառին,
Ու ճյուղերը տըվավ իրար,
Կըրակ հանեց, վառեց չիբուխն,
Ու կանգնելով էն սարերին
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը
Ծըխեց իրեն գալյումետը,
Իբրև նըշան վողջ ազգերին:

Ու ծուխն յելավ կամաց-կամաց
Առավոտյան խաղաղ օդում,
Առաջ ինչպես մըթին մի գիծ,
Հետո կապույտ, խիտ գոլորշի,
Ապա ճերմակ ամպի նըման
Բարձրանալո՛վ, բարձրանալո՛վ,
Մինչև հասավ վեր յերկինքին,
Մինչև ցըրվեց վեր յերկինքում
Ու փաթաթեց շուրջն ամեն բան:

Թավասենթի դաշտավայրից,
Վայոմինգի հովիտներից,
Տուսկալուզի ծըմակներից,
Հեռո՛ւ, հեռո՛ւ Ժեռ սարերից,
Նորդլանդիայի լըճափերից
Ազգերն ամեն նըկատեցին,
Տեսան հեռվում բարձրանում է
Խաղաղության չիբխի ծուխը:

Ու ազգերի մարգարեներն
Ասին՝ տեսե՛ք, էն Պուկվանան—
Խաղաղության չիբխի ծուխն է,
Վոր թեքվում է ուռենու պես,
Շարժվում կանչող ձեռքի նման:
Մե՛ծ, հեռավոր էն նըշանով
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Կոչ է անում մարտիկներին
Վողջ ազգերի ու ցեղերի:

Գետերն ի վեր հովիտներով
Ցելա՛ն, յելա՛ն, հավաքվեցին
Մարտիկները վողջ ազգերի·
Դելավարներն ու մոհոկները,
Ջոտկոսներն ու կամանչները,
Շոշոններն ու սեվոտները,
Ոմոհոններն ու պոները,
Մանդաններն ու դակոտները,
Հուրոններն ու ոջիբվեները:
Ճամբա յելան վողջ միասին
Խաղաղության չիբուխի ծըխի՝
Գալյումետի ծըխի վըրա
Դեպի սարերն են մեծ դաշտի,
Մեծ քարհանքի ժայռը Կարմիր:

Ու զենքերով, զըրահներով,
Նախշուն, ինչպես աշնան տերև,
Ինչպես յերկինք առավոտյան,
Ենտեղ, դաշտում, նրանք կանգնած
Նայում են խեթ իրար վրա,
Աչքերի մեջ—ատելություն,
Սըրտերի մեջ—դարևոր քեն,
Արյան ծարավ պապենական:

Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Արարիչը մարդկան ազգի,
Նայեց նրանց կարեկցաբար:
Իր հայրական սիրով նայեց
Նրանց կըռվին ու պայքարին,
Ինչպես իրեն անխելք ու խակ
Մանուկների կըռվի վըրա:

Ու տարածեց իր աջ ձեռքը—
Մեղմի նրանց բընույթը կոշտ,
Մեղմի տապը, ծարավն անհագ
Իրեն աջի հովանու տակ:
Խոսեց խրոխտ ու վեհ ձայնով,
Են ջըրերի աղմուկի պես,
Վոր թնդում են խոր անդընդում,

Խրատելով, նախատելով
Եսպես խոսեց ազգերի հետ.

—Ո՛վ իմ որդիք, իմ հե՛գ որդիք,
Ականջ դրեք իմաստության,
Ականջ դրեք խրատներին
Ձեր արարիչ, ձեր ստեղծող
Հզոր Հոգու շրթունքներից:
Տվել յես ձեզ ամեն բարիք.
Յերկիր տվել՝ վարի համար,
Գետեր տվել՝ ձուկ բռնելու,
Տվել ձեզ արջ, տվել բիզոն,
Տվել յեղնիկ ու յեղջերու,
Տվել բոկյուռ, տվել ջրշուն
Ու ճահիճներ լի հավքերով.
Ինչո՞ւ գոհ չեք դուք տակավին,
Ինչո՞ւ յեք դուք վորսում իրար:

Հոգնել եմ յես ձեր վեճերից,
Ձեր արյունոտ կռիվներից,
Հոգնել եմ ձեր՝ սպանության
Ու վրեժի աղոթքներից:
Ձեր ույժն ամբողջ սիրո մեջ ե,
Ձեր կորուստը՝ կռիվների.
Արդ ապրեցեք այսուհետև
Խաղաղ, սիրով, յեղբոր նման:

—Յես կուղարկեմ մի մարգարե,
Փրկիչ համայն ձեր ազգերի:
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,
Կառաջնորդի, կը քարոզի:
Յեթե լսեք նրա խոսքին,
Կը բազմանաք, կերջանկանաք,
Իսկ թե թողնեք անուշադիր,—
Կը նվաղեք ու կը կորչեք:

—Մըտեք այժմ ես գետի մեջ
Ու լվացեք ձեր դեմքերից
Կռվի վայրի նըկարները
Ու արյունը ձեր մատների:

Թաղեք հողում ձեր զենքերը,
Առե՛ք կարմիր քարը հանքից
Ու շինեցեք կարմիր քարից
Խաղաղության չիբուխի գլուխ·
Ցեղեղն առեք յեղեգնուտից,
Զարդարեցեք փետուրներով,
Ու ծխեցեք ի միասին
Խաղաղության չիբուխները,
Ու ապրեցեք այսուհետև
Խաղաղ, սիրով, յեղբոր նըման.

Ու ձըգեցին մարտիկները
Շապիկները այծեմենի,
Զըրահները ռազմական,
Մըտան գետը արագահոս,
Ու լըվացին յերեսներից
Կավի վայրի զարդերն ամեն:
Տիրոջ վոտքի տեղից հոսում,
Ջուրը վերից գալիս եր ջինջ,
Իսկ նրանցից ներքև պղտոր,
Գնում եր մութն, ապականված,
Արյունախառն ու կարմրագույն:

Ու դուրս յելան մարտիկները
Գետից հստակ ու մաքրված,
Ու թաղեցին գետի ափին
Իրենց զենքերը ռազմական:
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Արարիչը ու Մեծ Վոգին
Են ժամանակ սիրով ժպտաց
Անողնական զավակներին:

Ու մարտիկներն, ամենքը լուռ,
Առան քարը մեծ քարհանքից,
Յեվ հըղկեցին ու շինեցին
Չիբուխները խաղաղության:
Ցեղեղն առան գետի ափից,
Զարդարեցին փետուրներով,
Ապա դարձավ ամեն մեկը
Իրեն տունը, հայրենիքը,

Մինչդեռ Վոդին, կյանքի տերը,
Վերանալով ամպերի մեջ,
Սուզվեց, յերկնի րաց դռներում,
Խաղաղության չիրխի ծրխի՝
Գուկվանայի ամպով պատած,
Անհետացավ նրանց աչքից։

# ՌՈՒՍԱԿԱՆ БЫЛИНА-ՆԵՐԻՑ

# ՄՈՒՌՈՄՑԻ ԻԼԻԱՆ ԿՌՎՈՒՄ Է ՎԼԱԴԻՄԻՐ ԻՇԽԱՆԻ ՀԵՏ

### ԸՍՏ ԱՎԵՆԱՐԻՈՒՍԻ

Գընում է ծերուկն արձակ դաշտերով,
Գընում է ծերուկն յերկար ժամանակ:
Մաշվել են հագի շորերը նախշուն,
Հատել է արդեն իր գանձը վոսկի,
Ու Իլյան ինքնին խոսում է էսպես.
— Յեղել եմ հիմի ամբողջ Լիտվայում,
Յեղել եմ հիմի վողջ որդաներում,
Մենակ Կիևում չեմ յեղել վաղուց:
Կիև գընամ մի, գընամ մի տեսնեմ
Ինչ է կատարվում էնտեղ — Կիևում:
Հասնում է Իլյան Կիև քաղաքը մայր.
Քեֆ-խնջույք ունի իշխան Վլադիմիրը.
Սեղան են բազմած հըզոր հըսկաներ
Ու պայազատներ մինչև յերեսուն:
Մըտնում է ծերուկն ապարանքը ներս,
Կանգնում է, կենում սըրահի շեմքին,
Խաչ քաշում դեմքին, ինչպես որենքն է,
Վողջույն է տալիս ընդունված կարգով
Արև իշխանին ու տիկնոջն էլ ջոկ:
— Ապրած կենաս, տեր, իշխան Վլադիմիր,
Հաց ու ջուր կը տա՞ս յեկվոր քաջերին:
Քեզ ուղիղ սըրտով յեկել եմ ծառա.
Չեմ վախում դաշտում հազար Թաթարից,
Չեմ վախում, թեկուզ մյուս հազարն էլ գա,
Չեմ փախչիլ, թող գա յերրորդ հազարն էլ,
Ու ոգնության էլ հարկավոր չեն ինձ

Յերեսուն ազնվըն իրենց ճուտերով։
Ով եր — չիմացավ իշխանը հյուրին։
— Ուսկի՞ց ես, ո՛վ քաջ, ի՞նչ ազգ ու տակից.
Քեզ ի՞նչ անունով կանչենք, մեծարենք,
Կամ ի՞նչ հայրական կոչումով հարգենք։
— Նիկլոսան եմ յես Զալեշանին։
— Ո՛վ, դու Նիկլոս Զալեշանին,
Յե՛կ, նստի, մեզ հետ հաց անուշ արա,
Մի տեղ կա դատարկ ենտեղ, ներքևում,
Սեղանի ծերին, բազմոցի վերջին.
Բռնած են ուրիշ տեղերը բոլոր։
Ու, կռներն ընկած, մարդիկն իշխանի
Տարան Իլխային ծերը ներքևի,
Նստեցրին ենտեղ—ներքևի ծերին։
Ու եսպես խոսեց Իլխան ներքևից.
— Ով դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Վայել չի ուժին, վոչ աստիճանին
Տեղն ու պատիվը, վոր տալիս ես դու.
Ինքըդ նստում ես ազնվների հետ,
Ինձ տեղ ես տալի ճուտերի կողքի՞ն։
Ասավ, կամեցավ տեղը դըրըստի—
Զարդոտեց շուրջը կաղնի բազմոցներ,
Վոլորեց բերերն ամբողջ յերկաթի,
Սեղմեց հյուրերին անկյունը վերին։
Դուր չեկավ ես բանն Արև իշխանին.
Տեղից առույգ յելավ նա վոտի,
Մըթնեց, աշունքվա գիշերի նըման,
Մռընչաց, ինչպես կատաղի գազան։
— Ի՛նչպես, Նիկլոս Զալեշանին,
Խառնե՛ս տեղերը դու իմ սահմանա՛ծ,
Ծռես բերերը համայն յերկաթի՛...
Մեն մի հսկայի արանքումը յես
Բերեր եմ զարկել ամուր յերկաթի,
Վոր խընջույքներին, վորքան էլ խըմեն,
Վորքան էլ հարբեն, չը դիպչեն իրար։
Հե՛յ դուք, մեծազոր ըռուս հսկաներ,
Լավա՞ծ է վոր ձեզ, եդ հսկաներիդ
Ազնվներ կանչի մինը ու ճուտեր։
Դուրս յեկեք ձեզնից յերեք լավերըդ,
Դո՛ւրս շըպըրտեցեք—սըրահից փողոց։

Դուրս յեկան ընտիր յերեք հըսկաներ,
Սկսան Նիկոլին քաշել, քաշքըշել,
Սկսան Նիկոլին հըրել, հրմըշտկել.
Կանգնած է Նիկոլն ու ժաժ չի գալի,
Չի շարժվում նույնիսկ գըլխարկը գըլխին:
— Թե կուզես, իշխան, դու զըվարճանաս,
Թող գան սըրանց հետ յերեք հըսկա էլ:
Դուրս յեկան ուրիշ յերեք հըսկա էլ,
Սկսան Նիկոլին քաշել, քաշքըշել,
Սկսան Նիկոլին հըրել, հրմըշտկել.
Կանգնած է Նիկոլն ու ժաժ չի գալի,
Չի շարժվում նույնիսկ գըլխարկը գըլխին:
— Թե կուզես, իշխան, դու զըվարճանաս,
Թող դուրս գան գոնե յերեք հըսկա էլ:
Դուրս յեկան յերրորդ յերեք հըսկան էլ,
Բան չը կարացին անեն Նիկոլին:
Ու եսպես խոսեց Նիկոլը այնժամ.
— Իշխան Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Ախորժակ ունիս անշուշտ խընդալու.
Համեցեք, հիմի մըտիկ արա ինձ
Ու ախորժակըդ կանցնի խընդալու:
Ու Նիկոլը ինքն սկսավ խընդալ,
Սկըսավ սեղմել, գարկել, տըրորել
Ուժեղ ու հզոր են հըսկաներին:
Սողում են սրահում հըսկաներն ամեն,
Չի կարում կանգնի վոչ մինը վոտի:
Դուրս յեկավ Նիկոլն ապա սրահից,
Դըռները գարկեց՝ շըջանակն ընկավ,
Դարպասը գարկեց՝ սյուները թըռան,
Ջարդ-փշուր յեղան ճաղերը քաշած:
Իշխանը մըտավ յետևը փեշի,
Սամույր մուշտակը քաշեց իր գըլխին.
— Վա՜յ, կամա՜ց, տղե՛ք, ժաժ չըգաք տեղից,
Չը լըսի Նիկոլ Զաոլեշանին,
Թե չէ յետ կը գա ջարդ-փշուր կանի,
Վոչ մեծ կը թողնի, վոչ փոքրը մեզնից,
Ժառանգ չի թողնիլ ինձ՝ Վլադիմիրիս...
Դուրս յեկավ Իլյան դարպասն ընդարձակ
Ու լարեց ճայթուն իր աղեղը պիլ,
Սուր, մըխած նետը դըրավ աղեղում,

Եսպես ինքն իրեն խոսեց նետի հետ.
— Սլացի՛ր, իմ նետ, տանիքը վոսկի,
Վեր բեր վոսկեզոծ գըմբեթները ցա՛ծ:
Ընկան վոսկեզոծ գըմբեթները ցած,
Ու կանչեց Իլիան կոկորդովը մին.
— Հե՛յ, դուք կաբակի մերկ ու տըկլորներ,
Հե՛յ, կամավորներ Արև իշխանի,
Վազեցե՛ք, յեկե՛ք դարպասն իշխանի,
Առեք վոսկեզոծ գըմբեթները թանգ,
Կըրեցե՛ք, տարե՛ք կաբակն արքունի,
Արագ խըմեցեք ենտեղ կուշտ ու պինդ:
Վազեցին, յեկան տըկլորներն ամեն,
Կամավորները Արև իշխանի,
Տարան, կըրեցին, գըմբեթներն վոսկի.
— Ո՛վ դու մեր պաշտպան, մեր ծնող, մեր հայր...
Ու Իլիայի հետ յեկան, գընացին,
Խըմեցին բոլոր գըմբեթներն վոսկի,
Խըմեցին մինչև վերջինը միասին:
Ու յերկյուղ ընկավ սիրտները եստեղ.
Ի՞նչ կանի մեզ հետ իշխանը հիմի,
Ի՞նչ պատիժ կը տա, ով գիտի, հիմի,
Խըմեցինք նըրա գըմբեթները վողջ:
Ու Իլիան եսպես խոսեց նըրանց հետ.
— Խըմեք, տըկլորներս, դուք մի՛ վախենաք,
Յես եմ վաղվանից իշխան Կիևում,
Իսկ դուք ամենից մեծ պետի լինեք:
Անցավ յերկյուղը, սկըսան խըմել,
Տերից սկըսան կյանք խընդրել քաջին:
Իսկ իշխանական խընջույքի վըրա
Գընաց համբավը Արև իշխանին.
— Ո՛վ Արև իշխան, մայր Կիևի տեր,
Ձեր ասիլ՝ Նիկիտա Զալեշանին
Բու ես հարկերից, վոսկի հարկերից,
Ջըգեց վոսկեզոծ գըմբեթները ցած,
Կանչեց կաբակի վողջ տըկլորներին,
Խըմեց նըրանց հետ գըմբեթներն վոսկի:
Նըստած եր ենտեղ խընջույքի միջին
Ջահիլ Դոբրինիա Նիկիտիչ հըսկան,
Եսպես ասավ նա Արև իշխանին.

—Իշխան Վլադիմիր, մեր կարմիր Արև,
Նիկիտան չի նա Զալեշանին,
Այլ իմ խաչախպերն—Իլիան Մուռոմից:
Ասավ՝ իշխանը մտքի տունն ընկավ,
Իր հետ անվանի պատաներն ամեն
Ցավ հընկանները ուժեղ ու հըզոր,
Թե ինչպես անի—հաշտվի ծերի հետ:
—Միտք արեք, տղեք, միտք արեք մի լավ,
Միտք արեք, տղեք, խորը միտք արեք,
Խելք խելքի տվեք՝ մի հընար գըտեք,
Ո՞ւմ ղըրկենք արդյոք ծերի յետևից,
Վոր կանչի նըրան հարդինքի սեղան:
Ցես ինքս գընամ—չեմ ուզում գընամ,
Ապրակսին ղըրկեմ—վայել չի նըրան:
Ամենքը եստեղ մըտքի մեջ ընկան.
—Ո՞ւմ ղըրկենք արդյոք ծերի յետևից...
Ցե՛կ ղըրկենք գընա Ջահիլ Դոբրինիան,
Զե վոր Իլիայի խաչախպերն ե նա.
Նըրա՛ն կը լըսի Իլիան՝ թե լըսի:
Սեղանը անցավ Վլադիմիր իշխանն,
Ցեկավ ու կանգնեց Դոբրինիայի դեմ
Ու եսպես խոսեց Դոբրինիայի հետ.
—Արի՛, յե՛լ, կտրիճ, Ջահիլ Դոբրինիա,
Ծերուկ Մուռոմցու մոտ գընա մեղնից,
Ցերկիրը պագիր, խոնարհ վողջունիր,
Խոնարհիր մինչև հատակն պղյուսի,
Խոնարհիր մինչև են գետինը ցած
Ու եսպես ասա նըրան մեր կողմից.
—Ուղարկել ե ինձ Վլադիմիր իշխանն
Ու մայր տիկինը՝ Ապրակսիան իր հետ,
Խընդրում են, վոր գաս ուրախ հարդինքի:
Նա չի ճանաչել քեզ, կտրիճ քաջիդ,
Նըստեցրել ե ցած, ներքևի ծերին:
Խընդրում ե հիմի, լիասիրտ խընդրում,
Խընդրում լիասիրտ ու մեծ ցընծությամբ.
Խընդրում ե մոռնաս ինչ անց ե կացել:
Գընում ե ահա Ջահիլ Դոբրինիան,
Գընում ե ճամփով ու միտք ե անում.
—Արդյոք վաղաժամ մահի՞ս չեմ գընում...
Բայց թե չը լըսեմ Արև իշխանին

Փորձանք է գալու անշուշտ նըրանից:
Ու գընում է նա կարակն արքունի,
Մըտնում է ահա կարակն արքունի.
Նըստած է էնտեղ ծերուկ Մուռոմցին,
Խըմում, քեֆ անում ըղկլորների հետ:
Ու մըտք է անում Ջահել Դոբրինյան,
Վո՞ր կողմից արդյոք նըրան մոտենա.
—Առջևից գընամ՝ դուր չը գամ դուցե.
Լավ է թիկունքի կողմից մոտենամ:
Յեկավ, մոտեցավ թիկունքի կողմից,
Բըռնեց Իլյայի ուժեղ ուսերից
Ու էսպես մեղմով խոսեց նըրա հետ.
—Ո՛վ իմ խաչախպեր, իմ ախպերացու,
Ո՛վ դու իմ ախպեր, ծերուկ Մուռոմցի,
Քեզ պահի առժամ ձեռներըդ ճերմակ,
Բըռնի ու գըսպի սիրտըդ կըրակոտ.
Չե՞ որ բաներին չեն կապում, կախում.
Մենք էլ հո մեր մեջ ուխտ ունենք արած,
Ուխտ ունենք արած մեծ ու ահավոր,
Վոր փոքր ախպերը լըսի իր մեծին,
Մեծն էլ իր փոքրին ականջ անի միշտ,
Ու էսպես կանգնենք մեկ մեկի համար:
Դեսպան է ղըրկել քեզ մոտ ինձ էսօր
Վըլադիմիր իշխանն իրեն տիկնոջ հետ,
Քեզ, հըզոր քաջիդ. նա չի ճանաչել,
Նըստեցրել է ցած, ներքևի ծերին:
Խընդրում է հիմի նա քեզ ցընծությամբ,
Խընդրում լիասիրտ մեծ խըրախճանի,
Թողնես, ասում է, ինչ անց է կացել:
Յետ է շուռ գալիս Իլեյկոն էստեղ.
—Հե՛յ դու, Դոբրինյա Ջահել Նիկիտիչ,
Քու բախտը բանեց՝ յետևից յեկար,
Թե չէ առջևից գայիր, Դոբրի՛նյա,
Հող ու մոխիրըդ քամուն պիտ տայի:
Հիմի, ախպերըս, ձեռ չեմ տալի քեզ,
Կարգն ու օրենքը անցնել չի լինիլ:
Յետ դարձի, ասա Արև իշխանին,
Թող վոր ինձ համար, ի՛նձ, քաջիս համար
Արձակի սատիկ, սատիկ հըրաման
Ամբողջ Կիևին, էս մայր քաղաքին

Ցել Չերնիգովլին նույնպես սըրա հետ,
Որ արքունական կարակները վողջ
Բացվեն յերեք որ ու յերեք գիշեր,
Ժողովուրդն ամեն գա արաղ խըմի,
Ով չի կամենալ վոր արաղ խըմի,
Թող նա գարեջուր խըմի հարբեցնող,
Ով վոր չի ուզիլ գարեջուր խըմի,
Թող նա մեղրաջուր խըմի քաղցրահամ,
Որ վողջ խմանան՝ Կիև է մըտել
Մուռոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ:
Ինձ համար էլ թող, ես քաջիս համար,
Սեղան բաց անի ճոխ մեծարանքի.
Իսկ թե չի անիլ ինչ ասում եմ յես,
Կիևում կիշխի մինչև լուս միայն:
Ու արագ–արագ վազեց Դոբրինիան,
Վազեց Վլադիմիր անուշ իշխանին,
Պատմեց Իլիայի պատվերը նրան:
Հենց լըսեց պատվերն իշխան Վլադիմիրը,
Իսկույն, անհապաղ սաստիկ ու սաստիկ
Գըրեց բովանդակ Կիև քաղաքին,
Այլև Չերնիգով հանեց հըրաման,
Թե վողջ յերեք որ ու յերեք գիշեր
Բաց պետք է լինի կարակն արքունի,
Գա, արաղ խըմի ժողովուրդն ամեն,
Խըմի, քեֆ անի անվարձ, անվըճար,
Որ վողջ խմանան Կիև է մըտել
Մուռոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ:
Ու ինքը բացեց հարգինքի սեղան,
Կանչեց, հավաքեց իշխան ու բոյար,
Ըռուսաց բոլոր մեծ հըսկաներին,
Այլև քաջարի կանանց դյուցազուն:
Բայց մարդ չի դընում կարակն արքունի,
Ամենքն իշխանի պալատն են վազում,
Ոչ կեր ու խումի, վոչ վոսկու համար,
Վազում են տեսնեն անվեհեր քաջին,
Տեսնեն Մուռոմցի են ծեր Իլիային:
Հավաքվում են վողջ դարպասն իշխանի
Մըտնում են կամաց ապարանքը ներս:
Ու ծեր Մուռոմցին գալիս է ահա,
Գալիս՝ կաքակլի տըկլորների հետ,

Գալիս է, մըտնում սըրահը պայծառ,
Խաչ հանում դեմքին, ինչպես օրենքն է,
Վողջույն է տալիս ընդունված կարգով,
Ցերկըրպագում է չորս կողմը խոնարհ,
Արև իշխանին ու տիկնոջն էլ ջոկ։
  Վերկացավ իսկույն իշխանը առույգ,
Առավ Իլիայի ճերմակ ձեռներից,
Համբուրեց նըրա չըրթունքը շաքար,
Ապա թե՝ էսպես խոսեց չողոմքոր։
  — Ով դու ծերունի, Իլիա Մուռոմցի,
Ցած յեղավ թեպետ քու տեղն ամենից,
Այժըմ ամենից վերև կը լինի։
Հե՛յ, դուք ծառաներ իմ հավատարիմ,
Տարեք ծերունուն բա՛րձըր ամենից։
  Բայց նա չը նըստեց ամենից վերև,
Գընաց ու նըստեց մեջ տեղն ամենի,
Հետը նստեցրեց մերկ տըկլորներին
Ու էսպես դարձավ Արև իշխանին.
  — Ո՛վ դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Լավ ես իմացել՝ ում դըրկես ինձ մոտ.
Չըլներ Դոբրինիան՝ իմ ախպերացուն,
Չեյի լինելու էստեղ վոչվոքի,
Ու մըտքումս արդեն դըրել էյի յես,
Լարել ես ճայթուն իմ աղեղը գիլ,
Արձակել դեպի սըրտըդ շեղ,
Սպանել և քեզ, իշխան Վլադիմիր,
Ցել քու տիկնոջը՝ քու Ապրակսիային։
  Բայց ես անդամը աստված քեզ ների
Քու էդ հանցանքը, էդ հանցանքը մեծ։
  Էստեղ անուշներ բերին հյուրերին,
Քաղցըր մեղրաջուր խըմիչքներ բերին,
Բերին ամենին դըրին մի մի թաս
Ու էսպես խոսեց Իլիան իշխանին.
  — Ա՛յ դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Սըրանո՞վ ես դու պատվում հյուրերիս,
Սըրանո՞վ ես դու հարգանք ցույց տալի.
Ես տըկլորներին միայն մի մի թա՛ս...
  Դուր չեկավ էս խոսքն Արև իշխանին,
Էսպես ծերունուն տըվավ պատասխան.
  — Ամենքի համար խոր նըկուղներում

Արագ ունեմ յես ինչքան կամենան.
Մարդը մի տակառ քառասուն չափանոց:
Թե հերիք չանի՝ ինչ վոր կա եստեղ,
Թող իջնեն իրենք նըկուղներն իմ խոր:
— Ա՛յ դու Վլադիմիր, իշխան Կիևի,
Եդպե՞ս են պատվում քեզ մոտ հյուրերին,
Եդպե՞ս են քեզ մոտ հարգում քաջերին,
Վոր իրենք գըտնեն ուտեստ ու խըմի՛չք...
Տեսնում եմ տանտերն յես եմ լինելու:
Ասավ ծերունին ու վոտքի յելավ,
Ել հարցմունք չարավ նըկուղի ճամբեն,
Ել նըկուղների բանալիք չուզեց.
Թափ իջավ դեպի նըկուղները խոր,
Դըռները արավ վողջ կըրընկահան,
Պոկեց կողպեքներն առանց բանալի,
Ներս մըտավ ինքը նըկուղներն են խոր:
Առած մի տակառն ես մի կըռնատակ
Ու մյուս տակառը մեկել կըռնատակ,
Յերրորդը վոտով գըլորում ե դուրս.
Ու դուրս գըլորեց դարպասն իշխանի,
Գոռաց ու կանչեց կոկորդովը մին.
— Հե՛յ դուք կարակլի մերկ ու տըկլորներ,
Դուրս յեկեք եստեղ—դարպասն իշխանի,
Յեկե՛ք, ամենքիդ արաղ խըմեցնեմ:
Ու իջավ կըրկին նըկուղները ցած:
Չը տարավ իշխանն ու Թունդ յելավ խիստ,
Վորոտաց ուժգին իր հընչուն ձենով.
— Հե՛յ հավատարիմ դուք իմ ծառաներ,
Շո՛ւտ, յեկե՛ք, հասե՛ք արագ ու արագ,
Արագ ու արագ, ճեպով–հապճեպով,
Վեր դըրեք քաջին խորունկ նըկուղում,
Շուրջը քաշեցեք յերկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցեք չորս դին,
Թաղեցեք դեղին ավազի տակին,
Սովամահ արեք խորունկ նըկուղում:
Վազեցին, հասան ծառաներն արագ,
Արագ ու արագ, ճեպով–հապճեպով,
Վեր դըրին ծերին խորունկ նըկուղում,
Շուրջը քաշեցին յերկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցին չորս դին,

Թաղեցին դեղին ավազի տակին:
Ու ցավ դառավ էս մյուս հըսկաներին,
Վեր կացան կլոր քեֆի սեղանից,
Ցելան, դուրս յեկան դարպասն ընդարձակ,
Իրենց ամեհի ձիանքը հեծան,
Դեն դեն ցըրվեցին էն արձակ դաշտում,
Էն լեն ու ազատ տարածության մեջ.
— Էլ չենք մընալ մենք էստեղ—կիևում,
Էլ չենք ծառայիլ Սըև իշխանին:
Ու էլ Վլադիմիր իշխանի մոտին
Հըսկա չը մընաց Կիև էն օրից:

## ՍՎՅԱՏԱԳՈՐԸ

Էն սեվ սարերում, էն սուրբ սարերում
Նըստած էր հըսկան—Սվյատագորը մեծ,
Չէր պահի ռուսաց հողը սրբազան,
Չէր կարում տանի գետինը նըրան:
Ուզեց մի անգամ սիրտը հըսկայի
Ժուռ գա մի ազատ լայնարձակ դաշտում.
Թամբեց նըժույգը իր հըսկայական,
Ժեռոտ կողմերով յելավ ճանապարհ:
Ծըխաց լանջի տակ սիրտը այրական,
Խաղս առավ ուժը յերակների մեջ,
Ու դուրս է հորդում սանձ խաղալով:
Նեղվում է սակայն հըսկան էն ուժից,
Նեղվում է ինչպես մի ծանըր բեռից,
Ուրիշն էլ չըկա, վոր հետը չափվի:
Ու ձգում է վեր մըկունդն իր պողպատ,
Ամպերից վերև—աչքից կորցընում,
Բըռնում է կըրկին ճերմակ ձեռներով.
Ու խոսում է նա ինքնիրեն. ասես.
— Յեթե գըտնեյի յես ուժը հողի—
Ող կամրացնեյի յերկնի կամարից,
Ողից յերկաթի շըղթա կանեյի,
Ցած կըքաշեյի յերկինքը ներքև,
Յերկիրն էլ տեղից յես շուռ կըտայի,
Վողջ կըխառնեյի—յերկինք ու յերկիր:
Եստեղ նըկատեց, վոր դուրան դաշտում
Գընում է հետի մի այլ աժդահա,
Ու էն աժդահի ուսովը ձըգած
Կա ճամփորդական մի փոքրիկ խուրջին:
Յեթե քըշում է նըժույգն ամեհի,
Բաց թողնում ձիու թափովը ամբողջ,

# ՍՎՅԱՏԱԳՈՐԸ

Էն սեպ սարերում, էն սուրբ սարերում
Նըստած էր հըսկան—Սվյատագորը մեծ,
Չէր պահի ուսաց հողը մըրթական,
Չէր կարում տանի գետինը նըրան:
Ուզեց մի անգամ սիրտը հըսկայի
Ժուռ գա մի ազատ լայնարձակ դաշտում.
Թամբեց նըժույգը իր հըսկայական,
Ժեռուտ կողմերով յելավ ճանապարհ:
Ծըխաց լանջի տակ սիրտը այրական,
Խաղ առավ ուժը յերակների մեջ,
Ու դուրս է հորդում ասես խաղալով:
Նեղվում է սակայն հըսկան էն ուժից,
Նեղվում է ինչպես մի ծանըր բեռից,
Ուրիշն էլ չըկա, վոր հետը չափվի:
Ու ձգում է վեր մըկունդն իր պողպատ,
Ամպերից վերև—աչքից կորցընում,
Բըռնում է կըրկին ճերմակ ձեռներով.
Ու խոսում է նա ինքնիրեն էսպես.
— Յեթե գըտնեյի յես ուժը հողի—
Օղ կամրացնեյի յերկնի կամարից,
Օղից յերկաթի շըղթա կանեյի,
Ցած կըքաշեյի յերկինքը ներքև,
Յերկիրն էլ տեղից յես շուռ կըտայի,
Վողջ կըխառնեյի—յերկինք ու յերկիր:
Էստեղ նկատեց, վոր դուրան դաշտում
Գըտնում է հետի մի այլ աժդահա,
Ու էն աժդահի ուսովը ձըգած
Կա ճամբորդական մի փոքրիկ խուրջին:
Յեթե քըշում է նըժույգն ամեհի,
Բայց թողնում ձիու թափովը ամբողջ,

Գնում է հեռու ճամբորդ աժդահան
Ու չի հասնում ձին իր հըսկայական.
Թե մեղմ է քըշում ու դանդաղ քայլքով,
Իր՝ տեղն է հըսկան, չի շարժվում ասես:
Ու գոռաց նորեն Սիլյաստագորը մեծ.
— Հե՛յ դու անցավոր, անծանոթ կտրիճ,
Կա՛ց, կանգնի տեղըդ մի առժամանակ:
Թե քըշում եմ յես նըժույգս ամեհի,
Բայց թողնում ձիու թափովն իր ամբողջ,
Գնում ես հեռու քո ճանապարհին
Ու չի հասնում ձին իմ հըսկայական.
Թե մեղմ եմ քըշում ու դանդաղ քայլքով,
Քո տեղն ես դու միշտ, չես շարժվում ասես:
Կանգնեց իր ճամբին անցվորն անծանոթ,
Վեր դըրավ գետնին ուժեղ ուսերից
Իր ճամբորդական խուրջինը փոքրիկ:
Ու մոտ քշեց ձին Սիլյաստագորը մեծ.
— Ասա՛ մի տեսնեմ, դու քաջ տղամարդ,
Ի՞նչ է քո բեռը խուրջինիդ միջին:
Ու ճամբորդն նորեն տըվավ պատասխան.
— Ով դու փառապանծ հըսկա դյուցազուն,
Փորձ փորձի մի առ իմ բեռը չընչին,
Վեր առ, թե կարաս, հըզոր ուսերիդ
Ու ենպես քըշի դաշտը լայնարձակ:
Պատասխան տըվավ անցորդն անծանոթ,
Ու ձիուց իջավ Սիլյաստագորը մեծ:
Առաջ մի մատով ուզեց վեր քաշի—
Չը շարժվեց տեղից խուրջինն են փո՛քրիկ:
Ապա մի ձեռքով բռնեց աժդահի—
Կըրկին չըշարժվեց խուրջինն իր տեղից:
Ապա թե հավաք ողջ ուժովն իր մեծ,
Դեմ տըվավ ճերմակ կուրծքը հըսկայի
Ուսի են չնչին, փոքրիկ խուրջինին,
Բռնեց ահավոր ուժովն իր ամբողջ—
Մինչև ծընկները գընաց հողի մեջ,
Արյունը կաթեց ճերմակ յերեսից,
Իր տեղն է սակայն խուրջինը կըրկին:
Ու նորեն խոսեց հըսկան զարմացած.
— Շատ եմ ման յեկել աշխարքումը յես—
Նորեն հըրաշքի դեռ չեմ հանդիպել,

Եսպես մի տեսիլք չեմ տեսել յերբեք,
Չեմ տեսել ես բեռն իմ ծնած որից․
Ուժ ունիմ եսքան—ուժըս չի սպառում․
Ի՞նչ կա քո փոքրիկ խուրջինի միջին,
Ցեղ ո՞վ ես ինքըդ, և կամ վո՞րտեղից,
Պատասխան տուր ինձ, անծանոթ հըսկա։
— Իմ փոքրիկ խուրջնում ուժն է մայր–հողի,
Իսկ յես Միկուլան Սելյանինովիչ։
Պատասխան տըվավ անծանոթ հըսկան։

# ՍԵՐԲԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ

## ԹԵ ԻՆՉ ՈՒՂԱՐԿԵՑ ԹՅՈՒՐՔԻ ՍՈՒԼԹԱՆԸ ՄՈՍԿՈՎԻ ՑԱՐԻ ԸՆԾԱՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

### ՍԵՐԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ

(ՌՈՒՍԵՐԵՆԻՑ)

*Քաղաքից քաղաք, աշխարհքից աշխարհք*
*Թուղթ անցավ շեկավ Մոսկովու յերկրեն,*
*Ցեկավ ու յեկավ, հասավ Ըստամբոլ:*
*Ու գըրին թուղթը վոսկի կաւեթում*
*Ու բերին իրեն՝ թյուրքի սուլթանին,*
*Ու թըղթի հետ էլ սուլթանի համար*
*Շատ թանգ ընծաներ արքային վայել:*
*Մի վոսկի սինի, մեջն վոսկի մեչիդ,*
*Մեչիդի չուրջը պատ յեկած մի օձ,*
*Են օձի գլխին դըրած անգին քար,*
*Վոր գիշերն էնպես պարզ լուս եր տալիս՝*
*Վոնց վոր ցերեկը լուսն արեգակի:*
*Ու Իբրահիմին, սուլթանի վորդուն,*
*Ցերկու թանկագին թըրեր կային սուր,*
*Դաստակներն ամբողջ զուտ մաքուր վոսկուց.*
*Ամենքի վրա մի-մի անգին քար:*
*Սուլթանի կընոջն վոսկի օրորոց,*
*Գըլխավերևը քաջահավ բազեն:*
*Վոր էս ընծաներն տեսավ աննըման*
*Ընկավ սուլթանը մըտքի ծովի մեջ.*
*Ի՞նչ գըրկի արդյոք Մոսկովի ցարին*
*Եսքան թանգագին ընծաների դեմ:*
*Միտք արավ ու միտք, վոչինչ չըտավ:*
*Ով մտքը յեկավ, ամենքի առջև*
*Պատմեց, պարծեցավ, թե ինչ ընծաներ*

Ստացավ ինքը Մոսկովի ցարից,
Բայց վոչով ասել չի կարողանում,
Թե ինչ ուղարկի դրանց փոխարեն։
Ներս յեկավ տեհա Ղուշբեգի փաշեն,
Նրա առջևը պատմեց, պարծեցավ.
Փաշից յետո յեկան Խոջան ու Ղադին։
Յերկիր պադեցին ու համբուրեցին
Ծունկն ու փեշերը իրեն սրբազան.
Նրանց առջևն էլ պարծեցավ նույնպես,
Աստ թե նույնս խորհուրդ հարցըրեց.
— Ո՛վ իմ ծառաներ, Խոջա ու Ղադի,
Ցես ի՞նչ ուղարկեմ ցարին սրանց դեմ,
Վոր ցարը ինձնից մընա բավական։
Պատասխան տվին Խոջան ու Ղադին.
— Տեր սուլթան, ասին, քո ստրուկն ենք մենք,
Մենք մըտածելու իրավունք չունենք.
Լավ կաներ կանչես ծեր պատրիարքին,
Նա հեշտ կիմանա, հեշտ էլ քեզ կասի,
Թե ինչ ուղարկես Մոսկովի ցարին,
Վոր ցարը քեզնից մընա բավական։
Նույնս վոր ասին՝ լսեց սուլթանը,
Իրեն կավասին ուղարկեց իսկույն
Ու մոտը կանչեց ծեր պատրիարքին։
Ու, յերր պատրիարքն յեկավ իրեն մոտ,
Ցույց տվավ նըրան ընծաներն ամեն,
Ու շատ պարծեցավ, ու նույնս ասավ.
— Ո՛վ դու իմ ծառա, ծերուկ պատրիարք,
Զե՞ս կարող արդյոք սովորցնել դու ինձ,
Թե ինչ սարքըներ դրկեմ փոխադարձ,
Վոր իմ ուղարկած թանգ սարքըներից
Գոհ մընա հըզոր ցարը Մոսկովի։
Ասավ ու ծերը կամացուկ խոսեց.
— Ո՛վ, իմ տեր սուլթան, իմ կյանքի արև,
Քո իմաստության առջևն ի՞նչ եմ յես։
Բայց իմ կարճ խելքով, ինչքան վոր գիտեմ,
Քո մեծ տերության լի գանձարանում
Դու բաներ ունես ցարին ղըրկելիք,
Բաներ վոր իսկի հարկավոր չեն քեզ,
Իսկ նըրան անչափ շատ են ցանկալի։
Նեմանից Սալիլի գավազանն ունես,

Կոստանդլին կայսեր վոսկի թագն ունես,
Վոսկեբերանի շուրջառը ունես,
Սերբիայի հերոս Լազար արքայի
Ռադմի խաչանիշ դըրոշակն ունես...
Քո ինչի՞ն են պետք էս բաները վողջ,
Իսկ ցարին, գիտեմ, շատ են ցանկալի...
Շատ հավան կացավ սուլթանն էս խոսքին
Ու պատվեր տըվավ ծեր պատրիարքին,
Վոր կաղմի ընծան ցարին ղըրկելիք
Ու դեսպաններին հանձնի Մոսկովի:
Ծերն, ինչպես գիտեր, ամենն հավաքեց
Ու դեսպաններին տալով՝ խրատեց.
— Գնացե՛ք, վորդի՛ք, տեր-աստված ձեզ հետ,
Բայց, մոտիկ արեք, մեծ ճամփով չերթաք,
Անտառով անցեք, սարով գընացեք...
Ուր վոր է՝ չուտով մարդիկ կուղարկեն՝
Խըլեն ձեզանից էդ պարգևները,
Վորոնցից բարձր ու նըվիրական
Մեզ համար վոչինչ չը կա աշխարհքում...
Թող սըրա համար իմ գլուխը տան,
Ու իմ մեղավոր մարմինը կորչի,
Բայց հոգիս արդեն վըրկված է ընդմիշտ:
Ասավ՝ ճանապարհ դրեց ծերունին:
Գոհ էր սուլթանը, վոր գլուխ հանեց
Էնքան հեշտությամբ էս գործը դժար,
Ու պարծենում էր ամենքի առջև,
Վոր էնքան էժան դուրս յեկավ տակից:
Ահա գալիս է Ղուչբեգի փաշեն:
Սրան էլ պատմեց, հետը պարծեցավ.
— Հապա մի դըտի՛ր, Ղուչբեգի փաշա,
Ի՞նչ ղըրկած լինեմ Մոսկովի ցարին.—
Նեմանիչ Սավվի ցուպն եմ ուղարկել,
Կոստանդլին կայսեր թագն եմ ուղարկել,
Վոսկեբերանի շուրջառն եմ ղըրկել,
Սերբիայի հերոս Լազար արքայի
Ռադմի խաչանիշ դրոշն եմ ղըրկել:
Իմ ինչի՞ն էյին են ամենը պետք.
Իսկ ցարին շատ են պետք ու ցանկալի:
Ու հարցմունք արավ Ղուչբեգի փաշեն.
— Էդ ո՞ւմ խորհրդով դու էդպես արիր:

Սուլթանը ուղիղ պատասխան տվեց.
— Ծեր պատրիարքի խորհրդով արի:
Ու նույնս ասավ Ղուշբեգի փաշեն.
— Տեր սուլթան, ասավ, իմ պայծառ արև,
Յեթե դու ցարին զրկել ես եղունք,
Վորոնցից վոր թանկ են մարդկանց համար
Վոչ մի բան չըկա արար աշխարհքում,
Շատ լավ կանեյիր յեթե դրանց հետ
Ղըրկած լինեյիր և քո քաղաքի—
Մեծ Ըստամբոլի վոսկի բանալին:
Մինչև, ավելի խայտառակ ձևով
Հետ յես տայու Մոսկովի ցարին...
Դրանց վրա յեր մնում հաստատուն
Քո տերությունն ու քո զորությունը,
Վոր ավլեր տարան Մոսկովի ցարին:
Ես վոր իմացավ՝ նոր գլխի ընկավ,
Ծափ զարկեց աղչամ սուլթանը նստեց
Ու պատվեր տվավ փաշին հալածելով.
— Եյ փաշա, ասավ, իմ հավատարիմ,
Հավաքիր իսկույն իմ զորքն յենիչեր,
Շո՛ւտ դեսպաններին հասիր Մոսկովի,
Խլիր նրանցից պարգևներն ամեն,
Վորոնց վրա վոր կանգնած եր հաստատ
Իմ տերությունն ու իմ զորությունը,
Վոր տըլլի տարան Մոսկովի ցարին:
Ու քաջ Ղուշբեգին զորքը հավաքեց,
Գնաց ու գընաց մեծ ճանապարհով,
Վոր դեսպաններին հասնի Մոսկովի,
Ու վոչ մի ճամփում հետքները չըկա...
Յետ դարձավ, յեկավ սուլթանին ասավ,
Թե վոչ մի ճամփում հետքները չըկա:
Բռնեց սուլթանի ցասումը անզուսպ,
Ահարկու ձենով գոռաց իր փաշին.
— Հե՛յ փաշա՛, կանչեց, շո՛ւտ արա, փաշա՛,
Գընա ազատիր ծեր պատրիարքին:
Նույնս վոր կանչեց՝ դուրս վազեց փաշեն,
Գընաց ու բռնեց ծեր պատրիարքին,
Պառնեց թուրը, շողացրեց գըլխին.
Ծեր պատրիարքը մեղմորեն խոսեց.
— Եյ փաշա, ասավ, յետ քաշիր ձեռդ,

Մի՛ ներկիր հողը անմեղ արյունով,
Թե չէ կը կապվի ակը յերկընքի,
Յերաշտ կը լինի չուրջ յերեք տարի,
Չի տալ յերկիրը ել բար ու պտուղ:
Ու լըսեց փաշեն ծերունու խոսքին՝
Տարավ կանգնեցրեց ծովի յեզերքին:
Սուր թուրը նորից պտըտեց գըլխին,
Ու նորից խոսեց արդար ծերունին.
— Ե՛յ փաշա, ասավ, քե՛զ քաշիր ձեռըդ,
Յե՛կ իմ արյունը մի՛ թափիր ծովը,
Թե չէ փոթորիկ կանի սոսկալի,
Ծովը կը հուզվի, կելնի ալեկոծ,
Նավեր, նավակներ իր տակը կանի,
Շեներ, քաղաքներ կը ծածկի ջրով:
Բայց փաշեն նրան ել ականջ չարավ,
Զարկեց ու կտրեց գըլուխը ճերմակ:
Ու եսպես մեռավ արդար ծերունին,
Ինքն արքայություն գընաց յերկընքում,
Իսկ մեզ խնդությու՛ն տվեց ես կյանքում:

# ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ ՅԵ ԽՄՈՒՄ

### ՍԵՐԲԱԿԱՆ ԱԶԳ. ԺՈՂ. ԵՊՈՍԻՑ

*Սուլթան Սուլեյման հրաման հանեց,*
*Վոր իրեն յերկրում վոչ մի հպատակ*
*Ռամազան որը գինի չխմի,*
*Կանաչ դոլամա չհագնի վերից,*
*Կողքիցը պողպատ թուր չըկախ անի,*
*Շուրջպարի չերթա աղջիկների հետ:*
*Թուրը կախ արավ Մարկոն իր կողքից,*
*Կանաչ դոլամա հագավ վերևից,*
*Ռամազան որը գինի յե խմում,*
*Կանչում, հավաքում անցվոր ու խոջա,*
*Խմում ե, թասը նրանց ե տալիս:*
*Գալիս են թյուրքերն իրենց սուլթանին.*
*— Սուլթա՛ն, մեր տերն ես, մեր ծնողն ես դու.*
*Չե՞ վոր դու ինքդ հրամանք արիր,*
*Վոր մեր ես տոնին, ես ծանր պահքին*
*Վոչով բերանը գինի չտանի,*
*Վոչով դոլամա չհագնի կանաչ,*
*Վոչով կողքիցը թուր չըկախ անի,*
*Շուրջպարի չերթա աղջիկների հետ:*
*Մարկոն աղջկանց հետ շուրջպարի կերթա,*
*Մարկոն կողքիցը թուր ե կախ արել,*
*Մարկոն հագել ե կանաչ դոլամա,*
*Ռամազան որը գինի յե խմում:*
*Գլուխը քարը՝ թե մենակ խմեր,*
*Անցվոր ու խոջա կիտում ե գլխին,*
*Համ ինքն ե խմում, համ նրանց տալիս:*
*Սուլթան Սուլեյմանես լսեց թե չե՝*
*Ցերկու սուրհանդակ ղրկեց Մարկոյին:*
*— Գնացե՛ք, ասավ, իմ արագ տղերք,*
*Գնացե՛ք շուտով Մարկոյին ասեք՝*

Թե կանչում է քեզ սուլթանն անհապաղ:
Գնացին արագ սուլթանի մարդիկ
Ծիտակ Մարկոյի վրանը մտան:
Խմում է Մարկոն գավաթն առաջին,
Մեջը կըլինի տասներկու օխա:
— Լսի՛ր, ասացին, քաջազուն Մարկո,
Սուլթանը ղրկեց մեզ քո յետևից,
Վե՛ր կաց տեղիցդ, գնանք սուլթանին:
Սաստիկ բարկացավ Մարկոն ու խոսքից,
Վեր կալավ ծանըր գավաթն առաջի
Ու՝ ա՛ռ հա կըտաս՝ սրանց գլխներին:
Գլուխ ու գավաթ ջարդ ու փուրդ յեղան,
Արյուն ու գինի խառնըվեց իրար:
Այպ թե գնաց Մարկոն սուլթանին.
Գնաց աջ կողմը նստեց ծունկ ծնկի,
Սամուր գլխարկը քաշեց աչքերին,
Իր ծանր գուրզը դրեց առաջին,
Սուր թուրն էլ ուսին բռնած պատրաստի:
Ու էսպես խոսեց սուլթանը թյուրքի:
— Իմ հոգեորդի, քաջազուն Մարկո,
Դու հո լավ գիտես՝ կարգ եմ դրել յես,
Վոր մեր մեծ պահքին, Ռամազան որը՝
Վոչով բերանը գավաթ չտանի,
Վոչով դոլամա չհագնի կանաչ,
Ծուրջպարի չերթա աղջիկների հետ:
Իմ ծառաները ինձ մոտ են գալիս՝
Վատ խաբարներ են բերում քեզանից:
Դու պար ես գալիս, իբրև, շուրջպարի,
Պողպատի թուր ես կապել քո մեջքին,
Կանաչ դոլամա հագել վերևից,
Ռամազան որը գինի յես խմում,
Անցվոր ու խոջա կանչում՝ խմեցնում:
Ի՞նչ ես գլխարկդ քաշել աչքերիդ,
Ինչո՞ւ յես բերել քո գուրզը քեզ հետ,
Ինչո՞ւ յես թուրդ բռնել պատրաստի:
Պատասխան տվեց Մարկոն սուլթանին.
— Ո՛վ իմ հոգեհայր, սուլթան Սուլեյման,
Իմ հավատն էսպես ինձ թույլ է տալիս,
Յես էլ խմում եմ ձեր պահքի որը:
Մենակ խմելը անվայել է ինձ,

Երբ ուրիշները մոտիկ են անում,
Ես էլ կանչում եմ անցվոր ու խոջա,
Վոր մոտիկ չանեն, նրանք էլ խմեն:
Կանաչ դոլամա ենդուր եմ հագնում,
Վոր ջահել մարդ եմ ու սազում է ինձ:
Կողքիցս յեթե թուր եմ կախ արել,
Իմն է, իմ փողով յես ինքս եմ առել:
Աղջիկների հետ թե պար եմ գալիս,
Ենդուր, վոր ազատ մարդ եմ ամուրի,
Ինչպես վոր ինքդ յեղել ես մի որ:
Գլխարկս ենդուր եմ քաշել աչքերիս,
Վոր չեմ դիմանում, ճակատս էրվում է
Երբ վոր խոսում եմ սուլթան հորս դեմ:
Իմ դուրդն էլ հետըս ենդուր եմ բերել,
Ու թուրս՝ պատրաստ պահում եմ եսպես,
Վախում եմ հանկարծ կռիվ պատահի:
Յեվ՝ յեթե կռիվ պատահի հանկարծ՝
Վա՜յ նրան, ով մոտ կըլնի Մարկոյին:
Զորս կողմը նայեց սուլթանը եստեղ,
Տեսնի թե ո՞վ կա մոտիկ Մարկոյին.
Տեսավ, վոր վոչով չկա վրանում
Ու ինքն է մենակ մոտիկ Մարկոյին:
Ահից սկսեց քաշվել յետ ու յետ,
Մարկոն էլ առաջ՝ դեպի սուլթանը,
Տարավ ու սեղմեց վրանի պատին:
Սուլթանը ձեռքը գրպանը կոխեց,
Մի հարյուր դուկատ հանեց գրպանից,
Հանեց, դեմ արավ ջահել Մարկոյին.
— Ա՛ռ, ասավ, Մարկո, տար՝ գինի խմիր:

## ՄԱՐԿՈՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՊՍԱԿԻ ՀԱՐԿԸ

### ՍԵՐԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՊՈՍԻՑ

*Վաղ լուսաբացին մեկնացավ Մարկոն,*
*Ջին հեծավ՝, չափեց դաշտը Կոսովի։*
*Գընաց, վոր հասավ Սերվանու գետին՝*
*Դիմացը ելավ մի սիրուն աղջիկ։*
*— Բարի որ, ասավ, Կոսովցի քույրի՛կ։*
*Սիրուն աղջիկը խոր գլուխ տըվեց.*
*— Բարին արևիդ, անծանոթ կարիճ։*
*Ու նորեն խոսեց Մարկոն քաջազուն.*
*— Քույրի՛կ, դու ջահել, եդքան գեղեցիկ,*
*Հասակդ նոճի, այտերըդ կարմիր,*
*Ասա՛, վոր մենակ ծամդ է խանգարում.*
*Ինչո՞ւ յե, քույրի՛կ, ծամըդ ճերմակել,*
*Բախտըդ, յերևի, թևել է քեզնից։*
*Դու ի՞նչըդ ես արդյոք ցավի հանդիպել,*
*Թե քո խեղճ մերը, թե հերըդ ծերուկ։*
*Կոսովի աղջիկն արտասուք թափեց,*
*Արտասուք թափեց ու նորեն ասավ.*
*— Չե՛, ախպերացու, անծանոթ կարիճ,*
*Յես չեմ խորտակել իմ բախտն իմ ձեռքով,*
*— Փորձանքը ինքն է յեկել իր վրաս։*
*Ես իննը տարի կըլինի ուղիղ,*
*Հեռվից արաբը մեզ մոտ է յեկել,*
*Կապալով Կոսովն առել սուլթանից։*
*Դըրել է յերկիրն ամբողջ հարկի տակ,*
*Ուտում է, խմում դաշտը բովանդակ։*
*Մի ուրիշ հարկ է դըրել մեզ վրա.*
*Ամեն հարսնացու, վոր մարդու գընա,*
*Պետք է վըճարի յերեսուն վոսկի.*
*Ամեն փեսացու, վոր աղջիկ ուզի,*
*Յերեսուն վոսկի, չորսն ել ավելի։*

Ով եսքան վոսկի ուներ դըրպանում,
Ով եսքան վոսկի տըվեց արաբին՝
Ամենքը դարձան մարդու–վորդու տեր:
Ցես վորբ աղջիկ եմ․ յեղբայրներ ունիմ,
Նըրանք էլ աղքատ, ձեռքները պակաս,
Չեն կարող եսքան հարկ տան արաբին:
Սըրա համար չեմ գընում յես մարդու,
Չեմ կարում դառնամ տան ու տեղի տեր․
Են է իմ ցավը, անծանոթ ախպեր:
Բայց թե յերանի են լիներ մենակ,
Աղջիկն իր տանը նըստեր անպըսակ,
Կամ աղջիկ չառներ տըղան նորահաս:
Ուրիշ մի ցավ կա, անարգ առավել,
Արաբը ուրիշ մի հարկ է դըրել,
Վոր նոր պըսակված հարսին ու փեսին
Գիշերը տանեն արաբի մեծին,
Ինքը նոր հարսին փայլի, փայփայի,
Իրեն մարդիկը ջահել փեսային:
Ամեն տուն, ուր կան աղջիկ ու տղա,
Դրկել են հերթով ամենքն արաբին:
Ցեկել է հերթը ինձ հասել հիմի,
Վոր սև արաբին գընամ յես եսոր,
Վոր նըրա կինը դառնամ յես եսոր:
Ու միտք եմ անում ինքըս իմ միջին․
Տե՛ր աստված, արդյոք ի՛նչ անեմ հիմի․
Ծըմա՞կը գընամ, թոկ գըցեմ, կախվե՞մ,
Թե՞ գետը գընամ, ջուրն ընկնեմ, խեղդվեմ․
Ինչ էլ վոր լինի՝ մեռնեմ վերջանամ,
Քան չար թշնամու տարփածուն դառնամ:
— Բուբի՛կ ջան, ասավ Մարկոն դյուցազուն,
Մի՛ կըտրիր հույսըդ, համբերող յեղիր․
Վո՛չ ջըրում խեղդվիր, վոչ ծառից կախվիր,
Ու մի կորցընիր, ինքըդ քո հոգին:
Ցույց տուր ինձ մենակ՝ տեղը արաբի,
Ո՞ւր է արաբը, վո՞րտեղ է կենում․
Խոսելիք ունիմ եսոր նըրա հետ:
Պատասխան տըվեց կույսը Կոսովի․
— Ախպե՛ր ջան, ասավ, անծանոթ կտրիճ,
Ինչո՞ւ յես հարցնում տեղը արաբի,
Արաբի տեղը դատարկ տեսնեմ յես:

Չըլնի՞ թե դու էլ աղջիկ ես ուզել,
Գընում ես, վոր տաս հարկը պըսակիդ:
Չըլնի՞ թե քո մոր մինուճարն ես դու.
Յեթե արաբը տա քեզ սպանի՝
Խեղճ պառավ մերըդ ի՞նչ պիտի անի:
Ու Մարկոն ձեռը դըրպանը տարավ,
Յերեսուն վոսկի հանեց դըրպանից,
Տըվեց Կոսովի տըխուր աղջըկան:
— Ա՛ռ, քուրի՛կ, ըռնիր ես յերսուն վոսկին,
— Դարձի՛ր, յետ գընա քո տունը ճերմակ,
Ենտեղ սպասիր քո կարմիր բախտին.
Ցույց տուր ինձ մենակ տունը արաբի,
Կերթամ քո հարկն ել կըտամ յես նըրան:
— Արաբը, ախպե՛ր, տուն ու բակ չունի:
Նայիր դաշտն ի վար, դատարկ ու դուրան.
Մի տեղ ե մենակ դըրոշ ծածանում,
Են սև արաբի դըրոշն ե մետաքս,
Ենտեղ ե նըրա վըրանը զարկած,
Վըրանի չուրջը կանաչ ցանկապատ,
Ամբողջ ցըցահան շարած գըլուխներ,
Մեր կըտրիճների գըլուխներն անբախտ:
Քառասուն պահապան ունի արաբը,
Հըսկում են անքուն գիշեր ու ցերեկ:
Հենց վոր վերջացավ խոսքը աղջըկա,
Ծուռ տըվեց Մարկոն գըլուխն իր ձիու,
Քըշեց Կոսովի արձակ դաշտն ի վար:
Տաքացրեց, լըցրեց իր հուր Շարացին:.
Վոտների տակից կըրակ ե թըռչում.
Պընչերից բոց ե յելնում կապուտակ:
Գընում ե Մարկոն սիրտը լեփ-լեցուն,
Իր այտերն ի վար արցունք ե հոսում,
Արցունքի տակից եսպես ե խոսում.
— Հե՛յ, դու լայնարձակ սուրբ դաշտ Կոսովի,
Ես ի՛նչ ես տեսնում, ի՛նչ տեղ հասար դու
Մեր թաղից հետո, մեր փառքից հետո.
Արաբն յեկել ե՝ չոքել քեզ վըրա:
Չեմ կարող տանել ես ցավն յես դաժան,
Չեմ կարող տանել անարգանքն ես սև,
Ես տուրքն անորեն, ես հարկն անպատիվ,
Վոր աղջիկ-որդա պըղծվեն սերբերի:

Քույրե՛ր, ձեր վոխը եսոր յես կանեմ,
Ձեր վոխը կանեմ, կամ թե՝ կը մեռնեմ:
Ու քշեց չիտակ վըրանի վըրա:
Պահնորդ արաբներ հեռվից աչքեցին
Ու եսպես ասին արաբի մեծին:
— Մեր տե՛ր, ասացին, մեր իշխան արաբ,
Կապույտ նըժույգը հեծած ամեհի,
Կոսովի դաշտով կըրակի նըման,
Մի արմանք զարմանք կտրիճ է գալի:
Կըրակ է թըռչում նըժույգի վոտքից,
Ռընչերից ծուխ է յելնում կապուտակ:
Մեզ վըրա յե սա քըշում չիփ–չիտակ:
Արաբի մեծը պատասխան տվեց.
— Հե՛յ, ասավ, տըղե՛րք, իմ քառասուն քաջեր,
Ո՞վ կարա իր ձին քըշի մեզ վըրա:
Նոր նըշան դըրած մի ջահել է դա,
Իրեն հարսանքի հարկն է գալիս տա:
Ախտոն է գալիս յերեսուն վոսկին,
Եռվում է իր մեջ ու քըշում է ձին:
Դուրս յեկեք դըրա առաջը շուտով
Գըլուխ վեր բերեք հարգանքով, պատվով,
Ողնեցեք, ձիուց իջեցրեք իրեն,
Ձին ու զենքերը առեք իր ձեռքից,
Ու իրեն բերեք վըրանը—ինձ մոտ:
Յես դըրա վոսկին չպիտի առնեմ,
Դըրա գըլուխը պետք է յես առնեմ,
Ու խաղուն կապույտ նըժույգը տակի:
Ասավ ու խըմբով ծառաներն յելան,
Վոր ձեռքիցն առնեն ձին ջահել հյուրի,
Բայց հենց մոտեցան, տեսան Մարկոյին,
Եվ սիրտ չի արին առաջը գընան,
Փախան, վըրանը մըտան վերըստին,
Թաք կացան յետևն արաբ իշխանի,
Իրենց թըրերը ծածկեցին փեշով:
Ներս մտավ Մարկոն բակը արաբի,
Ցած իջավ ձիուց վըրանի շեմքում.
— Գընա՛, իմ Շարաց, քեֆ քաշի՛ր, ասավ,
Քեֆ քաշիր եստեղ, բակումն արաբի,
Բայց, տե՛ս, դըռնից հեռու չըգնաս,
Գուցե թե շուտով հարկավոր լինես:

Ու մըտավ Մարկոն վըրանն արաբի։
Միրուն սերբուհին առաջին կանգնած՝
Արաբը նստել գինի յե խըմում։
Ներս մըտավ Մարկոն ու բարև տըվեց․
— Բարի որ, տանտե՛ր, բարի աջողում։
Արաբը սիրով բարևը առավ․
— Աստծու բարին քեզ, անծանոթ կտրիճ․
Նըստի՛ր, մի բաժակ դատարկիր մեզ հետ,
Հետո կը պատմես՝ ինչու յես յեկել։
Յետ դառավ Մարկոն պատասխան տըվեց․
— Գինի խմելու ժամանակ չունիմ,
Յեկածս ել արդեն բարի յե ինքնին։
Սըրանից բարի ել ինչ կը լինի․
Աղջիկ եմ ուզել, պըսակ եմ դընում,
Հարսանքավորըս կանգնած ե ճամփին,
Յեկա՝ վըճարեմ տուրքը պըսակի,
Վըճարեմ և՛ ինձ, և՛ հարսիս համար,
Շուտ արա, վոր յետ չընկընենք մեր ճամփից,
Յես քանի՞ վոսկի պիտի վըճարեմ։
Ես խոսքի վըրա արաբը ասավ․
— Թե քանի վոսկի—դու ինքըդ գիտես․
Հարսը տալիս ե յերեսուն վոսկի,
փեսան յերեսուն, չորսն ել ավելի։
Բայց յես տեսնում եմ՝ կտրիճ մարդ ես դու,
Հարյուր ել վոր տաս՝ ի՞նչ կա քեզ համար։
Ու Մարկոն ձեռը գըրպանը տարավ,
Հանեց, շըպրտեց մի յերեք վոսկի։
— Հավատա՛, ասավ, ել ավել չունիմ։
Թե կուզես՝ մընա, սպասիր մի քիչ,
Մինչև պսակից յետ գամ հարսիս հետ,
Բաժինքը վողջ քեզ, հարսը ինձ լինի։
— Գարշելի՛, թըշշաց արաբն ոձի պես․
Սակարկո՞ւմ ես դու․․ դու ծաղրո՞ւմ ես ինձ․․․
Յես չեմ հավատում ձեզնից վոչ մեկին։
Ասավ, վեր կալավ իր դուրզն ահագին
Զարկեց Մարկոյին յերեք—չորս անգամ։
Զարկեց, ծիծաղեց Մարկոն քաջազուն։
— Հե՛յ, դու սև արաբ, հե՛յ արաբ, ասավ,
Կատա՞կ ես անում, թե ճիշտ ես զարկում։
Ու ոձի նման արաբը թըշշաց․

— Կատակ չեմ անում, սըրտով եմ զարկում:
— Ենպես կարծեցի կատակ ես անում:
Դե վոր եդպես ե, սըրտո՛վ ես զարկում,
Ինձ հետ եւ մի զուրզ կընի յերևի,
Քանի անգամ վոր դու ինձ զարկեցիր,
Ենքան անգամ եւ յես քեզ կը զարկեմ․
Ներանից հետո դաշտը դուրս կըգանք,
Դաշտը կը ջոկի կտրիճը մեր մեջ:
Առավ ու առավ իր զուրզը մեխված
Ու ենպես զարկեց արաբի մեծին,
Վոր գլուխն ի[illegible]ույն թըռավ ուսերից:
Նայեց, ծի[illegible]ց Մարկոն քաջազուն:
— Տեր աստված, ասավ, փառքըդ շատ լինի,
Ինչքան հեշտ թըռավ գըլուխն արաբի,
Ասես գլուխ չեր ունեցել իսկի:
Ապա թե հանեց թուրը հավլունի,
Վողջ ծառաներին հընձեց խոտի պես,
Քառասուն հոգուց չորսին թող արավ,
Վոր գընան ասեն աշխարհքից աշխարհք,
Իր ու արաբի պատմությունն անեն:
Բակի չուրջ շարած գըլուխներն առավ,
Աոքով ու փառքով թաղեց հողի մեջ,
Վոր ցին ու ագռավ չգան, չկըտցեն,
Նըրանց փոխարեն՝ արաբի մարդկանց
Գլխները զարկեց, շարեց բակի չուրջ,
Ու տիրեց զանձին արաբի գըզած:
Զորս արաբին եւ, վոր թողեց կենդան,
Զորս կողմի վըրա ղըրկեց աշխարհքի,
Վոր գընան, ասեն դաշտը Կոսովի,
Պատմեն ու ենպես կանչեն ամեն տեղ․
— Վորտեղ վոր հասած աղջիկ կա տան մեջ՝
Արձակ-համարձակ թող մարդու գընա,
Ու թող պըսակվեն սերբերը ազատ․
Վերացա՛վ, ջընջվե՛ց հարկը պըսակի,
Մարկոն վըճարեց ամենքի համար:

# ՄԱՐԿՈՆ ՎԱՐ Է ԱՆՈՒՄ

*Իր պառավ մոր հետ միասին նստած*
*Գինի յեր խմում Մարկոն դյուցազուն։*
*Յերբ վոր բավական գինի խմեցին,*
*Մեծ մերն սկսեց վորդուն խըրատել։*
*— Վորդի ջան, ասավ, արի, ինձ լսիր,*
*Եդ քո արյունոտ արկածներն յեկ թող—*
*Ձեռ քաշի արի կըռվից, արյունից,*
*Չար բանից, վորդի, բարի չի՛ ծընվել։*
*Հոգնել եմ յես էլ պառավ տեղովըս*
*Արնոտ շապիկներ շատ լըվանալուց։*
*Ա՛ռ մեր գութանը, մեր յեզները առ,*
*Գընա, սար ու դաշտ վարի գութանով,*
*Սպիտակ ցորեն ցանի քեզ համար,*
*Յերկուսով ուտենք՝ ու հանգիստ ապրենք։*
*Ու լըսեց Մարկոն իր մորը պառավ։*
*Գութանը լըծեց ու գընաց վարեց,*
*Բայց գընաց վարեց վոչ թե սար ու դաշտ,*
*Այլ են մեծ ճամփեն թագավորական։*
*Յերեք ձի բեռնած արծաթ ու վոսկի*
*Յանիչարները են ճամփով յեկան,*
*Յեկան, դռացին Մարկոյի վըրա.*
*— Եհե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն.*
*— Եհե՛յ, ա՛յ Թյուրքեր, մի՛ վոտքեք վարըս.*
*— Եհե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն.*
*— Եհե՛յ, ա՛յ Թյուրքեր, մի՛ վոտքեք վարըս։*
*Հերսը վոր յեկավ յերկար վիճելուց,*
*Գութան ու յեզներ առավ միասին,*
*Զարկեց, տեղն ու տեղ ջարդեց Թյուրքերին։*
*Յերեք ձիաբեռ գանձերը առավ,*
*Բերեց ու տըվեց իր մորը պառավ.*
*— Մերի՛կ ջան, ասավ, վոնց վոր դու ասիր՝*
*Վար արի եսոր, եսքան դատեցի։*

# ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

## «ՀԱՌԱՋԱՆՔ»-ԻՑ

### I

Ահա ծառերը կանաչ խմբերով
Հավաքված գետի յերկու յեզերքին,
Թավ կատարները մեղմիկ ճոճելով
Իրար փաթաթված, շարված են կարգին:

Նրանք խոնարհված ականջ են դնում,
Թե ինչպես իրանց ստվերների տակ
Զգույշ ծփալով գաղտնիք են պատմում
Ջրի հատակից կոհակներն հանակ:

Դիտում են՝ ինչպես արևի վերջին
Անգոր շողերը ջրերի միջում
Ծառայ դողալով խրխնապահին
Թռչում են վերև և [հանկարծ] հանգչում:

Իսկ այդ ժամանակ հսկա ժայռերը,
Որ յերկու կողմից կանգնած են պատրաստ,
Զգում են իրանց յերկայն ստվերը
Ու մութով լցնում ձորն ահեղաստատ:

Հրաշալի՛ յե գիշերն այն ձորում,
Յերբոր խավարի [մութ ալիքներում]
Ըմբոստ.....ուղղաձիգ ժայռեր
Մինչև աստղերը բարձրանում են վեր:

Յերբոր շողշողուն գոհար աստղերը
Պճնում են մռայլ ճակատն յերկնքի,
Յերբո՛ր պատում են թեթև ամպերը—
Հալածականներն ընկած փոթորկի:

Յերբոր լրացած լուսին փառահեղ
Հեզանազ ճեմով բարձրանում է, և
Բարձըր յերկնքում, ինչպես վառ կանթեղ,
Կախվում է խավար ձորերից [վերև]:

Յերբ վեր է կենում գիշերվան հովը,
Յեվ խոտ ու տերև հեշտորոր սոսում,
Թեթև թևիչքով անցնում ձորովը,
Ծերպ ու այրերում չվվացնում, խոսում:

Իսկ Դեբեդը բոլորը գրկած,
Անհասկանալի և հազար ու մին
[Ձայն] ու գոռոցով աղաղակ ձգած—
Լցնում է ահով լողի հոգին:

II

## ՎԵՐՋԵՐԳ

Այստեղ, բարեկամ, ծերունու սրտում
Պատմության մասին խոսքս լրացավ.
Միաժամանակ գուցե քո սրտում
Որվան խնջույքի ձայնը խլացավ.

Յեվ քո հայացքը փայլից շլացած
Ակամա ընկավ այն մթին ձորը,
Ուր վոր, տակավին բախտից հալածված,
Բաղցած ու վշտոտ վռչում է ծերը.

Թերևս և քեզ յուր աղքատ դավում
Ներկայանում է մռայլ ծերունին,
Գուցե մի րոպե քո դատարկ հոգում
Նրա խոսքերը արձագանք տվին.

Գուցե ծերունու յերգը ցավալի
Տրտմություն ազդեց նաև քո սրտին,
Բայց այդ դեռ այն չէ, վոր այսքան տարի
Տանջեց այցելու յերիտասարդին...

1890

## <ՄԻ ԱՆՀԱՅՏ ՊՈԵՄԻ ՍԿԻԶԲԸ>

*Յես վայր եմ իջնում Հայոց լեռներից,*
*Գալիս են ինձ հետ հովիվն ու հովեր․*
*Յես ձայն եմ տալիս Հայոց դաշտերից,*
*Լալիս են ինձ հետ գեղջուկն, իր ցավեր։*

## <ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ>

Հագած չողազարդ իր զգեստը հին
Յեկավ գիշերը—պառավ դիցուհին[2],
Սրտիս նման սև, հոգուս նման մութ
Անծայր, անհատակ խորության անդունդ:

Կարծես թե յես էլ մի գիշեր էյի
Կորցըրած ցերեկն ու լույսն արևի
Կամ թե նա լիներ ինձպես սգավոր[7]
Կորցրած սիրուհին ու... կյանքը բոլոր
Յեվ վողջ ինձ նման մռայլ, տխրալի[9]
Միմիայն յուր աստղերն էյին ավելի[10]:

Սրտիս մեջ բացվեց մի դատարկություն
Մահից էլ սառը, գիշերից անհուն
Մի խավար պատեց... և նորա միջում[13]
Սև մտքերս էյին մոլորված թռչում,
Վորպես թռչուններ վոր թրթռում են
Մի հանկարծահաս մթնում դես ու դեն...
Կրկին խորտակված դուռը փակեցի
Յեվ, վորպես դատարկ, վոչինչ, պառկեցի,
Հոգնած ու տանջված, ուժաթափ մի բան,
Վոր զգում է միայն կարոտ հանգստյան,
Նրանից առաջ վոր չի հիշում, թե
Ինչ է կատարել—ապրել է թե չէ...[22]

---

2 ա. Յեկավ գիշերը վշտի դիցուհին
բ. Յեկավ գիշերը վշտի թագուհին
7 Կամ թե նա անբախտ սըգավոր
9 Յեվ վողջ ինձ նման մռայլ, տոսկալի
10 Թեպետ յուր աստղերն էյին ավելի
13 Մի խավար այն աղջամուղջում
22 Ինչեր է արել, ապրել է թե չէ

Յեվ թե հիշում է, չի մտաբերում
Թե ինչ բան էր այն <                    >
Մի խառն յերազ էր, մի աշխարք ուրիշ—
Գինու մի քեֆ էր, ծաղր թե պատիժ...

Իջավ տխրալի մի խաղաղություն
Բազմեց անորոշ տանջանքների տեղ,
[Իրիկունն ինչպես մեգը <          >
Տիրում է դաշտի վրա տաղտուկ, բայց ահեղ]:
Մի մոռացություն պատեց իմ հոգուն,
Փափուկ սփոփիչ—սակայն և ահեղ.
Նա շատ էր նման մահվան հանգստի
Յեվ կյանքը կարծես խոսում էր իմ մեջ:—

Յես ապրում եյի կարծես հրաշքով,
Յես նայում եյի կիսաբաց աչքով,
Յեվ մթնի միջին նկատում եմ մոր...
Մի բան <      > սպիտակ մի շոր...:

(Այլ մշակում)

[Յեկավ տխրալի մի խաղաղություն
Բազմեց անորոշ տանջանքի տեղ.]
Քունը մոտեցավ աչքերիս, հոգուս
Կես քուն, կես արթուն—
[Հանկարծ մի շրշյուն] կիսաբաց աչքով:
Տեսնում եմ ահա—
Ներս է վազում... նա...
Վորպես ուրուրից փախած մի ճնճղուկ
Հևում է արագ՝ վոչ գույն կա, վոչ ուշք.
Աչքերը պղտոր, լիքը յերկյուղով,
Սաստիկ վախեցած, անկապ խոսքերով
Հասկացնում է ինձ, աղաչում է ինձ,
Թե յե՛կ ինձ հանիր իմ դերեզմանից...
«Տանջվում եմ, արի,
Շուտ արա—վորդի—
Շունչս կտրո՛ւմ է,
Սիրտս պատռում է,
Յեթե յես մնամ
Մի ժամ—միայն մի ժամ»...
Յեվ այնպես դողում, այնպե՛ս խնդրում էր...

Յերբ ուշքի յեկա, սիրտս դողում եր...[59]
Լուռ եր իմ շուրջը—
Չկար այլևս այն կերպարանքը,
Բայց ինձ թվում եր, թե հեկեկանքը
Նոր եր հեռանում
Յեվ հեռաստանում
Լսում եյի դեռ —
Կամաց մարում եր:

Ո՞վ եր այն սիրուն
Սոսկալի ուրուն,
Վոր ինձ յերևաց, աղաչեց այնքան
Նրա ձայնովը և նրա նման.
Մի՞թե յերազ եր, ինչո՞ւ հենց նա չեր,
Յերբ կարելի յեր տեսնել, ճանաչել,
Յերբ նա խոսում եր... դողում եր այնպես...
Յերբ ճշմարտություն եր ասում վերջապես...
Մի՞թե յերազ եր. բայց յերազն ի՞նչ ե...
Բայց յերազ ու կյանք մի՞թե միևնույն չե,
Յերազն ել յերբ վոր կարող ե կանչել.
Յերբ վոր կարող ե խնդացնել, տանջել,
[Հուզել մեր հոգին—և անհետանալ...]
Դե մեր վողջ կյանքն ել այդպիսի բան ե.
Կյանքը յերազ ե, յերազը մի կյանք,
Յերկուսն ել հաստատ, յերկուսն ել պատրանք.
Յերազն ամեն բան կարող ե մեզ տալ,
Տանջել, խնդացնել, հուզել, չքանալ:

---

Կարծես թե յես ել մի վերջացած ցերեկ եյի—
Մի սկսված գիշեր—
Կամ թե նա լիներ մի մեծ սգավոր,
Վոր կորցրել ե լուսավոր ցերեկը—պայծառ արևը,

(Այլ մշակում)

[Կարծես թե յես ել մի գիշեր եյի
Ցերեկը < >
Կամ թե նա լիներ սգավոր ինձ նման
Ցերեկը կորցրած, արևը կորցրած,]
Փնեցի թե չե

59 Վեր թռա քնից—սիրտըս դողում եր...

*Կամ անսիլք էր այն*
*Թե յերազ միմխայն—*
*Այդ. ասուլած գլուխ.*
*Լռության միջում*
*Գիշերվա մթնում*
*Տեսնում եմ ահա—*
*Ներս է վազում... Նա...*[100]
*Վորպես ուրուրից փախած մի ճնճղուկ,*
*Հևում է արագ... վոչ գույն կա, վոչ ուժք—*
*Աչքերը պղտոր—լիքը յերկյուղով,*
*Սաստիկ վախեցած—անկապ խոսքերով*
*Հասկացնում է ինձ—աղաչում է ինձ—*
*Թե յետ ինձ հանիր իմ գերեզմանից...*
*Յեվ այնպես դողում—այնպես խնդրում էր...*
*Վեր թռա քնից—չուրջս նիրհում էր...*
*Չկար այլևս այն կերպարանքը,*
*Բայց ինձ թվում էր թե հեկեկանքը*
*Նոր էր հեռանում*
*Յեվ հեռատանում*
*Աղաչում էր դեռ—*
*Կամաց մարում էր:*

(Այլ մշակում)

*[Ո՞վ էր այն սիրուն*
*Վախեցած ուրուն,*
*Վոր ինձ յերևաց, աղաչեց այնքան*
*Նրա ձայնովը և նրա նման.*
*Ի՞նչ...լոկ յերազ էր—ինչո՞ւ հենց նա չէր—*
*Դե մեր վողջ կյանքն էլ յերազ է արդեն*
*Կյանքը յերազ է, յերազը մի կյանք,*
*Վոչ մեկն է հաստատ, վոչ մյուսը պատրանք:]*
*Այսպիսի հավատով յես էլ պարտված,*
*Չկարողացա դիշերը քնել,*
*Նրա հոգին էր կարծեցի յեկել*
*Այնպես չտապով իմաց էր անում*
*Թե արթնացել է նա գերեզմանում,*
*Ցուրտ գերեզմանում, նեղլիկ դագաղում,*
*Ձեռքերն ածում է, ահից կատաղում—*
*Զգում է արդեն վորտեղ է ընկած,*

[100] Ներս է մտնում... Նա...

Այս գիտակցության ահից դարհուրած:
Բայց ինձ պահեցի... <                >
Աչքերս ներքև—ցածն եյին քննում
Բոլոր աշխարհքը աստված ու մարդիկ
Թվացին ինձ անխիղճ թշնամիք.
Մինչդեռ արևին յես չեյի նայում,
Վոր լիրբ կնոջ պես ժպտում եր, փայլում[137],
Այն սև ժամերին, յերբ խավարում եր
Իմ կյանքի արևը <                >
Թռչնոց դայլայլը, ուրախ ծլվլոցը
Սատկացնում եյին սրտիս կսկիծը,
Յեվ թվում եր, թե բոլորն աշխարհում
Ինձ ծաղրում եյին, կամ արհամարհում.
Այս ժամանակը յես մինչև անգամ
Լսեցի մարդկային մի քրքիջ [անգգամ],
Վոր անցնում եր մեր մոտիկ փողոցով,
Վիշտս ծաղրելով լիրբ հռհռոցով...
Յեվ յես դառնացած,
Մենակ մնացած,
Մարդկանց մեջ նստած, ցած եյի նայում,
Իսկ միտքս ավելի ներքև եր գնում,
Մինչ ունայնության անդունդը դատարկ.
Թվում եյին ինձ մարդիկ խեղկատակ,
Փոխվեց մտքերիս ընթացքը խուլույն,
Յեվ հոգիս լցվեց դառնության մի թույն,

Լիրբ խեղկատակներ, կեղծ ու կարճամիտ,
Սրտներում դավեր, դեմքերին ժպիտ...[157]
Վոր չարչարվում են, խոսում անդադար
Եգուց կամ ելոր մեռնելու համար...
Մանր տերևներ, վորոնք ցիրուցան
Լայն տիեզերքի սառն և անսահման
Տարածության մեջ հողմերի ձեռքին
Խուռն աղմկելով <                >
Յեվ անհետ կորչում, ցրվում են, լռում
Հավիտենական անհուն խավարում,
Վոր կոչվում է մահ,

---

137 Վոր լիրբ խնդությամբ ժպտում եր, փայլում
157 Սրտներում ծպիտ, դեմքներին թախիծ

Եվ այնուհետև՝ նրա ձայնը դու
Վոչ մի աշխարհում ել չես լսելու...

[Հպարտ և ագահ... <          >
Նորերն են գալիս և գնում դարձյալ
Իբրև թե դեպի մի կյանք հանդերձյալ...
Ամեն բան այսպես չնչին, ծաղրալի,
Ծնվում են, մեռնում, գնում են—գալի,
Ուրախ, ինքնապանծ, հպարտ, մեծահույս...
Մարդը խոտի պես, խոտը կենդանու,
Եվ վողջ աշխարհքն ել ինչո՞ւ չի մի բույս,
Վոր նույնպես մի որ ունի մեռնելու,
Այս մտածմունքը հենց մահը ինքն եր,
Կամ նրա տված հարվածի հետքն եր,
Այն խավար հետքը, վորով իմ շաղված
Մտքերս եյին գնում դեպի ցած...
Բանականությունն այլևս ուժ չուներ
Վոր այդ հոսանքին—ուժին դեմ դներ...
Այն մի անդունդ եր—մի լաբյուրինթոս,
Գերեզմանից ել ահելի մի փոս,
Վորի մեջ մարդը կորցնում ե հոգին,
Ուր վոչինչ չկա վոտքերիդ տակին,
Ու դու գնում ես, ներքև ես գնում—
Աննկատելի շարունակ ընկնում,
Ընկնո՛ւմ դեպի ցած,
Կյանքից կտրված...
Եվ ել վոչ մի թել քեզ չի կապում
Աշխարհքի հետ—
Մոռացած աստված, աշխարհք ու արև,
Խորթացած արդեն կյանքին ու լույսին:
Հանկարծ այն փոսից անհուն
Ինձ հանեց թեթև մի հեշտ սոսափյուն,
Մի յերկչոտ շրշյուն ականջս ընկավ,
Իմ տարորինակ յերազը խառնեց,
Այդ կանայք եյին սև սև շորերով
Ներս մտան յերկար շարքով տխրալի
Եվ <. . . . . . .> վողբի ձայներով
Հուզեցին ցավս, վոր մոռացել եյի[203],
Նրա վաղաժամ մահն ափսոսացին,

203 Նորեցին ցավս, վոր մոռացել եյի

Անցած օրերից դեպքեր հիշեցին,
Նրա հեզ վարքից, աշխույժ արարքից,
Նրա հույսերից, նրա խոսքերից,
Ցես եվ հիշեցի զանազան դեպքեր—
Նրանք իմ մտքում <          > եյին դեռ,

Ցերեկ, մյուս օրը... խոսեցինք...
Ախ, վորքան թարմ եյին—նոր եյին նրանք:
(Ցեվ, բաժանվելով անցավոր յերկրից,
Չի զգում տանջանք, անջատման կսկիծ,
Ցավի դառնություն.... և մեծակարող
Մահը յուր դաժան ճանկով ավերող
Չի այլանդակում պատկերն արդարի,
Չի խառնում գծերն աստուծո նկարի,
Չի խլում գույնը յուր գեղեցկության...
Ցեվ մեռելը մեզ թվում է կենդան:
Այս մի կասկած եր [220]
Շատ զարհուրելի, թեպետ և սիրուն...
Իմ ուզածն այն եր, վոր նա չմեռներ [222],
Ապրեր, թեկուզ մեղավոր լիներ...
Ցեվ ունեյի սրտումս այդպիսի մի հույս
Փայլփլող մի լույս,
Վոր դողդողում եր, ուզում եր հանգչել
Մահվան սառը շնչումի առաջ...)
Հանկարծ մի ճերմակ դագաղ ներս բերին
Ցեվ իմ [աչքի] առաջով անցկացրին,
Սրանից իսկույն ցնորքներս բոլոր
Տալ արին—կորան հողոտ մթին խորքերում,
Ինչպես ճնճղուկներ թփերի միջում
Ցերբ վոր վերևից ուրուր է թռչում.
Հանգավ այն փոքրիկ նշույլը հույսի,
Վոր յես վերևը <          > տացի:

Ինչ կուզեք ասեք—հավատում եմ յես,
Վոր միշտ մարդկային հոգիներն անտես
Ցերկրի յերեսին շրջում են անմահ,
Մարմինը ուր վոր ուզում է գնա.
Մեր ու նրանց մեջ գաղտնի մի կապ կա.

220 Բայց սա կասկած եր
222 Ցես ուզում եյի, վոր նա չմեռներ

Նրանք ներկա յեն մեր արարքներին,
Տեսնում են իրանց սիրելիներին,
Ազդում են հոգու գալը փորձանքի,
Անհույս դաղտնիքը, կամ վերջը կյանքի.
Հոգու ազդում է մեր սիրտն իմանում,
Թե հեռու տեղում մեկն ինչ է անում[246],
Կամ նախազգում ենք յերբեմն հանկարծ
Թե ինչ կա վաղը մեր առջև պահված,
Այսպես շատ անգամ պատահում է, որ
Միտքդ խաղաղ է, հոգիդ անդորր,
Հանկարծ թնդում է քո սիրտը ուժգին
Յեվ դու տխրում ես կամ ուրախանում,
Քեզ թվում է թե քո մայրը հանգավ,
Կամ հեռու տեղից սիրելիդ յեկավ.
Յեվ տեսնում ես, որ հասնում են քեզ մոտ
Կամ քո ցանկալին, կամ տխուր մի բոթ:

Մի անգամ հեռու, օտարության մեջ,
Գիշերվա խաղաղ, հանգստյան ժամին,
Տեսնեմ դառնալի մեկը տնքում է,
Բայց ինձ ծանոթ է տնքոցի ձայնը.
Տեսնեմ—իմ մայրը—անկողնիս կողքին,
Աչքը ինձ վերա՝ տնքում տխրագին,
Յես սարսափից փշաքաղած ձեռքս տարածեցի,
Բայց չըկարացի բռնել,
Մնացի ապշած, վախից քարացած,
Նա դարձյալ տնքաց և հանկարծ լռեց,
Նրա հետ սրտումս մի բան կտրվեց...
Սիրտս սկսեց յերկար մղմղալ, մթնել, վշտադնել,
Հետո իմացա և ստուգեցի
Վոր նույն գիշերը մեռել է մայրս իմ հայրենիքում:

(Այլ մշակում)

[Մի անգամ հեռու, օտար տեղ եյի,
Որերով հեռու իմ հայրենիքից,
Գիշերը արդեն դեռ չեյի քնել,
Բայց քունը իջել եր արտևանունքիս[274],

246 Թե հեռվում մեկը ինչեր է անում
274 Բայց քունը ծանրացել եր արտևանունքիս

Աչքս կխավարվի, միտքս <     >
Գիշերվա խավար հանդարտ ժամին,
Տեսնեմ դառնալի մեկը մտնում է,
Տնքոցն ականջիս ծանոթ է գալիս...
Տեսնեմ իմ մայրը—անկողնիս կողքին
Աչքը ինձ վրա մնում է այնպես—
Յես՝ փշաքաղած ձեռքս մեկնեցի—
Նրա անունը կանչեցի ահով,
Բայց նա չքացավ, մնացի մենակ։]

Ճչում է, կանչում, ձայնն է խլանում,
Ուզում է նստել—չի կարողանում;
[Թեկադարվում է, [կատաղում,] վախից,
Մահվան սարսափից փակված դագաղից].
Կրծում է իրան, տախտակը ճանկռում,
Վոտքով, ձեռքերով դես ու դեն հրում,
Ճգնում է ուժով ծածկը բարձրացնել—
Մահվան անդունդից մի անգամ պրծնել.
Սակայն բոլորը, բոլորը իզուր,
Տեղը շատ է նեղ, և մութ և ամուր...
Բռնված այսպիսի մռայլ մտքերով—
Զուր տեղն եյի յես խաչակնքելով
Աշխատում քնել,
Կամ թե հեռացնել
Այս միտքն ինձանից
Վոր տանջում եր ինձ։

Սիրտս եր մաշել վորդը կասկածի.
Հետն ել հին լսած մի բան հիշեցի,
Թե ինչպես մեկը քնած է յեղել,
Վերցրել են տարել, ուզել են թաղել,
Կենդանացել է փոսումը հանկարծ...
Կարող եր և մեզ լինել պատահած...
Բայց դեռ սրանից հարյուր անգամ վատ.
Հինգ տարի առաջ մի գյուղում մի մարդ
Գերեզմանատան մոտից անցնելիս
Լսում է վոր մի ձայն է դուրս գալիս
Գետնի տակիցը,
Մոտիկ իրանից,
Դեռ սևաբլուր նոր գերեզմանից.

Խեղճը սարսափած վազում է
Պատմում է թեև ինչ հրաշք պատ<ահեց>։
Մեկը հիմար է անվանում նրան,
Մյուսը խելագար, յերրորդը մի բան,
[Մեկը ասում է յերազ ես տեսել,
Մյուսը չի ուզում յերազին լսել,]
Սկսում են վիճել յերկար ու բարակ,
Կարծիք են հայտնում իրար հակառակ,
Իսկ յերբ գալիս են մեռելը հանում,
Տեսնում են իրավ, վոր գերեզմանում
Կենդանացել է ու կրկին մեռել,
Նոր է չարչարված մարմինը սառել։

Որը վոր բացվեց,
Կարծես հալածվեց
Իմ այս հավատը, կասկածը տանջող
Ցեվ հանգստացավ սիրտս մրմնջող,
Իմ վրդովմունքս դատապարտեցի
Ցնորքս անմիտ, մինչև գիշերը դարձյալ նորոգեց.

Յերրորդ գիշերը դարձյալ նույն ուրուն
Գալիս է կանգնում նրա պես սիրուն,
Բայց լուռ, խորտակված, տխուր ու վշտոտ,
Շրթերը անկարդ, յերեսն արյունոտ…
Ցեվ այս բոլորը, բոլորը անմռունչ [335],
Առաջև ընկած մանուկը անշունչ—
Նա ցույց էր տալիս
Ցեվ լալիս, լալիս…

Ցես էլ առավոտն յերբ վոր արթնացա,
Վերմակս ու բարձս վողողված տեսա,
Ցեվ իմ աչքերից դեռ էլ չարունակ
Արցունք էր հոսում յերկար ժամանակ։

Զկարողացա յերկար մտածել—
Քունը յեկել էր աչքիս ծանրացել,
Մտածմունքներս կամաց հեռացան,

335 Ցեվ այս բոլորը, բոլորը անշշունչ

Յեվ հեռանալով, ուրիշ բան դարձան
Ու մարդը դարձավ մի ամպի կտոր,
Յեվ մտքերս ինչպես [խաղողի] վողկույզներ
Նրանք էլ ինչպես մանր չողեր
Փլփլացին, հանգան.
Բայց հանկարծ մնաց իմ մեջը մի բան,
Տեսնեմ նա կանգնած աչքիս հանդիման:

[Ինձ թվում էր թե նա մի վիշտ ուներ,
Չեր ուզում շուտով կյանքից բաժանվել,
Թե մի գաղտնիք էր սրտում մնացել,
Աշխատում էր ինձ յերազով ասել.]

Վորքան և [կարոտ] լինեյի
Իմ մահկանացու և տխուր հոգուն
Ահավոր էր շիրմից յեկած այցելուն...
Յերկար ժամանակ չկարողացա մտածել,

(Այլ մշակում)

[Քունը հաղթեց հոգնած մարմնիս,
Մտածմունքներն հեռացան կամաց,
Մարդը դարձավ մի ամպի կտոր
Յեվ մտքերս վորպես խաղողի վողկույզներ,
Նրանք էլ վորպես մանր չողեր փլվեցին, հանգան.
Սակայն յես դարձյալ քնեցի.
Բայց յերկրորդ անգամ նա յեկավ
Լուռ <ու> գլխակոր, տխուր ու վշտոտ—
Շրթերը անկարդ, յերեսը արյունոտ...
Յեվ այս բոլորը, բոլորը անմռունչ,
Առաջին ընկած մանուկը անշունչ
Նա ցույց էր տալիս
Յեվ լալիս, լալիս...]

[Յեվ ուզում եյի մեկ էլ տեսնել,
Բայց անսանձ վախը այն ուրվականի,
Վորին յես այնքան ցանկանում եյի
Հոգիս թփրտում <                    >
Վորքան և կարոտ լինեյի, իմ մահկանացու <անընթեռնելի>
Ահավոր էր գերեզմանից յեկած այցելուն,]

Յել այսպես մինչև լուսաբացին մոտ[380].
Մաքառում եյին յերկյուղ ու կարոտ,
Մինչ այդ հոգեկան կռվում հոգնեցի,
Թուլացան ջղերս և յես քնեցի...
Քնել եյի թե չէ, կեսքուն չգիտեմ,
Աղոտ,
Դալկադեմ—
Դարձյալ նա յեկավ—[ինչպես լուռ սարսափ,]
[Գիշերվա մթնի վոգի և ընկեր,
Կատարյալ սարսափ գերեզմանային,
Վոր գերեզմանից նոր է դուրս յեկել,]
Բայց հենց վոր տեսավ դեմքս գունատվեց,
Սրտառուչ ձայնով անունս ասեց,
Կարծես թե խղճաց
Յել այսպես խոսաց,
Քնքույշ խղճաց,
Սրտաբեկ, տխուր,
Յել չար խղճալի վրա<ս> նայելով
Հեռացավ արտասանելով.

«Ո՛, գերեզմանում
Դու չես իմանում
Վորքան է դժվար
Քնածի համար...
Դժվար է, դժվար
Քնածի համար»:

[Նա արտասանեց մի ուրիշ ձայնով
Յել վողորմելի վրաս նայելով]
Կամաց հեռացավ, կորավ մթնի մեջ,
Ինչպես յուր ձայնը—թեթև, կամացուկ
Վորպես մի թեթև ստվեր, մի նսեմ յերազ,
[Վորպես մի ստվեր, մի] լուռ աղջամուղջ,
Մի թեթև ստվեր, մի նսեմ անուրջ...
Ինձ թողնելով սարսափի և ապշության
Շղթաների մեջ...

---

380 Յել այսպես մինչև կես գիշերին մոտ

# ՄԱՆՖՐԵԴ

## I ԳՈՐԾ[ՈՂՈՒԹՅՈՒՆ]

### I ՏԵՍ[ԱՐԱՆ]

Գոթական գալերեյ: Կես գիշեր:

ՄԱՆՖՐԵԴԸ (ՄԵՆԱԿ)

*Լցնեմ ճրագըս[1]. բայց չի կարող*
*Նա դիմանալ՝ մինչև յես քընեմ:*
*Իմ նինջը, յեթե ննջում եմ, քուն չի[2]—յերազ,* (грёза)
*Այլ շարքը համառ[3], անվերջ մըտքերի,*
*Վոր չեմ կարենում յերբեք նահանջել[4]:*
*Սրտումըս անքուն պահնորդ ունեմ յես[5],*
*Վոր նայեմ (տեսնեմ)՝ ինչ է կատարվում սրտիս մեջ...*
*Այնինչ[6] ապրում եմ, շընչում մարդու պես—*
*[Յես ունեմ նորա կերպն ու պատկերը...]*
*Տանջա՛նքը[7] — ամենալավ (մեծ) ուսուցիչն է (վարպետ) գիտունների,*
*Վիշտը նրանց[8] համար—խորին գիտություն* (наука):
*Ով ամեն բանի մեջ թափանցել է իր խելքով,*
*Ամենից ավելի յե վողբում այն ճակատագրական ճշմարտությունը[9],*

---

1 *[Լամպարս նորից] լցնեմ*
2 *Իմ [քունը—քուն չի լոկ]*
3 *Այլ [շարունակություն] անվերջ մըտքի*
4 *Վոր վոչ մի բանից բանով յետ չի նահանջում*
5 *[Իմ հոգին] չի քնում. յես փակում եմ իմ աչքերը*
6 *[Ցեվ յես]*
7 *[մեր]*
8 *[մեզ]*
9 *[Ճշմարտությանը հանդիպում է վշտի հեծծանքով,]*

Թե[1] գիտությունը—կենաց ծառ չի [նրա համար:]
Քրքրեցի փիլիսոփայությունը, գիտությունները[2],
Հրաշքների աղբյուրը և կյանքի հմտությունը·
Հասու յեղա բնության բոլոր գաղտնիքներին,
Բանականությունս գըրկեց ամբողջ[3] անգըրկելին—
Յեվ բոլորն իզուր: Այս աշխարքում
Շըռայլեցի յես բարություն, և մարդկանցից մինչև անգամ
Բարիք տեսա—սակայն դարձյալ բոլորն իզուր…
Յես ունեցա[4] թըշնամիներ· չըհաղթեցին
Նըրանք ինձ, բայց յես չարին[5] ջախջախեցի—
Բոլորն իզուր… Շուրջս բարիք ու չարիք,
Վըրդովմունք, կըրքեր,—մարդուն ընդոծին ամենայն մի բան,
Ինձ անհայտ ժամից ընկել է իմ կրծքին,
Ինչպես անձրևը չոր[6] անապատում:
Յերկյուղն անհայտ է ինձ: Չըկա մի անեծք
Ավելի զարհուրելի, քան չիմանալ դողն[7] յերկյուղի,
Փայփայանքը քնքշության, չունենալ[8] տենչեր,
Կամ չըսիրել ում և իցե աշխարքում:
Բավական է:
Խորհրդավոր դուք ուժե՛ր,
Տիեզերքի յերևութնե՛ր դուք անտես,
Վորոնց փընտրել եմ յես խավարում ու լույսի մեջ,
Գետընքի տակից (недр), սահմաններից յեթերքի[9],
Ովկիանոսի անդունդներից (омут) անհատակ,
Բարձըր լեռներից թունդ[10] բըժժանքով
Կանչում եմ ձեզ· յերևացե՛ք:

(Լռություն)

Կանչում եմ [ահեղ] յես ձեր մեծի անունով,
Յեկեք ինձ մոտ:
Յերդվեցնում եմ ձեզ այն ուժով,

1 [Յեվ]
2 [Ի՞նչ կա գիտության մեջ: Յես դարձա իմաստուն, փիլիսոփա,]
3 [բոլոր]
4 [Պատահեցին]
5 [Շատերին յես]
6 [մեռած]
7 ա [չունենալ ահի դողը]
բ [չունենալ վախի դողը]
8 [չըզգալ]
9 [յեթերային] սահմաններից
10 [սաստիկ]

Վոր մահ չունի[1]. դուրս յեկեք։

(Լռություն)

Ընդիմանում ե՞ք, հա՛[2]։ Յես կըստիպեմ,
Հնազանդվեք[3]։ Կարող զորությամբ[4]
Յեվ յերգումով անմերժելի[5] (неотразимой),
Վոր չեմ փորձել յես ձեզ վրա,
Այն յերգումով, վոր յերբեմն ծնունդ ե առել
Այն նզովված, խորտակված աստղի[6] վրա,
Վոր թափառում ե դժոխքի անսահման թագավորության մեջ
Ինձ վրա ծանրացած—անեծքով
Յեվ այն մտքով, վոր այրում ե իմ մեջ—ո՛վ վոգիներ,
Կանչում եմ յես ձեզ, յեկե՛ք հնազանդ։

(Գալերեյի մութ անկյունում յերևում ե մի աստղ ու անշարժ կենում)։

ԱՌԱՋԻՆ ՎՈԳԻՆ

Աղջամուղջի շընչից հյուսած
Իմ ոդեղեն[7] պալատից[8]
[Անդրամպային այն աշխարքից,
Ուր անթառամ գարունքին[9]
Միայն յեթերքի . . . .
Շունչն ե բուրում իմ կյանքին[10]—]*
Ուր ոթևանս վերջալույսը
Վարդի գույն ե վողողում[11],
Ուր ամպերը ոթևանից
Հալվում եյին ու լողում,

---

1 Թովում եմ ձեզ այն նըշանով,
Վոր ահավոր ե ձեզ։
2 [Հա՛,] ընդիմանում ե՞ք։
3 [Վոր] հնազանդվեք
4 [իշխանությամբ]
5 [միշտ] աննահանջ (ելի)
6 Կործանված մոլորակի
7 ա. ամպեղեն
բ. յեթերային
8 [Իմ ամպեղեն ապարանքից,
Հյուսված շնչից շամանդաղի]
9 Ուր [գարնանը] անթառամ
10 [Քնքույշ] շունչն ե[ր ինձ] բուրում
11 Ուր (ներկում եր) ոթևանըս
Արշալույսը վարդերանգ
* Նախնական վարիանտ։

Թեև հանդուգն է քո յերգը
Հողեղենի կոչին հըլու,
Նրա համար, միառժամ [1],
Ցես թողեցի իմ ոդային
Ապարանքը [2] արծաթի,
Փայլուն աստղի ցոլքին [3]
Այս աշխարքը յես հասա...
Անողնական դու հողեղեն,
Ի՞նչ ես ուզում. ինձ ասա:

ՅԵՐԿՐՈՐԴ ՎՈԳԻՆ

Թագապսակ սարերով,
Ուր վարդափայլ—ձյունն արևում,
Վողջ պարուրված ձերմակ ամպով,
Կա Մոնբլանը վերևում [4]:
Անտառապատ վողջ իրանը,
Ու ամպերում նա կորած,
Մահա... <անընթեռնելի>
Ունի ձեռքին միշտ [5] բռնած:
Բայց յերբ, յերբեմն, յերկրի վրա
Ջյունի դունդը (?) բարձրացնի, այն հսկան
Կըքարանա ողի միջում
Ցել հարվածը դյութական:
Հըրամայեմ—ինձ հըլու յե
Այդ խոլ կույտը սառցային,
Հըրամայեմ—կըթռչեն հյուսեր
Սառուցային [6] բարձունքից:
Ինձ ասում են Լերան վոգի.
Ուզեմ թե չե—հիմքից կանեմ
Ճղթաները [7] այն ահարկու...
Ի՞նչ ես ուզում այժըմ դու:

1 [Կարճատև]
2 [Այն] ապարանքը
3 [շողքի վրա]
4 Մոնբլան—արքան սարերի՛.
5 Ունի [ձեռքում նա]
6 [Իրենց սառցային]
7 [Նրանց շղթան]

### ՅԵՐՐՈՐԴ ՎՈԳԻՆ

Անտակ ու ջինջ անդունդքի մեջ,
Ուր քընած է կապույտ ալին,
Լռությունն[1] է տիրում անվերջ
Սողում զեռունքը ծովային,
Ուր հարսները հավերժական
Մարգրիտ են հյուսում խոպոպներին (կանաչ),
Իմ ամրոցն է կանգնած մարջան:
[Տերն ու վոգին եմ յես ծովի]:
Քո այդ կոչի արձագանքը
Յեկավ, հասավ այնտեղ ցած[2].
Ինչու յես դու ինձ վրդովում
Յել ալիքը քընեած:

### ՉՈՐՐՈՐԴ ՎՈԳԻՆ

Ուր վոր շարժերն[3] ստորերկրյա
Գետնի հիմքն են դղըրդում,
Ուր խոլ լավան իր հըրաշունչ
Հորձանքներն է շըպըրտում:
Ուր դարերով մխվել են[4] խոր
Արմատները Անդերի,
Իսկ բարձունքը ժանիքավոր
Հըպարտ հասել ամպերին:
Այնտեղ հասավ ինձ քո կանչը,
Թռա յեկա քո ձայնին,
Ինչ է, ասա, քո պահանջը,
Գետնի վոգին վողջ կանի:

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎՈԳԻՆ

Հըրամայող շանթի, հողմի, [փոթորկի,]
Ծովերն եմ յես[5] մըրընչացրել,
Փոթորիկը, վոր թողեցի իմ յետև
Դեռ վառվում է շանթերով[6]:

---

1 [Ուր] լռությունն
2 Հասավ [մինչև այն խորքին,]
3 Ուր վորոտներն
4 Ուր [հաստատուն մըտել են]
5 [Ովկիանոսն եմ]
6 Յես թըռել եմ [իմ յետևից] վիշապ քամին,
Իմ յետևից միշտ թըռել:

*Հողմի թևին յելա[1] այստեղ*
*Հլու կանչիդ խորհրդավոր,*
*Պատահեցին ծովում նավեր*
*Ղեկ, առագաստ—բոլորը նոր…*
*Բայց, յերդվում եմ, մինչ առավոտ*
*Կուր[2] կըլլինեն ծովի տակ,*
*Ինչո՞ւ յես ինձ կանչում[3] քեզ մոտ,*
*Ի՞նչ ես ուզում, հողածին:*

ՎԵՑԵՐՈՐԴ ՎՈԳԻՆ

. . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . .

---

1 [*Թռա*]
2 [*Վողջ*]
3 [*կանչել*]

# ՌՈՍՏԵՎԱՆԻ ՅԵՎ ԱՎԹԱՆԴԻԼԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

## Ա.

Զափիցը դուրս մեծ էր ու առատ Արաբստանի Ռոստևան Թագավորը: Բախտավոր էլ ծերացավ և ծերության օրերում զգաց, վոր ժամանակն է յերկրի կառավարությունը ջահել ձեռքերի հանձնելու: Բայց արու զավակ չուներ. ունեցածը մի մինուճար աղջիկ էր, մի շատ իմաստուն ու գեղեցիկ աղջիկ, Թինաթինա անունով: Մի օր էլ կանչում է Թագավորն իր մեծամեծներին ու Էսպես է խոսում նրանց հետ: Ասում է.

Անց են կացել իմ տարիքը,
Ծերությունով հիվանդ եմ յես.
Ծերությունը ծանըր ցավ է,
Եվ ի՞նչ անեմ, հայանի յե ձեզ:

Եսոր չըլնի, եգուց ըլնի,
Մահը կյանքըս կըգողանա.
Ո՞վ է մնացել էս աշխարհքում,
Ցավ կամ թե ո՞վ պիտի մնա:

Հիմիկ և յեթ եկեք անենք
Իմ աղջկանը մեզ Թագավոր.
Մի տեղ վոր նա յերևում է՝
Եվ արևը չի հարկավոր:

Մեծամեծները աշխատում են Թագավորին համոզեն, վոր էսպես չանի, բայց չի աջողվում ու Ռոստևանը հավաքում է ժողովըրդին ու իր աղջկանը հռչակում է Թագավոր:

Եկան բոլոր արաբները,
Եկան զորքն ու զենքը սարքին.
Աստղի կտոր Ավթանդիլը
Գլուխ կանգնած ամբողջ զորքին:

Հավատարիմ ծառան Սոկրատ
Էր արքայի ական–չական,
Ենպես մի գահ նա պատրաստեց,
Որ աշխարհքը կացավ հավան:
Ծիծաղում է Ռոստևանը,
Իր աղջըկան մեջտեղ բերավ,
Նստեցրեց ու իրեն ձեռով
Թագը նրա գլխին դըրավ:
Արքայական դավլաղանը
Հերն աղջըկա ձեռն էր տալի,
Ճոխ ծիրանին վավուկ ուսին
Շատ արմաղան սաղ էր գալի:
Թագավորն ու իրան զորքը
Ցած կանգնելով գլուխ վեր բերին,
Օրհնանքներով բազմեցնելով
Գահի վրա պատիվ արին:
Թըմբուկ զարկին. ծնծղաներ
Անուշ անուշ ձեն են տալի,
Բայց աղջիկը լաց է լինում,
Թուխ մազերը ժաժ են գալի:
Իրեն արժան չի համարում,
Որ հորական գահն ունենա,
Արտասուքը, որ թափում էր,
Մի վարդանոց կըջրեր նա:
— Մի՛ լաց լինի, ինչ որ ասեմ.
Լսի՛ր—աղջիկս, ալևորիս.
Ես որվանից արարնելի
Դու թագուհին պիտի լինես:
Արաբիայի տերությունը
Նըրա համար տըվի յես քեզ,
Որ հեզ, խոնարհ ու իմաստուն—
Քո աշխարհքը փառավորես:
Վարդն ու հողը միորինակ
Արևով են միշտ վողողած,
Դու էլ ենպես՝ մեծին, փոքրին
Պիտի լինես միշտ վողորմած:
Լա՛վ իմացիր, ինչ որ կըտաս՝
Են է մենակ, որ դու ունես.
Ինչ որ չես տալ՝ էն է կորած,
Ինչքան էլ որ պինդ պահպանես:

Հոր խրատին ուշադիր աղջիկը հենց իր թագավորության հանդեսին իր զարդերից սկսած մինչև գանձարանի գանձերն ու ախոռատան նժույգները՝ դուրս է բերում բաժանում ժողովրդին: Ժողովուրդն էլ հափշտակում է ագահությամբ:

Գըլխում էլին արքայական
Գա՛նձը, ինչպես թուրքի ավար.
Տառապողների վոտի փոշուց
Վողջ քաղաքին պատեց խավար:
Ո՞վ էր տեսել, ո՛վ էր լսել,
Ինչ թագուհին էն որն արավ.
Կալլի մարդն էլ աչքածակ է,
Ծեղ չըթողեց, վոր չըտարավ:
Մի որ ամբողջ ուտելիքներ
Անուշ արին սովրի բոլոր,
Հազարփեշէն ձեռնե ձեռը
Ման էր գալիս վոլոր-վոլոր:

Բ.

Յերբ մխամխո բազմականը
Ուրախության ծովը մըտավ,
Ռոստևանի ճակտի վրա
Սև տխրության մի ամպ իջավ:
Սուփրի շուրջը նստողները
Իրենց մեջը զրույց արին,
Թե՝ ի՞նչ յեղավ, ի՞նչ պատահեց
Մեր ալևոր թագավորին...

Ու իրենց մեջ էլ վճռում են, թե թագավորի մտքովը մի չարբան է անց կացել, վոր առանց հայտնի պատճառի հանկարծ տխրեց: Նրա վորդեգիր Ավթանդիլ սպարապետն ու սիրելի նախարար Սոկրատը ուզում են միտքն իմանան:

Յերկուսն և յեթ թասեր առած,
Գինով լիքը պեծպըծալի,
Շատ հարգևոր արարմունքով
Ռոստևանի մոտ են գալի:

Մոտ են գալի: Նախարարը կատակ է անում ու ասում, թե ինչո՞ւ Ռոստևանը իր թագավորությունը տվավ աղջկանը և անդառնալի զրկվեց և՛ թագից ու փառքից, և՛ էնքան հարստությունից ու չեղած տեղից ցավ ու վիշտ ստեղծեց իրեն համար:

Թագավորը մի քիչ զարմանում է, մի քիչ էլ նեղանում, վոր իրեն հետ եսպես կատակ են անում. ու ասում է.

— Ձե՛, աչքի լուս, գլխի չընկար.
Ես բեռը յես հեչա կը տանեմ,
Բայց թե մի ցավ սիրտս է մտել
Ու չը գիտեմ թե ինչ անեմ:
Մըխըրչտեցի ինչպես մի ձու
Իմ արմաղան գարնան օրեր,
Ծերությունը սրտիս մեջը
Բուն է դրել՝ ինչպես մի վէր։
Ծերն ի ծեր Արաբըստան,
Ինչ վոր հիմի կա,իմ ճանդը,
Էլ մարդ չը կա, վոր գիտենա
Կոխլ տալու կարգն ու հանդը:
Աղիզ մաղիզ մեծացրել եմ
Մի հատ աղջիկ դոշիս կըպած,
Ձեմ ունեցել տըղա զավակ,
Կուչ եմ յեկել սիրտըս խըված:
Իրեն հոր.պես նա կիմանար
Թե վոնց գըցեր նետ ու գընդակ.
Ալթանգիլը գիտի մի քիչ,
Են էլ սովրեց իմ ձեռի տակ:

Ալթանգիլը ես վոր լսում է՝ ժպտում է: Թագավորը հարցնում է ժպտալու պատճառը: Սպարապետը խոստանում է ասի, թե միայն Թագավորը չի բարկանա: Խոսք առնելուց հետո ասում է թե՝ Թագավորը զուր է պարծենում ենտեղ, վորտեղ կա ինքը՝ Ալթանգիլը: Յեթե ուզում է՝ դուրս գա մրցության: Թագավորը հոժար է կենում, ու վճռում են, իրենցից վորը հաղթի՝ յերեք օր մնա անգղակ: Իսկույն տխրությունն անց է կենում, ուրախությունը տիրում է ամենքին ու մրցության՝ վորսի հանդեսի պատրաստություններ են տեսնում առավոտվա համար:

Գ.

Նոր է ծագում առավոտը,
Յետ քաշելով մըթան թաղիք,
Թագավորի տան առջևը
Բուսավ ինչպես շուշան ծաղիկ:
Շուշան, հագած վառ ծիրանի,
Դեմքն էր հալլինթ կարմիր վառման,
Վոտից գլուխ սպառազեն,

Ու վոսկեկար գըլխի չալման։
Իր կարմիր ձին խըրխընջալով
Փորփըրում էր վոտով գետին,
Ռոստևանի միտն էր գըցում,
Թե հասել է ժամը յետին։
  Թագավորը ձիուն հեծավ,
Յետ մընացին չէն ու գեղեր,
Չորեք կողմը դաշտը անտղեց,
Փակեց, կապեց վորսի տեղեր...
Ձիաների վոտի փոշին
Վեր էր ըլնում ինչպես վոր մուխ,
Արեգակի պեծն ու շողքը
Մթնեցնում էր ամպի պես թուխ։
Վորսորդները ծերե ի ծեր
Տափն անցկացան վողջ չափեչափ,
Նըրանց արագ նժույգներին
Պատեց քըրտինքն, ինչպես վոր քափ։
Կոտորեցին ու խըժռեցին
Գազաններին թե՛ չար, թե՛ լավ,
Մինչև նրանց կարմիր արնից
Վողջ թաթախվեց իրենց հալավ,
Մինչև նրանց կարմիր արնից
Կարմիր ներկվեց դաշտը բոլոր,
Ու բարկացավ նրանց վրա
Վերևումը հայրն յերկնավոր։
Տափն անցկացան՝ ջուր էր հոսում,
Ջրից դենը ժայռ ահագին.
Գազանները ընկան անտառ,
Ուր էլ վաղել չէր կարող ձին։
  Փողը փըչեց. արնոտ վորսին
Դադար տըվին, թողին ձեռից,
Ռոստևանն ու Ավթանդիլը
Հոգնած իջան ձիաներից։
Նըստոտեցին ծառերի տակ,
Իրարու հետ հանաք արին,
Հանաք արին ու պատմեցին՝
Վոնց անց կացավ չարն ու բարին։
  — Յես հաղթեցի,— մին սա, մին նա
Ասում էյին մեկըզմեկի,
Ծիծաղելով, հանաքներով,

Ինչպես ընկեր մի հասակի։
Յեկան վորսի վըկաները,
Հարցմունք արավ արքան եսպես․
— Ճըշմարիտը դուք ասացեք,
Ու չը պաշտեք եստեղ յերես։
Ասավ․ մինը առաջ ընկավ՝
— Արքա, ասավ, ձեռը դոշին,
Ճիշտը թողած՝ սուտը խոսել
Մի՞թե կարա վոտիդ փոշին։
Ամեն բանը չի պատմվիլ,
Ձեզ պես մարդկանց հեշտ չի դատել․․․
Բայց դրա հետ նետ գըցելում
Դու չես կարող համեմատվել։
Թե գլխենանք մեզ ամենքիս
Մաս-մաս կանես—էլ ճար չը կա,
Մեր խոսքերը քեզ չեն ոգնի,
Մի մազի չափ քեզ պետք չեն գա։
Ավթանդիլըդ նշանումը
Նետն եր ցըցում մինչև թևը,
Նրա զարկին վոչ թե վորսը,
Ջեր դիմանալ ինքը դևը։
Յերկուսովդ քսան հարյուր
Գազան եք դուք մահին տվել,
Բայց քսանով Ավթանդիլդ
Սպանել է քեզնից ավել։
Ինչքան վոր դու նետ գըցեցիր՝
Աստված քեզ տա էնքան տարի,
Բայց թե գետնից շատ ենք առել
Փոշտոններից քո նետերի․․․
Ռոստևանին դուր եր գալիս
Ես գործն, ինչպես մի խաղ նարդու,
Սիրում եր նա քաջությունը
Իր մեծացրած տղամարդու։
Եսպես նրանք խոսում եյին
Էն հովասուն ծառերի տակ,
Նըրանց շուրջը խուրձ-խուրձ կանգնած
Ջինվորները հաղթահասակ։

# ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

# ՄԱՐՈ

(Գյուղացի մանկան պատմությունը)

I

*Մեր գյուղն այն է, որ հպարտ,*
*Լեռների մեջ միգապատ,*
*Խոր ձորերի քարափին,*
*Ձեռքը դրած ճակատին*
*Մտածում է տխրադեմ.*
*Ի՞նչ է ուզում, չըգիտեմ...*
*Այնտեղ մենք պաս չենք ուտում,*
*Եվ ջերմեռանդ աղոթում,*
*Ժամ ենք գնում ամեն օր,*
*Բայց միշտ ցավեր նորանոր.*
*Միշտ մի աղետ, մի վնաս*
*Մեզ հասնում են անպակաս:*
*Ահա, պատմեմ ձեզ մի դեպք,*
*Մի պատմություն, որ երբեք*
*Հիշատակով սգալի*
*Սրտիս հանգիստ չի տալի:*

II

*Գյուղից վերև, ճամփի վրա*
*Տերևախիտ մի ծառ կա.*
*Անտառիցը նա զատված,*
*Մարդու կացնից ազատված,*
*Դեռ կանգնած է և շուքին*
*Հով է տալիս մըշակին.*

Իսկ նրանից վոչ հեռու
Մի լեռնային պարզ առու
Դուրս գալով մութ ծմակից
Խոխոջում է փրփրալից:
Սակայն շատ չէ նա խորին.
Այն տափակում կեսօրին,
Յերբ վոր տապից նեղանում,
Գնում էյինք լողանում.
Խաղում էյինք, վազվզում,
Գույն-գույն մանրիկ ավազում,
Յեվ մեր ճիչը մանկական
Մխանալով մի սև ժամ
Այն վտակի աղմուկին
Խաղաղանիստ, խուլ հովտին
Կենդանություն էր տալիս:
Ա՛խ, վո՛րքան էր գյուր գալիս,
Յերբ վոր ակլոր խումբը մեր
Աղաղակով վազում էր
Թիթեռնիկի յետևից,
Վոր թռչում էր թփերից...
Յեվ միշտ հոգնած ժամանակ
Հանգչում էյինք ծառի տակ:

III

Այն ժամանակ այնտեղ կար
Այժմ կորած շիրմաքար.
Իմ քույրերս նրա մասին
Այսպիսի բան ինձ ասին.—
«Այս քարի տակ մամռոտած
Սիրուն Մարոն է թաղած:
Ժիր էր նա և գյուրեկան.
Նոր էր ինը տարեկան,
Նրանց տունը յերբ մի որ
Յեկան յերկու յեկավոր:
Խնամխոս էյին մարդիկը,
Յեվ, Մարոյի մայրիկը
Յերբ վոր նրանց առաջին
Խոնչա[1] դրեց, ասացին—
«Շնորհակալ ենք հաց-աղից,
Հող ավեք ձեր օջաղից»[2]:

Այն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն և ասաց —
Կամքդ լինի, տեր աստված...
Նշանեցին Մարոյին,
Տվին չոբան Կարոյին:

IV

Գիտե՞ս ով էր Կարոն. նա
Մի հովիվ էր աժդահա,
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու սարսափ էր գալիս;
Բայց զոքանչը անսահման
Սիրով սիրում էր նրան.
Մարոն ասում էր նույնպես
(Նրանից եմ լսել ես)—
«Կարոյին շատ եմ սիրում,—
Ինձ համար մեղր է բերում»:

V

Մի օր էլ Կարոն ընկերներով
Յեկավ զուռնա-դհոլով,
Յեվ Մարոյին զուգեցին—
Յերեսին քող ձգեցին,
Հինա դրին ձեռքերը...
Ապա յեկավ տերտերը
Խաչ ու Ավետարանով,
Որհնեց օծած բերանով
Կռնաբռնուկ արած
Հարսն ու փեսին, և կամաց
Տարավ ժամում կանգնեցրեց,
«Տե՞ր ես, վորդյակ», հարցըրեց.
«Տեր եմ», ասաց մեր Կարոն,
Բայց լուռ կանգնած էր Մարոն.
Յեվ տերտերը նրան այսպես
Խրատ տվեց—«յերբ վոր քեզ,
Հնազա՞նդ ես, վորդյակ, ասեմ,
Գլուխ կըտաս, դե տեսնեմ».
«Յեվ դու, վորդյակ, հնազա՞նդ ես»,
Մարոն շարժվեց, «ա՛յ, ապրես»:

Մարոյի հայրն ել ծեսին
Այսպես որհնեց յուր փեսին.
«Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջքդ ամուր բերդ լինի...»։
Իսկ յերբ հնչեց «տարան հա՛»-ն[3],
Նրան փեսի տուն տարան։
Պաճկեցին Մարոյին,
Տվին չորան Կարոյին։

VI

Թե գրբացի գիր-ջանքով,
Սրտակտուր ըմժանքով
Նրա սիրտը կորեցին,
Կամ, թե նրա հանդերձին
Այն անհոգի չար ջադուն
Քսեց դայլի յուղ թաղուն[4],
Այդ չիմացավ վոչ վոք պարզ,
Միմիայն փոքրիկ նորահարս
Մարոն առեց յուր մարդուն,
Փախավ յեկավ հորանց տուն։
Շատ խրատեց տերտերը,
Խրատեցին մեծերը,
Խրատելով ել կրկին
Տարան տվին Կարոյին։
Գնաց Մարոն, բայց դարձյալ
Չուզեց նրա մոտ մնալ,
Վոր ծեծում եր անխնա,
Թե միշտ իրան մոտ մնա...
Չուզեց Մարոն, և թաղուն
Փախչում, գալիս եր հոր տուն.
Այնտեղ ել հայրն եր ծեծում,
Մայրն եր թքում անիծում,
Վոր գնա փեսի մոտ կրկին,
Սիրե նրան, ինչպես կին։
Մարոն սկսում եր լալ,—
«Յես նրա մոտ չեմ գնալ...
Յես սիրում եմ մայրիկին,
Յես չեմ ուզում լինել կին»։

VII

Մի օր էլ հայրը բարկացած
Ծեծեց նրան և ասաց.
«Դուրս իմ տանից, սևերես,
Յետ չընայես դէպի մեզ,
Եւ չըմտնես իմ տունս,
Մոռացիր անունս…»:
Լալով, ծածկած յուր դէմքը
Թողեց Մարօն հօր շէմքը.
Ուրիշ մարդ էլ, ով տեսավ,
«Աղջիկ, ամօթ քեզ, ասավ,
Լավ է մեռնելդ ապրելուց,
Վոր փախել ես քո մարդուց»:

VIII

Յեվ, հալածված հօր տանից,
Յուր ամուսնուց, մարդկանցից,
Սոված, պատառած շորերով
Նա կորչում էր օրերով.
Բայց թե մի մարդ հոգեսեր
Ձեռքը բռներ և ասեր,—
Մեզ մոտ արի, ա՛յ թշվառ;
Մի քիչ հաց կեր, կամ մի՛ լար.
Նրա հայրը անաստված
Հայհոյում էր բարկացած,
Վոր չեն թողնում նորատի
Աղջկանը խրատի:
Յեվ ամուսնու մոտ՝ ատված,
Կամ հօր տանը՝ նախատված,
Կամ կուշ գալով խղճալի
Ոջաղի շուրջ օտարի,
Ամեն սրտի ցավ տալով,
Ապրում էր նա միշտ լալով:

IX

Այսպես տարիք անց կացան.
Դիմաց սարից մի չոբան
Մի օր մեզ ձայն էր տալիս,
Թե իմացեք, վոր քարից,
Կարմիր շորով մի խիզան
Ընկավ ձորը—մի կածան:

Դուրս թափվեցանք մենք գյուղից,
Հեռու կանգնած յերկյուղից,
Տեսանք բարձըր քարի տակ
Ընկած կնոջ մի դիակ:
Մարդիկ իջան ու բերին
Ջարդ ու փշուր Մարոյին.
Յեվ ասացին մեկմեկի
Այսպես խոսքեր անհոգի.—
«Վաղուց պետք է այս աներ,
Կամ թե խելք չըծնվեր...»:
Աղի լալիս եր հայրը,
Կուրծքը կոծում եր մայրը,
Այն ինչ Մարոն պապանձված
Վոչի՛նչ, վոչինչ չըլսաց.
Մեռա՛վ, գնաց խեղճ Մարոն,
Բայց դեռ ապրում է Կարոն:

X

Սակայն նրա փոքրիկ դին
Պապերի մոտ չըդրին.—
(Մեր տերտերի սուրբ գրքում
Գրած եր, թե նրա հողում
Չարեր եյին բուն դրել...
Նաև հաղորդ չեր առել).
Առանց ժամ ու պատարագ
Այս ճյուղաշատ ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Ամփոփեցին Մարոյին,
Այս լեռ քարն ել տաշեցին,
Բերին վրեն քաշեցին:

XI

Շատ եմ տեսել, յերբ նրա
Խեղճ մայրիկն այս քարի վրա
Կորանալով ինքը միայն
Լաց եր լինում կիսաձայն.
Խունկ եր ծխում, մոմ վառում,
Վոր գիշերվան խավարում
Յերևում եր մեն-մենակ
Հեռվից յերկար ժամանակ:

# ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

## <ԱՌԱՋԻՆ ՎԱՐԻԱՆՏ>

I

*Խոր ձորի միջին ահա մի տնակ.*
*Այնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ.*
*Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր,*
*Տուն է ուղարկել նրան այս գիշեր,*
*Այն ինչ համկալը[1] հենց առավոտը*
*Դեպի սարերը քշեց յուր հոտը:*

II

*Վոչինչ, թե միայն է նրա փարախը,*
*Սաքոյի համար ի՞նչ բան է վախը.*
*Շատ անգամ միայն ձեռքի մահակով*
*Քշել է գայլերին ամբողջ վոհմակով.*
*Գող թուրքերին էլ մի ահ է ավել,*
*Վոր սիրտ չեն անում աչքները խեթել,*
*Յեվ մեր գյուղացիք աներկյուղ հովվին*
*Արժանի «իգիթ»[2] անունը տվին:*

III

*Դեռ նոր աղամա մութը փարատված,*
*Յեվ հորիզոնից դեռ կամա՛ց-կամաց*
*Նոր է լուսաստղն յերեսը հանում,*
*Վոր Սաքոն վոչխարն արոտ է տանում:*
*Ծքեղաղալար լերանց թարմ օդը*
*Յեվ շաղաթաթախ ծաղիկն ու խոտը,*
*Անհայտ դրախտի կնդրուկի նման,*
*Անույշ բուրմունքով, շնչով կենսական*
*Լցնում են կուրծքը, վերացնում հոգին:*
*Ի՞նչը կըհասնի Սաքոյի կյանքին.*
*Ամեն առավոտ տեսնում է, ինչպես*
*Արևելքումը շքեղահանդես,*
*Ամպերի միջից արջնաթույր և թուխ*

Բացվում է արշալույսն ինչպես հրաբուխ,
Կամ թե բոցավառ հրդեհի նման,
Վոր թանձր ծխից հայտնվում է նրան:
Յեվ առաջին շողն արևագալին,
Յերբ վոր ընկնում է լերանց կատարին,
Կարմըրին տալով, ասես թե քրքում,
Վեհ գագաթները վարդերանգ ներկում,
Այն ինչ դեռ նոր է մութը նահանջում
Մրգապատ լերան բարձրուղեշ լանջում.
Այս ժամանակին մեր Սաքոն կանգնած,
Հովվական յերկայն մահակին հենված,
Գլխարկը ծուռ, յափնջին ուսին,
Ծիկնած, կարմըրած վառ արևլուսին,
Սեգ ու վայրենի հայացքը մեխած,
Նայում է յերկնի տեսքով զմայլած.
Կամ թե վոչխարի վերևը թինկը
Տված, ածում է նրան սրինգը.
Կամ ժայռի գլխին, բարձր սյունաձև,
Արծվի հայացքով նայում է ներքև,
Այնտեղ, խորի՛ն, մթին անդընդում
Գետը գայրագին գոռում է, թնդում:

IV

Սև-սև ամպեր են գալիս հավաքվում.
Մթնում է յերկինքն ու փայլատակում,
Սառած սասանած յերկիրը վախից
Ուզում է, կարծես, փախչել յուր տեղից,
Յեվ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ,
Յերբ Փշշացնում է ինչպես մի սև օձ,
Թեքվում է, տնքում ծառը հաստարմատ,
Ամբողջ ծմակը հեծծում հուսահատ:
Գոռում են ամպերն մթնած յերկնքից,
Գետինը դողում, շարժվում է հիմքից.
Ասա յերկինքը սպառնացած, կարծես,
Հեղեղ է թափում կժով ջրի պես,
Հեղե՛ղ, վոր պետք է քո աչքով տեսնես,
Ծիծերից բռնես, յերկինքը հանես:—
Սաքոն վոչխարը ծմակն է քշում,
Մի տերևախիտ ծառի տակ կանգնում,
Յեվ հետևում է հանդիստ հայացքով

Թխպոտ ամպերին, վոր համր ընթացքով
Գնում են դես-դեն, խառնվում, կուտակվում,
Սև ծոցի միջից շանթեր արձակում.
Կամ դաշտի միջին, քարի կողք մոտ,
Հին հրացանը, մահակը խոըտած
Ու գլխին քաշած մաշված յափնջին
Անխռով լսում է. նրա ականջին
Խլաձայն հասնում են վորոտն ամպերի,
Կայծակի ճայթյունն, վշշոցն անձրևի...
Ազատ է, ազատ բնության վորդին.
Միահավասար մոտ են նրա սրտին
Բնության բոլոր տեսք ու ձայները.—
Թե ականակիտ մթնագիշերը,
Թե խաղաղ, շքեղ գարնան առավոտ,
Աղբյուրի խոխոջ, կայծակի վորոտ...
Ա՛խ, մարդու լեզուն տկար է, տկար,
Բնության տեսքը պատմելու համար.
Բայց նրա հոգին, յերբեմն անարգել,
Յերկինք ու գետինք կարող է գրկել:

V

Նրանց փարախում աստծու գիշերը,
Հավաքվում ձորի վողջ մզդուրները[3],
Ճհուն[4] ու պկուն[5] խառնում են իրար,
Խաղում են, սուում[6], խնդում միալար.
Յեվ նուրբ սուլոցը սրնդի հովվական
Խոսում է կարծես.—մին հովվի նման
Վոչխարի շանն է ձայն տալիս, կանչում,
Մին էլ շան նման հաչում, կլանչում:
Լսե՞լ ես, յերբ լուռ գիշերվան ժամին
Տերևներին զգույշ շարժում է քամին,
Յեվ կամ թե ճնշված լեռնային կիրճում
Վո՛նց է հուսահատ հողմը մռնչում:
Ակա՞նջ ես դրել, թե վոնց է յերգում
Առվակի կարկաչն անտառի խորքում.
Լսե՞լ ես հեզիկ խոխոջն աղբյուրի...
Ահա բնության այս ձայներից մի
Կազմած քաղցրալուր ներդաշնակություն
Հնչում է իգիթ Սաքոյի շհուն:
Իսկ ընկերներից մեկը սրտալի

Յերգում է, կանչում[7] ինչքան ձայն ունի։
Յեվ մելամաղձոտ նրանց բայաթին[8]
Գովեստ է տալիս վեհանձն իգիթին,
Կամ հայրենիքի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին։
Յեվ ամեն մի. ձայն այն յերգում այնքան
Պարզ է և զորեղ, այնքան բնական,
Վոր մարդ նույն ժամին, կարծես, սրտաթունդ
Յելնում է իջնում յերկինք ու անդունդ։
Ապա խաղում են հերթով կենդապար[9].
Յետ-առաջ վազում, ցատկում անդադար,
Յեվ հանկարծ կանգնում, իրան կատարում,
Վոտներով արագ գետնին վերհատում[10]։
Կռնարունուկ են անում իրար հետ,
Շրջան են կազմում, զոփի յեն[11] տալիս,—
Յերկու վոտն առաջ, իսկ մեկ վոտն յետ
Գնում ու դառնում, պտույտ են գալիս։
Դեռ ըսկըսում են կամաց ծանրապար,
Իսկ հետո միջակ. աստիճանաբար
Արագացնում են, և պտույտ առած
Ամբողջ շրջանը գնում է թռած։
Յերբեմն ուռուցիկ կուրծքերն ուռցնում,
Աղաղակում են, սուլում, շվացնում,
Մին էլ միասին հանկարծ կորանում,
Ու կրկին դզվում, կրկին տաքանում
Յեվ փոթորկված գետինը դոփում.
Ոտքերը դողում և հող է թափում։
Նստում են հետո, գլխեցածներից,
Իրանց պապերից, ծիծաղ բաներից[12]
Պատմում են յերկար, յերկա՛ր մինչև ուշ
Գիշերվան կեսը, և քնում անուշ։

## VI

Սակայն այս գիշեր լռություն է տիրում
Նրանց փարախում, և խորը ձորում
Մենակ է Սաքոն. տխուր թեք ընկած,
Նա մտածում է յուր տատի պատմած
Զարքերի մասին, վորոնք միասին,
Ծուռը վոտներով գիշերվան կիսին...
Թուրքի կնանոց կերպարանք առած

Հայտնվում են միայն մենակ մարդկերանց·
Կամ ինչպես քաջքերն այրերի միջից,
Յերբ մեկը նայում է քարի գլխից,
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով,
Յեվ մարդկանց նման խնջույք են սարքում,
Զուռնա յեն ածում, թմբուկ են զարկում...
Այսպիսի դեպքեր շատ են պատահած,
Նույն իսկ Սաքոյին քանի՛սն են պատմած...
Յեվ հիշողությունն օրերից անցած
Յետ կանչեց ձայներ վաղուց մոռացած,
Ձայներ ահալի, մութ պատմություն,
Չար ոգիների գործած չարություն:
Տանի խոսքերը նրա ականջին
Ուրվաձայն, յերկչոտ հնչեցին կրկին·
Հնչեցին յերկար, մինչև նրա վառ
Յերևակայությունը գրգռեցին իսպառ:—
Ահա պատկերներ, տգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խառըն և անկարգ,
Ծանրաշարժ յեկան Սաքոյի դիմաց
Յերևացին և—անցնում են կամաց:
Աչքերը միայն կրակին հառած
Ծանըր է շնչում Սաքոն ահ առած,
Յեվ առողջ կուրծքը լեռնական մարդու
Ալեկոծում է կասկած ահարկու.
Այլև ինչ կասկած,—նա հավատում է...

## VII

«Ո՞վ է հող թափում այս բուխարիկից...
Վա՜հ... այն ո՞վ է... այն ո՞վ է յերդիկից
Դիվական ծիծաղն յերեսին նայում...
Պլըզած աչքերն ի՜նչպես են փայլում...
Թե աստղեր եյին, վոր պսպըղացին...
Չե՛, աչքեր եյին... ա՜յ, ծիծաղեցին...
Ի՞նչ վոտնաձայն եր, վոր կտրովըն յեկավ...
Թեթև քայլերով դուռը մոտեցավ...
Ո՞վ պետք է լինի... Ինչո՞ւ չի խոսում...
Այսպես տարաժամ ի՞նչ բան է ուզում...
Բայց ինչպես յեղավ, ազատիլ Զորին[13]
Զըպատառոտեց անժամ յեկվորին...

Այս ի՞նչպես յեկավ... չե՛, սա ով որ ե,
Ծանոթ ոգին ե, շունը սովոր ե...
Իմ շան ահից ել ո՞վ սիրտ կանի...
Իմացա՛, ընկերս—Գևոն կըլնի...
Սուտ վախեցնում ե... հա՛, նա յե, նա...»:
(Կանչում ե) «Գևո՜»... Ձայն-ծպտուն չըկա,
Միայն ահավոր լռության միջում
Ձորագետն ե խուլ, մրափած վշշում:
Յեվ ո՞վ կըլնի զարթուն այս ժամին,
Աշխարհը քնած ե, նույն իսկ թույլ քամին.
Քնած չեն միայն անքուն ջրերը,
Վխտում են ուրախ լիքը ձորերը:
Աչքերը հանգչող կրակին հառած
Ծանր ե շնչում Սաքոն ահ առած,
Յեվ առողջ կուրծքը լեռնական մարդու
Ալեկոծում ե կասկած ահարկու:
Այլև ի՞նչ կասկած, հավատում ե նա,
Բայց տուր չի տալիս[14],—կալնում ե ահա.
«Տվաք եր գուցե, աչքիս յերևաց...
Չե, ահա կուռը դողաց, յերերաց...
Գալիս են դարձյալ... ի՞նչպես են փայլում...
Դռան յետևից ձայներ են լսվում...»:
Վախեցած Սաքոն գլուխը մի քիչ
Հազիվ բարձրացրեց, աղաղակ, քրքիջ
Յեվ դժոխալուր ձայներ բյուրավոր
Բռնել եյին դուռն ու կտուրը բոլոր:
Սիրտը դողդողաց և փշաքաղած
Սաքոն վողջանդամ մի սարսուռ զգաց.
Գևոյի դանակը յերկչոտ հայացքով
Աչքերը չռեց, մտքի մեջ գոռով՝
«Նրանք են» ասաց, և դուռը բացվեց,
Թուրքի կանանցով փարախը լցվեց:
Ինչպես գիշերը յերկնում սևակնած
Փայլատակում ե կայծակը հանկարծ,
Այնպես մի կրակ աչքերըն առավ,
Յեվ իգիթ Սաքոն փարախից թռավ:

VIII

Այն Լոռու ձորն ե, ուր հանդիսակաց
Ժայռերն ամեհի, նոթերը կիտած,

Դեմ ու դեմ կանգնած, համառ և անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ։
Սև ծովի նման մլարը կանգնած
Գրկում է նրանց կուրծքը կախ ընկած,
Վոր, կարծես, ահա, հենց այս վայրկենին
Վայր կընկնեն անահ անցվորի գլխին։
Ահռելի ձոր է. այնտեղ Դեբեդը
Փրփրած վազում է, սրընթաց գետը
Գոռում է, ինչպես վիրավոր գազան,
Յեվ աղաղակին այն յերկրասասան
Խոր, լայնաբերան քարանձավները
Կցում են իրանց քաջքի ձայները[15],
Կազմում վայրենի ներդաշնակություն.
Սարսափ է ազդում անսովոր մարդուն։
Գիշերը լուսնի յերկչոտ շողերը
Յերբ վոր ընկնում են այն ահեղ ձորը,
Յեվ ալքերի[16] հետ խաղում դողալով,
Իսկ ալիքները գետի շողալով
Հուզվում են, իրար յետևից փախչում,
Դեբեդը խավար անդունդի խորքում,
Մի արծաթափայլ նեղ շերտի նման
Պտույտներ առած ձգվում է յերկայն։
Այս տախտի[17] վրա, այն ժայռի գլխին
Կանգնած է մենակ, խավար ու լռին,
Մի քանդված հին բերդ, մի ավերակ վանք,
Մռայլ ու տխուր, ինչպես զարհուրանք,
Իսկ քարի գլխից լուռ մարդու նման
Նայում է ձորին մի հին խաչարձան...

IX

Խավարչտին գիշեր, և կես գիշերին
Վես Ձորագետի ժեռուտ ափերին,
Անդնդամած խոր Լոռու ձորում
Մի բարձրահասակ մարդ է թափառում։
Ստվերի նման, ծառերի տակին
Հայտնվում է մին, չքանում կրկին.
Յեվ լայն խանչալի դաստակը կողքին
Զարկելով գոտու յերկաթյա թողկին[18],
Զըրխկչըրխկում է, կարծես յուր զարկով
Համրում է նրա քայլերը կարգով։

*Հնչում է զուռնան մութ քարանձավից.*
*Զարերը վազում նրա յետեվից,*
*Դեբեդն էլ անդուլ գոռում է. «Հա՛,*
*Այստեղ է Սաքո՛ն, այստեղ է ահա՛»:*
*Ցեվ դուրս են թռչում ջուր ալիքներից*
*Գիտախուխ ալքերն իրար յետեվից,*
*Վազում են, բռնեն խելթ Սաքոյին,*
*Վոր տանեն դեպի հատակը խորին:*
*Բար ու մացառուտ առած վոտնատակ*
*Թռչում է Սաքոն քամուց էլ արագ.*
*Սափրած, առաջին ցոլացին աչքեր,*
*Թփից դուրս թռան մի քանի քաջքեր:*
*Մի ակնթարթում Սաքոն յուր թափը*
*Կտրեց և խուլ թողեց դեպի...*
*Արձագանք տվեց ձորն այդ մեջտեղին*
*Նրա ավազի գամփռի հաջոցին.*
*Փարախն էլ գուցե մի գայլ է մտել,*
*Աղքատի հոտը կերել, խեղդոտել:*
*Խելագարվել Սաքոն վոչինչ չի հիշում,*
*Քշում են նրան, չարերը քշում,*
*Քաջքերն էլ այրից զուռնա-դհոլով*
*Կանչում են, կանչում ծանոթ ձայներով.*
*Իսկ Ձորագետից ալքեր են թռչում,*
*Ցեվ ալիքները փրփրադեղ ուռչում,*
*Մռայլի մեջին ծփում են կայտառ՝*
*— Բռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար»:*

X

*Վազում է Սաքոն. այն ինչ այդ ժամին*
*Սաքոյի նանը—պառավ Նազանին,*
*Փոքրիկ թոռներին առած ու լաց*
*Քաջքից է պատմում վոգևորված.*
*Իսկ առավոտյան նրան կենդանի,*
*Խելագար Սաքոն վկա կըկանգնի:*

# ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

## <ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ>

I

*Խոր ձորի միջին ահա մի տնակ,*
*Այնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ։*
*Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.*
*Նա էլ այս գիշեր—*
*Հացը պակասեց, չընալեր չըկար,*
*Աղ էր հարկավոր վոչխարի համար,*
*Ուզեց զոքանչի ձըվաձեղ ուտել,*
*Թե նշանածին շատ էր կարոտել,—*
*Գնացել է տուն.*
*Այն ինչ համկալը հենց տավարը*
*Դեպի սարերը քըշեց յուր հոտը։*
*Յեվ Սաքոն անքուն,*
*Թաց տըրեխները հանել է, քերել,*
*Գուլպան բուխարու վրա կախ արել,*
*Ու թինկը տըվել,*
*Մեն-մենակ թըթվել։*

II

*Թեկուզ և մենակ լինի վարախում,*
*Աժդահա Սաքոն ընչից է վախում.*
*Հապա մի նայիր նորա հասակին,—*
*Վո՛նց է մեկնըվել, կարծես ահագին*
*Կաղնըքի լինի անտառում ընկած…*
*Բայց յեթե տեղից վեր կացավ հանկարծ,*
*Գըլուխը մեխած մահակը վերցըրեց,*
*Յեթե շըներին ձայն տըվեց, կանչեց*
*Ու բիրտ, վայրենի տաշըղ կանգնեց,*
*Դու կը հասկանաս, թե ինչու համար,*
*Գող, գայլ ու գազան, վողջ լեղապատառ,*
*Հենց դատարկ վախից*
*Հեռու յեն փախչում նորա վարախից։*

III

Նորա փարախին հսկում է Զորին,
Ազապիկ Զորին հսկում է անքուն,
Ներքև է բերում նա ձիավորին,
Ղուշն էլ չի անցնում նրանից թագուն:
Թեպետև Սաքոն յեղբայրներ ունի
Ու նրանց համար արյունը կըտա,
Բայց Զորու նման էլ ո՞վ կըլինի,
Նրան հավասար յեղբայր էլ չըկա:
Մըթնագիշերին հեղեղ է թափում,
Հողմը վշշում է, շանթը փայլկըտում,
Սաքոյի վրա գազանը գալիս,
Սաքոյի հոտին գող վրա տալիս,
Քնած է Սաքոն, բան չէ իմանում,
Զորին է նրանց՝ դիմացը կանգնում:
Ընկել է Սաքոն թշնամու հետքին,
Կալում է Սաքոն թշնամու դիմաց, —
Զորին գալիս է յուր հետ—կըրնկին,
Յուր կողքին դարձյալ Զորին է կանգնած:
Նորա փարախին հսկում է Զորին,
Ազապիկ Զորին հսկում է անքուն,
Ներքև է բերում նա ձիավորին,
Ղուշն էլ չի անցնում նրանից թագուն:

IV

Ո՞վ ես, դու, հե՛յ անցվորական,
Վոր թեպետև պարզ որով,
Այդպես անվախ, անհրացան
Անց ես կենում այս ձորով:
Ասենք խիկի չես վախենում
Վոչ գազանից, վոչ բանից,
Հապա ի՞նչպես ահ չես անում
Այս ձորերի չորանից: —
Գուցե նրան անդյուրեկան
Մի ազամարդ յեղար դու,—
Ծռի՛ր ճամբեդ, ոտարական,
Կանչիր անունն աստըծու:
Հեշտ կազատվես անդունդներից,
Հորձանքներից այս գետի,

Բայց Սաքոյի չար հանաքից
Թող քեզ աստված ազատի։
Սակայն յեթե մի վիշտ ունես,
Վոր կարող ե նա օգնել,
Թե սիրուհիդ մերժում ե քեզ,—
Ապա բարով ես յեկել։
Թե Թուրքերը գոմակներիդ
Փուփը կտրել են, տարել,
Այժմ ուզում ես դարձնել գերից,—
Կըրկին լավ ես միտք արել։
Այնժամ նըրան գոնե մի որ
Յեղիր ղոնախ Թանկագին,
Ընկերություն արա անդորր
Յուր հովվական պարզ կյանքին։

V

Աղամա մութը դեռ նոր փարատված
Յեվ հորիզոնից դեռ կամա՛ց-կամաց
Նոր ե լուսաստղը յերեսը հանում,
Վոր Սաքոն վոչխարն արոտ ե տանում։
Շըքեղազարդ լեռների օդը
Յեվ շաղաթաթախ ծաղիկն ու խոտը
Դրախտի անուշ կնդրուկի նման,
Ասես բուրմունքով, շնչով կենսական
Լցնում են կուրծքը, վերացնում հոգին…
Ի՛նչ կը հասնի Սաքոյի կյանքին։
Ամեն առավոտ տեսնում ե աչքով
Թե արևելքում ինչպես ե շըքով,
Ամպերի միջից արյնաթույր և թուխ
Բացվում արշալույսն ինչպես հրաբուխ,
Կամ թե բոցավառ հըրդեհի նման,
Վոր թանձր ծխից հայտնում ե իրան։
Յեվ առաջին շողն արևագալին
Յերբ վոր ընկնում ե լեռների ծայրին,
Կարմըրին տալով, ասես թե քըրքում,
Ժայռ ժանիքները վարդերանգ ներկում՝
Մեր հուժկու Սաքոն այս ժամանակին
Հենված հովվական յերկայն մահակին,
Ծալված փափախը ականջին թեքած,
Թերմաշ յափընջին ուսովը ձըգած,

Ինչպես լեռների տեր ու թագավոր, —
Նոր որը գալիս, —
Իրան թևավոր
Ցերաժիշտներով վողջույն է տալիս:

---

Սև-սև ամպեր են գալիս հավաքվում,
Մթնում է յերկինքն ու փայլատակում,
Սուրած-սասանած յերկիրը վախից
Ուզում է կարծես փախչել յուր տեղից
Յեվ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ,
Յերբ փշշացնում է, ինչպես մի սև ոձ,
Թեքվում, ընկնում է ծառը հաստարմատ,
Ամբողջ ծըմակը հեծծում հուսահատ.
Ամպերը գոռում մըթնած յերկնքից,
Գետինը դողում, շարժվում է հիմքից,
Ապա յերկինքը պատռված կարծես,
Հեղեղ է թափում կըժով ջըրի պես,
Հեղե՛ղ, վոր պետք է քո աչքով տեսնես,
Շիթերից բըռնես յերկինքը հանես, —
Սաքոն վոչխարը ծմակն է քշում,
Մի տերևալի ծառի տակ մտնում
Յեվ հետևում է հանդարտ հայացքով
Թխպոտ ամպերին, վոր համր ընթացքով
Գնում են դես-դեն, սարերով անցնում,
Մութ ծոցի միջին լախտեր խաղացնում,
Հըրեղե՛ն լախտեր, վորոնց մի տուտը
Հասնում է ներքև — մինչև անդունդը,
Սատանաներին այնպես դողացնում,
Վոր ձայնը մարդու ականջն է հասնում:

VI

Արևը սարի յետևն է մտնում,
Ցերեկը հատնում.
Մթնաժամում են ձորն ու անտառը,
Բայց դեռ չի մթնում յերկնամերձ սարը.
Վոտները ներքև խավարում թաղված,
Գագաթն այրվում է լուսով շաղախված,
Մինչև հովիտից չար դողի նըման
Գիշերվա ստվերը թագուն բարձրանում,
Լույսի — ցերեկվան

Այն մնացորդն էլ հանկարծ կըլանում,
Յեվ ինքը խոժոռ, մռայլ ու ահեղ
Բազմում է այնտեղ,
Լուսնյակի լուսով սարերի գըլխին
Բնում՝ փաթաթված յուր սև յափնջում,
Մինչև մոտակա գյուղից կըրկին
Աքաղաղները ծուղրուղո՛ւ կանչում,
Կամ թե արևի շողերն են ծագում —
Աչքերը ծակում,
Հալածում դեպի անհայտ աշխարքի,
Աշխարքի տակի
Ծածուկ այրերը,
Ուր վոր ապրում են մութն ու գիշերը:

---

Իրիկունն յեկավ, մըշակներն արդեն
Հանդից հավաքվել, վառել են ոդեն,
Ճհուն ու ըլկուն խառնել են իրար,
Խաղում են, ասում,—խնդում միաբար:
Յեվ ախորժաձայն սրինգն հովվական
Խոսում է կարծես,—մին հովվի նման
Վոչխարի չանն է ձայն տալիս, կանչում,
Մին էլ չան նման հաջում, կլանչում···
Լսե՞լ ես, յերբ լուռ գիշերվա ժամին
Տերևներն զգույշ շարժում է քամին,
Յեվ կամ թե նեղլիկ լեռնային կիրճում
Վոնց է հուսահատ հողմը մռընչում:
Ակա՞նջ ես դրել, թե վոնց է յերգում
Առվակի կարկաչն անտառի խորքում,
Լսե՞լ ես հեզիկ խոխոջն աղբյուրի,
Փափուկ մեղեդին լեռնային ջըրի···
Ամենքից ջոկած, առած մի հնչյուն,
Հնչում է իգիթ Սաքոյի շըհուն,
Իսկ ընկերներից մեկը գոռալի
Յերգում է, կանչում, ինչքան ձայն ունի:
Յեվ մելամաղձոտ նրանց բայաթին
Գովեստ է տալիս վեհանձն իգիթին,
Կամ հայրենիքի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին···
Յեվ ամեն մի ձայն այն յերգում այնքան
Պարզ է և ուժգին, այնքա՛ն բնական,

Վոր մարդ նույն ժամին թուլված, սրտաթունդ,
Յելնում ե—իջնում յերկլինք ու անդունդ:
Ապա խաղում են հերթով կենդադար,
Յետ-առաջ վազում, ցատկում անդադար,
Յեվ հանկարծ կանգնում իրանց կոտրատում,
Վոտներով արագ գետնին վեր հատում:
Կռնաբռնուկ են անում իրար հետ,
Շրջան են կազմում զոփի յեն տալիս,
Յերկու վոտն առաջ, իսկ մեկ վոտը յետ
Գնում ու դառնում—սյուսյա են գալիս:
Դեռ ըսկսում են կամաց—ծանրաքայլ,
Իսկ հետո միջակ· տախճանարար
Արագացնում են, և պտույտ առած
Ամբողջ շրջանը գնում ե թռած:
Յերբեմն ուռուցիկ կուրծքերն ուռցնում,
Աղաղակում են, սուլում, չփացնում,
Մեկ'ել մխասին հանկարծ կոտրանում
Ու կրկին դոփում, կրկին տաքանում
Յեվ վողողված գետինը դոփում·
Ճորքը դողում և հող ե թափում:
Նստում են հետո գլխեցածներից,
Իրանց պապերից, ծիծաղ բաներից
Պատմում են յերկար, յերկա՛ր, մինչև ուշ
Գիշերվան կեսը և քընում անուշ:

VII

Դե՛հ բարի գիշեր, իմ քաջ իղիթներ,
Դուք պինդ քնեցեք մինչև լուսադեմ,
Իսկ յես իմ չհոգնած միշելու յեմ դեռ,
Պետք ե ձեր պատվին դեռ մի բան յերգեմ:—

«Լուռ ձորը կոխեց մութը,
Անլույս մութը գիշերի,
Այնտեղ—մթնում ծեր Դեբեդը
Յերգում ե անցքն յուր ջըրի:

Պատմում ե այն հին որերից,
Յերբ վոր ծնունդ ե առել՝
Ով ե անցել յուր ձորերից,
Ինչ գործեր ե կատարել:

Յեվ յերբեմըն հառաչելով
Նրանց հոգվոցն է ասում,
Վորոնք խեղդվել յուր ջրերում,
Հանգչում են յուր ալազում:

Պատմում է նա գիշերն ի բուն
Գըլխի անցքերն յուր հին–հին,
Թեև խորթ է նորա լեզուն
Ոտարածին հյուրերին:

Այս երեկուն նորա ափին
Թուրքի քոչ է վայր յեկել,
Վայր է յեկել և ահագին
Խարույկները բորբոքել:

Սակայն ինչու մռայլած են
Թուխ դեմքերը Թուրքերի,
Կամ թե ինչու դեռ լռած են
Զայներն անհոգ յերգերի:

Շա՞տ է հոգնել ճանապարհից
Այն խուժանը անհանգիստ,
Վախենո՞ւմ է խորին ձորից,
Թե՞ գիշերը մութն է խիստ:

— Թուրքի համար ահավոր չեն
Վոչ մութ գիշեր և վոչ ձոր,
Բայց այս ձորը Լոռու ձորն է,
Լոռեցին է ահավոր:

Մեկ էլ տեսար մի թունդ վորոտ
Անտառիցը այն մըթին,
Կը հանգցընի կրակի մոտ
Տխուր նստած իգիթին.

Կամ հանդուգն ջահելները
Վրա կըտան զինավառ,
Յեվ կըքշեն անտառները
Թուրքի ջոկերն ու տավար:

Կամ ուր վոր է մահակներով
Մի խուռն ամբոխ կերևա,

Յեթե թուրքը դողությունով
Մի մեղք անի իր վըրա։

Կամ ով գիտի չոբանները
Ահը հանած սըրտերից,
Ճանապարհին սյուրունները
Անց են կացրել արտերից…

Նրա համար մռայլած են
Թուխ դեմքերը թուրքերի,
Նրա համար և լռած են
Ձայներն անհոգ յերգերի…»։

VIII

Սակայն ահագին ձորում այս գիշեր
Մենակ է Սաքոն և չունի ընկեր։
Բուխարու կողքին տխուր թեք ընկած
Մտածում է նա յուր տատի պատմած
Չարքերի մասին, վորոնք միասին,
Ծուռը վոտներով, գիշերվան կեսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած
Հայտնվում են միշտ միայնակ մարդկանց…
Կամ ինչպես քաջքերն այրերի մթնից,
Յերբ մարդ նայում է քարափի գլխից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով.
Յեվ մարդկանց նման խնջույք են սարքում,
Զուռնա յեն ածում, թմբուկ են զարկում…
Այսպիսի դեպքեր չա՜տ են պատահել,
Նույն իսկ Սաքոյին քանի՜սն են պատմել…
Յեվ հիշողությունն անցած որերից,
Նորա մանկության յերեկոներից,
Յերբ նա քաջքերից վախենում եր դեռ,
Յետ բերեց վաղուց մոռացած ձայներ.
Ձայնե՜ր ահալի, տխուր պատմության
Չար վոգիների արած չարության։
Տատի խոսքերը նորա ականջին
Ուրվաձայն, յերկչոտ հնչեցին կրկին.—

«Կասեն՝ Սաքո՜, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.

Տե՛ս, մենք ուրախ պար ենք գալի —
Սիրուն, ջահել հարսն—աղջիկ:

Ինձ մոտ արի, ձվածեղ անեմ,
Ինձ մոտ արի բլիթ տամ.
Յես քո հոքիրն . . . յես քո նանն եմ . . .
Յես էլ աղիղ բարեկամ . . .

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Ես աղջիկը տե՛ս ինչ լավն ա . . .
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի —
Տարա նի նա՛, տարա նանա՛՛ . . .»:

Յեվ խոլ պատկերներ, ոգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խառներամ, անկարգ,
Ծանրաշարժ յեկան Սաքոյի գլխաց
Յերևութք յեղան—անցնում են կամաց . . .
Անցնում են դանդաղ ստվերների պես,
Զար ժպիտներով, ժանտ ու սևերես . . .
Աչքերը անթարթ կըրակին հառած
Ծանըր է շնչում Սաքոն ահ առած,
Յեվ առողջ կուրծքը լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու:

IX

Սրընթաց պախրա, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Թե այծյամն հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց վոտով.
Թե հողմահարված տերևն եր դողում,
Թե յերկչոտ մուկը վազեց պուճախում,
Թե վոչխարների թույլ մնչոցն եր այն,—
Սաքոյին թվաց, թե մի վոռնաձայն
Յեկավ ու կանգնեց փարախի կողքին:

X

«Ո՞վ է հող թափում ես բուխուրակից . . .
Ո՞վ է յերդկովը մըտիկ տալիս ինձ . . .
Ընչի՞ համար է այնպես ծիծաղում.
Վո՛նց են պըլըղած աչքերը փայլում . . .

Ի՞նչ վոտնաձայն էր, վոր անցավ կարից...
Ո՞վ է շունչ քաշում դըռան յետևից...
Ո՞վ պետք է լինի. ինչո՞ւ չի խոսում...
Ես կես գիշերին ի՞նչ բան է ուզում...
Ես ի՞նչպես յեղավ—աղաղակ Զորին
Զըրպատըտորից անժամ յեկվորին...
Ես ի՞նչպես յեկավ... չէ՛, սա ով-վոր է,
Ծանոթ ոքմին է, շունը սովոր է:
Իմ չան ահիցը էլ ո՞վ սիրտ կանի...
Իմացա՛, ընկերս—Գեվոն կըլինի...
Սուտ վախեցնում է... հա՛, նա յե, նա...
Գեվո՛ո՜...

Ձայն, ծպտուն չըկա.

Մենակ ահավոր լռության միջում
Զարթնում է խուլ մրափած վշշում:
Յեվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին.
Աշխարհը քնած է—քնած է քամին,
Անքուն չարքերը չեն միմիայն քնած,
Ուրախ վխտում են ձորերը բռնած...
Յեվ վազվզում են ստվերների պես,
Յեվ վերանում են տերևների պես...
Մինչև վոր մենակ մի մարդ կըգտնեն,
Վոր նրա սիրտը... փարախը մտնեն...
Աչքերը հանդչող կըրակին հառած,
Ծանըր է շնչում հովիվն ահ առած,
Յեվ սառը կուրծքը լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու.—
«Չէ՛, քամին էր էն... էն գայլի շվաք...
Էն ստվեր էյին աչքերի տեղակ,
Վոր լուսածակից ներս էյին ընկել...»:
Բայց վախենում է նայել, մոտեցել.
Սակայն ականջը ձայներ է լսում.
Կըտրոլ գալիս են, դուռը փախում...:
Վախեցած Սաքոն գլուխը մի քիչ
Տեղիցը շարժեց,—աղաղակ, քըրքիջ,
Յեվ դժոխային ձայներ բյուրավոր
Բռնել էյին դուռն ու կտուրը բոլոր...
Սիրտը թունդ առավ, և փշաքաղած
Մի սարսուռ զգաց:
Դեպի դռնակը մթնած աչքերով

Հուսահատ նայեց, մաքումը զոռով
«Նրանք են» ասաց, և դուռը բացվեց,
Թուրքի կանանցով փարախը լցվեց.
Փարախը լցվեց Թուրքի կանանցով,
Ճիչ-հըրհուրոցով, հարա-հրոցով…

---

Ինչպես գիշերը յերկնում սևակնած
Փայլատակում է կայծակը հանկարծ,
Այնպես մի կըրակ աչքերըն առավ
Յեվ խըլիթ Սաքոն փարախից թռավ:

XI

Այն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերն ամեհի նոթերը կիտած,
Դեմուդեմ կանգնած, համառ և անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:
Սև ծովի նման մըլարը կանգնած
Գրկում է նրանց կուրծքը կախընկած,
Վոր կարծես ահա, հենց այս վայրկենին
Վայր կընկնեն անահ անցվորի գլխին:
Ահուելի ձոր է. այնտեղ Դեբեդը
Փըրփըրած վազում է: Սրընթաց գետը
Գոռում է, ինչպես վիրավոր գազան,
Յեվ աղաղակին այն յերկրասասան
Ձոր, լայնաբերան քարանձավները
Կցում են իրանց քաջքի ձայները,
Կազմում վայրենի ներդաշնակություն.
Սարսափ է ազդում անսովոր մարդուն:
Գիշերը լուսնի յերկչոտ շողերը
Յերբ վոր մտնում են այն ահեղ ձորը
Յեվ ալքերի հետ խաղում դողալով,
Իսկ ալիքները խիտ-խիտ շողալով
Հուզվում են, իրար յետևից փախչում,
Դեբեդը խավար անդունդի խորքում,
Մի արծաթափայլ նեղ շերտի նման
Պտույտներ առած ձգվում է յերկայն:
Այս տախտի վրա, այն ժայռի գլխին
Կանգնած է մենակ, խավար ու լըռին
Մի քանդված հին բերդ, մի ավերակ վանք,
Մռայլ ու տխուր ինչպես զարհուրանք.

Իսկ քարի գլխից լուռ մարդու նման
Նայում է ձորին մի հին խաչարձան:

## XII

Այն ձորում ահա, այն խավար ձորում
Այս կես գիշերին նա յե թափառում,
Ահա նա ընկած քար ու թփերով,
Վազում է գետի ժեռուտ ափերով:
Յերկայն խանչալի դաստակը կողքին
Զարկում է գոտու յերկաթյա թաղկին,
Զըրխկըրխկում է, կարծես յուր պարկով
Համրում է նրա քայլերը կարգով:
Հնչում է զուռնան մութ քարանձավից,
Զարքերը վազում նրա յետևից,
Դերեդն էլ անդուլ գոռում է, թե՝ «Հա՛,
Այստեղ է Սաքոն, այստեղ է, ահա՛...»:
Յել դուրս են թռչում հորդ ալիքներից
Հերարձակ ալքերն իրար յետևից,
Վազում են բռնեն խեղճ Սաքոյին,
Վոր տանեն գետի հատակը խորին.
Բայց նա փախչում է,
Փախած կանչում է
Յուր հավատարիմ միակ ընկերին,—
«Յեկա՛ն, յեկա՛ն, Զորի հե՛յ,
Բռնի՛, Զորի, արի հե՛յ...»:
Ու բոլլիկ թռչում քամուց էլ արագ,
Քար ու մացառուտ առած վռնտատակ:
Սակայն առաջին ցոլացին աչքեր,
Թփից դուրս թռան մի քանի քաջքեր.
Մի ակնթարթում նա իրան թափը
Կտրեց և իսկույն թողեց գետափը...
Արձագանք տվեց ձորն այդ միջոցին
Նրա ազազիլ գամփռի հաչոցին.
Փարախն էլ գուցե մի գայլ է մտել,
Աղքատի հոտը կերել, խեղդոտել...
Խելագարվել Սաքոն վոչինչ չի հիշում,
Քշում են նրան չարերը, քըշում,
Քաջքերն էլ այրից զուռնա-դհոլով
Տանում-կանչում են ծանոթ ձայներով.—

«Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, մենք ուրախ պար ենք գալի,
Սիրուն, ջահել հարսն-աղջիկ։

Ինձ մոտ արի—ձվածեղ անեմ,
Ինձ մոտ արի—քեզ բան տամ.
Յես քո հոքիրն... յես քո նանն եմ...
Յես էլ սրտի բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի—
Ես աղջիկը տե՛ս ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի—
Տարա նի նա՛, տարա նանա՛՛...»։

Իսկ Ձորագետից ալքեր են թռչում...
Յեվ ալիքները փրփրադեզ ուռչում,
Մռայլի միջին ծփում են կայտառ,—
«Բռնեցե՛ք, փախավ Սաքոն խելագար...»։

XIII

Այն ինչ այդ ժամին
Սաքոյի նանը—պառավ Նազանին
Հանգչող բուխարու դիմացը նստած,
Փոքրիկ թոռներին չուրջը հավաքած
Պատմում եր նրանց խավար աշխարհից,
Հարս-մարդադելից, դևերից, չարից,
Սև սատանայից, քաջքից ու ալքից,
Վոր մարդու խարում, հանում են խելքից,
Տանից թռցընում, դցում քարեքար,
Փչում են, քշում, տանջում անդադար,
Սիրտը այրում են անշեջ կըրակով,
Մեջքը վառում են ոձի մորակով,
Ձորերը դցում.
Ծեծում, հալածում...

XIV

Յեվ տավիղը—վաղ լուսադեմին,
Յերբ լույսն ու մութը դեռ կռվում եյին,
Չեյին բաժանվել սակայն իրարից,
Խելագար Սաքոն դուրս յեկավ ձորից,

Իրանց տան դուռը բաց արեց Թափով,
Ներս ընկավ հանկարծ, գոռաց սարսափով—
«Վա՛յ, յեկան, մեջքը՛ս, ձեզ մատաղ, յեկա՛ն...»:
Յեվ խոլույն ոձի չանթածի նման
Դուրս փախավ կրկին:
Հայր, մայր, տատ, յեղբայր, յերեխա ու կին
Դուրս ընկան նորա յետևից լալով.
Բայց նա փախչում եր աղաղակելով.
«Ջորի, հե՛յ,
Արի՛, հե՛յ...»:

# Ա Ն Ո Ւ Շ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### I

Ամպշող[1] գիշեր է. ահա քեզ Լոռու
Զքնաղ լեռները ձգվում են հեռու.
Այս լեռների մեջ յուր ավանդներով
Մի պարզ ժողովուրդ ապրում էր սիրով,
Յեվ նորա հոգին հստակ էր և վես
Իրան լեռների, աղբյուրների պես:
Այն օրից օրեր դեռ շատ չեն անցել
Յեվ հասած վերքը դեռ չե հնացել.—
Լսվում են մեկ-մեկ հնոց յերգերը
Յեվ հին սերունդի բոլոր կըրքերը—
Նրանց արատը, արարքն անվեհեր
Հնչող ձայներում պահում են անմեռ:

### II

Տեսնո՞ւմ ես, գյուղը մառայլի միջին
Սևին է տալիս սարի ստորոտում,
Նրանից ներքև խոր ու խավարչտին
Ձորում խլաձայն գետն է վորոտում.
Ծեն ու շրջակայք գրկել է Մորփեն
Յեվ վոչ մի տեղից չի լսվում շշյուն,—
Կես գիշերվանից լռել են արդեն
Սայլորդի յերգը և հովվի շչուն:

### III

Այս ժողովրդին միշտ պատրաստ ու կազմ
Իրանց քաջասիրտ իշխան-մեծերը
Առաջնորդում եյին դեպի պատերազմ
Յեվ վճռում եյին ծագած վեճերը.
Իսկ հիմա նրանք հանգիստ ու խաղաղ

Իրանց խուղերում և հին վրանում
Ապրում են աղքատ և արդեն անցյալ
Արկածներից են պատմություն անում.—
Այս ձորերումն էր, վոր Բագրատունին
Բախտի հետ խաղաց յուր խաղը վերջին,
Սեգ Տուտեորդին, Ոհան Ոձնեցին
Հայրենյաց պաշտպան սուսերն որհնեցին.
Այստեղ տակավին պապական խոսքով
Զրույց է անում ծեր չինականը,
Թե այս ձորերում պարսկատանջ բազկով
Կռիվ է արել Մամիկոնյանը.
Կռիվ է արել հավատի համար
Ընդդեմ անորեն թշնամիների,
Կառուցել ճերմակ, բարձրաքաշ տաճար
Իբրև պահապան իրան աշխարհի:
Յեվ այսօր ապրում է այն քաջերի
Նախնյաց սերունդը հայրերի շինած
Հըրաշակամար, քանդված տաճարի
Մեծ զորության միայն ապավինած...
Բայց առ ու փախի պատմություններով
Սնվել են նրանց միտքն ու սրտերը,
Յեվ ահա այսօր տեսնում ենք զորով
Նախնյաց բարքերի նսեմ ստվերը:

IV

Վո՛րքան սիրել եմ, չքնաղ հայրենիք,
Քո սար ու ձորում մեծացած մարդկանց
Սովորությունքը պարզ ու վայրենի—
Ատելը անկեղծ, սիրելը սրտանց.
Յերբ վոր միասին գվարճանում են
Իրանց ոջախում, թեկուզ չոր հացով,
Միասին վարում, միասին ցանում են,
Մխիթարվում են մի բախտի հուսով:
Նրանց հարկի տակ շատ ու շատ անգամ
Յես էլ եմ նրանց յեղել խնդակից,
Յերբ վոր, ցավները մոռացած, առ ժամ
Ուրախացել են արցունքի տակից:
Սիրել եմ տանջվել նրանց ցավերով
Անարդար հասած վոխերիմ ձեռքից,
Յեվ պատանեկան վստահ ցնորքով

Նրանց բողոքին լինել ձայնակից…։
Ցավ կաղաղակեմ, քանի անցնում եմ
Քո շեմքի վերա օտարի հետքեր,
Ցավ կըհառաչեմ, քանի ծխում են
Քո կրծքի վերա նորանոր վերքեր։
Ահա վերստին հարություն առար
Քո վարած կյանքով իմ հուզված մտքում—
Առավել տխուր, առավել խավար,
Քան՝ ցույց տվածը պատմողի գրքում.—
Դեմքեր չարչարված նահատակների,
Հուսահատ արտասունք մեռնող ձայների…
Ահա, և մթնում, կուչ յեկած մնջիկ,
Լալիս է մենակ մի սիրուն աղջիկ։
Այսպես՝ այն սերը, որ փոթորկալի
Դու վառել ես քո վորդոց սրտերում,
Անլուր տխրությամբ և անլսելի
Հեծում է նրանց բոլոր յերգերում։

V

Զարարա՛խտ աշխարհ, սիրով շունչ առած
Քո յերգիչները քանի յերգ հնչեն,
Մի՞թե խավարի բռնության տարած
Զոհերի ցավով պիտի հառաչեն։
Ցավ ինչո՞ւ համար քո զավակները
Գեթ ընտանեկան չունեցան խնդում,
Քի՞չ եյին դրսից հասած ցավերը,
Քի՞չ եր օտարը նրանց գիշատում…
Թշվա՛ռ, չիմացար ստեղծել դու կին,
Գիշերվա մթնում փնտրեցիր նրան,
Լռության կնիք դրիր շրթունքին,
Ցավ պատրաստեցիր… տանջանք անբաժան։
Ցավ տանջանքներով կապրես անկասկած,
Ինչպես վոր մինչև այսօր ես ապրել,
Դրսից խոցոտված, ներսից խոցոտված,
Մի որ անարգված, մյուս որն առավել…

VI

Ի՞նչ ես կամենում դո՛ւ, դատող հոգի,
Մարդոց արցունքը քեզ դո՞ւր չե գալիս,
Նե՞ղ է քեզ համար սահմանը կյանքի…

Լուռ կաց, հանդարտվի՛ր, և ցավ զգալիս,
Յեթե կամենաս քո ալեկոծված
Զորությամբ դիպչել մարդկանց ականջին
Յեվ նրանց սրտին ազդել անկասկած,
Կսկիծըդ հանձնիր սրտագետ յերգչին,—
Մարդիկ ընկած են, նրանց չեն ազդում
Իմաստուն խոսքեր կյանքի հոգատար,
Յեվ հարկավոր է հոգեկան շարժում—
Հեշտալուր ձայներ—սրտի քնար:

VII

Դե, թռի՛ր ինձ հետ տենչով հրաթև,
Վորպես թռչում է կարոտած սերը,
Մինչև կըտեսնես քեզանից ներքև
Խորին ձորերի սև անդունդները.
Յեվ քո թույլ վոտքը թող գեթ մի անգամ
Շոշափե բարձունքն ազատ սարերի...
Աչքդ բաց արա, նայի՛ր, բարեկամ,
Ահա հին Լոռին Հայոց աշխարհի:

VIII

Վողջո՛ւյն, վեհափառ լեռներ յերկնահուպ,
Ո՛վ հրաշալիք հզոր արարչի,
Յեվ, ահա, հոգիս, ինչպես մի ասուպ,
Թռած գալիս է ձեր գըլխին հանգչի.—
Այդ գագաթներին, վոր ձյունապատ
Փայլատակում են ընդդեմ աստղերին,
Այդ ամպերի մեջ, վոր կուտակ-կուտակ
Ծանրանում է ձեր չքեղ ուսերին.
Այդ սառն ու հստակ աղբյուրների մոտ,
Վոր ապառաժից հորդառատ բղխում,
Ավազի վրա, կայտառ, ծիծաղկոտ
Ցերեկի նման կրկչում են, խաղում.
Պարզ առուների զալար ափերին,
Վոր սահանքավոր իջնում են փրփրած,
Ուր վոր կենսաշունչ հովը լեռնային
Մերթ վազվզում է, մերթ գգվում կամաց.
Ուր վոր համասփյուռ բուրմունքը ծաղկի
Յեվ ծըծմրային հոտը կայծակի

Խառնվում իրար և տարածվում են,
Խոռոչ ու ծործոր բռնում, լցնում են:

IX

Որհնությու՛ն վայրեր, ուր առույգ կյանքի
Յեվ զվարթության շունչն է միշտ խաղում,
Հայակա՛ն յերկիր, վոր միայն յերկնքի
Բարձրության մեջ ես խորհուրդ խորհում:
Ուզում եմ պատմել, թե ի՛նչ եմ սիրել, —
Բարձրացնել փառքը քո վսեմ անվան,
Ուզում եմ յերգել և քեզ մեծարել,
Արժանի՛դ յերգի և յերանության.
Բայց թոթովանքը ապիկար լեզվի
Աստվածայինը չէ կարող հայտնել,
Յեվ նա մնում է, վոր պիտի ասվի,
Վոր միմիայն քեզ է յերկինքը տվել:
Ա՛խ, թե քո տված հոգուն ու սրտին
Տայիր և թարգման—հրաթափ լեզու,
Քեզ մոքից հանող քո թշվառ վորդին
Քո վեհությանը կըլլիներ հասու:

X

Դու մեզ ա՛յն ասա, շատախոս պոետ,
Քո սիրած յերկրում ի՞նչպես են ապրում,
Թե հաշտ են արդյոք իրանց բախտի հետ
Մարդասիրության լուսավոր դարում:
— Դարձյալ սառնասիրտ հիշեցնում եք այն,
Վոր համբերությունս մաշել է իսպառ.—
Ուզո՞ւմ եք լսել, թե գեղջուկ հեզ հայն
Ինչպես է հեծում աղքատ ու թշվառ:
Բայց յես չեմ պատմել նրա խրճիթում
Նույն իսկ սեպհական աչքով տեսածը,
Թե վոնց է նրա կյանքը գիշատում
Խիստ ու չար բախտի հըրավիրածը.
Վորի կրքերը վայրենի, անսանձ
Մարել են հուրը վոգելից սրտի,
Վոր մեծարում է պոռնիկ գեղապանծ
Քան փրկությունը վողջ ժողովրդի...
Վորի անբարիշտ վարմունքի համար
Յերբեք, վոչ ուրեք յես լռելու չեմ,

Թեկուզ և նրա ձեռքից չարաչար
Պատիժ ստանամ և մահով կորչեմ:
Կըպատմեմ սակայն պատահած մի դեպք,
Հին սովորությամբ, բայց նոր կատարված,
Յեվ դուք կիմանաք, յերբ վոր չգիտեք,
Ինչպես են ապրում յերկրում իմ սիրած:

XI

Այն ձոր գավառում, ուր Զաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
Յեաեն է չիկնած յերեսը ծածկում,
Ուր վոր Փոշաքար, Լալվար ու Դսղալ,
Հսկա՛ պահնորդներ, իրանց չարքերով
Բարձրացած խրոխտ և լայնածավալ
Հսկում են յերկրին անքուն աչքերով.
Ուր հին Դեբեդը յուր վտակներով,
Ամեն մի քարի մոտից անցնելիս,
Վառված վաղեմի հիշատակներով,
Մերթ պայրանում է, մերթ փղձկում—լալիս,
Անուշն ու Սարոն քույր-յեղբոր նման,
Սարում ու դաշտում, մանուկ օրերից
Իրար հետ սիրով, խաղով մեծացան,
Յեվ շատ են քաշել իրար մազերից:
Նրանց մայրերը հավասար օրհնում,
Հավասար սիրով խնամում եյին,—
Մի օճորքի տակ և մի վրանում
Յերեխաները մեծանում եյին:
Մեծանում եյին պարզ ու վայրենի,
Փոշաքար սարի քոշերի նման...

XII

Այստեղ հիշեցի յես այն օրերը,
Վոր անմոռանալի անց կացան արագ,
Յեվ աղբերաշատ, կանաչ սարերը
Ինձ յերևացին միաժամանակ:
Ծանր վեհությամբ ամպերի միջից
Նրանք նայում են ծանոթ հայացքով,
Այնտեղ քար, ծառ, աղբյուր... ճանաչում են ինձ
Մի սիրուն օրով, սիրելի՛ անցքով:

Յեվ, անձավներից քարաժայռերի,
Թավուտ անտառի լռին խորքերից,
Մանուկ հասակիս աղաղակների
Պարզ արձագանքը լսում եմ նորից:
Պարզկա գիշեր. Թաղիքե վրանից,
Զմայլած սրնգի ձայնով թովչական,
Նայում եմ,—ահա յերկինքն աստղալից
Կպչում ե հեռո՛ւ լեռանց բարձրությանն:
Ուրիշ մի գիշեր, ախուր ու խավար,
«Գողի ու գայլի գիշեր» ահաբեր,
Յեվ անքուն հովվի սաստող, ազդարար
Աղաղակները ականջումս են դեռ:
Իսկ առավոտյան աղմուկը բինի,—
Հաչոց, բառաչոց, խրխինջ ու գոչյուն...
Այն աղմուկի մեջ կխասավարյենի
Ինձ սիրելի յե ամեն մի հնչյուն:
Յես այն սարերում եյի յերեխուց,
Այնտեղ ապրում եր մի զույգ սիրահար.
(Նրանցից մեկը մեռած ե վաղուց,
Մյուսն աղոթում ե մեռնելու համար):

XIII

Անցան տարիներ, նրանք մեծացան,
Մի որ ել յերբ վոր իրար նայեցին,
(Յեվ այն հայացքը չեր սովորական)
Իրար հասկացան, բայց լուռ պահեցին:
Այն մի հայացքով պատանի Սարոն
Գրկեց Անուշի պատկերը հոգով,
Այն ինչ գեղեցիկ Անուշը նրան
Սիրեց կուսական առաջին կրքով:
Բայց, հազա՛ր ափսոս, առաջին անգամ,
Յերբ մարդու սրտում զարթնում ե սերը,
Նրա հետ, իսկույն, սատանայական,
Հայտնվում են և կյանքի հոգսերը:—
Հասած Անուշին յուր ծնողները
Մոր ծնկան կողքին կապեցին կամաց,
Սարոն ել վերցրեց իրանց չները,
Դագանակն[2] ուսեց, վոչխարը գնաց:
Յեվ այնուհետև սիրող սրտերի
Տանջվող կարոտին ել սահման չըկար,

Որերը նույնպես խիստ անտանելի
Տխուր ձանձրույթով թմլացնի յերկար:

XIV

Չէ՛, յես չեմ ուզում բաներով չնչին
Խոսել սիրավառ սրտի բոցերից,
Յեվ անպատում է, սերը առաջին,
Նա վեր է մարդու բոլոր խոսքերից:
Յեթե, բարեկամ, քեզ դեռ չեն այրած
Յերկնքից զարկած նետերը սիրու,
Կամ յեթե աստծուց շնորհք չես առած
Մարդկանց սրտերը ներս թափանցելու,
Յեվ դու չըգիտես թե ի՛նչ է սերը,
Ինչպիսի քաղցր տանջանք է անհուն
Արի՛, բարձրացի՛ր դեպ այն սարերը,
Ուր վոր ապրում է Անուշը սիրուն:
Արի՛, վոր նրա խանդով բռնկած
Սև աչքերը սև հոնքերի տակից
Մի անգամ աչքիդ ընկնեյին հանկարծ,
Վոր սիրտդ դողար կրքոտ հայացքից.
Վոր այն հայացքը փարատեր իսկույն
Այդ քո սրտամաշ տարակուսանքը,
Վոր ճանաչեյիր յերջանկությունը,
Ապա տանջվելով սիրեյիր կյանքը.
Յեվ վոր տեսնեյիր,—իրավ, այս ծով-ծով
Աչքերը խլել են շողերն յերկնքի,
Վոր լուսավորեն իրանց հայացքով
Մռայլությունը մարդկային կյանքի:

XV

Հողեղեն հրեշտակ, դու, վոր անպատճառ
Վողբերգության համար ես ծնվել,
Թե կարենայիր մեր անմխիթար
Կյանքին մի ազատ հայացքով նայել,
Գուցե չըհանգչեր մարդոց սրտերում
Անվերջ ապրելու սերն աստվածային,
Թերևս այսքան ցավեր անպատում
Այս ժողովրդի գլխին չըգային.—
Քեզ հետ, քո սիրով մարդը թև առած
Կարող է թեկուզ յերկինքը թռչել,

Ինչպես սառնոց քեզ, չքնա՛ղ արարած,
Վիճակված է միշտ հուսահատ կորչել։
Բայց յես ընդհատված իմ խոսքն ասեմ թող,
Յեվ դու կիմանաս, վոր այն աչքերի
Հրապուրանքը հոգի կախարդող
Հանգչում է ծովում արտասուքների։

XVI

Ժամանակի հետ միանգամ վառված
Սերը զորացավ նորանոր զարկով,
Յեվ ժամանակ եր, վոր սիրահարված
Աղջիկն ու տղան միանան կարգով։
Բայց ի՞նչ եմ ասում, — Բոշաքար սարի
Հովիվը կա՞[3] յե, գնա հոգն ասի,
Վոր իրան համար հարսնացու ճարի
Կամ ծնողներից Անուշին ուզի.
Կամ թե այն աղան լերանց հովվուհին—
Սիրուն Անուշը յուր մաքուր սիրով
Չի՞ հրապուրում խանդավառ հովվին,
Յեվ արժանի՞ չէ, վոր փախցնեն զորով։

XVII

Այսպես է, այո՛, իգիթների մեջ,
Վոր խնամախոսի քար չունեն շեմքում,
Յեվ նրանց սերը թեև միշտ անշեջ,
Սակայն լուռ է և բանտարկված սրտում.
Թե քաջ տղա յե՝ շնորհքը ցույց տա—
Սրտի սիրածին թող փախցնի տանի,
Վոր և լողը ասի, թե՝ ահա
Մի մարդ պտակի, սիրո արժանի։

XVIII

Նրանց պապերը մեծ Կուրի ափին
Խիստ հրճվում էին, յերբ իրանց արքան,
Սիրուն, սևաթույր նժույգը տակին,
Անցավ Կուր գետը արծվի նման.
Լեռնականների բանակի դիմաց
Ձգեց վոսկեող չիկավոկ պարանն,
Բռնեց աչքադեղ դստերն ալանաց
Յեվ արագ հասցրեց յուր կարմիր վրանն.

Իսկ բանաստեղծը Գողթան աշխարքի
Յերգ հյուսեց աշխույժ, յերգեց ու լըեց,
Բայց ժողովրդին տիրոջ արարքի
Հուշակը յերկար դեռ մոռացրեց:

XIX

Շատ որ չէ անցել, կար մի հարսանիք
Զվարճանում եր ամբոխը գյուղի,
Սարերից իջել հովիվ պատանիք
Աղջկա յեն նայում, բայց գաղտագողի:
Յեվ պարից հետո լայն հրապարակ
Բաց արին մեջըն այն հարսանքատան,
Զովուր զուռնաչին միաժամանակ
Սկսեց կոխի[4] ածել յուր զուռնան:
Յեվ ձայն են տալիս «քաշի՛ հա, քաշի՛…»
Յեվ դուրս քաշեցին հազիվ յերկուսին.
Սարոն եր մեկըն, իսկ մյուսն Անուշի
Հարազատ յեղբայր—դառնարած Մոսին:
Հարսանքավորը պարսպի նման
Կանգնած բաժանվեց յերկու բանակի,
Յեվ յուրաքանչյուրն ընտրեց փահլևան[5]
Ու վոգևորեց ազերանց մեկին:
Գոռում են, գոռում յերկու բանակից,—
«Արտավինդ կացե՛ք, մի՛ վախեք, ազերք»,
Իսկ նորահարսի փարդի[6] քամակից
Նայում են անթիվ հարսն ու աղջկերք:
Յեվ պտտվում են լայն հրապարակում
Արջերի նման յերկու հովիվներ,
Իսկ ժողովուրդը դեռ աղաղակում,
Բաջալերում ե «ջա՛ն փահլևաններ»:
Յեվ տաքանում են ազերքը սաստիկ,
Զուխի քղանցքը պինդ հավաքելով
Զարկում են գետնին ձեռքերը հաստիկ,
Վոր ցամաքեցնեն քրտինքը հողով:
Յերակների մեջ կրակ ե վազում,
Իսկ ականջները կարմրել են արդեն,
Կատաղի թափով իրար են հասնում,
Հենց վորտեղ վոր ե մխյանց կըջարդեն…
Ընկերների մեջ որենք ե շատ հին,
Վոր այսպիսի մեծ բազմության միջում

Չըպետք է գետնին զարկել ընկերին,
Այլ պետք է անել հարկավոր զիջում:
Մոռացավ Սարոն օրենքն ու աշխարք,
Յերբ կանանց միջին Անուշին տեսավ.
Սիրտը սկսեց բաբախել արագ,
Աչքերն արյունով իսկույն լցվեցավ.
Յեվ այսպես, մինչդեռ անհոգ էր Մոսին,
Սարոն յուր բոլո՛ր ուժը հավաքեց,
Ուջեն քաշելով[7], հանկարծ ընկերին
Գետին տապալեց ու կրծքին չոքեց:
Ամբոխը թափվեց հարայ-հրոցով,
Վեր թռցրեց յերկու փահլևաններին,
Յեվ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի[8] մոտ բերին:
Ցնծության ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճորք,
Իսկ նորահարսի փարդի քամակից
Նայում են, գովում հարսն ու աղջիկերք:
Զայրացած Մոսին դեռ չէր հանդարտվում.
—Թող գա, ասում էր, վոր բռնենք նորից,
Թե չէ նամարդը[9], արևս եմ յերդվում,
Չի ազատվելու յերբեք իմ սրից:
Յեվ թագավորի թախտից Սարոն
Պարգև ստացավ մի կարմիր խնձոր,
Իսկ Մոսին ուրախ հարսանքատնից
Դուրս գնաց իսկույն սաստիկ վիրավոր:

XX

Յեվ Մոսին ուրախ հարսանքատնից
Դուրս գնաց իսկույն սաստիկ վիրավոր.
Արյուն էր կաթում սևակնած սրտից,
Գնում էր չար և քայլամոլոր:
«Ամոթ քեզ, Մոսի... Թուք ու նախատինք...
Ամոթ քեզ նման գոված կտրիճին...
Մի անուն հիշիր, մի բոյիդ մտիկ...
Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին...
Ի՛նչպես վայր ընկար դու սարի նման,
Յերբ վոր նայում էր վողջ գյուղը կանգնած...
Դո՞ւ... կո՞ւչ գաս տակին Սարոյի ծնկան,
Նրանից հետո յերևաս կանա՞նց...

Այս բանն յեկե՞լ էր խելք քո գլխին,—
Ծաղրատեղ դարձար աշխարհքի միջին...
Դե մեռի՛ր էլի... գետի՛նը մտի՛ր...
Տղա չես լինել, յեթե կուլ տվիր...»:
Մտմտում էր նա և ատամները
Կրճտացնելով մահ էր փորձում,
Հանկարծ բաց արավ արնոտ աչքերը
Գյուղից հեռացած, անտառի միջում:

XXI

Այն օրից սկսած թշնամի դարձան
Յերկու ընկերներն այս դեպքի համար,
Բարեկամներն շատ չարչարվեցան,
Բայց հաշտեցնելու չըգտան հնար:
Կամակոր Մոսին այլես ի՛նչ խելք էր,
Վոր դեռ աչքը բաց, վրեժը սրտում,
Իրան հարազատ քրոջը տեսներ
Անհաշտ թշնամու—Սարոյի գրկում:
Գուցե գիշերս էլ խանչալը հանած
Քրոջն սպանում է նա, թե կըսպանի,
Յեթե Սարոյի սիրով պահպանած
Անունը իրան սրտից չհանի:
Ո՞վ գիտե, գուցե հենց այս գիշեր էլ
Թշնամիները անհաշտ ու համառ
Մեկմեկու հոտից վոչխար են քշել
Միմյանցից վրեժ առնելու համար:
Կարող է նաև պատահել հաճախ,
Վոր մեկի գեղը—արդյունքը հնձի,
Գիշերվա ժամին հանկարծ կրակված,
Յերկնահաս բոցով աստղերը խանձի:

XXII

Արդեն փոխված է սերը կուսական
Յեվ տանջում է մատաղ սրտերը,
Եվ չի կարելի սառն ատելության
Շնչով հանգցնել նորա բոցերը:
Իսկ յեթե մահը հասնի վաղաժամ,
Նա դարձյալ կայրի սրտերի մոքում,
Յեվ յերկար օրեր վառ ու անթարշամ
Կըմնա նորա սիրտ այրող յերգում:

Յեվ կըգան օրեր, յերբ յերջանկությունը
Կըթագավորի աշխարքի վըրա,
Յավ ու տանջանքի յերգչի անունը
Թող այնուհետև յերկրից վերանա.—
Տխուր ձայները նորա պատմության
Զըմայլեցնեն գըվարթ դեմքերը,
Յեվ թող բախտավոր մարդիկ չիմանան,
Թե մի օր այսպես անբախտ եր սերը։

## ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՐԴ

### XXIII

Դեռ ես գիշեր կա. անուշիկ քնով
Քնած է գյուղը անսար խավարում,
Յեվ կախարդական տխուր ձայներով
Որբուկ է սուլում Դեբեդը ձորում։
Նիրհում են սարերն, և սառեգագաթ
Յերկինքը ջինջ է, թափանցիկ, անհուն,
Կապույտ յեթերքում սահում է հանդարտ
Թմբած ու դանդաղ լուսինը անքուն.
Յեվ, Ղարախաչի կատարին հասած,
Հանկարծ նայելով մութն արևելքին,
Լուսաստղը տեսավ,—ահից դալկացած
Ծառալեց թաղչել սարի քամակին։

### XXIV

Այս խորհրդավոր ժամին գիշերվան,
Յերբ բաժանվում է լույսը խավարից
Յեվ քնած յերկրին հավը մի բերան
Լուսո ավետիք ավեց յուր թառից,
Գյուղի մի ծայրում մի բան անց կացավ,—
Շները խմբով սաստիկ հաչեցին,
Մխավին մի խուլ «հե՛յ հե՛յ» լըսեցավ.
Յեվ չեր լուսացել, հավար կանչեցին։

### XXV

Դեռ գորշ ամպերը վաղ առավոտյան
Նոր են ջուր խմած ձորից բարձրանում,
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լեռան,

Նոր է արևը պուտնգը[10] հանում,
Գյուղից մոտիկ քարափի գլխին
Մի խումբ խղխթներ, ահա դայրացած,
Հրացանները բռնած ձեռքներին,
Նստում են տաք-տաք և նայում են ցած:
Գյուղումն աղմուկ է և իրարանցում,.
Կտուրներին են կանայք հավաքված,
Տղերքը դեպի քարափն են վազում
Հրացանների կլխերից բռնած:

XXVI

Յեկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց խռոված տղերանց միջին,
Մատը դեպ ձորը մեկնելով հանդարտ
Այսպես խոսեցավ դառ տալով չերխին[11].—
«Յերբ վոր հաջեցին շները այս գիշեր,—
Վաղուց եր անցել գիշերվան կեսը,—
Յերկու մարդկային սև կերպարանքներ
Հողերովն[12] յեկան, ցած իջան դեսը»:
Այս վոր լսեցին, դես ու դեն ցրված
Տղերքը ձեզով ձորը ներս մտան,
Յել մըտի տակին, ճամփից ծռված
Յերկու մարդու թարմ վոտնատեղ գտան:
—Այն անզգամինն է այս վոտնատեղը,
Տեսնո՞ւմ եք, ինչպես հողում նամակուշտ
Խորն է ընացել նրա ոճեղը,
Իսկ ուրախորը Սարոյինն անշուշտ»:

XXVII

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր վոտնատակ տվեց
Հոլլիվ Սարոյին գտնելու համար,
Վոր սարիցն յեկավ Անուշին փախցրեց:
Մի ամսից հետո վերադարձավ տուն
Գովելով նրա արարքը ճարպիկ,—
«Հալալ է ողին,—ա՛յ խղխթություն,
Ահա, թե ինչպես կփախցնեն աղջիկ»:
Մենակ Անուշի յեղբայրը—Մոսին
Զըվերադարձավ, և յերդվել եր նա,

Վոր, ուր վոր լինին, նրանց միասին։
Գտնի կոտորի, սիրտը հովանա:

## XXVIII

Յեվ գյուղացին յերգ հորինեց,
Գովեց հովվին ու յարին,
Յեվ յերգելով տարածայնեց
Այս արկածը սիրային:
Յերգեց սիրո հալածանքը
Յեվ տարաքը սիրողի,
Յեվ կամապաշտ յեղբոր ջանքը,
Բարկությունը անտեղի:
Յերգեց հայրը, յերգեց վորդին,
Իրան տանը և հանդում...
Յեվ ամեն անցք յուր հետնորդին
Նա յերգով է ավանդում:

## XXIX

Անցավ մի ամիս. և ահա մի որ
Բաղվորների հետ, իրիկնապահին
Անուշը յեկավ տխուր, գլխակոր.
Հարևանությունն հավաքվեց գլխին:
Աստված խնայեց.—նրա յեղբայրը
Դեռ ես հանդից չեր վերադարձել,
Իսկ խոժոռադեմ ալևոր հայրը
Սկսեց փրփրած թքել—անիծել.
—Դուրս գնա՛, կորի՛ր, ա՛յ լիրբ, անզգամ,
Սև ու սուգ լինի թաղ ու պսակդ,
Կորի՛ր, չերևաս աչքիս մյուս անգամ,
Գետինը մտնի յերկար հասակդ...
Տեսար, վոր նրան տանում է Մոսին,
Տեսար չեն ուզում նրան հերնումերդ,
Դու քանի՞ գլուխ ունեիս քո ուսին,
Վոր վեր ես կենում փախչում նրա հետ...
Թռնված գյուղացիք կտուրից իջան
Հանդստացնելու բարկությունը հոր,
Հայտնվեց նույնպես գյուղի քահանան,
Մի պատկառելի հսկա ալևոր:
Անուշը կանանց խմբի մեջ ընկած
Դեռ հեկեկում եր, լալիս դառնագին,

Յեվ ժողովուրդը տանից դուրս գնաց—
Խոստովանեցնի տերտերն Անուշին:

XXX

Մի կարճ քարոզից հետո քահանան
Սիրուն Անուշին հորդորեց այսպես,—
«Արդյոք ճշմարիտ սիրո՞ւմ ես նրան,
Թե խաբեց, զոռով փախցրեց նա քեզ.
Մի՛ վախիր, ա[illegible]ա՛, յեթե սիրում ես,
Ձեզ կըպսակեմ, միամիտ մնա,
Յեթե չես սիրում, ինձ հայտնիր նույնպես,
Վոր հանցավորին պատիժն տանա»:
Յերեսը ծածկած սաստիկ ամոթից,
Լցված աչքերը գետին խոնարհած,
Անուշը կամաց, ձեռքերի տակից,
Խոսաց դողալով, իրան կորցրած.
«Իմ կամքով փախա... սիրում եմ, տերտեր...
Չե՞ վոր ասացիր մեզ կըպսակես...»:

—Այն ո՞վ եր արդյոք, տեսեք ի՞նչ մարդ եր,
Վոր դուրսը հանկարծ աղմկեց այսպես.
Դուռը չառաչեց, մարդիկ խուժեցին,
Յեվ հառաջ անցավ մի թուխ պատանի,
Գունատված հարցրեց գյուղացիներին—
«Այստե՞ղ չըհասավ ձայնն հրացանի»:
Զարհուրեց ամբոխն և աղաղակեց
Խառն ձայներով, ի՞նչ յեղավ ձորում...
Ի՞նչ հրացան եր... ինչո՞ւ տըրաքեց...
Շուտ արա, ասա՛, ել ի՞նչ ես լռում...»:
Պատանին խոսաց—«Հենց այսոր ծեգին
Մոսին Սարոյին ձորում պատահեց...
Գնդակը դիպավ Սարոյի կրծքին,
Թիկունքից անցավ». ասաց ու լռեց:
Կարծես մի կրծքից վողջ միաբերան
Բացականչեցին ձայնով տրտմության,
«Ա՜յ, ափսոս իգիթ, վոր կորավ իզուր...
Անո՜ւշ, Անո՜ւշ, ջուր հասցրե՛ք, ջո՜ւր...»:

XXXI

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ
Յերկնքի մթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,

Գյուղից սլացան մի խումբ կորիճներ:
Ցալից տաքացած վոչինչ չեն հարցնում,
Թռչում են, վորպես ահից հալածված
Յեվ նրանց առջև ահուելի բացվում,
Թռչում է ձորը արյունով լցված:
Նրանց յետևից թըմբըրըմբալով,
Ալևոր միրքով գնում է ծերը,
Վոտքերը սուր-սուր քարերին տալով,
Ծուտ-չուտ սրբելով ջրոտ աչքերը:
Ծերունու հոգին ալեկոծում է
Արդեն կատարված դեպքը ցավալի
Յեվ դառն աղետը, վոր սպասում է,—
Վրեժխնդրությունն անխուսափելի...
Գյուղը դատարկվեց մի ակնթարթում,
Փարախի գլխին կանգնեց անհամբեր.
Լո՛ւռ, սրտատրոփ ականջ են դնում,
Նայում են ներքև. ձայն չի գալիս դեռ...
Միայն Զորագետն է անդընդում հուզված
Խլաձայն վողբով վազում դեպի ցած:

XXXII

Յեվ մարդասպանը դուրս յեկավ ձորից.
Մոլոր է հաղթական նրա քայլվածքը,
Սարսափ է ընկնում արնոտ աչքերից
Յեվ խառնված է հպարտ հայացքը:
Առանց նայելու մարդկանց յերեսին,
Առանց խոսելու, սևակնած, դաժան,
Մոտեցավ սրահին, կախ տվեց սնին
Սև հրացանը սև ոձի նման:
Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
Վոչոք ծպտալ չի համարձակվում,
Միմիայն մեկը անզուսպ կատաղած
Աղաղակում է, յերեսը պոկում:
Մեռած խդիթի ծեր մայրիկն է նա,
Հավար է կանչում, բարձրաձայն լալիս.
Տարաբա՛խտ ծնող, վազում է ահա,
Զորիցն է նրա դոռոցը գալիս:

XXXIII

Սգավոր կանայք նրա յետևից
«Հարա՛յ» կանչելով ձորը վազեցին,

Իրանց կորցրածն էլ հիշելով նորից,
Դիակի շուրջը կարգով շարվեցին:
Իգիթին վայել սրտառուչ վողբով
Լաց ու կոծ արին ձեն-ձենի տված,
Տղերքն էլ տրտում կռացրած գլխով
Մնացին մունջ քարերին նստած:
Վողբացին անշունչ դիակի վերա,
Անտեր մնացած վոչխարի մասին,
Անխրտ անեծքով հիշեցին նրա
Անճար մնացած խեղճ յարի մասին.
Յեվ նրա մասին, վոր ընկերները
Հանդը գնալիս Սարո կըկանչեն,
Վոր սարից փախած սոված շները
Պիտի կսերը վռնան, կըլանչեն:
Ծանըր չոմբախը, գլուխը մեխած,
Ոճորքում դրած պխտի մոտի,
Յերկայն խանչալը պատից կախած,
Պատենում մնա և ժանգը պատի.
Վոր հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գնալ առանց Սարոյի,
Սև շորեր հագած կընստի տանը,
Տեսած որերը միտը կըբերի...
Յեվ յուրաքանչյուր հիշողությունը
Կտրատում եյին սիրտը խեղճ նանի,
Յեվ աղաչում եր վշտալի կինը—
Մի անգամ խոսա, աչքը բաց անի.
Բայց չեյին բացվում վորդու աչքերը,
Իսկ շրթունքները չորացել եյին,
Նրանց արանքից բաց ատամները
Սպիտակ շարքերով յերևում եյին:
Յեվ վողջ մայրական անխելք ու տկար
Աղաչանքներն ու հեկեկանքը
Անկարող յեղան վերստին բանալ
Հավիտյան դրված մահու փականքը:
Այս կատաղած՝ հանդուգն անեծքով
Նա 'հարձակվեցավ յերկնքի դիմաց,—
Յեվ հայհոյում եր և կուրծքը կոծում.
Յեվ վողբում եյին ձեն-ձենի տված:
Գիշերը հասավ, սաստկացավ մութը,
Յեվ նվաղեցան նրանց ձայները,

Բոլորը լռեց, մենակ Դեբեդը
Անդուլ ողբում էր նաև գիշերը։
Սգվոր գետը—
Ծեր Դեբեդը,
Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին—
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է։

XXXIV

Արդեն մի քանի օրեր են անցել,
Ջրումն ընկած է գդակը հովվի,
Ընկած է գետնին, անթաղ է մնացել,
Յեվ չի ցամաքում աչքը սգվորի։
Իգիթը անթաղ ընկած է ձորում.
Էլ չի տեսնելու նա հանգստարան,—
Հայրական գյուղին սարսափ է տիրում,
Բոլոր գյուղացիք մերժում են նրան։—
Մի դեղնաթիկունք ճերմակ ձիավոր
Գիշերն յերազում հայտնել է մեկին,
Վոր զգուշանան աստծո ցասումից—
Գյուղը չըբերեն այն ավազակին։

XXXV

Յեվ մի քանի ընկեր տղերք
Դեբեդի ճոխ ափերին
Փոս փորեցին ու սրտաբեկ՝
Ամփոփեցին հովվի դին։
Ծաղիկները այս հանդիսին
Բուրմունք տվին դյուրեկան,
Ջրադետն էլ ահեղաձայն
Յերգեց վսեմ շարական.
Յեվ տղերքը տխուր ու լուռ
Վերադարձան դարձյալ տուն,
Ջրում թողած մի սև բլուր,
Մի գերեզման անանուն։

XXXVI

Տխուր գրույցը տխրաբեր անցքի
Այստեղ է մարդկանց համար վերջանում,
Սակայն զգայուն սիրտը պոետի
Տակավին ուրիշ վիշտ է վրդովում։
Յեվ ի՞նչ.—մի սուգ է մեռելին բաժին
Յեվ մի վողորմի, նրանից ավել,
Թե չի մոռացվում, և սրտիդ միջին
Կարող ես նրան հավիտյան պահել.
Բայց և նրա հետ, մտքից չհանես,
Նայիր այն տեղին ուր ապրել է նա,
Տես ում է թողել, ումնից բաժանվեց,
Յեվ ով է այնտեղ չարչարվում հիմա։

XXXVII

Ինչո՞ւ յես, ո՛վ կույս, դու այդքան տրտում—
Այդ ի՞նչ թախիծ է քո դեմքը պատում,
Կամ ի՞նչ նախատինք ճակատդ ամոթխած
կորացնում է ցած։
Ինչո՞ւ յես, ո՛վ կույս, այդպես անտարբեր,
Յերեկը քո սիրով բյուրավոր սրտեր
Վառված ճգնում են վոտքերիդ փարել,
չըգիտե՞ս սիրել...
Ահա գարունը, ծաղկունքը բացված,
Ինչո՞ւ քո սիրտը մնում է փակված
Յեվ քո ժպիտը չէ բացվում, ո՛վ կույս,
վորպես արշալույս։
Ինչո՞ւ ցամաքած շրթունքդ վոչ սեր,
Այլ մրմնջում են մահու աղոթքներ,
Թոշնում է դեմքիդ արտասուքից այրված
վարդը նորաբաց։
Տխուր աչքերդ, վոր մեզ չեն նայում,
Արդյոք վո՞ր յերկրում ինչ են փայփայում—
Վաղեմի ցնո՞րք... կարոտած պատկե՞ր...
Թե ուրիշ—նոր սեր...
Ի՞նչ ես մտածում այդպես ուշադարձ
Յեվ զարհուրելի ծիծաղում հանկարծ...
Ինչո՞ւ յես լալիս... այդ ո՞ւր ես գնում...
ի՞նչ ես վորոնում...

XXXVIII

Անլռելի վըշվշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
Նրա ափին կանաչում է
Անշուք շիրիմն խենթի:
Յեվ այն բոլոր ծաղկունքն աճած
Նորա ըղձերն են թաղած,
Յուր նորահաս յարի աչաց
Արտասուքով վողողած:
Յեվ հոսում են գիշեր-ցերեկ
Արցունքները հեգ յարի,
Բայց անտարբեր տղան յերբեք
Չի յերևում... մխիթարի:
Վշշում է գետը—վո՛ւշ, վո՛ւշ,
Յեվ հորձանք է տալիս հորդ,
Յեվ կանչում է «արի՛ Անուշ,
Արի տանեմ յարիդ մոտ»:

## ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒԶԱՆ

(ՀԱՏՎԱԾ)

Նստած եմ մի որ ու միտք եմ անում,
Դես եմ շըրջում դեն, չեմ կարողանում
Մի հընար գըտնեմ—ցավերըս հոգամ·
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,
Կըրկին պարապ անեմ, գըլուխը քարը,
Մինչև վոր տեսնենք ինչ կըլնի ճարը:
Այսպես մոլորված հենց վեր եմ կենում,
Ականջըս հանկարծ մի ձայն է ընկնում·
«Վողջո՛ւյն Պառնասի գըլխից սըրբազան»·
Յետ նայեմ, տեսնեմ իմ ծանոթ Մուզան:
—Վե՛ր կաց, բանաստեղծ, կանչում է այսպես·
Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, դուրս արի հանդես·
Տանջվում են ահա յեղբայրքըդ թշվառ,
Հեծում-հառաչում աշխարհից աշխարհ·
Յերկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա, քեզ համար բերել եմ ավյուն.
Հասիր վհատին, ըսփոփիր վորբին,
Ույժ տուր պանդուխտին իր յերկար ճամբին...
Նայի՛ր, յեկել է գարունը, ահա,
Բազմել է կանաչ սարերի վըրա,
Ջորերը լըցվել, փըռվել հոսում,
Հավքերն յերգում են, ծաղկունքը փթթում:
Դու էլ ըսթափվիր, յերգիր քեզ նման,
Վողջունի՛ր շըքեղ գալուստը գարնան:
— Հերիք է, Մուզա, յերկինքը վկա,
Ե՛լ համբերելու սիրտ ու տեղ չըկա·
Այնպես կանեմ քեզ, վոր դու մոռանաս
Արյուն ու գարուն, պոետ ու Պառնաս:

Անիծված լինին այն որն ու տարին,
Յերբ գերի դարձա յես քո քընարին·
Քեզ հետ մըտերիմ դառնալու որից
Զըրկված մնացի կյանքում բոլորից,
Հարգից ու փառքից,
Վայելքից, խելքից···
Աչքովդ էլ այսոր տեսնում ես, ահա,
Գնում եմ մեկից պարտք անեմ հիմա,
Ով գիտի այն էլ
Կարո՞ղ եմ գըտնել···
Այսոր գընացի «Հոգով բանաստեղծ»
Մեկին, վոր հեգիս հարգում է անկեղծ,
Վոր ասում է միշտ, «դու լավ ես գըրում,
Բայց ափսո՛ս, ափսո՛ս, վոր Հայոց յերկրում
Իսկի չը գիտեն պոետի տեղը
Յեվ նա չարունակ ընկնում է նեղը···»:
Հենց վոր իմ փոքրիկ խնդիրքը լըսեց,
Նաթերը կիտեց, այսպես ըսկըսեց·
— Ի՞նչ է, ասավ, մի գործի չես·
Բա յե՞րբ պիտի դու ամաչես,
Չես ծառայում մի պաշտոնի,
Այդ տեսակ էլ մարդ կը լի՞նի·—
Անգո՛րծ, անբա՛ն,
Թափառական,
Տեսե՛ք, տեսե՛ք—դատարկ պոետ···
Ե՛յ, ամաչիր գոնե բոյեդ,
Գնա՛, գընա՛, մի գործ գըտիր,
Հեչ չը լինի—մըշակ մըտիր··:»:
Յեվ ահա այսպես
Տառապում եմ յես
Խըրատվելով,
Նախատվելով,
Հոգսերըս անթիվ, դըրպանըս դատարկ,
Ի՞նչ կասես սըրան—բանաստեղծի փա՞ռք···
— Ո՛հ, դու յերջանիկ յերկընքի վորդի,
Ժամ չե՛ հիշելու արարքն այն վատի,
Վերցրու քնարըդ, մի՛ տրտմիր այդպես,
Առաջըդ կանգնած թշնամիդ չեմ յես:
— Այո՛, թշնամի, և վոչ միայն հիմի,
Վաղուց ես դու ինձ յեղել թշնամի,

Դեռ մորս արգանդում կնքել ես պոետ.
Ծննդյան օրից նորա կաթնի հետ
Տըվիր ինձ թովիչ այն ցողը թաքուն,
Գաղտնի սփրեցիր իմ մատաղ հոգուն:
Խեղճ մայրըս խակի պոետ չէր ուզել,
Վոչ էլ իր կյանքում անունն էր լըսել.
Յեվ այժմ ախրում, միշտ լաց է լինում,
Վոր իմ գործերը այսպես են գընում:
—Ավա՛ղ, դու գիտես, էս մայրը, պոե՛տ,
Գեղջուկ ռամիկ մի կին է տըգետ.
Նա չի՛ հասկանալ յերբեք պոետին,
Թեկուզ և լինի հարազատ վորդին:
—Լո՛ւռ կաց, թշվա՛ռ, ի՞նչ ես խոսում.
Իմ խեղճ մո՞րն ես տըգետ ասում.
Իսկ այն խելոք մարդիկն ապա,
Վոր հասել են մինչ Յեվրոպա
Կամ թե իրանց խելքի զորով,
Ակնարկներով, որեցորով,
Ֆելյետոնով,
Հազար բանով
Ծաղրում են ինձ, հանդիմանում,
Մի՞թե նույնպես չեն հասկանում:
—Ո՛հ, Միլտոնի ականջը վկա,
Զարմանալու վոչինչ չը կա,
Չեն հասկանում բնա՛վ, բնա՛վ:
—Լըսի՛ր, լըսի՛ր, ա՛յ անիրավ.
Հազիվ այդքան մեծ մեծ բըրդի
Նույն իսկ ծառան առաջնորդի...
Ո՛վ Արամազդ, չանթ ու կայծակ,
Վորտե՞ղ հասանք, ի՞նչ իմացանք,—
Չե՞ն հասկանում... Անմի՛տ ջահել,
Դու յերեկի չես պատահել
Հըռչակավոր այն «մըտավորին»,
Վորով նրանք հայոց ազգին
Դաս են տալիս համեստության...
Վո՛չ, վո՛չ, Մուսա, իմ սիրական,
Խոսքը մնա թող մեր միջում,
Դու դեռ նրանց չես ճանաչում,
Յեվ ճանաչել չես կարող հեշտ.
Ո՛, այնքան են նրանք պարկեշտ...

Ա՛յ որինակ. շատ բանի հետ
Նրանք, ինչպես նաև պոետ,
Հորինում են յերգեր ու վեպ,
Յեվ այնպես է լինում ստեպ,
Վոր տակավին իրանց մտքում,
Թարգմանում են վողջ աշխարհքում...
Բայց և այսքան փառքն ահագին
Ծածկում են կեղծ անվան տակին,
Ու միշտ այսպես
Համեստ ու հեզ,
Համառ փակված մի տաք քունջում,
Այնպես... վոր դու չես ճանաչում:
—Յե՛ս ճանաչեմ այդ չըքերին,
Ո՛հ, խընայիր իմ աչքերին.
Ո՞վ են նրանք—«վորոնողներ»,
Վոր փընտրածը չեն գտնել դեռ
Յեվ վազքելով ամեն անկյուն
Հոտ են քաշում պըո՛ւյշ, թաղո՛ւն,
Աղմըկում են ամեն ձայնով,
Յերևում են ամեն ձևով,
Որ-ցերեկով կեղծում, խաբում
Ու միշտ իրանց բեռը կապում...
Յեվ ինչպես վոր ամեն գործում,
Այստեղ էլ են կեղծել փորձում.
Բայց հսկան չի դառնալ թըզուկ
Յեվ վոչ քընար—պարկապըզուկ:
Ձիրք չեմ տըվել նրանց յերբեք,
Վոր հորինեն վեպեր կամ յերգ,
Յեվ ո՞վ է նա, անունն ասա՛,
Մի տող գըրի առանց Մուզա:
—Կա՛ց, կաց, հոգիս, մի՛ բարկանար,
Դու էլ ես ճիշտ, բայց խոսքըս առ.
Ուրիշ յերկրում այդպես կանեն,
Վորտեղ իրանք շնորհք չունեն,
Դիմում ենք քեզ,
Վոր դու օգնես...
Իսկ մենք ունենք ճոխ Հանգարան,
Պատրաստ հանգեր շարան-շարան,
Խմբագիրներ ունենք կարող,
Վոր կարող են լինել գըրող,

Պոետ ուզես, թե վիպասան.
Յեվ, տեր չանի, թե բարկացան,
Կարող են վողջ կրկին խըլել,
Մեկ էլ տեսար—տաղանդ չի էլ...
Ունենք յերգի հըմուտ վարպետ,
Խաղ է անում հանգերի հետ,
Ուսուցանում վոգևորվել,
Պոետ դառնալ—յերգեր գըրել,
Գրում այնպես բարձր ու վըսեմ,
Թե հասկանաս՝ ղոչաղ կասեմ,—
«Յօղակն 'ի ճախր յայեր ամբուռ,
Խօչիւն դուդել 'ի յամբ անկուռ,
Սաղաղի արեկ՝ թընդամբ տըրոփ
Զէտ տիրըռումբ՝ աղձու 'ի յոփ»:
—Ո՛, թըշվառներ, ի՛նչ լըսեցի.
Բայց դու ասա, ի սեր Ջևսի,
Յեվ այդպիսով ո՞վ է կարող
Շնորհք առնել, դառնալ գրող:
—Ե՛հ, ինչ անենք, թող չը դառնա.
Վարժապետից կը հեռանա,
Կերթա կապրի առանց հանգի
Ու լող կը տա ծովում կյանքի,
Ազա՛տ, ինչպես քեֆը կուզի,
Վոչ սիրտ մաշի, վոչ ծաղր լըսի...
Յես իմ հոգին լավ է այնպես,
Թե չէ՝ նայի՛ր, այս ի՞նչ եմ յես...
—Պոետ ես դու:
—Ահա, յես էլ այդ եմ լալիս.
Ինչո՞ւ այս ձիրքն եկիր տալիս:
Թող լինեյի մի կեղեքող,
Հավաքեյի միշտ փող ու փող.
Առաջ թեև «դաղան» ու «ցեց»,
Կը դառնայի շուտով յես «մեծ»,
        Վեհ բարերար
        Ազգի համար,
Մեռած որս էլ պսակ տային.
«Իր վորբ ազգից՝ միակ հային».
Կամ թե տերտեր լինեյի թող,
Խաչը վըզիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նստեյի,

Իմ ապրուստը գըրըստեյի,
Ազգն ել աչքը տընկեր վըրաս—
Իմ փըրկողը դու յես՝ վոր կաս:
Թող լինեյի հոգով տըգետ
Ջըրխակեր մի վարդապետ,
Վոր կազմեյին տըգետ—գլխուն
Իմ անունով կուսակցություն,
Աջահամբույր միշտ բերեյին,
Ձեռս ու փեշերս համբուրեյին:
Ահա այսպես բան լիներ մարդ,
Գնար ապրեր լի ու հանդարտ:
Կամ անդուրըլած մի ճոխ հիմար,
Վոր ապրում ե լոկ իր համար,
Ուտում—քընում, յելնում—ուտում,
Լի՛, գո՛հ, ինչպես աղբակույտում
Հանդիստ ապրող վորդը պարարտ:
Կը լինեյի հարգի մի մարդ,
Նույն իսկ յեթե գլուխս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Քան թե հիմա իմ դըրպանը:
Ահա կյանքում այս ե բանը.
Թե չե լինել ի ծնե գերի
Մերկ Մուզայի ու յերգերի,
Վորդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
Ուժից ընկնել անժամանակ,
Թե պոետ եմ... Ո՛, վո՛չ, Մուզա՛,
Մի անարդար պատիժ ե սա,
Մի բախտ ե սև,
Ախտ ակներև...
Յեվ ինձ մոտիկ
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նկատեցին.
Կըռիվ արին, խըրատեցին,
Թե աշխարհքին մըտիկ արա,
Շատն ել խնդաց խելքիս վըրա...
Իսկ յես, ա՛խ, յես,
Միշտ խենթ այսպես,
Գիշեր ցերեկ թերթում գըրքեր,

Ծխում էյի դատարկ յերգեր,
Միշտ քո քամով էյի թռչում,
Կյանքից, բախտից հեռու փախչում:
—Ա՛յ, ապերախտ, ի՞նչ ես ասում.
Այն վո՞ր բախտն ես դու ափսոսում,
Վոր չեմ տըվել քեզ իմ ձեռքով.—
Աստվածային հըզոր ձիրքով
Այս ցած կյանքից հեշտ ու անթև
Թըռչել յերկինք—վերև՛, վերև՛,
Ցավեր, հոգսեր վողջ մոռանալ,
Դժոխք իջնել, դրախտ գընալ,
Անհուն ըզգալ, թովիչ յերգել...
Վո՞ր բախտից եմ յես քեզ զըրկել:
—Ո՛, վո՞ր բախտից. ա՛յ սևերես.
Ահա շարեմ, հիշիր ու տես:—
Ինձ մի անգամ տուան տարան
Հաշվապահի ուսումնարան...
Տառ խոսեցին,
Համոզեցին,
Թե կավարտես այս դըպրոցում,
Ատեստատը հետդ ծոցում՝
Ուր վոր գընաս,
Տեղ կունենաս,
Լա՛վ փողով տեղ բուղգալտերի.
Խազեյինդ էլ տարեցարի
Միշտ կավելցնի քո ռոճիկը,
Գուցե վրան և... աղջիկը:
Բայց դու յեկար միտքս մըտար,
Ինձ չը թողիր տեղըս դադար,
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կոտորակ, թըվանըշան
Ուղեղիս մեջ դարձան վորդեր,
Քիչ էր մընում սիրտըս պայթեր:
Հաշվեդիրքը վայր ձըգեցի,
Քեզ հետ փախա ու զըրկվեցի
Այն լավ տեղից, այնքան փողից...
Ապա ընկա հարուստ խանութ.
Խազեյինըս գործին հըմուտ,
Մի անունով վաճառական,
Ինձ խըրատեց, խոսեց այնքան.

— Ա՛յ, որբնակ,
Աղքատ, մենակ,
Քեզ պես էլի մի վախտ յես էլ,
Հիմի նայիր—ի՛նչ եմ դիզել...
Մի հինգ տարի թե վոր մընաս,
Դու էլ ինձ պես մարդ կը դառնաս...
Ահա կասսան, հաշվի գիրքը,
Վողջ տալիս եմ յես քո ձեռքը:
Բայց յես խաբված, խենթ յերեխա,
Այն բոլորը թողի, փախա,
Թե՛ չեմ կարող, յես չեմ կարող,
Յես գրող եմ, գըրո՛ղ, գըրո՛ղ:
Սակայն էլի բախտըս ժպտաց.
Ձեռս բռնեց, տարավ հանկարծ.
Ու պիտերի տըվավ պաշտոն:
Գըրում էյի և լի և տոն:
Մեծավորըս այնքան սիրեց,
Հին գըչակոթն ինձ նըվիրեց,
Ընկերներս էլ ինձ դաս տըվին՝
Վոնց պըրոկել խընդըրատըվին:
Բայց դու է՛լի յեկար-դըստար,
Խաղաղ գործիս մեջը մըտար.
Յես էլ, հիմարս, խելոքն և եթ,
Վեճ բաց արի ամենքի հետ,
Թե յերր մեզ մոտ կին է գալի,
Ամեն բան էլ չի կարելի...
Չի կարելի խեղճ գյուղացուն
Գերի չինել վողջ տարին բուն,
Տանել-բերել ու թալանել,
Այրու որբինձն աճուրդ հանել...
Այս բոլորը քիչ եր կարծես,
Այնքան արիր, տատանի պես,
Վոր գըրեցի մեծիս պարտավ,
Նա էլ՝ կո՛րի, կո՛րի, տավ,
Մենք ենք տալիս քեզ փող ու փառք,
Դու, Մաղայի խելքով ընկած,
Վեր ես կենում մեր դեմ խոսում.
Այդպես պիտեր մենք չենք ուզում:
Սակայն ասված մեծ է դուլթով.
Հայրենի կանտոր ընկա շուտով,

Լավ էր, ասի, այսուհետև
Կապրեմ ազատ, գործըս թեթև։
Հետըս յեկար մըտար կանտոր,
Գործերս արիր խառնափընթոր,
Քո յերեսից հենց մյուս տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին։
Կըրկին յեղա յես խայտառակ,
Համ էլ ընկա պարտքերի տակ։
Հո դըրսի պարտքն էլ գլխես.
Այդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ,
Վեճ ու վըճիռ ծանր ու բարակ։
Վո՞ր մեկն ասեմ, վո՞րը թողնեմ.
Յերբոր տեսան չընորհք չունեմ,
Այնուհետև քանի անգամ
Ծանոթ, ընկեր, լավ բարեկամ —
Տերտերության տըվին խորհուրդ.
— Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,
Հարստություն, հանգիստ — հեշտ կյանք...
Իսկ յես անփորձ, անխելք, հիմար,
Վողջ մերժեցի լոկ քեզ համար,
Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփիչին թողած,
Բնարն առա,
Պոետ դառա,
Յերգ ու տաղով մտա հանդես.
«Հե՛յ, Մուսայի ընկերն եմ յես»,
Ձայն տըվեցի վոգևորված։
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հռհռաց
Ժողովուրդը միաբերան.
Թռցրել է խելքն այս խեղճ տղան։
Հեռո՛ւ կորի, խենթ պատանի,
Վոր անպիտան, գործի, բանի,
Ուշք ու միտքըդ տըվել յերգին,
Մի չես նայում այս աշխարհքին։
Մենք մարդիկ ենք — գործ ենք անում,
Խենթ-մենթ բաներ չենք հասկանում։
Յես գոչեցի. — խավար ամբոխ,
Դու պաշտում ես հենց փայլ ու փող,

Չես հասկանում դու պոետին,
Յե՛ս, յերկինքի քնքույշ վորդին,
Յերգում եմ սե՛ր, ճշմարտությո՛ւն...
Յեվ գընացի խմբագրատուն...
—Տեր խմբագիր, պոետ եմ նոր,
Բերել եմ ձեզ վոտանավոր,
Ահա կարդամ՝ ականջ դըրեք,
Ձեր հանդեսում տեղավորեք.
«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք որ ու գիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...
Ինչո՞ւ չեք քնում, ինչո՞ւ չեք փակվում:
Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել,
Ուզում է քնել, հավիտյա՛ն քնել...
Դուք էլ քնեցեք, սևորա՛կ աչքեր,
Յերեկս անցել է, գիշեր է, գիշեր...»:
—Վոչի՛նչ, կոկիկ է: Խոսելով անկեղծ,
Դուք վատ չեք գըրում, պարոն բանաստեղծ.
Ամեն մի տողում տասն են վանկերը,
Բայց ինձ աղքատ են թըվում հանգերը:
Հապա՛, մի տըվեք ուղղեմ յես հիմա,
Տեսեք թե վորքան սահուն դուրս կը գա:
Ուղղում եմ յես միշտ մեր պոետներին,
Այսպես եմ պոետ շինել բոլորին.
«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք ինչպես քաջքեր...»:
Յես խույս, ինչպես հալածված քաջքից,
Փախա խմբագրից ու իրան աչքից,
Յերգերըս ուղիղ տարա տըպարան
Ու տըվի ազգիս մի նոր յերգարան:
Այնժամ մորուքով մի թունդ պուբլիցիստ,
Հայանի քննադատ, բազմագետ ու խիստ,
Սաստիկ վրդովված իմ յերգով, գըրքով,
Ծաղրի տվավ ինձ իրան «ակնարկով»:
Յես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Զըզվեցնում է ինձ այդ յերգի Մուզան:
Վոչ մըտքեր են պետք, վոչ ձիրք և վոչ խելք.
Բառեր ու հանգեր—և ահա քեզ յերգ:
Հենց նոր դուրս յեկած այս խակ տղան էլ
Գըլխից այս տեսակ բաներ է հանել:

Այն օրից քանդվեց մեր ազգի տունը,
Փչացավ, ընկավ մեր դըպրությունը,
Հին պետները յերբ վոր վողջ մեռան,
Նոր մարդիկ յեկան ու պետ դառան...
Սաստում ենք, ծաղրում, դանե չեն լսում.
Ահա թե մենք ի՛նչ դըժվար օրերում
Պետք է մաքառենք,
Կռվենք ու մաքրենք,
Հայոց անարգված Պառնասը ամբիծ
Հանդուգն, ինքնակոչ այս նորեկ խմբից...»:
Արածըդ հիմա հասկանո՞ւմ ես դու.
Բանաստեղծ չինել մի անմեղ մարդու,
Բերանը դընել հիմար յերգերը
Ու բերել ձըգել հայոց յերկիրը,
Այն էլ, ո՛, փոքիր, հընեքի տեղը.
Այսքա՛ն վըրդովել ազգի ուղեղը...
Այս բա՞ն է, Մուզա՛,
Դե ինքըդ ասա:
— Ո՛, համբե՛րա, պո՛ետ. յերդվում եմ ահա,
Վառ Ավրորայի շողերի վըրա,
Պատմում ես դու այն խեղճերի մասին,
Վոր միշտ անտեղյակ աստղին լույսին,
Չեն հըճվում նորա ծագման հանդիսով,
Յեվ միայն կեսօրին, տապուշ յերեսով,
Յելնում են մըռայլ, տեսնում քնած—
Գըլխների վերև արևը կանգնած...
Բայց մի՛ թե, իրավ, հայերը այդպես
Անարգում են ինձ ու չեն սիրում քեզ:
— Միամի՛տ Մուզա. ի՛նչ ես պահանջում.
Վոչ թե չեն սիրում—չեն էլ ճանաչում:
Մեր խեղճ տանըցիք վո՛րքան նախատում,
Բայց յես, միշտ համառ—չեյի հավատում,
Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի.
Մի որ ինձանից արավ հարց ու փորձ.
— Ունե՞ս, հարցըրեց, մի պաշտոն կամ գործ:
— Բանաստեղծ եմ յես, ասացի հըպարտ:
— Դըժվար է, ասավ, յերբ անգործ է մարդ:
— Բանաստեղծ եմ յես, կըրկնեցի մեկ էլ.
— Հասկացանք, ասավ, պարապ ես յեղել:

Բայց վերջն ավելի պարզեց խնդիրը,
Երբ հոդված գրեց մեր լրագիրը:
Բանաստեղծն, ասավ, թող պանիր չինի,
Վոր հացի, վարձի դառնա արժանի,
Թե չէ՝ համառի ու մնա սոված,
Ի՞նչ հաշիվ ունի ազգը նրա հետ.
Ազգը հո նրան չի խնդրում գրել,
Թերթն էլ փող չունի, թե վոր վճարի,
Թող գնա, այրի իրան գրիչով...
Այսպես ենք դատում մեր մաքուր խղճով.
Ներշնչման համար
Այսպես է հարմար...
Կարող ենք մենք էլ
Ուժգին մտրակել
Ու ծաղրել մի մի,
Վոր հառաջ դիմի:
Զե՛, գնա՛, Մուսա,
Ուրիշին ասա,
Թե կարելի յե բանաստեղծ լինել
Ու հայոց յերկրում յերգեր հորինել:
Յեվ, այս բոլորը վոր տեսնի, լսի,
Եվ այս աշխարհքում վո՞ր խենթը կուզի
Ունենալ յերգի թեկուզ հենց հանճար
Ու միշտ խանգարված տառապել անճար:
—Վո՛հ, կապի՛ս յերկիր, անհոգի մարդիկ:
Դե՛, յե՛կ, սիրելիս, տանեմ քեզ յերկինք,
Այնտեղ յերջանիկ վոգիների հետ
Զվարթ կը խնդաս ու կապրես հավետ,
Կամ կուզես թռցնեմ, հանեմ Վոլիմպոս,
Վոր նեկտար ըմպես, ճաշակես ամբրոս:
—Ա՛յ, անգին Մուսա,
Դրանից խոսա.
Իրավ, այս կյանքից յես շա՛տ եմ զզվել:
Ի՞նչ յերանություն, յերկինքում սուզվել,
Այն չքնաղներին, վորոնք, անկասկած,
Նըման չեն իսկի մեր հայոց կանանց,
Լինել միշտ ընկեր
Ու սիրո յերգեր
Հորինե՛լ,
Զոնե՛լ,

Յերկրային բոլոր հոգսերը թողած...
Կամ, վոտներն հանգիստ ժայռերից կախած,
Նստել Պառնասի յերջանիկ գլխին
Ու բարձրից նայել այս հիմար խալխին...
Բայց յես ունեմ կին, շատ յերեխաներ,
Նրանց բանն այնտեղ ի՞նչպես կը լինէր·
Կարո՞ղ ենք այնտեղ նրանց համար էլ,
Թեկուզ սպառիկ, միշտ ապրուստ ճարել:
— Վո՛չ, յերբ Պառնասի գագաթ վերանաս,
Զավակներ ու կին պիտի մոռանաս...
— Ա՛յ անգութ Մուզա, անխի՛ղճ, անարգար,
Մեր գյուղի տերտեր քյոխվից էլ վատթար·
Ասա մի տեսնեմ, ի՞նչ եմ արել յես,
Վոր տանից տեղից մենակ աքսորես:
Չե՛, լավ է կըրկին, վոր այստեղ մընամ,
Ծաղրի, նեղության մի կերպ դիմանամ,
Քան մենակ յերկինք վերանամ քեզ հետ:
— Քո կամքը լինի, ո՛վ պապա պոետ:
Ընտրիր ուր կուզես, յերկինք թե յերկիր,
Բայց միշտ, ամեն տեղ քո յերգը յերգիր
Ու բարձրից նայիր կյանքի տագնապին:
Հիշիր սոսկալի այն չար վիշապին,
Վոր, մանուկ որից, անդադար, անքուն
Հետևում եր միշտ յերգի աստըծուն,
Մինչև վոր նորա ձեռից շանսատակ
Ընկավ Պառնասի անդունդը անտակ:
Այդպես անընկուն մնա՛ միշտ, պոետ.
Մի՛ ընկնիր մարդկանց չնչին կըրքի հետ.
Կանգնիր միշտ վերև
Ու, ինչպես արև,
Նայիր լուսավոր,
Պայծառ ու հըզոր.
Քո կոչումն է դա.
Յեվ, ինձ հավատա,
Բոլոր գանձերը, գոհարներն անգին
Չարժեն խանդավառված քո ներշընչանքին:
— Ա՛յ դու սատանա, ե՞լ կուզես խաբել,
Սիրուն խոսքերով աչքերըս կապել.
Ա՛յ դու կեղծավոր, չըքնաղ անպիտան,
Յես լավ եմ տեսնում այժըմ ամեն բան.

Դու ինձ ես մենակ միամիտ դրել,
Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թէկուզ մեզ մոտ, հենց իմ կընկանը,
Ասա թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՞նչ եմ ասում, հայոց գրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը։
Յեվ յերկա՛ր, յերկար մեր վողջ հանճարով
Մըտածել ենք մենք դըժվար օրերով —
Գըրողի պըսա՞կ,
Թե՞ փողի քսակ...
Յեվ լավ ենք վճռել. դե գնա՛, Մուսա,
Գըրադարանըս չինում եմ կասսա,
Թըքում եմ և քե՛զ և քո պըսակին,
Յերկըրպագում եմ փողի քըսակին։
«Փողի քըսա՛կը, փողի քսա՛կը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրեշ-տըգեղին,
Սըրբագործում է չարչին ու աղտեղին։
Նրա ուժն է, վոր դարձընում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույրին—զառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխառուին չինում բարերար,
Պըճնում ճաղատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի։
Նա յե միշտ շարժում դատողի լեզուն,
Նա յե հասցընում աղոթքն աստծուն,
Նրա վրա յե աշխարհքը կանգնած,
Նա մեր հոգին է, մեր յերկրորդ աստված։
Պոետն.էլ ըսավ թե խոսել է վատ,
Տուժել է սաստիկ, զղջացել է շատ,
Յեվ այժըմ, ահա՛, խելքի յե յեկել,
Սկսել է նրան որհնություն յերգել»։
Յերգըս վոր լսեց իմ դժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան.
— Դե՛, մնաս բարյավ.
Ասավ, անիրա՛վ.
Յես այսքան տարի
Ինչ վոր քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար։

# ԿՈՄԵՆՏԱՐՆԵՐ
# և
# ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հատորը բաղկացած է յերկու մասից՝ առաջինը հիմնական տեքստն է իր վարիանտներով և Փրագմենտային բաժնով, իսկ յերկրորդը՝ կոմենտարներ և տեքստային տարբերությունները։

Այս բաժնում սեղմ կերպով տրվում է յուրաքանչյուր յերկի գրելու և հրատարակելու պատմությունը, կարևոր բառերի բացատրությունը և ապա յերկի մշակման պրոցեսը, այս կամ այն հատվածի, պատկերի, ոճի մշակումն ու այլ խմբագրումը—հիմնված հեղինակի ձեռագրերի և յերկերի տարբեր հրատարակությունների վրա։

Տեքստը տրված է կորպուս, մշակումը՝ շեղատառ, իսկ կոմենտարներն ու բացատրությունները՝ պետիտ։

Յուրաքանչյուր յերկի վերնագրի տակ կլոր փակագծերում նշված են հիմնական տեքստի և վարիանտների էջերը։

Տողերի դիմացի թվերը վերաբերում են առաջին մասին՝ հիմնական տեքստին։ $Ձ_1$ $Ձ_2$ և այլ համառոտագրումների բացատրությունը տրված է խմբագրության կողմից գրքի սկզբում։

Այբբենական կարգը ա, բ, գ, դ․․․, ցույց է տալիս այլ մշակումները, իսկ տողատակինը՝ 2-րդ, 3-րդ մշակումը։

Ջնջված բառերը դրված են քառակուսի [ . ] փակագծի մեջ, յենթադրական կամ անընթեռնելի բառերը՝ սուր < >, բաց թողնված, չգրված բառերը նշանակված են չորս կետով ի տարբերություն բազմակետից։

Որինակ՝ «Լոռեցի Սաքոյի» 25 տողը հիմնական տեքստում այսպես է՝

Ես տախտի վրա աղոթում մի վանք

Յերկրորդ ձեռագրում՝

$Ձ_2$ Այս տախտի վրա [լուռ կանգնած]7 մի վանք

Տողատակին տրված է յերկու տարբեր մշակում՝

7 ա․ լռած է

բ․ հսկում է․

Այսպիսով տեսնում ենք, վերջին մշակման մեջ թողել է աղոթում մի վանք։ Կետադրության մշակումը չի տրվում։

## Մ Ա Ր Ո Ն

(Էջեր 3 և 291)

«Մարոն» Թումանյանի առաջին պոեմն է. գրել է 18 տարեկան հասակում, 1887 թ., Նյութը Դսեղ[1] գյուղում պատահած իրական մի դեպք է, ինչպես հեղինակն ինքն է նշում՝ «Զուռնաչի Սաքոյի[2] աղջկա պատմությունը»։ Նույն դեպքը մինչև այժմ էլ Դսեղում պատմում են։

[1] 1938 թվից վերանվանված է Թումանյան։

[2] <Անտոնյան> Սաքո։

Առաջին անգամ «Մարո» (գյուղացի մանկան պատմությունը) վերնագրով տպագրվել է ԲՄ II հատոր, էջ՝ 136—146։ «Մարո» վերնագրով յերկրորդ անգամ տպագրվել է ԲԹ էջ՝ 83—94։

Այս յերկու հրատարակությունների տեքստային համեմատությունը ցույց է տալիս, վոր հեղինակը յերկրորդ հրատարակության ժամանակ պոեմը հիմնական փոփոխության է յենթարկել—սեղմել է մոտ 50 տողով և վոճական փոփոխություններ մտցրել առանձին հատվածների և էջերի մեջ։ Նկատի ունենալով այդ տարբերությունները, առաջին հրատարակությունը տալիս ենք վորպես վարիանտ։

«Մարոն» հեղինակի կենդանության օրով վերջին անգամ տպագրվել է ԲԳ, էջ՝ 145—151։

Ինչպես յերևում է, հեղինակը պատրաստելով Պոլսի 1922 թ. հրատարակությունը, «Մարոն» յենթարկել է մանրակի փոփոխությունների—սեղմել է յերկրորդ գլուխը, իսկ XI գլխից չորս տող կրճատելով, ավելացրել է վերջին ութ տողը՝ «Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՜ն...»։

Տպագրվում է Պոլսի 1922 թ. հրատարակությունից։

«Մարոն» պոեմի ձեռագրից մնացել է միայն վերջին տասներկու տողը։

Պոեմի ԲԹ և ԲԳ հրատարակությունների տեքստային տարբերությունները.

ԲԹ 15 Հիշատակով սրգալի

կա՝

23—24 Իսկ Ներանից քիչ հեռու
Զարաճըճի մի առու
Դուրս է փախչում անտառից,
Կարկաչելով փրփրալից

27 Յերբոր տապից նեղանում

33–34 տողերի փոխարեն՝

Ու մեր ճիչը մանկական
Միանալով լեռնական
Գիժ վըտակի աղմուկին՝
Լուռ ու խաղաղ այն հովտին
Աշխույժ կյանք եր միշտ տալի։
Ա՜խ, վո՞րքան եր դյուրը գալի,
Յերբ մեր ոըկլոր խըմբակով
Վազում եյինք աղմուկով
Թխթեռնիկի յետևից,
Վոր թռչում եր թըփերից,

50 — Շնորհակալ ենք, ասացին
66 Սիրով սիրում եր նըրան
70 Զամիչ, կանփետ ու խընձոր
102 Յես չեմ ուզում լինել կին
118 Անտառներում շարունակ

119 Այսպես տարիք *անց կացան*
141 Ես լեռ *քարն էլ տաշեցին*

### ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՊՈԵՄՈՒՄ ՑԵՂԱԾ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՑԵՎ ՎՈՃԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1 Խոնչա—*փայտյա մատուցարան, որով հաց ու կերակուր են տալիս հյուրերին։*

2 Հող տվեք ձեր ոջաղից—*փոխաբերական դարձված է. կնշանակե՝ ձեր աղջիկն ուզում ենք։*

3 *«Տարան հա՛»—զուռնայի մի եղանակ է, որը հնչում են հարսին հորանց տանից ամուսնու տունը տանելիս։*

4 Քսեց գայլի յուղ բազուն—*կախարդելու միջոցներից մեկն է։*

## Լ Ո Ռ Ե Ց Ի Ս Ա Ք Ո Ն

(Էջեր 11, 297 և 305)

*Թ-ի վաղ շրջանի գործերից է, որ հետագայում մշակել է մի քանի անգամ։ Գրել է 1889 թ.։ Նյութը իրական մի դեպք է՝ Ռամազի Մաթոսի խելագարությունը Դսեղում, որի մասին կա հեղինակի ցուցումը. «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» վերնագիրը կրող գրության մեջ։*

*Այդ դեպքը, ինչպես նաև նախապաշարումների և սնոտիապաշտությունների հիման վրա վախից խելագարվելու ուրիշ դեպքեր, մինչև այժմ էլ Դսեղում և շրջակա գյուղերում ծերերը պատմում են։ Պոեմի համար Թ-ն օգտագործել է նաև իր հորաքրոջ՝ Թալալ նանի պատմածները Ջալալօղլում՝ աշակերտական տարիներին—սատանաների և քաջքերի մասին, հիշում են բանաստեղծի դասընկերները։*

Քան մեր աշխարհքի մարդիկ քննադատ:
Շնորհում են նրանք հայոց պոետին
Գոնե աղքատի վիճակը յետին,
[Այն էլ աղաղում ի՛նչ բարի մըտքով,
Վոր գըրողները խոր զգան հոգով.]
Իսկ դու զըրկում ես ամեն մի բանից,
Յեվ մինչև անգամ վորդուց, կընդանից:
Վոր այդպես յեղավ այստեղ կըմնամ.
Լավ է, վոր դարձյալ մի կերպ դիմանամ,
Քան կին, զավակներ, բոլորը ձգեմ,
Գամ քո հետևից[1] ու մենակ յերգեմ...
[— Լա՛վ, լինի այդպես,
Ինչպես դու[2] կուզես.
Դե՛ այստեղ մնա, յերգիր այս յերկրում,
Յերկինքը լինի թող քո յերգերում:]
Յեղիր աննըկուն, մնա մըշտ պոետ,
Մի ընկնիր մարդկանց չնչին կըքի հետ,
Յեվ մի տար դու դըն
Նըրանց վայելքին.
Խեղճություն է այն,
Յեվ ըշպար համայն
Մի աղքատ[3] վիճակ
Ծածկած վայլի տակ,
Վոր հոգի չունի, վոր խընդում չունի.—
Քո կարեկցության հավետ արժանի:
Այն ցավի աշխարհից,
Իր բարուց, չարից:
— Ա՛յ դու չարամիտ, ե՞լ կուզես խաբել

528 տողից հետո՝

Նրա անունն է մաքրում հանցանքը,
Մարդու վոտի տակ դնում է կյանքը
— Չարագործներին չինում բարեբար

Վերջում՝ 548 տողից հետո կա հետևյալ հատվածը.

— Դե՛ գնա, հիմար, յետ չըդաս կըրկին,
Չես ըրծնիլ թե չէ էլ այսպես կարգին.

---

1 Բարձրանում սարերն
2 [վոր]
3 Անբախտ

Այս էլ քո տված զգացում, սիրտ ու սեր,
Ներշընչանք, ցնորք—և այլ խենթ բաներ.
Թեև ամենից մի քիչ է մընացել.
Բայց յես, յերդվում եմ, շահ չեմ ունեցել:
Տար—տուր ում կուզես, ու թող ինձ ազատ.
Ուզում եմ լինել յես հայ հարազատ...
Հարգի, կարևոր իմ ազգի համար:
Դե՛հ, շո՛ւտ, հեռացի՛ր, նենգավոր հիմար:]

*«Պոետն ու Մուսա»-յի ձեռագիրը բանաստեղծի արխիվում չի պահպանվել. պահպանվել է միայն պոեմի նախնական վարիանտի վերջին էջը՝ 8 տողը, վոր հեղինակի ձեռքով ջնջված է և անտիպ: Բերում ենք ստորև.*

Յեվ լալով մեկնեց յուր աջը դեպ ինձ.
Բայց հանկարծ նորա աջի հըպումից
Յես ինձ մոռացա, ուշքս վերացավ,
Յերգի կըրակը նորեն վառվեցավ,
Սրտումըս նորեն ուժգին բըռնկեց,
Յեվ յես մնացի դարձյալ բանաստեղծ [1],
Դարձյալ մըտերիմ—գերի Մուսային,
Վոր դարձյալ յերգեր նըվիրեմ հային:

## ՊՈԵՄԻ ՄԵՋ ՅԵՂԱԾ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՎԱՅՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Միդաս.—*Այն հարուստ թագավորն էր, վոր չհավանեց Ապոլլոնի յերգը: Բանաստեղծության զայրացած աստվածը, պատժելու համար, իր քննադատի գլուխը զարդարեց իշի ականջներով:*

Հ. Թ.

Մուսա.—*Սկզբում միայն յերգի աստվածուհի, վերջը նույնպես զանազան արվեստների և գիտությունների ներկայացուցիչ: Ըստ բանաստեղծ Հեսիոդի՝ մուսաներն ինն էյին,—Զևսի դուստրները:*

Ավրորա.—*Արշալույսի հռոմեյական աստվածուհի (համապատասխանում է հունական Եոսին): Առավոտյան վաղ նա վեր է կենում իր անկողնից՝ ովկիանոսի միջից և լույս բերում մարդկանց ու աստվածներին: Նրան պատկերացնում էյին նստած ոսկյակ ու վարդագույն ձիեր լծած կառքի մեջ:*

Վոլիմպոս.—*Լեռ Հունաստանում, Մակեդոնիայի և Թեսալիայի սահմանում: Հույների կարծիքով, այդ լեռան վրա էյին ապրում աստվածները. այնտեղ նրանք խմում էյին նեկտար և սնվում ամբրոսով, վորընցով պահպանվում էր նրանց անմահությունն ու հավիտենական յերիտասարդությունը:*

Պառնաս.—*Լեռ Հունաստանում: Ըստ հունական ավանդության՝ գագաթին ապրում էր Ապոլլոնն իր մուսաներով:*

Մորփե *կամ* Մորփեոս.—*Քնի աստված:*

---

1 *Մնացի դարձյալ* հայոց *բանաստեղծ:*

«Պոետն ու Մուսան» պատմում կան մի շարք ակնարկներ ժամանակի հասարակական կյանքի և գործիչների մասին: Ուսումնասիրությունը դրանց մի մասը բացատրում է հետևյալ կերպ.

1. «Ակնարկներ» և «Որեգոր».—Այս վերնագրերի տակ Ե. Մալումյանը—Ակ—լեր ստորագրությամբ «Մշակ»-ում տպագրում եր ֆելիետոններ, որոնցից մեկի մեջ ծաղրի յեր առել մի շարք պոետների, դրանց թվում և Թ-ին:

2. Ֆելիետոն.—Ակնարկում է «Մշակ»-ի խմբագիր Արծրունուն, որ Ճախացի կեղծանունով, «Մշակ»-ի 1891 թ. № 90-ում իր այդ ֆելիետոնում ծաղրի յե յենթարկում Թ-ի «Կուրծքս յերբեմն յեր և դալար» բանաստեղծությունը:

3. «Ու պխսերի տխալ պաշտոն».—Թումանյանն ակնարկում է կոնսիստորիայում դպրի պաշտոն վարելու շրջանը (1887—1892):

4. «Գրեցի մեծխս պարսավ».—Թ-ը դժգոհ կոնսիստորիայի մթնոլորտից և իրեն շրջապատող հոգևորականությունից, նա «Զարամխաներ» վերնագրով մի բանաստեղծություն է գրում, որտեղ ծաղրում է Թիֆլիսի թեմի առաջնորդ Մամբրե յեպ. Սանասարյանին:

5. «Հայտնի կանտոր ընկա շուտով».—Թ-ը 1892 թվին ազատվելով կոնսիստորիայից, Վարդապարյան—Զարգարյան ընկ. գրասենյակում քարտուղարի պաշտոն է ստանձնում:

6. «Փալխա խմբագրից և նրա աչքից».—Ակնարկում է «Մուրճ»-ի խմբագիր Ավետիք Արասխանյանին:

7. «Այնժամ մտրակող մի բուռն պուբլիցիստ».—Ե. Մալումյանին է ակնարկում:

8. «Մինչև լսեցի մի մեծ պարոնի».—Հայտնի կապիտալիստ Ալ. Մանթաշյանին է ակնարկում:

9. «Յեվ խեղճ ընկերս յերբվոր՝ սրտացավ՝
Սա էլ պետքական մի մարդ է, ասավ»—
Խոսքը իր ընկեր Փ. Վարդապարյանին է վերաբերում:

10. «Յօղակն ի ճախր յայեր ամբուռ ,
Խօչևն զուղել ի յամբ անկուռ,
Սաղալի արևկ՝ Թընդմամբ ալըռվի
Զեռ դիր բուռմբ՝ աղէու ի յուվ»:

Այս չորս տողն առնված է Ստեփաննոս վարդապետ Ագոնցի «Ճարտասանություն» գրքից, 1775 թ. եջ՝ 57, իբրև նմուշ անճաշակ և խրթին գրաբարի, որի աշխարհաբար թարգմանությունը տալիս ենք ստորև.

Անհուն ոդի մեջ ճախրել սաստիկ ցանկացողը,
Յեվ ամպերում աղմուկ հարուցանողը—
Արագորեն կըլղահավի մեծ թնդյունով,
Ինչպես ծանր ռումբը սաստկապես ընկնում է վառի մեջ:

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

(Եջ 103)

«Սասունցի Դավիթը» (դյուցազնական վեպ) վերնագրով ավարտել է 1902 թ. աշնանը. առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1903, № № 2, 3. 4 և 5-ում՝ հեղինակի հետևյալ ծանոթությամբ.

«Այս պոեմը կազմելիս օգտվել եմ հետևյալ վարիանտներից.

1. Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Սրվանձտյանի, Կ. Պոլիս, 1874 թ.։
2. Դավիթ և Մհեր, Մ. Աբեղյան. Շուշի, 1889.
3. Սասմա ծռեր, Գարեգին Սարկավագ, Թիֆլիս, 1892.
4. Սասմա փահլևաններ կամ Թլոր Դավիթ և Մհեր. Բ. Խալաթյանց, Վաղարշապատ, 1899։ Հ. Թ.»։

«Սասունցի Դավիթ»-ը հեղինակի կենդանության օրոք լույս է տեսել յոթ անգամ. «Մուրճ»-ում տպագրելուց հետո, նույն թվին Թ-ը յնթարկել է հիմնական վերամշակման, վորը լույս է տեսել ԲԹ։ Յերրորդ անգամ լույս է տեսել 1904 թ.՝ առանձին գրքով՝ Ստ. Լիսիցյան և Ընկ. հրատարակությամբ։ Չորրորդ անգամ՝ ԲԲ, հինգերորդ անգամ՝ 1909՝ «Հայ Գրողներ» քրեստոմատիայում. վեցերորդ անգամ՝ 1922 «Գրական Գոհարներ» ժողովածվում, և յոթերորդ անգամ՝ ԲԳ.։

Հեղինակի արխիվում պահպանվել է «Սասունցի Դավթի» 1904 թ. հրատարակությունը՝ իր ձեռքով կատարած խմբագրական ուղղումներով, վորը և տալիս ենք։ Այս տեքստն առաջին անգամ լույս է տեսել 1934 թ. «Գեղ. յերկեր.»-ում, Յերևանում։

Ստորև տալիս ենք «Ս. Դ.»՝ հիշյալ հրատարակությունների տեքստային տարբերությունները.

Բոլոր հրատարակությունների մեջ I գլուխը նույնն է։

«Ս. Դ.»-ի առաջին հրատարակության II գլուխը՝ «Յերբ մանուկ եր նա...» ԲԹ հրատ. մեջ հանել է ու չի մտցրել հետագա և վո՛չ մի հրատարակության մեջ։

II

Յերբ մանուկ եր նա, դեռ տասը տարում,
Մի դև լույս ընկավ Սասմա աշխարհում,
Ճամբեքը փակեց, կտրեց անցուդարձ,
Սասմա քաղաքը սով ընկավ հանկարծ։
Մըհերը մի օր հարցըրեց, ասավ.
— Ինչո՞ւ մեր հացը եսպես թանգացավ,
Ինչո՞ւ գյուղերից ցորեն չեն բերում,
Ինչո՞ւ են մարդիկ փակվել տըներում։
— Մի դև է, ասին, լույս ընկել ճամբում,
Ով անց է կենում, բըռնում է լափում,
Մարդիկ եղ փակված՝ քաղաքից, գյուղից
Եղ դուրս չեն գալիս նրա յերկյուղից։
— Մի դևն ի՞նչ է՝ վոր խըղճացնի եսքան,
Ասավ զարմանքով էն մանուկ հըսկան
Ու յելավ գնաց։ Գընաց անհեթեթ
Մի կըռիվ մըտավ դաժան դևի հետ,
Բըռնեց հըրեշին, պատռեց մեջտեղից,
Յերկիրն ազատեց սովից, յերկյուղից,

Իրեն անունն էլ են որից ի վեր
Մընաց ու մընաց մինչ Առյուծ—Մըհեր:

15 Մ. Սկըսեց մըտածել Առյուծ Մըհերը
24 ԲԹ. Ու դարդ էր անում հըսկան ծերունի
26—27 Մ. Յերբ միտք էր անում, վերևից հանկարծ
Մի լույս հըրեղեն հայտնըվեց քաջին,
29 Մ. — Վողջո՛ւյն քեզ, ասավ մըռայլ հսկային
ԲԹ. և ԲԲ Վողջո՛ւյն յերկնամերձ Սասմա հըսկային
44 ՀԳ. Կանչեց.իր յեղբայր Ձենով Օհանին
46 Մ. Ու կինն էլ, ինքն էլ նույն օրը մեռան
49 Մ. Յերբոր իմացավ՝ էլ Մըհեր չըկա
60 Մ. Արի, անց կացիր իմ թըրի տակով
66 Մ. Մոտ չեկավ Մըսրա Մելիքի թըրին
69—70 Մ. Վոր գըցեց, մատը մի քարի առավ,
Վոր առավ, քարից կըրակ դուրս թըռավ:
82 Մ. Մի մանուկ էր դեռ յերեք տարեկան

«Մուրճ»-ի տեքստի VI գլխում Թ-ը պատմում է յերեք տարեկան Դավթի մանկական չարաճճիություններից մեկը (յերեխաներին բարդիներից գցելը), վորը հետագա բոլոր հրատարակություններից հանել է: «Մուրճ»-ի այս վարիանտում Ձենով Օհանը Դավթին նախրապան է դարձնում, լսելով սասունցիների բողոքը, թե՝ ազատեք մեզ Դավթի կորստաբեր խաղերից: ԲԹ-ից հանելով հիշյալ եպիզոդը, Թ-ը հիմնովին փոխում է իր այդ վարմունքի դրդապատճառը—Ձենով Օհանը Դավթին գառնարած է դարձնում, լսելով իր չար կնոջ գժգոհությունը: Ստորև տալիս ենք Դավթի չարաճճիության այդ եպիզոդը և նախրապանության նկարագրությունը.

Մի որ հավաքեց քաղքի յերեխանց.
— Տըղե՛ք ջան, եկեք ծա՛ռ հեծնենք, ասաց:
Տարավ, մի բարդի կըռացրեց հողին,
Յերեխանց չարքով նըստեցրեց ճյուղին:
Հենց վոր նըստեցին, բաց թողեց ծառը.
Ահագին թափով փախավ կատարը.
Ու, ա՛ռ հա կըտոր, ամեն մի տըղա
Թռավ մի փողոց, մի կտեր վըրա,
Դիպավ մի պատի, ընկավ մի քարի,
Եսոր ես մեռել, թե անցյալ տարի...
Ինքը ծափ տըվավ, թավալվեց հողում:
Գըլոր էր գալի, խընդում, ծիծաղում,
Իբրև թե՝ տեսե՛ք՝ ի՛նչ հանաք արավ:
Ամբողջ քաղաքը սըգատուն դառավ.
Յերեխանց տերերն յեկան, կիտվեցին,
Լացով ու կոծով,

Դառը կսկծով
Ձենով Օհանի դուռը կորեցին:
— Տո՛, Ձենով Օհան, մենք եսքան տարվան
Աղուհացակեր ընկեր—հարևան,
Դո՛ւ մեր յերեխեք հե՞ր ես կոտորում,
Մեր տունը քանդում, մեր ծուխը կտրում:
Թե կուզես, ախպե՛ր, թողնենք տեղ ու տուն,
Սասմա քաղաքից կորչենք դաղարդուն,
Թե չէ՝ վե՞ր կանի սատված ես բանը…
— Ի՞նչ անեմ, ա՛խպեր, ասավ Օհանը:
— Ի՞նչ պետք է անես, կարգի՛ր մի բանի,
Գընա, քեզ համար աշխատանք անի.
Թե չէ՝ բերել ես պարապ նըստեցրել,
Պահել, պահպանել, վիզը հաստացրել,
Գազան ես շինել ու դըցել աշխարհ…
— Ի՞նչ անեմ, ասավ Օհանը անճար.
Ի՞նչ գործ ունիմ յես, ի՞նչ գործի դընեմ.
Բերե՛ք ձեր ապրանք իր առաջն անեմ,
Հանդ ըղրկեմ ծեղից մինչև իրիկուն,
Ել վուչ մարդ տեսնի, վուչ քաղաք ու տուն:
Ու մարդիկ հավան կացան ես բանին,
Ապրանքը բերին, տըվին Օհանին:

---

Գընաց Օհանը ու Դավթի վոտի
Մի զուչգ վոտնաման բերավ յերկաթի,
Յերկաթի մի կոռ հարյուր լըդըրական,
Ու շինեց Սասմա քաղքի Նախրապան:

VII

Արևը բացվեց աշխարքի վըրա,
Ցընձուղը զարկեց Սասմա սարերին,
Սարերը յելավ Դավիթը ահա
Իրեն յերկաթի մահակը ձեռին:
— Հե՛յ, հե՛յ, գողե՛ր ու գազաննե՛ր;
Զարգեմ, քըշեմ սարերն ի վեր:
Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ—դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր,
Ու են ամպրոպի ձենը հենց առած՝
Վայրի գազաններ յելան զարհուրած,

Իրենց վերջերից, բըներից փախան,
Թարեքար ընկան, ղաղարդյուն յեղան:
Դավիթն էլ ընկավ նըրանց յետևից,
Վորին մի սարից, վորին մի ձորից—
Գայլ, ինձ, առյուծ, արջ, վագըր բըռնեց,
Հավաքեց, բերավ իր նախրին խառնեց,
Իրիկվան քըշեց վողջ Սասմա քաղաք:
Վոռնոց, մըռընչյուն, աղմուկ, աղաղակ...
Թաղքըցիք հանկարծ մին էլ ի՜նչ տեսան.—
Փոշին ամպի պես բարձրանում է վեր,
Ու քաղքի վըրա անհամար գազան
Գալիս են հըրես բացած յերախներ:
Սըրտաճաք յեղած,
Գործները թողած,
Փախան, լըցվեցին տուն, ժամ ու խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:
Յեկավ Դավիթը, կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս մարդիկը ի՜նչ վաղ են քընում:
Հե՛յ կովատեր, հե՛յ գոմշատեր,
Յելե՛ք, շուտով բացե՛ք դըռներ,
Ով մինն ուներ, տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քըսանն արել...
Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,
Ձեր յեզ ու կով գո՛մերն արեք:
Տեսավ՝ չեն գալիս, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:
Լուսին իշխաններ յելան միասին,
Գընացին Ձենով Օհանին ասին.
— Ամա՜ն, քեզ մատա՜ղ, ա՛յ Օհան ախպեր,
Մեր ապրանքն ու մալ թող մընան անտեր,
Էլ վոչ կով կուզենք, վոչ գոմեշ ու յեզ,
Միայն թե սըրանից ազա՛տ արա մեզ,
Թե չէ՝ էս քաղքին փորձանք կըբերի,
Գայլերոց կանի, կըտա կավերի:

---

ԲԹ 84 և 85-րդ տողերի միջև կա հետևյալ յերկու տողը.

Բայց հընուց խոսք է, մեծ իմաստ ունի,
Թե՝ խաչը՝ տերը դորավոր կանի:

85 ԲԹ Վա՛յ անտեր *վորբին աշխարքի վըրա*

91 ԲԹ *Ի՞նչ ես ուրիշի* յեթիմը *բերել*

101 ԲԹ Ու գընաց Ոհան *յերեսի վոտի*

141—146 — Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Ոհան ախպեր,
Մեր գառն ու մեր ուլ թող մընան անտեր,
Միայն սըրանից ազատ արա մեզ.
Վոչ գառն է ջոկում; վոչ գայլն ու աղվես,
Ես քաղքի գըլխին փորձանք կըբերի,
Գայլերոց կանի, կըտա՝ կավերի:

*«Մուրճ»-ի տեքստի VIII գլխի սկզբի քսանչորս տողում տրված է Դավթի նախրապանությունից վորսորդության անցնելը, ԲԹ VII գլխի սկզբի 12 տողում տրված է գառնարածությունից վորսորդության անցնելը, իսկ մեր հրատարակության մեջ՝ նույն տեղում՝ գառնարածությունից՝ նախրապանության անցնելը:*

*Ստորև տալիս ենք ա. և բ. վարիանտները («Մուրճ» և ԲԹ):*

*Մ.* *Յելավ, Դավթի մոտ գընաց Ոհանը:*
*— Հ՞ը, Դավի՛թ, ասավ, վո՞նց է քո բանը:*
*— Հորեղբա՛յր, ասավ, շատ է դըժար բան.*
*Կեռ-կեռ պոզավոր մալերը վոր կան՝*
*Խելոք են, ամա են անպոզ մալեր*
*Ցրվեցին, փախան վողջ սարերն ի վեր.*
*Ենքան վազեցի, վոր յելավ հոգիս,*
*Եվ իսկի ուրեխ չը մնաց հաղիս:*
*Նայեց Ոհանը, վոր Դավթի հագին*
*Վոտնաման չի էլ մընացել կարգին,*
*Մահակն էլ մաշվել, կես տեղն է հասել,*
*Մի որվա միջում ենքան է վազել:*
*— Դավի՛թ ջան, ասավ, եդ շատ է դըժար.*
*Նետ-աղեղ եմ յես շինել քեզ համար,*
*Նետ-աղեղըդ ա՛ռ, գընա՛, վո՛րս արա,*
*Մա՛ն արի ազատ սարերի վըրա:*
*— Ա՛խ, հորեղբա՛յր, ի՛նչ լավ է հա՛,*
*Ազատ շըրջել սարի վըրա,*
*Պայծառ օդում,*
*Թարմ արոտում.*
*Լեն ու արձակ ապրել, շընչել,*
*Վազել, վորսալ, խաղեր կանչել*
*Սարի լանջին,*
*Ամպի միջին:*
*Խընդալով առավ աղեղն Ոհանից,*
*Հեռացավ քաղքից, քաղքի սահմանից*

Ու դարձավ վորսկան: Գնաց, մի կորկում
Լոր էր սպանում, ճընճղուկ էր պարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկա մոտ,
Կըրակի կողքին
Յերկա՛ր, ահագին
Մեկնըվում,
Քընում:

ԲԹ Ցելավ՝ Դավթի մոտ գընաց Ոհանը.
— Հ՞ը, Դավի՛թ, ասավ, վո՞նց է քու բանը:
— Հորեղբայր Ոհան, շատ է դըժար բան.
Էն կարմիր, անպոչ գառները վոր կան,
Խելոք են, ամա պոչավոր գառներ
Ցըրվեցին, փախան վողջ սարերն ի վեր,
Էնքան վազեցի, վոր յելավ հոգիս,
Էլ իսկի տըրեխ չըմնաց հալիս:
— Դավի՛թ ջան, ասավ, էդ շատ է դըժար.
Նետ-աղեղ եմ յես շինել քեզ համար,
Նետ-աղեղըդ առ, գընա վորս արա,
Ման արի ազատ սարերի վըրա:
Նետ-աղեղն առավ Դավիթ Ոհանից,
Հեռացավ քաղքից, քաղքի սահմանից
Ու դառավ վորսկան: Գընաց մի կորկում,
Լոր էր սպանում, ճընճղուկ էր պարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկա մոտ,
Վըշապի նըման, յերկա՛ր, ահագին
Մեկնըվում, քընում կըրակի կողքին:

1904 թվի հրատարակության մեջ Դավիթը VII գլխում գառնարած է, VIII-ում՝ նախրապան և IX-ում՝ վորսկան: Հետագա հրատարակություննե-րի մեջ՝ ԲԲ և ՀԳ՝ տրված է ԲԹ տեքստը:

259 Մ. Ե՛յ գլխի որե՛ր, ա՛խ, ո՞ւր էք կորել
313—315 Մ. Դավիթն Ոհանից ես վոր իմացավ,
Խաչ հանեց դեմքին.—Հորեղբա՛յր, ասավ,
Անո՛ւշ հորեղբայր, աշխարքի վըրա
318 Մ. Մինչև չը շինեմ ես վանքը նորից
332 Մ. Վար իջավ Դավիթ Մարութա սարից
381 Մ. Ասավ, բերին չարան-չարան
394 Մ. Վար իջավ Դավիթ Մարութա սարից,
426 ա. Մ. Դու ինձ ե՛ն ասա, վո՞րտեղ են ուզում:

426 բ. ԲԹ Ցույց տուր ինձ հապա—*ո՛րտեղ ես ուզում:*
433 Մ. Դավիթն եր. լսեց, վեր կացավ, *գընաց:*

*Մեր տեքստի 440 և 441 տողերի միջև, որ համապատասխանում է «Մուրճ»-ի տեքստի XIII գլխին, կա հետևյալ տասներկու տողը, որը հեղինակը հանել է հետագա բոլոր հրատարակություններից:*

*— Ե՛յ Ջենով Օհան, ասավ Կողբացին,*
*Դենը կորցըրու ես խելառ դյաղին:*
*Ես ասելն եր հենց.*
*Դավիթն եր. հանդարտ թևիցը բռնեց,*
*Դենը շըպըրտեց, ասես թե մի հավ,*
*Ու ինքը չոքեց, չախը կործ արավ,*
*Մի քանի վոսկի ածավ յետևին,*
*Հարթիչը առավ,*
*Քըսեց ու են էլ վողջ թափեց դետին.*
*— Ես մե՛կ, Կողբացի՛ն.*
*Մընդաց ու դատարկ չուռ տըվավ պարկում,*
*Ջախած վոսկին է իբրև դատարկում:*

443 Մ. *Թե չէ՝ կը գընամ,* արևըս *մըկա*
447—456 ա. Մ. *Դավիթ բարկացավ, կառը շըպըրտեց,*
*Տըվավ Կողբացնի գըլուխը ջարդեց:*
*— Կորե՛ք, գընացե՛ք, ասավ, մեր հողից,*
*Թե չէ՝ վոր հիմի վերկացա տեղից,*
*Ձեր մեծ կըտորը ականջը կանեմ,*
*Ձեր հողն ու մոխիրն յերկինք կը հանեմ,*
*Ո՞ւմ եք դուք յեկել տալիս վոտի տակ,*
*Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ չվաք...*

447—451 բ. ԲԹ — *Կորե՛ք,* գընացե՛ք, *դուք Մըսրա շըներ,*
Կորոտաց Դավիթ, ասես ամպ լիներ.
*Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ չըվաք,*
Ցեկել եք Սասուն *գընեք խարջի տակ...*
Ասավ, չափն առավ ենպես *շըպըրտեց,*
456 Մ. Սասմա *աշխարքից փախան, գընացին*
461 Մ. Դու անում ես *ինձ քաղքի* նախրապան

483—486 *տողերը Մ-ի մեջ չկան. ավելացված են ԲԹ:*
599—500 *տողերը ավելացված են ԲԹ:*

518 ՀԳ. *Պարզև* եդ *մեծ հաղթության*
531 ԲԹ *Սասմա յերկիր ձեզ* բան *չըկա*
534 ՀԳ. *Թե* կտրին է, *դուռով տանի*
552 Մ. *Ենքան* անհամար *բազմություն են որ*

553 Մ. Բաթմանա գետին յեկավ ու չոքեց
557 Մ. Քուռքը վեր առավ, առը բարձրացավ
561 Մ. Ըսպիտակ ձյունով ծածկել եր Սասուն
584 Մ. Կըռիվ եմ գընում Մըսրա զորքի դեմ

587—698 տողերը Մ-ում այսպես են՝

Քու հերն ուներ կըռվի համար
Հըրեղեն ձի, վոսկի քամար,
Զըրահ շապիկ, կապեն հագի,
Աջ թևին խաչ պատարագի,
Կուռ սաղավարտ, կայծակի թուր ..
Իսկ դու կուզես եշ ու շամփո՛ւր...
— Ամա՛ն, նանի՛, չեմ լըսել դեռ,
Ո՞ւր են հիմի իմ հոր զենքեր:

603 Մ. Դավիթ գընաց հորեղբոր մոտ
604 Մ. — Ե՛յ հորեղբայր, կանչեց հերսոտ
604 ԲԹ — Ե՛յ հորեղբայր, կանչեց ցասկոտ

605—610 տողերը Մ-ում այսպես են՝

Իմ հերն ուներ կըռվի համար
Հըրեղեն ձի, վոսկի քամար,
Զըրահ շապիկ, կապեն հագի,
Աջ թևին խաչ պատարագի,
Կուռ սաղավարտ, կայծակի թուր,
Կը տաս—բե՛ր, տո՛ւր...
— Վա՛յ, Դավիթ ջան,
Ահից դողաց Ձենով Ոհան.

608 ՀԳ-ի տեքստում «խաչ պատարագին» դարձել է «խաչ պատրաստի»:

617—646 Մ. Դավիթը թողեց Ձենով Ոհանին,
Գընաց, ախոռից դուրս քաշեց հոր ձին,
Զըրահը հագավ, զենքերը կապեց,
Ձին հեծավ, կանգնեց ու ձենով յերգեց.
«Սասմա՛ն քույրեր, բարո՛վ մընաք,
Բուրություն եք արել ինձ.
Սասմա՛ն մայրեր, բարո՛վ մընաք,
Մոր նըման եք սիրել ինձ:

Կըռիվ կերթամ, դուշմանը ձեզ
Զը դա, դերի չը տանի.
Ո՛վ իմանա—մին էլ եսպես
Ինձ չը տեսնեք կենդանի...

Խնդրո՛ւմ անեք, թե դաշտ գընաք,
Չը մոռանա՛ք ձեր Դավթին.
Բարո՛վ մընաք, բարո՛վ կենաք
Մեր աշխարհքին, մեր հանդին:

Ցերդեց Դավիթ ու ձին քըշեց,
Ձենով Ոհան հոզոց քաշեց.

ԲԹ-ում Թ-ը Դավթի «Մնաք բարովը» հանել է: Հետագայում, 1904 թ. տեքստում ձեռագրով ընդարձակում է Դավթի «Մնաք բարովը»—առանց վերջնական մշակման: Այդ հատվածը առաջին անգամ լույս է տեսել 1934 թ. «Գեղարվեստական յերկեր»-ում՝ առանձին, իսկ 1938 թ. ժողովածուում՝ պոեմի մեջ՝ իր տեղում:

666 Մ. Ու խըրատելով՝ գըրավ ճանապարհ

660—688 տողերը Թ-ը առաջին անգամ ավելացրել է ԲԹ, վոր Մ չե յեղել:

677 ԲԹ Հեռացե՛ք, հիմի ուր վոր է՝ կըգա

681—682 Մ-ում արված են հետևյալ ութ տողով.

Իր ձին հեծավ, քըշեց Դավիթ,
Ցելավ Սասմա սարի գըլուխ,
Նայեց ներքև,—դաշտը խիտ-խիտ
Կոխած փոշին, կըրակ ու ծուխ:
Տեսավ, կանգնեց ամպի տակին,
Ու են անծայր ծովի վըրա
Գոռաց ձենովն իր ահագին՝
Տարածելով սարսափ ու ահ.

690 Մ. Եսպես գոռաց, ասպանդակեց
796 Մ. — Հա՛, հա՛, հա՛, հա՛, վերից խընդաց
808 Մ. Գընա՛ց մեր մանուկ Դավիթը ձեռից
810 Մ. Տունըդ չը քանդվի, ասավ կընիկը
817 Մ. Մեր աստղը հազիվ ցոլքում դալկացած
840 Մ. — Ջա՛ն կարմիր ձի, մինչ յե՞րբ ասավ
860 Մ. Ներքև Մըսրա զորքը ծըփում
866 Մ և ԲԹ — Դավի՛թ, գոռաց, վորտե՛ղ ես դու
867 Մ և ԲԹ Հիշի՛ր խաչը պատարագի
867 ՀԳ Հիշի՛ր խաչը քո աջ թևի,
869 ՀԳ Դո՛ւրս յեկ աշխարհք, լույսն արևի՛
875 Մ. Ո՛վ անմահ խաչ պատարագի
875 ՀԳ Ո՛վ զորավոր խաչ պատրաստի
876—877 Մ. Ձե՛զ եմ կանչել,—հասե՛ք Դավթին...

*կանչեց, տեղից* կանգնեց *վազքի*

884 *Մ. — Դավի՛թ* ասավ, *յեկ դես եստեղ*

922 *Մ. Կենդանի՛ եմ,* գոռաց *Դավիթ*

959 *Մ. Ես անգամ էլ* վազեց *քուրը.*

965—973 *տողերը առաջին անգամ լույս են տեսել* 1934 *թ. «Գեղարվեստական յերկեր»-ում, ըստ* 1904 *թ. հրատ. վրա արած ձեռագիր ուղղումների:*

984 *Մ.* Լսեց Դավիթն ու *զարմացավ*

1005—1006 *տողերի միջև կա հետևյալ քառատողը.*

*Ես մինը ձեզ խըրատ լինի,*
*Ինչպես դըրկից ու բարեկամ՝*
*Առանց մըտաս ու կենդանի*
*Բաց եմ թողնում ձեզ այս անգամ:*

*Պոեմի վերջին չորս տողը* (1014—1017), *որ Մ-ում չեն յեղել, առաջին անգամ լույս են տեսնում ԲԹ-ում:*

*Թ-ի արխիվում պահպանվել է հետևյալ ցանկը, որից, ինչպես յերևում է, հեղինակն օգտվել է պոեմը վերամշակելիս:*

1. *Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ. Գ. Վ. Սրվանձտյան, Պոլ.* 1876 *«Գրոց-բրոց»:*
2. *Դավիթ և Մհեր. Մ. Աբեղյան, Շուշի, Մոկաց* <*բարբառով*>*:*
3. *Սասմա ծռեր. Գարեգին Սարկավագ:*
    1. *Արարատի բարբառով.*
    2. *Մոկաց:*
4. *Սասմա փահլևաններ, կամ Թըլոր Դավիթ և Մհեր, Մոկաց. Բ. Խալաթյանց.*
5. *Իրանի հերոսները հայ ժող. մեջ. Վանա, Կողպա և Արարատի բարբառներով. Բ. Խալաթյանց, Պարիզ.*
6. *Ջոջանց տուն կամ Սասմա ծռերի յերեք փոփոխակ* <*Ս. Կանայան*>
7. *Թլուատ Դավիթ, Մոկաց. Ա. Աբեղյան. Ազգագր. հանդես* № 6. *եջ* 159. № 7—8. *եջ* 103.
8. *Սասնա ծռեր. Արարատյան. Արտ. Աբեղյան, Ազգագր. հանդ.* № 9, *եջ* 117.
9. *Սասմա ծռեր, Նոր-Բայազետ, Ցե. Լալայան, Ազգագր. հանդես,* № 13.
10. *Սասնա տուն, յոթ ճյուղ Վանի բարբառով, Ազգ. հանդես,* № 20.
11. *Սանասար և Բաղդասար, Մոկաց.*
12. *Դավիթ և Մհեր, Եմինյան ժող.* № 2.
13. *Դավիթ և Մհեր, Շատախի, Եմինյան ժող.* № 4.
14. *Դավիթ և Մհեր, Արարատի, Եմինյան ժող.* № 4.
15. *Սենեքերիմ թագավոր, «Մարգարիտներ». Ցե. Լալայան, Գ.* <*գիրք.*>
16. *Սասմանց տուն, Տ. Չիթունի,* 1910, *Կ. Պոլիս:*

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՊՈԵՄՈՒՄ ՅԵՂԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՅԵՎ ՎԱՅՐԵՐԻ

Սասունցի Դավիթ.—*Հայկական համանուն հերոսական եպոսի կենտրոնական դեմքն ու գլխավոր հերոսը: Հայ ժողովրդի՝ ոտար յերկրյա (օտար,*

*յեգիպտացի և այլն) նվաճողների դեմ վարած դարավոր պայքարի գեղարվեստական-վիպական ընդհանրացումը:*

**Առյուծ Մհեր.**—*Ըստ վեպի Մեծ կամ Առյուծաձև Մհեր: Մի քանի պատումների մեջ հիշվում է իբրև Սասունցի Դավթի հայր, Սանասարի թոռը: Մեծ կամ Առյուծաձև Մհերի մասին վեպը պատմում է, որ նա փրկում է վերահաս սովից Սասունի և հարևան գավառների բնակիչներին, սպանելով հաղորդակցության միակ ճանապարհի վրա հայտնըված ամենակուլ հրեշ առյուծին: Նույն Մհերը, ըստ վեպի, ազատում է սասունցիներին՝ Մսրա Մելիքին (Բաղդադի Խալիֆա) հարկ վճարելուց:*

**Մսրա Մելիք.**—*«Սասնա ծռեր»-ի կենտրոնական դեմքերից մեկը. Սասունցի Դավթի գլխավոր ախոյանը: Մսրա Մելիքի անձնավորության մեջ վեպը կենտրոնացրել է դարերի ընթացքում հայ ժողովրդին հարկադրող ու կեղեքող՝ արաբ, յեգիպտացի և այլ բռնակալներին (Բաղդադի Խալիֆա, Մսրա Մելիք և այլն): Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ՝ սասունցիների՝ Մսրա թագավորի դեմ մղած ազատագրական պայքարի արձագանքն է:*

**Ձենով Օհան.**—*Վեպի կարևոր գործող անձնավորություններից է: Տարբեր պատումներում հիշվում է վորպես Դավթի հորեղբայր, յեղբայր կամ քեռի: Քեռի Թորոսի նման Ձենով Օհանը կամ Հովանը վեպի գրական և համակրելի տիպերից է: Նա գործոն մասնակցություն ունի Դավթի կյանքում:*

**Թորոս.**—*«Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի կարևոր գործող անձնավորություններից մեկը. Սասունցի Դավթի քեռին (ըստ այլ պատումների հորեղբայրը): Վեպի մեջ հիշվում է՝ Քեռի Թորոս, Թորոսիկ, Թևաթորոս անուններով: Ունի բավական գործոն դեր:*

**Բադին, Կոզբադին, Սուդին, Ջարխադին.**—*Մսրա Մելիքի (Բաղդադի Խալիֆայի) կողմից Սասուն՝ հարկ բերելու ուղարկված գլխավոր հարկահանները:*

**Թուր Կայծակի.**—*Վեպի պատումներում հիշվում է՝ Թուր Կեծակի, կեծակի Թուր, կեծակեղեն Թուր և այլն ձևերով: Սասնա ծռերի ամենանշանավոր զենքն է, որ հորից—վորդի ժառանգաբար անցնում է վեպի բոլոր գլխավոր հերոսներին:*

**Սասուն.**—*Գտնվում է Մշո հարավ-արևելյան կողմում, Սասուն կոչված գավառում:*

**Մըսըր.**—*Դա Յեգիպտոսի տերությունն է Էյուբյան հարստության ժամանակ* (1169—1250)*: Մըսըրը վեպի պատումների մեջ սահմանակից է Սասունին և, ըստ այդ պատումների, շրջապատում է Սասնո բարձրությունը չորս կողմից. նրա մեջ են՝ Տարոնը, Խլաթը, Դիարբեքիրը, Հալեպ քաղաքը և այլն:*

**Սասմա սար.**—*Տավրոսյան լեռնաշղթայի (Անդոկ, Մարութա, Ծովասար և այլն) սարերից մեկն է: Սասմա կամ Սասնա սարը (Սասնո լեռ, Սասունի) ըստ վեպի գտնվում է Սասնո քաղաքի մոտ: Այդ սարի յետևն է տանում Դավիթը սասունցոց նախիրն՝ արածացնելու:*

**Ջարխափան վանք.**—*Գտնվում է Մարութա սարում:*

**Մարութա սար.**—*Տավրոսյան լեռնաշղթայի սարերից մեկն է. գտնվում է Սասնո Խարզանք գավառում: Վեպի տարբեր պատումներում հանդիպում է՝ Մարութա, Մարաթուն կամ Մարաթուկ ձևերով: Մարա-*

*թուկն, ըստ վեպի, սովորաբար կոչվում է «Բանձրիկ Մարաթուկ»: Վեպի մեջ հիշվող «Մարութա բանձր Աստվածածին կամ Աստվածածին» վանքը գտնվում է Մարութա սարում, որից և ստացել է իր անունը: Միաժամանակ կոչվում է և Զարխափան:*

Գրգուռ սար. — *Բշտանյաց լեռնաշղթայի սարերից մեկն է. գտնվում է Վանա լճի արևմտյան կողմում, Նեմրութից (Ներրովթ) հարավ:*

Սեղան սար. — *Գտնվում է Մշո դաշտի արևմտյան կողմում, Գրգուռ լեռան մոտ, Արածանու աջ ափին: Գագաթը տափարակ է, սեղանաձև: Սեղան սարից հյուսիս արևելք գտնվում է Մշու հայտնի Ս. Կարապետի վանքը: Դա այն սարն է, որի վրա, ըստ պատումներից մի քանիսի, բանակ է դնում Մսրա Մելիքը:*

Ծըծմակա սար. — *Գտնվում է Մուշ քաղաքից յերկու ժամվա հեռավորության վրա (դեպի արևելք): Վեպի տարբեր պատումներում հիշվում է՝ Ծծմակա սար, Ծծմակ կամ Ծծմակա քիթ ձևերով:*

Ծովասար. — *Տավրոսյան լեռնաշղթայի (Անդովք, Մարաթուկ, Սասունք և այլն) սարերից մեկն է. գտնվում է Սասնո Խութանք գավառում, դեպի Մարութա սարը տանող ճանապարհի վրա: Սրվանձտյանի վկայությամբ՝ «պստիկ ծով մը ունենալով յուր գագաթը այս անունով կոչված է» (տես՝ «Գրոց-բրոց», էջ 100): Ծ-ը ծածկված է ծաղիկների (մանուշակ և այլն) մարգերով, անտառներով ու սառնորակ աղբյուրներով: Վեպի մի շարք պատումներում Ծ-ը հիշվում է իբրև հերոսների զբոսավայր («սեյրանատեղ») կամ որսի սար («Որսասար»):*

Սասմա դաշտ. — *Սասնո գավառը, ընդհանրապես, խիստ լեռնոտ է, կտրտված յերկայնաձիգ ձորերով, բարձրագագաթ լեռնաշղթաներով, նեղ կիրճերով, միայն տեղ-տեղ տարածվում են ծաղկազարդ մարգագետիններ և դաշտավայրեր: Պետք է յենթադրել, որ Սասմա կամ Սասնո դաշտ կոչվում է այդ մարգագետիններից մեկը:*

Բաթմանա գետ. — *Սասնո գետն է (Բաթման սու), որ թափվում է Տիգրիսի մեջ: Ըստ վեպի՝ Բաթման գետը, ինչպես և վերջինիս վրա գտնվող պատմական հռչակավոր Բաթմանա կամուրջը (Փրե Բաթմանը), Սասունի և Մըըրի սահմանն է, որից անցնելով մտնում են Սասուն:*

Դիարբեքիր. — *Միջագետքի հնագույն քաղաքներից մեկն է. գտնվում է Տիգրիսի հարավային ափին, պատմական Նփրկերտ—Տիգրանակերտ քաղաքի մոտ: Հնում Դիարբեքիրը յեղել է հռոմեական գաղութ՝ Ամիդ անունով: Վեպի մեջ Դիարբեքիրը հիշվում է իբրև Մսրա իշխանության մեջ գտնվող քաղաքներից մեկը:*

Հալաբ կամ Հալեպ. — *Արևելքի հնագույն քաղաքներից մեկը. գտնվում է Միջագետքից Ասորիք տանող առևտրական ճանապարհի վրա:*

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

### Բ. ՄԱՍԸ

(Էջ 136)

*Եպոսի այս մասի մշակմանը Թ-ը, հավանորեն, անցել է ավելի ուշ: Այդ յերևում է ձեռագրից և բանաստեղծի 1904 թ. մի նամակից, ուր նա գրում է. «Պատրաստություն եմ տեսնում Դավթին հարսանիք անելու»:*

*Բանաստեղծի արխիվում պահպանվել է պոեմի յերկրորդ մասի միայն սկիզբը—առաջին մասի 80 տողը՝ բաղկացած չորս գլխից. առաջին յերեք գլուխը մաքրագիր, իսկ չորրորդն ունի յերկու սևագիր: Առաջին սևագիրը գրված է սև թանաքով, իսկ ուղղումները կատարված են կարմիր թանաքով և ապա քիմիական կապույտ ու կարմիր գույնի մատիտներով: Կա և մատիտով գրած սևագիր մի թերթիկ:*

*Այս հատվածն առաջին անգամ տպագրվել է «Նորք» ամսագրում, 1925 թ.* № 5—6*-ում:*

*Ստորև տրվում է այդ հատվածի մշակման տեքստային տարբերությունը.*

1

8 *Քեֆ, կեր ու խում, պար ու խնդում,* [հարսանիքներ] *ամեն տեղ:*
20 *Գուրգեն առած* [գերի] *եկին Նրա բերդի պատի տակ.*
22 *Ու չեր զարկում կարմիր խնձորն* [արքաներից վոչ մեկին]

4

29 ա. *Յերկու* գուսան *կանչեց Թանդութ վոսկե տըվավ լիառատ,*
բ. *Յերկու աշուղ կանչեց* իր մոտ նեն սիրունը սիրատենչ *վոսկե տըվավ* լիուլի
գ. *Յերկու աշուղ կանչեց Թանդութ* դեղին *վոսկե տըվավ* [լի ձեռով]
դ. *Յերկու աշուղ կանչեց Թանդութ դեղին վոսկե տըվավ* [շատ]
30 ա. *Գնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք,* Դավթի [մոտ] [1]
բ. *Գնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք, Դավթի* տունը [պայազատ]
31 ա. *Իմ գովքը* կանեք իր մոտ, իմ սերն իր սիրտը կըձգեք
բ. *Իմ գովքը կանեք իր մոտ, սերս սիրտը* ձըգեք [վառ]
գ. *Իմ գովքը կանեք իր մոտ,* [արյուն դառնամ սիրտը կաթեմ]
32 վոր՝ աչքերից քունը կըտրի [2], սըրտից հանգիստն [ու դադար]

---

[1] քով

[2] փախչի

33 ա. Ասեք՝ էստեղ յես մինչև յերբ քեզ սպասեմ
կաթողին
բ. Բարով արեք ասեք, էստեղ յես *մինչ յերբ*
*մնամ քեզ*
գ. Ու *ինձնից բարով արեք, ասեք՝ մինչ յերբ*
*մնամ քեզ*
34 ա. [Վեր կաց արի, ինձ առ ու տար, դու ինձի
մարդ, յես քեզ կին]:
բ. *Զխավորված,*... թըռած *յերբ պիտի գաս ինձ*
*տանես*
35 ա. *Սազերն առան աշուղները* ճամփա ընկան դեպ
Սասուն
բ. *Սազերն առան աշուղները* յերկրից յերկիր,
*հողից հող*
գ. *Սազերն առան աշուղները ու անց կացան*
սազ անելով
36 ա. *Յեկան հասան Սասմա քաղաք*, Ձոջանց տունը
բազմանոխ
բ. *Յեկան հասան Սասմա քաղաք, Ձոջանց տունը*
մեծ ու հին
38 ա. *Ե՞ս է, ասին, Ձոջանց տունը*, վո՞րն է Դավիթ,
տան պարծանքը
բ. *Ե՞ս է, ասին*, Սասմա քաղաք, *Ձոջանց տունը*
*մեծ ու հին*
39 — *Ե՞ս է, ասավ*, [*Ձենով Օհան*] Ձոջանց տունը
փառավոր
42 ա. Բարովներով ու < . . . > սիրտը զցենք իրեն
*սերը ու կարոտ*
բ. Խաղ ու տաղով *սիրտը գցենք իրեն*
*սերը ու կարոտ*
գ. Բարով անենք, պատմենք անքուն ընրա
*սերը ու կարոտ*
43 ա. Են տեր ինքը *թող չեն պահի Ձոջանց տունը*
մեծ ու հին
բ. Տեն պահի տեր *Ձոջանց տունը, Ձոջանց տունը*
*մեծ ու հին*
44 Տեն պահողին ապրած պահի և հաղթական *քաջ*
*Դավթին*
45 ա. Վո՞րն է Սասմա *քաջ Դավիթը*, Նշանց տուր մեզ,
*բարեկամ*

բ. *Վո՞րն է արդյոք*, ես Սասունցի *քաջ Դավիթը*, *բարեկամ*

գ. *Քաջ Դավիթը*, վոր ասում են, *վո՞րն է արդյոք*, *բարեկամ*

դ. *Քաջ Դավիթը*, վոր լսել եմք, *վո՞րն է արդյոք*, *բարեկամ*

ե. Զոջանց տան զարդ *քաջ Դավիթը վո՞րն է արդյոք*, *բարեկամ*

46 ա. Ես *Դավիթը*, *վոր* հարցնում եք, *յես եմ*, *աստղ*, *հենց վոր կամ*

բ. Սասունցի *քաջ Դավիթը յես եմ*, *աստղ*, *հենց վոր կամ*

47 *Ինչ վոր Դավթին սխալ ասեք՝ իմ առաջին* ասացեք

49 ա. *Նըստոտեցին* աշուղները *սազներն առան* [գրկներին] *ծընկներին*

բ. *Նըստոտեցին աշուղները* և ուսերից վեր բերին

գ. *Նըստոտեցին* ծալապատիկ և ուսերից վեր բերին

50 ա. *Ու երվելով*, *ոռորվելով* սազերն առան ծընկներին

բ. *Ու երվելով*, *ոռորվելով* գովքը արին սիրունի

57 *Որհնյալ աստված*, որհնյալ բարիդ

59 *Դու*, *վոր*··· *ընկըղբանե*

Ըստեղծել ես ········

69 ա. *Հասակն ասես*, նոճան, *Դավի՛թ*, դրախտում տընկած ծառ է դալար[1]

բ. *Հասակն ասես*, *չինար*, *Դավի՛թ*, վեր է վազել դրախտում նոճին

գ. *Հասակն ասես*, *չինար*, *Դավի՛թ*, վոնց վոր դրախտում կանգնած նոճին

դ. *Հասակն ասես*, *ճոճուն*, *Դավի՛թ*, դրախտի չինար յերկար շուքով

70 ա. *Ծըծերն ասես*, սպիտակ, *Դավի՛թ*, ջուխտ զանգակներ *ծոցի միջին*

բ. *Ծըծերն ասես*, շամամ, *Դավի՛թ*, ջուխտակ շամամ ծոցում

---

1 չինար, բարտի

72 ա. *Աչքերն ասես, ծով են, Դալլի՛թ,* մեջը կերվեն
*աստղ ու արև.*
բ. *Աչքերն ասես, ծով են, Դալլի՛թ,* մեջը կը վառվեն
*աստղ ու արև.*
գ. *Աչքերն ասես, ծով են, Դալլի՛թ,* լիքը լուսին,
*աստղ ու արև.*
դ. *Աչքերն ասես,* փնջան, *Դալլի՛թ,* ջուխտակ
փնջան լի կըրակով
74 ա. *Ունքերն ասես, սև են, Դալլի՛թ,* սև-սև ամպեր
*ծովի վերև.*
բ. *Ունքերն ասես սև են, Դալլի՛թ,* ծովի վըրեն
գ. *Ունքերն ասես,* թուր են, *Դալլի՛թ,* աղեղներ են
[բարկ] վոլորած
դ. *Ունքերն ասես,* թև են, *Դալլի՛թ,* ծիծեռնակի
թևեր բռած,
76 *Թերթերունքը* ահեղ *նետեր* աղեղների մեջը
*լարած*
77 ա. *Ծակտոն ասես, ճերմակ, Դալլի՛թ,* նոր ձյուն
յեկած դաշտի նման
բ. *Ծակտոն ասես, ճերմակ, Դալլի՛թ,* են նոր ձնած
*դաշտի նման*
78 ա. *Ակոիքն ասես, դերմակ, Դալլի՛թ,* լույս են
տալիս ծիծաղի հետ
բ. *Ակոիքն ասես դերմակ, Դալլի՛թ,* մարգարիտի
շարքեր են սուրբ
գ. *Ակոիքն ասես, դերմակ, Դալլի՛թ, մարգարիտ*
շար իրար մոտ
79 *Ծամերն ասես,* քառսուն նյուղ ծամ, մեկն ել
ավել
80 ա. *Վիզը ասես, ճոճան, Դալլի՛թ,* լար շրթունքներ,
կըլափ շողման
բ. *Վիզը ասես, ճոճան, Դալլի՛թ,* կլափը շողման,
շըրթունքը լար

## ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

(էջ 141)

*Պոեմը գրվել է* 1902 *թ. աշնանն Աբասթումանում, ինչպես պարզվում է իշխանուհի Մ. Թումանյանին գրած նամակներից: Պոեմի նյութը Թումանյանը լսել է* 1901 *թ. Ախալքալաքում: Գրելիս միաժամանակ օգտագործել է «Ջավախքի բարբառը» Եր. Լալայանի բանահյուսական ժողովածուում լույս ած ժողովրդական ավանդությունը, որը ահա. «Թմկաբերդի առումը. Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի*

հայ իշխան։ Պարսից Թագավորն յեկել, յերկար պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել։ Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրա և ծածուկ առել է նորա համաձայնությունը յուր հետ ամուսնանալու՝ յեթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին։ Յեվ իրր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին։ Շահն այսպիսով տիրել է բերդին, և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Յես եմ գեղեցի՞կ, թե ամուսինդ»։ Յեվ յերբ սա պատասխանել է թե ամուսինս գեղեցիկ եր՝ շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քաշ տալ մինչև մեռնելը, ասելով. «Յեթե ամուսինդ շահից գեղեցիկ եր՝ ինչո՞ւ սպանեցիր»։ («Ջավախքի բուրմունք» ժող. նյութեր. գիրք Բ., հավաքեց Յե. Լալայան. Թիֆլիս, 1892, եջ 57)։

Այս մասին Թ-ը հիշատակում է և իր «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» գրության մեջ. «Թմկաբերդի առումը», Ջավախքի բուրմունք։

Առաջին անգամ տպագրվել է «Մուրճ», 1905, № 1, եջ 5—10, № 2, եջ 34—40. յերկրորդ անգամ՝ ԲԲ, յերրորդ անգամ՝ 1909 թ. առանձին գրքով։ Թ-ի կենդանության օրով վերջին անգամ տպագրվել է ԲԳ։

Ստորև տալիս ենք «Մուրճ»-ի և հետագա հրատարակությունների տեքստային տարբերությունները.

77 Մ Նրան՝ իր տեսքով, գեղով, սացին
129 Մ և ԲԲ Յերգում է աշուղն արքայի սերը
146 Մ Յեվ քունը փախավ նրրա աչքերից…
166 Մ Մեր վըրայից անպակաս։

«Մուրճ»-ի տեքստի VII գլխում 170 տողից հետո փակագծերի մեջ գրված է «Յերգում են» բառերը, որ մյուս հրատարակություններից հանված են։

182 ԲԲ Կախեթի կարմիր հին գինին հասել
194 Մ Ել չենք կարող մենք տանել
214 Մ Նազելի կընոջ գըլուխն իր գոշին
244 ԲԲ Շուխն ու թըշնամին տիրել են ահա։
249—250 Մ Նըստած է շահը մըռայլը դեմքին,
Առջևն իրիկվան քեֆի սեղանը,

253—257 տողերը առաջին անգամ լույս են տեսել 1909 թ.—

Աշխարհքում հաստատ չըկա վոչ մի բան,
Ու մի հավատալ յերբեք վոչ մեկին.
Վոչ բախտի, փառքի, վոչ մեծ հաղթության,
Վոչ սիրած կնկա սրված բաժակին…

257 Մ Յեվ լիքը բույնով հարցընում է նա
257 ԲԲ Ու դառը ծաղրով հարցընում է նա
260 Մ և ԲԲ Քու Թաթուլն արդյոք քա՞ջ եր ու սիրուն…
268 Մ Ու նրրա ձայնից դողաց սրահը։
273 Մ և ԲԲ Տարան անտակ են սև ժայռից
284 ԲԲ Վոր չի ծաղկի ել նորից։
287 ՀԳր. Անցավ Թաթուլը հաղթական

289 ԲԲ *Ու նըրանցից* միայն *անմեռ*

296 *տողից հետո «Մուրճ»-ի տեքստում կա հետևյալ քառյակը.*

*Կույր աշուղը հոգու աչքով*
*Նըկատում է ամեն բան,*
*Պատմում է ձեզ խաղ ու յերգով*
*Մարդու գործերն ու ճամբան։*

303—304 ԲԲ *Ա՛խ, յերանի՝* ո՛վ վոր կը գա
Ու կը գրնա անարատ։

## ՊՈԵՄՈՒՄ ՅԵՂԱԾ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՎԱՅՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիրդուսի *(ավելի ճիշտ՝ Ֆիրդոուսի).—Հռչակավոր պարսկական բանաստեղծ. ծնվել է մոտ 935 թ. Խորասանի Թուս քաղաքում, վախճանվել է 1020-ից հետո։ Հեղինակ «Շահ-Նամե» («Արքաների գիրք») չափածո վիպասանության։*

Նադիր-Շահ.—*Պարսից թագավոր (1736). հայտնի յեր իր ռազմական ընդունակություններով և դաժանությամբ։*

Ֆարս *կամ Ֆարսիստան.—Իրանի հարավային գավառ, գլխավոր քաղաքն է Շիրազ։ Հնուց հայտնի յե իր այգիներով, պարտեզներով և մանավանդ վարդերով ու սոխակներով։*

Ջավախք. *Այժմյան Ախալքալաքի գավառը, վրացերեն՝ Ջավախեթի, հնում Գուգարք նահանգի մի գավառը։ Պատկանում է Վրացական Խ. Ս. Հանրապետությանը։*

Աբուլ.—*Մեծ և փոքր լեռնագագաթներ Ջավախքում։*

## ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

(Եջ 153)

*«Հազարան բլբուլ»-ը Թ-ի վաղ սկսած և չավարտած ամենախոշոր յերկերից մեկն է։ Թ-ը իր ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ վարիանտներ (մոտ 60). առաջին վարիանտն ինքն է գրի առել Լոռու Վարդաբլուր գյուղում, 1895 թվի ամռանը։ Բանաստեղծն իր գրի առած առաջին վարիանտը համարում եր ամենահինը և ամենալավը։*

*Այնուհետև սկսել է գրի առնել մի շարք վարիանտներ, թվով 13 և հավաքել տպագիր ու բանավոր այլ վարիանտներ։*

*Բանաստեղծի արխիվում մնացել է «Հազարան բլբուլ»-ի յերեք մշակում. մեկը դրամատիկական՝ միայն սկիզբը՝ 3 եջ, մյուսը վորպես չափածո պոեմ, վորի անավարտ հատվածները լույս են տեսնում այս հատորում և յերրորդը՝ արձակ—յերգախառն, պատանիների ընթերցանության համար, վորը նույնպես անավարտ է և լույս կտեսնի Թ-ի ակադեմիական հրատարակության III հատորում։*

*Թ-ի կենդանության օրով չափածո ձևից լույս է տեսել յերկու հատված. առաջինը՝ «Արևը սև աշխարքում», «Հազարան բլբուլ» հեքիաթից յենթավերնագրով «Հասկեր» մանկական ամսագրում, 1914 թ. մայիս, № 5, եջ 142—145։ Յերկրորդ հատվածը՝ «Յերգչի վիշտը», «Նոր Հոսանք» ամսագրում, 1914, № 4, եջ 551—554։*

Բանաստեղծի մահից հետո, վորոշ հատվածներ լույս են տեսել «Նոր ուղի» 1931 և «Վերելք» 1933 թ. ամսագրերում:

Թ–ի «Հազարան բլբուլ» չափածո պոեմի քիչ թե շատ ամբողջացած հատվածներն առաջին անգամ լույս են տեսել նրա 1934 թվին հրատարակված «Գեղարվեստական յերկեր»-ում: Յերկրորդ անգամ՝ 1938 թվին «Մի հատորյակ»-ում:

Այս հատորում տպվում են պոեմի անտիպ և տպված հատվածները միասին, համեմատած Թ–ի արխիվում յեղած սևագիր ձեռագրերի հետ:

Պոեմի հատվածների համարակալումը կատարված է խմբագրության կողմից և համարները դրված են խմբագրական սուր < > փակագծերի մեջ: Վորոշ հատվածներ ունեն 2—4 սևագիր ձեռագրեր և յեղած տեքստերը վերականգնված են այդ սևագիր ձեռագրերի հիման վրա:

Վերջում տրվում են սևագիր ձեռագրերի մշակման տարբերությունները:

Թ–ը առհասարակ, թե հոդվածներում և թե նամակներում, քիչ է հիշատակում այս կամ այն յերկը գրելու մասին: Նամակներից յերկուսում միայն հիշատակում է «Հազարան բլբուլ» պոեմի սկզբնավորման շրջանը, իսկ մի այլ նամակում պարզում է պոեմի իդեան:

Բերում ենք հատվածներ այդ նամակներից.

«Դու գիտես, վոր յես մի (կարծես յերկու հեքյաթ միացրած) հեքյաթ «Հազարան բլուլյուլը» և «Սինամ Թագավորի գաղտնիքը»—նյութ առած ուզում եմ հորինել մի արևելյան պոեմա: Դրանով հետաքրքրվելով գտա—վոր շատ անգամ տպված է, բոլոր ազգերն ունեն, պատմված է հազար ու մի ձևով, մինչև անգամ գիտնականները մեկնություն են տվել, թե դարնան գալն է հեքյաթի առարկան, բայց այդ բոլորից հետո յես վոչ միայն թողի իմ հեքյաթը, այլ ավելի պինդ բռնեցի, ավելի վոգևորվեցի այդ նյութով—ով ինչպես ուզում է դրած լինի, յես էլ ինձ պես եմ առնելու, և մինչև անգամ հանդգնություն ունեցա գիտնականների հակառակ իմ ունեցած մեկնությունը, միտքը նկատել հեքյաթի մեջ և այն զարգացնել ու յերգել: Ինչպես դու գիտես—իմ կարծիքով բանաստեղծության ու մուզիկայի ծնունդն է հեքյաթի առարկան»:

(Փ. Վարդազարյանին, 1899 թ.)

Մյուս հատվածը բերում ենք Թիֆլիսի Հայոց Յերաժշտական Ընկերության ուղղված Թ–ի նամակից, գրված այդ ընկերության բացման առիթով.

«Թիֆլիսի Հայոց Յերաժշտական Ընկերության
պ.պ. նախաձեռնողներին

Ազնիվ պարոննե՛ր.

Շատ եմ ուրախ Թիֆլիսի Հայոց Յերաժշտական Ընկ. բացման համար և առանց հրավերի էլ յես արդեն գալու եյի՝ առաջնորդվելով իմ գեղի յերգի ու յերաժշտության ունեցած մեծ սիրուց:

Դուք գիտեք, որ ես շատ եմ սիրում հին խոսքը։ Ահա մի հին զրույց, որ սիրել եմ առանձնապես, նույնպես է ասում։

Պատահեց, ասում է, որ մի ժամանակ դարձավ քնքույշ ու բանական մարդը։ Ինչ արին—չարին՝ հնար չեղավ, գազանը նորից մարդ դարձնելու։ Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգը—երաժշտությունն է։ Էս զրույցը շատ է երկար, ես կարճն եմ ասում, բայց որ ասում եմ սիրել եմ առանձնապես, դրանից էլ կիմանաք, թե ինչ նշանակություն եմ տալիս երաժշտությանը։

... Թող բացվի վարագույրը, թող հնչի նրա աստվածային ձայնը և գազանը մարդ կդառնա։

Հովհ. Թումանյան»։

30 դեկտ. 1912 թ.
Թիֆլիս

Սորև տրվում են «Հազարան բլբուլ»-ի հատվածների տեքստային տարբերությունները, ըստ Թ-ի ձեռագրերի.

2 ա. Երբ դեռ նոր էր կույս աշխարհքում կյանքը խաղում սուրբ ու պերճ
բ. Երբ դեռ նոր էր կույս աշխարհքում կյանքը խաղում թարմ ու պերճ
5 Սուրբ ու որհնյալ են ժամանակ, արևլուսի կողմերում
9 Կամ թե գարնան անձրևի պես, որ թափվում է լիառատ

«Ո՛վ լուսեղեն դրներդ բաց...» հատվածին նախորդում է հեղինակի հետևյալ դիտողությունը՝ «Պառավի և իր հիվանդի փոխարեն աղքատ պանդուխտըն է անցնում ու խնդրում»։

13 Քե՛զ, որ այսքան բարիք ու փառք
16 Ո՛վ գթառատ, քեզ եմ խընդրել
18 ա. Մեռավ՝ կարոտ, աչքն աշխարքին
բ. Մնաց՝ կարոտ, աչքն աշխարքին
19—20 Նըրանք էլ թող մնան նեղես
Կարոտ իրենց սուրբ փափագին.
21—22 ա. Թող փուշ կըտրի յեդեմ այգին,
Մարդիկ դառնան չար ու ապուշ։
բ. Յեդեմ այգին կտրի չար փուշ
23 ա. Կանչեց պառավն, և, ո՛վ հրաշք, փոխվեց դըրախտն այն անուշ
բ. Կանչեց աղքատն, ու, ո՛վ սարսափ, փոխվեց դըրախտն էն անուշ

գ․ Կանչեց մերը, ու, ո՛վ սարսափ, փոխվեց դըրախտն էն անուշ

25 Պահնորդ մարդիկ դարձան արջեր զուրկ նշանից մարդկային

26 Կորցրին և՛ տիպ, և՛ քնքշություն, որ առաջուց ունեյին

32 ա․ Ինչ տեսիլք է, որ գալիս է ինձ ու անրադդ իմ յերկրին

բ․ Ինչ պատիժ է, որ գալիս է իմ աշխարքին, իմ գլխին

38 Ու թըվում է մարդու համար ամեն մի ցավ մեծ ու նոր

39 ա․ Բայց դու յեղիր մեծահոգի, միտքդ պահիր միշտ յերկար

բ․ Բայց դու յեղիր իմաստուն, միտքդ պահիր միշտ յերկար

48 Անդետ ու խեղճ մարդիկ ենք մենք—եդ գըրկողը կիմանա

53 ա․ Հրաշք է նա, մեծ թագավոր, աշխարհ իջած յերկնքից

բ․ Գիտությունը—աստվածային ձիրքն է իջած յերկընքից

56 Հոգին տալն է միայն պակասում—հավասարի արարչին

57—70 տողերը պոեմի սևագիր ձեռագրում գրված են փակագծերի մեջ։

60 Յերբ դեռ անկազմ կար յերկիրը մըռայլ ծոցում անհունի

65 Յեվ աշխարքներ, որ մեռել են վաղուց իրենց վողջ կյանքով

75—76 Այսպես ասին, պատվեր տվավ թագավորը ծերունի

Կանչեց յերկրի ամեն ծերից գիտուններին անվանի։

77 ա․ Յեկե՛ք, ասավ, բացեք տեսնեմ, ի՞նչ տեսիլք է արդյոք սա

բ․ Բարով յեկաք, ով գիտուններ, ի՞նչ տեսիլք է արդյոք սա

88 Թող շատ ապրի յերկրի վրա վողջ ու հաստատ իր գահին

97 *Ցուլ արդ, քանզի ամեն մի բան ունի* անշուշտ *մի պատճառ*

103 Տակ վեր արին, *քրքրեցին ամեն գրվածք ու գրյանք*

107 *ա.* Քննեցինք ու իմացանք *մենք* գաղտնիքը այս *կյանքի*

*բ.* *Քրքրեցինք, քննեցինք մենք* գաղտնիքը *ես կյանքի*

139 Նա հայտնվեց *պայծառ ու վեհ, ինչպես տեսիլք սրբազան,*

142 *Բայլքը թեթև,* ճակատը լեն, *ու հայացքը իմաստուն*

146 *Են հազարան* խաս բլբուլն է, *վոր դու չունես տակավին*

147 *ա.* *Վոր ջերգում է հազար ձենով, հազար* տեսակ *կանչելով*

*բ.* *Վոր ջերգում է հազար ձենով, հազար* շեշտով *կանչելով*

149 *Ցեթե* խոսի *նա մի անգամ կամ* <.....> *նա մի որ*

162 *Մեր* տերության *միակ զարդը, միակ փառքը փըչացավ:*

172 *Ցերկնում լինի վայր կըբերեմ,* գետնի տակին— *կըհանեմ:*

179 *տողից հետո*

*Պետք է միայն ամեն ուտեստ վերցնենք, վոր հանկարծ չը սովենք*

*Թե չե սոված մարդը կը մոռնա ամեն բան*

229 *Ձենըդ* նույնպես թարմ ու զվարթ *լի ավյունով գերբնական*

231 Տարված, գերված վեհ ձայներին *կախարդական քո ջերգի*

236 *ա.* *Եղպես անդադուլ* մի մոտենար իմ... գաղտնիքին

*բ.* Ու ձեռ մի տար եղպես........*անբուժելի իմ վերքին*

237 *ա.* Հանդիսավոր *մի որ* եր են. հրաշալի պայծառ *որ*

*բ.* *Հանդիսավոր մի որ եր են.* գարնանային *պայծառ որ*

238—239 *Մինարեյի* շուրջը բազմած *ժողովուրդը բյուրավոր*

*Սպասում էր իմ* յերգելուն: *Վողևորված յես յեկա*

241 *ա.* Լիճը *աշխարքն* աչքիս առջև, ջինջ *յերկինքը իմ վըրեն*

*բ.* Սիրուն *աշխարքն աչքիս առջև, ջինջ յերկինքը իմ վըրեն*

*գ.* Կանանչ *աշխարքն աչքիս առջև, ջինջ յերկինքը իմ վըրեն*

242 *ա.* Սիրտս *լիքը* վեհ հույզերով... *յերգը հասեց ինքնիրեն*

*բ.* *Հոգիս լիքը* կարոտներով... *յերգը հասեց* լիորեն

*գ.* Գլուխս *լիքը* յերազներով... *յերգը հասեց ինքնիրեն...*

243 Ել յերկնքի *հավքեր* կուզեն թռած ամեն աշխարհքից

244 *Ճախրում եյին գլխիս* շուրջը հափշտակված իմ յերգից

245 *Են հավքերից մինը* հանկարծ թևին զարկեց *ու թռավ*

246 *ա.* Իջավ հանկարծ *հափշտակեց*, հափշտակեց ինձ *տարավ*

*բ.* Թռավ *ու ինձ հափշտակեց, հափշտակեց ու տարավ*

247 *Աչքս մին էլ բաց եմ անում*, կանգնած եմ *մի դրախտում*

248—249 *տողերի միջև ձեռագրի մաքրում բանաստեղծի կողմից ջնջված է հետևյալ հատվածը՝*

*Վճիտ ոդում, ջինջ կապույտում ընձյուղել են դեպի վեր*

*Ու [խմբովին] յերազում է շուրջս անտառն անտարբեր:*

*Անտառի մեջ խորհրդավոր խոխոջում են մխալար*

*Անմահական աղբյուրները, ջրերն աշխույժ ու կայտառ.*

*Նրանց թավիշ յեզերքներին, նրանց ձենին զմայլած*

*[Անուշահոտ] ծաղիկները խոնարհել են դեպի ցած*

*Ու յերջանիկ օրորվելով, [հարբած՝ յերջանկությունից]*

Իրենց ընքույշ թուրվլաններով թույր են խնկում
ա. Ու զերթ փոքրիկ սերովբեներ խաղ են անում, թրթռում
Հազարգունի հավք ու թիթեռ ե՛ն բուրավետ յեթերում
բ. Վորպես փոքրիկ սերովբեներ նրա շուրջը թրթռում
Հազարգունի հավք ու թիթեռ խաղում են բուրավետ յեթերում։

249 Զմայլած եմ տեսածներիս ու մնում եմ անհամբեր

250 Սարսափում եմ, թե տակավին ինչեր պիտի տեսնեմ դեռ

251 ա. Յես գնում եմ զերդ յերազում... Ահա դալար թփերից
բ. Ու գնում եմ, գնում, գնո՛ւմ—ասես թռչում եմ ոդում

254 Մի նազանի հուրի փերի դուրս է գալի դեպի ինձ

255 Նա միամիտ, սիրտը տված յերջանկության յեդեմի

256 Վարսը տված բուրյան հովին, յերգ է ասում ու գալի

258 [Բնած էյինք միասին]

260 Բնած եյինք [ջրափին]

261 Հանկարծ ընկան աստվածային իր աչքերը ինձ վրա

262 Յես կանգնեցի, քար կտրեցի, շունչս հատավ ու սառա

263 — Ո՛վ ես, կանչեց, դու հողեղեն, ո՛վ համարձակ դու հոգի

265 Ի՛նչպես մտար ես դրախտը դու հողածին մի թույլ մարդ

267 Արի՛, յեթե մի հոգի ես մեր յեդեմին արժանի

268 Արի՛ նստիր, քու ծնկանը պիտի ննջեմ յես հիմի.

269 Բայց վա՛յ, յեթե ինձ համբուրես, հրապույրքից հաղթվես

271 ա. Ասավ հակվեց իմ ծնկանը, փակեց աչքերն աննման
բ. Ասավ պառկեց իմ լանջին, փակեց աչքերն աննման

272—276 սևագրում համապատասխանում են հետևյալ տողերը·

Ու փայլեցին ճոխ մազերը իր յերեսին
կուսական,
<..........> Նրա մարմնի հըպումից
Մի հեշտալի, անուրժելի ընդարմություն
յեկավ ինձ·
Ցես հարբեցի թարմությունից և գեղեցկության
կախարդանքից·
Ցես նայում եմ, նայում անվերջ, [քանի]
նայում—մոռանում,
Թե ուր եմ յես, ինչ պատահեց <..........>

277 Մին էլ ահա գետի ափից մի ուրիշը յերևաց

279—280 Նա խնդրում էր, ծիծաղում էր, ու ծիծաղը
թրթռում
Մաքուր, ինչպես արծաթի ձայն, հնչում
խորունկ անտառում·

293 — Ո՛վ ես, ասավ, դու հողեղեն, ինչ հրաշքով
ներս մըտար,

295—296 Բայց դու դուցե մի վոգի ես մեր յեդեմին
արժանի,
Նախր թեքեմ յես քո լանջին իմ գլուխը—
[քնեմ].

299 ա· Ասավ թեթև ու նազելի թեքեց գլուխն իմ լանջին
բ· Ասավ թեթև ու նազելի թեքեց գլուխն իմ գրկին

300 ա· Նրա շնչից ու բուրմունքից հարբեց կարոտ
իմ հոգին

300 բ· Նրա շնչից, հեշտ բուրմունքից ագահ կարոտ
իմ հոգին

301 Գլուխս [արբած] պտըտվում էր, մթնում աչքերս
ու մթնում

303 ա· Մին էլ հանկարծ, յես հիշում եմ, ջերմ
համբույրը զգացի
բ· Մին էլ հանկարծ, յես հիշում եմ, հնչուն
ձայնը լսեցի
գ· Մին էլ հանկարծ, յերազի մեջ, հնչուն
ձայնը լսեցի

307 Ասավ ինկույն անհետացավ—յես մնացի
Անհուն ցավից ու կարոտից կըտամբելով
ինքս ինձ

308 ա· Մին էլ հանկարծ սթափվում եմ սրտագրավ
մի ձայնից

բ. Այն ժամանակ *սթափվում եմ* ուրիշ հեռու
*մի ձայնից.*

313—314 *Զեփյուռի հետ*
Բույր ու համբույր են դրկել ինձ համար

315 ա. *Մի այլ աղջիկ*, մի այլ վոգի ցարասի
*ծառի տակ*

բ. *Մի այլ աղջիկ* ... ու կանգ առավ *ծառի տակ*

320 *Յեվ ո՞վ եք դուք, վոր տանջում եք* անգթաբար
*ինձ նայես.*

321 Ո՞վ, իմ հոգին չի դիմանում *ձեր հմայքին*
*գերբնական*

322 վո՛չ, խղճացեք, քնքույշ վոգիք, ել մի՛ տաք
*ինձ փորձություն*

323 — *Նստել ես դու, ուր հողեղեն վոտ չի կոխել*
*դեռ* [բնավ]

326 ա. *Բայց դու նստիր* [ով ազնիվ հյուր], *վոր յես*
*հանգչեմ քո գրկում*

բ. *Բայց դու նստիր* սիրուն տղա, *վոր յես*
*հանգչեմ քո գրկում*

գ. *Բայց դու նստիր* ..... յերգիչ, *վոր յես*
*հանգչեմ քո գրկում*

327 ա. *Ու տես, յեթե ինձ համբուրես այնքան հետո*
*կը զզջաս*

բ. Բայց տես, *յեթե ինձ համբուրես* այնքան *հետո*
*կզզջաս*

328 Ու *չես գտնիլ ինչ կորցրիր—ամբողջ կյանքդ*
*թեկուզ տաս*

329 Յեվ *այս յերրորդն նրան սիրուն*, գերազանց էր
*տավել*

332 *Կանչեց* [անհուն] քնքույշ վշտով ու չքացավ
*իմ մոտից*

334 *Թե կարճատև մի հաճույքին ի՛նչպես տվի*
հավիտյան

335 Ու գնում եմ, *վորոնում եմ*, [ականջ դնում]
*ամեն տեղ*

336 ա. Ել ձեն չկա, չեն յերևում անմահները աչագեղ...
բ. *Ել ձեն չըկա, չեն յերևում* տեսիլները
են չքեղ...

գ. *Ել ձեն չըկա, չեն յերևում* սիրունները
*են չքեղ...*

դ․ *Եվ ձեն չըկա, չեն յերևում* փերիները
*են չըքել…*

336—337 *տողերի միջև ձեռագրի սևագրում կան հետևյալ ջնջված անտիպ տողերը․*

*Որը արդեն տարաժամել, մոտ է արևն իր*
*մըտնին*[1],
*Դրախտի ձեներն հնչում էյին յերեկոյան*
*մեղեդին․*
*Ու յերջանիկ էն գիշերի սովերները*
*<մեղմ…>*[2]
*Ծածկում էյին անմահների ոթևանը սրբազան։*
*Գնում եմ յես… կախարդական տեսարաններ*
*նորանոր,*
*Մինը մյուսից սքանչելի, մինը մյուսից*
*փառավոր․*
337 Բայց *վոչ մի տեղ չեմ հանդիպում* ել նրանցից
*վոչ մեկին*

338—342 *տողերին ձեռագրում համապատասխանում են հետևյալ տողերը․*

*Ահա կապույտ յեթերային յերկնանման*
*ապարանք*[3],
*Եստեղ, դուցե, ասում եմ յես, կը հանդիպեն*
*ինձ նրանք։*
*Սիրտ եմ անում, ներս եմ մտնում—դատարկ ու*
*լուռ ահավոր,*
*Ձեն եմ տալի հուսահատված ու հառաչում*
*սրտախոր*[4],
*Ո՛վ, մին ել յեկեք, վոր յերջանկություն տվեք,*
*Այնժամ թնդաց ահեղ մի ձեն—քյավթառ, արի*
*սրան տա՛ր…*[5]
343 *Մին ել տեսա կրկին կանգնած մինարեյի*
գագաթին
344 *Դարձյալ կեղտոտ ես քաղաքում, չուրջս ամբոխն*
գարշելի

---

1 *Որը արդեն տարաժամել, մոտ է* գիշերն…
2 *Ու յերջանիկ* յերեկոյան *սովերները <մեղմ…>*
3 *Ահա* լազուր *յեթերային յերկնանման ապարանք,*
4 *Ձեն եմ տալի* զղջացած *ու հառաչում սրտախոր,*
5 Ինձ պատասխան *ահեղ մի ձեն* հանկարծ գոչեց—*քյավթառ, տա՛ր…*

343 և 344 տողերի միջև ձեռագիր սևագրում կա հետևյալ մի տողը.

